• www.prosecutor.am

2023

ՀԱՂՈՐԴՈՒՄ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԲԱՆ



Հայաստանի Հանրապետության հարգելի՛ քաղաքացիներ,

Հարգելի՛ գործընկերներ

Երկրորդ տարին է, որ պատիվ ունեմ Ձեզ ներկայացնել Հայաստանի Հանրապետության դատախազության գործունեության մասին հաղորդումը:

Այս հաղորդման մեջ ամփոփված են Դատախազության 2023 թվականի միասնական ու հետևողական աշխատանքի արդյունքները:

Տասը բաժիններում շարադրված են Դատախազության սահմանադրական լիազորությունների իրականացման ոլորտներում 2023 թվականին արձանագրված ձեռքբերումներն ու մարտահրավերները:

Հավատարիմ թափանցիկության և հաշվետվողականության գործելաոճին՝ Դատախազությունն իր առջև խնդիր է դրել բարձրացնել արդարության նկատմամբ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների վստահությունը, անզիջում պայքարել հանուն հանրային բարիքի պաշտպանության և օրենքի գերակայության ապահովման:

Կարծում եմ՝ վերոնշյալ մոտեցման արդյունքն է այն, որ 2023 թվականի դեկտեմբերին անցկացված հանրային կարծիքի ուսումնասիրության համաձայն՝ գոհունակության ցուցանիշով Դատախազությունը, 2023 թվականի մարտ ամսին անցկացված հարցման համեմատ, 8 տոկոսային կետով բարելավել է իր դիրքերը. Դատախազության աշխատանքից լիովին գոհ և ավելի շուտ գոհ է ՀՀ քաղաքացիների 39%-ը:

2023 թվականին մեր աշխատանքային առաջնահերթություններից են եղել և 2024 թվականին շարունակելու են մնալ կոռուպցիայի դեմ պայքարը, պետական և համայնքային շահերի պաշտպանությունն ու ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձումը:

Կոռուպցիայի դեմ պայքարն ու հանրային բարիքի պաշտպանությունը վերացական հասկացություններ չեն. դրանք մեր սահմանադրական մանդատի առանցքն են, դրանք այն արժեքներն են, որոնք մենք պաշտպանում ենք:

Կոռուպցիան քայքայում է ժողովրդավարության հիմքերը, խաթարում է հանրային վստահությունն ու խոչընդոտում տնտեսական զարգացմանը: Մեր հանձնառությունը, պատժողական քաղաքականությունից բացի, հստակ ուղերձ է՝ կոռուպցիան չի՛ հանդուրժվելու:

Հանրային բարիքի պաշտպանության համատեքստում Դատախազության հանձնառությունը ներառում է գործառույթների լայն շրջանակ՝ խոցելի խմբերի իրավունքների պաշտպանությունից մինչև պետական և համայնքային շահի պաշտպանության հայցի հարուցում:

Հուսով եմ՝ Դատախազության 2023 թվականի գործունեության մասին հաղորդումը բոլոր գործընկերների՝ հատկապես տեսաբան ու պրակտիկ իրավաբանների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների և լրագրողների համար կդառնա ուսումնասիրության վստահելի աղբյուր:

Եզրափակելով խոսքս՝ շնորհակալություն եմ հայտնում դատախազներին և իրավապահ համակարգի բոլոր այն գործընկերներին, ում սրտացավ և նվիրված աշխատանքով նախորդ տարում գրանցել ենք շոշափելի արդյունքներ՝

- Պետությանն են վերադարձվել գույքեր և դրամական միջոցներ,
- Մեղադրական եզրակացությամբ դատարան են հանձնվել նախորդ տարվա ցուցանիշը կրկնակի գերազանցող թվաքանակով գործեր (այդ թվում՝ 8 ամսից ավելի քննվող գործեր),
- Հետևողական աշխատանք է տարվել տուժողների և իրենց իրավունքների պաշտպանության նպատակով Դատախազություն դիմած անձանց հետ և այլն:

Անձնազոհությունը հասու է նվիրյալներին: Դատախազությունում աշխատում են և աշխատելու են նվիրյալներ՝ հանուն Հայաստանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության քաղաքացիների բարօրության:

Հայաստանի Հանրապետության

գլխավոր դատախազ **Աննա Վարդապետյան**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 3

Բովանդակություն 4

1.Հանցավորության կառուցվածք, շարժընթաց. 5

հանցագործությունների դեմ պայքար, հանցավորության հակազդում

2.Մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն 29

3.Մեղադրանքի պաշտպանություն և դատական ակտերի բողոքարկում 56

4.Ֆինվորական դատախազության գործունեություն 68

5.Կոռուպցիայի դեմ պայքար 79

6.Պետական և համայնքային շահերի պաշտպանություն 97

7.Սպօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձում 126

8.Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն 132

9.Միջազգային - իրավական համագործակցություն և իրավական ապահովում 140

10.Քաղաքացիների ընդունելություն, դիմումների ընթացք և հանրային կապեր 161

1

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, ԾԱՐԺԸՆԹԱՑ.

հանցագործությունների դեմ պայքար, հանցավորության հակազդում

2023 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է հանցագործության 40.666 դեպք (2022 թվականին՝ 37.612), այսինքն՝ 100.000 բնակչին բաժին է ընկնում 1357 դեպք (2022 թվականին՝ 1263): Նշված դեպքերից 20.231-ը՝ Երևան քաղաքում (2022 թվականին՝ 21.604):

2022 թվականի համեմատությամբ՝ հանցագործության դեպքերն աճել են 3054-ով կամ 8.1%-ով:

2023 թվականին արձանագրվել է ոչ մեծ ծանրության հանցագործությունների նվազում: Միաժամանակ, աճել են միջին ծանրության, ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների դեպքերը:

2022 թվականի համեմատությամբ՝ ոչ մեծ ծանրության հանցագործությունների դեպքերը նվազել են 1257-ով կամ 5.9%-ով (2022 թվականին՝ 21.281, 2023 թվականին՝ 20.024), միջին ծանրության հանցագործությունների դեպքերն աճել են 2477-ով (2022 թվականին՝ 10.371, 2023 թվականին՝ 12.848) կամ 23.9%-ով, ծանր հանցագործությունների դեպքերը՝ 1036-ով կամ 20.4%-ով (2022 թվականին՝ 5080, 2023 թվականին՝ 6116), իսկ առանձնապես ծանր հանցագործությունների դեպքերը՝ 798-ով կամ 90.7%-ով (2022 թվականին՝ 880, 2023 թվականին՝ 1678):

Առանձնապես ծանր հանցագործությունների դեպքերի էական՝ 798 դեպքով աճը հիմնականում պայմանավորված է սպանության դեպքերի աճով (645-ով կամ 119.0%-ով), որոնցից 1132-ը հանկարծամահության դեպքեր են, որոնք մինչև 2022 թվականի 2-րդ կիսամյակ որպես հանցագործության դեպքեր չէին հաշվառվում: Հետևաբար, կարելի է փաստել, որ 2023 թվականին կատարվել է 546 առանձնապես ծանր հանցագործության դեպք (2022 թվականին՝ 396 դեպք):

ՏԱՐԵԹԻՎԸ	ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐ	ՈՉ ՄԵԾ ԾԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐ	ՄԻՋԻՆ ԾԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐ	ԾԱՆՐ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐ	ԱՌԱՆՁՆԱՊԵՍ ԾԱՆՐ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐ
2022թ.	37.612	21.281	10.371	5080	880
2023թ.	40666	20024	12.848	6116	1678
աճ/ նվազում	**+3054**	**-1257**	**+2477**	**+1036**	**+798**
	+8.1%	**-5.9%**	**+23.9%**	**+20.4%**	**+90.7%**

Հանցագործության 40.666 դեպքի բացարձակ մեծամասնությունը՝ 80.9%-ը, ոչ մեծ (20.024 դեպք կամ 49.3%) և միջին ծանրության (12.848 դեպք կամ 31.6%-ը) հանցագործություններն են, այսինքն՝ նվազ հասարակական վտանգավորություն ներկայացնող հանցագործությունները: Առանձնապես ծանր հանցագործություններն ընդհանուր հանցագործությունների զանգվածում կազմում են 4.1% (2022 թվականին՝ 2.3%), իսկ ծանր հանցագործությունները՝ 15.0% (2022 թվականին՝ 13.5%):



2022



2023

2013-2023 թվականների հանցավորության կառուցվածքը վկայում է, որ ընդհանուր հանցագործությունների կազմում ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների տեսակարար կշիռն արտահայտող միջին տարեկան տոկոսային ցուցանիշը կազմել է 17.4%: Մինչդեռ, 2023 թվականին ծանր և առանձնապես ծանր հանցագործությունները կազմել են ընդհանուր հանցագործությունների 19.1%-ը:
Վերջին 10 տարվա ընթացքում նշված ցուցանիշից ավելի բարձր ցուցանիշ արձանագրվել է 2014 թվականին՝ 19.9% և 2015 թվականին՝ 20.0%:

Ստորև ներկայացվում է 2013-2023 թվականների հանցավորության կառուցվածքը՝ ըստ հանցագործությունների վտանգավորության աստիճանի.

Տարեթիվը	Հանցագործությունների ընդհանուր թիվը	Ոչ մեծ ծանրության հանցագործություններ		Միջին ծանրության հանցագործություններ		Ծանր հանցագործություններ		Առանձնապես ծանր հանցագործություններ		Ծանր և առանձնապես ծանր հանցագործություններ	
2013	18333	11372	62.0%	3743	20,4%	3088	16,9%	130	0,7%	3218	17.5%
2014	17546	9981	56.9%	4073	23.2%	3319	18.9%	173	1.0%	3492	19.9%
2015	17043	9185	53.9%	4455	26.1%	3238	19.0%	165	1.0%	3403	20.0%
2016	18.764	10757	57.3%	4728	25.2%	3081	16.4%	198	1.1%	3279	17.5%
2017	20.285	12380	61.0%	5012	24,7%	2729	13,4%	164	0,8%	2893	14.3%
2018	22.551	11989	53.2%	6700	29.7%	3638	16.1%	224	1.0%	3862	17.1%
2019	26.850	14613	54.4%	7463	27.8%	4490	16.7%	284	1.1%	4774	17.8%
2020	26.468	14629	55.3%	7466	28.2%	4077	15.4%	296	1.1%	4373	16.5%
2021	30.245	17460	57.7%	7988	26.4%	4447	14.7%	350	1.2%	4797	15.9%
2022	37.612	21281	56.6%	10371	29.8%	5080	14.2%	880	2.3%	5960	15.8%
2023	**40666**	**20024**	**49.3%**	**12848**	**31.6%**	**6116**	**15.0%**	**1678**	**4.1%**	**7794**	**19.1%**

2023 թվականին աճել են հասարակական անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության (2022 թվականին՝ 11.861, 2023 թվականին՝ 15.847 կամ 33.6%-ով), պետական իշխանության, ծառայության և կառավարման կարգի (2022 թվականին՝ 3357, 2023 թվականին՝ 4704 կամ 40.1%-ով), մարդու դեմ ուղղված հանցագործությունների (2022 թվականին՝ 6565, 2023 թվականին՝ 7138 կամ 8.7%-ով) դեպքերը:

Մասնավորապես՝ աճել են թմրամիջոցների շրջանառության դեպքերը (2022 թվականին՝ 1717, 2023 թվականին՝ 4564 կամ 165.8%-ով), կաշառք ստանալու, տալու, կաշառքի միջնորդության դեպքերը (2022 թվականին՝ 227, 2023 թվականին՝ 574 կամ 152.9%-ով), սեքսուալ բնույթի բռնի գործողությունների դեպքերը (2022 թվականին՝ 54, 2023 թվականին՝ 98 կամ 81.5%-ով), մարդկանց թրաֆիքինգի դեպքերը (2022 թվականին՝ 8, 2023 թվականին՝ 19 կամ 137.5%-ով):

2023 թվականին նվազել են սեփականության (2022 թվականին 13.902, 2023 թվականին՝ 11.420 կամ 17.9%-ով) և տնտեսական գործունեության (2022 թվականին՝ 1388, 2023 թվականին՝ 1013 կամ 27.0%-ով) դեմ ուղղված հանցագործությունները:

Մասնավորապես՝ **նվազել են գողության (2022 թվականին՝ 9854, 2023 թվականին՝ 6868 կամ 30.3%-ով), այդ թվում՝ բնակարանային գողության դեպքերը (2022 թվականին՝ 1151, 2023 թվականին՝ 889 կամ 22.8%-ով), տրանսպորտային միջոցներ փախցնելու դեպքերը (2022 թվականին՝ 32, 2023 թվականին՝ 0 կամ 100.0%-ով), հարկերի, տուրքերի վճարումից խուսափելու դեպքերը (2022 թվականին՝ 564, 2023 թվականին՝ 215 կամ 61.9%-վ):**

27 դեպքով կամ 40.3%-ով ավելացել են հրազենի գործադրմամբ կատարված հանցագործությունների դեպքերը: 2013-2023 թվականների ընթացքում հրազենի գործադրմամբ կատարված հանցագործությունների դեպքերի թիվը ներկայացվում է ստորև.

Հրազենի գործադրմամբ հանցագործություններ



Հանցագործությունների դեպքերի աճին զուգընթաց՝ 2023 թվականին արձանագրվել է հանցագործությունների բացահայտման ցուցանիշի նվազում:

Համաձայն Հայաստանի Հանրապետության ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի տվյալների[1]՝ 2023 թվականին հանրապետությունում գրանցված և բացահայտման տոկոսում հաշվվող հանցագործությունների 40.598 դեպքից (2022 թվականին՝ 35.410) բացահայտվել է 9.392 դեպքը (2022 թվականին՝ 13.366), չի բացահայտվել 31.206 դեպքը (2022 թվականին՝ 22.044): Այսինքն՝ 2023 թվականին բացահայտման ցուցանիշը կազմել է 23.1%՝ նախորդ տարվա 37.7%-ի դիմաց: **2022 թվականի համեմատ՝ 2023 թվականին բացահայտման ցուցանիշը նվազել է 14.6%-ով:**

2023 թվականին նվազել է ինչպես միջին ծանրության, այնպես էլ ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների բացահայտման ցուցանիշը:

Մասնավորապես՝

Միջին ծանրության հանցագործությունների բացահայտման ցուցանիշը կազմել է 28.8%՝ նախորդ տարվա 30.8%-ի դիմաց, ծանր հանցագործությունների բացահայտման ցուցանիշը կազմել է 23.7%՝ նախորդ տարվա 26.7%-ի դիմաց, իսկ առանձնապես ծանր հանցագործությունների բացահայտման ցուցանիշը կազմել է 17.9%՝ նախորդ տարվա 27.9%-ի դիմաց:

2023 թվականի ընթացքում արձանագրվել է մարդու դեմ ուղղված հանցագործության 7138 դեպք՝ նախորդ տարվա 6565-ի դիմաց. աճը՝ 573 դեպք կամ 8.7%: Մարդու դեմ ուղղված հանցագործությունների 7138 դեպքից 2613-ը կամ 36.6%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ 4525-ը կամ 63.3%-ը՝ մարզերում (նախորդ տարվա նույն ցուցանիշների հարաբերակցությունը կազմել է 43%/57%):

Ընդհանուր հանցագործությունների կազմում մարդու դեմ ուղղված հանցագործությունների հարաբերակցությունն արտահայտող գծապատկերը՝ ստորև.

Մարդու դեմ ուղղված հանցագործությունները՝ ընդհանուր հանցագործությունների կազմում



1. Հարկ է նշել, որ 2023 թվականից սկսած՝ ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնում վիճակագրությունը վարվում է միայն հաշվետու ժամանակահատվածում գրանցվածհանցագործությունների վերաբերյալ, ի տարբերություն նախորդ տարիների, երբ բացահայտումների վիճակագրությունը վարվում էր ըստ քրեական հետապնդման մարմիններիվարույթում եղած քրեական գործերի և նյութերի:

Փաստորեն՝ ընդհանուր հանցագործությունների կազմում մարդու դեմ ուղղված հանցագործությունների հարաբերակցությունն արտահայտող տոկոսային ցուցանիշը աննշան՝ 0.1%-ով աճել է (17.45%-17.55%):

Ստորև ներկայացված են 2017-2023 թվականներին արձանագրված՝ մարդու դեմ ուղղված հանցագործությունների թվերը, աճի և նվազման ցուցանիշները.

Տարեթիվը	Մարդու դեմ ուղղված հանցագործությունների թիվը		Նվազման կամ աճի քանակային ցուցանիշը	Նվազման կամ աճի տոկոսային ցուցանիշը
2017	4868		-27	-0.6
2018	4799		-69	-1.4
2019	4293		-506	-10.5
2020	4410		+117	+2.7
2021	4375		-35	-0.8
2022	Հանկարծամահության դեպքերի հաշվառմամբ	6565	+2190	+50.1
	Առանց հանկարծամահության դեպքերի	6081	1706	+39
2023	Հանկարծամահության դեպքերի հաշվառմամբ	7138	+573	+8.7%
	Առանց հանկարծամահության դեպքերի	6006	-75	-1.2%

2023 թվականի ընթացքում աճ է արձանագրվել մարդու դեմ ուղղված 40 հանցատեսակով:

Քանակական առումով ամենաբարձր աճ արձանագրած հանցատեսակը սպանությունն է: 2023 թվականի ընթացքում արձանագրվել է սպանության 1187 դեպք՝ նախորդ տարվա 542-ի դիմաց. աճը՝ 645 դեպք կամ 119.0%:

Սպանության 1187 դեպքից 1132-ը կամ 95.4%-ը հանկարծամահության դեպքերն են,որոնք մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը որպես հանցագործության դեպք չէին հաշվառվում:

Վերոգրյալը հաշվի առնելով՝ կարելի է արձանագրել, որ **2023 թվականին մարդու դեմ ուղղված հանցագործությունների աճ իրականում չի գրանցվել, հակառակը, մարդու դեմ ուղղված հանցագործությունները նվազել են 75-ով կամ 1.2%-ով (2022 թվականին՝ 6081, 2023 թվականին՝ 6006):**

Սպանության դեպքերի թիվը, առանց հանկարծամահության դեպքերի թվի, 2023 թվականին կազմել է 55՝ նախորդ տարվա 58-ի դիմաց, այսինքն՝ 3-ով կամ 5.2%-ով պակաս:

Երևան քաղաքում սպանության դեպքերի թիվն աճել է 4-ով կամ 22.2%-ով (2022 թվականին՝ 18, 2023 թվականին՝ 22), իսկ մարզերում՝ նվազել է 7-ով կամ 17.5%-ով (2022 թվականին՝ 40, 2023 թվականին՝ 33):

2023 թվականին Հայաստանի Հանրապետությունում արձանագրված սպանության 55 դեպքից 42-ը բացահայտվել է, չի բացահայտվել 13-ը, որոնցից 7-ը վերաբերում է անձի անհետ կորելու փաստին:

Անհետ կորածների 2016-2023 թվականների ցուցանիշները ներկայացվում են ստորև՝

Տարեթիվը	2016-2018թթ. ՀՀ-ում գրանցված սպանությունների թիվը՝ ըստ ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի տվյալների	Որից անհետ կորածների թիվը
2016	66	10
2017	49	6
2018	35	3
2019	47	1
2020	50	9
2021	60	2
2022	58	4
2023	55	7

Հաշվետու ժամանակահատվածում և նախորդող 10 տարիներին արձանագրված սպանությունների տվյալները ներկայացվում են ստորև.

Տարեթիվը	Արձանագրված սպանությունների թիվը	Մշտական բնակչության թիվը [2]	Գործակիցը 100 հազար մարդու հաշվով
2014	53	3013800	0.57
2015	52	3004600	0.58
2016	66	2992300	0.45
2017	49	2979400	0.61
2018	35	2969000	0.85
2019	47	2962500	0.63
2020	50	2961500	0.59
2021	60	2961400	0.49
2022	58	2937500	0.51
2023	55	2990900	0.54
Տարեկան միջին	52.5	2984330	0.58

2. Մշտական բնակչության թվաքանակի վերաբերյալ տվյալները՝ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայքից՝ https://armstat.am/file/article/sv_12_23a_510.pdf /2022-2023թթ. էջ175:

2023 թվականին 100.000 բնակչին բաժին է ընկել սպանության 0.54 դեպք: Այս ցուցանիշը վերջին 10 տարվա տարեկան միջին ցուցանիշից (0.58) ցածր է 0.04-ով:

Վերջին 10 տարիներին արձանագրված սպանության դեպքերի թվի գրաֆիկական պատկերը.



2014-2023 թվականներին տարեկան կատարված սպանությունների միջին թիվը կազմում է 52.5:

Հաշվետու ժամանակահատվածում չավարտված սպանության դեպքերի թիվն աճել է 19-ով կամ 41.3%-ով (2022 թվականին՝ 46, 2023 թվականին՝ 65): Երևան քաղաքում այդ դեպքերի թիվն աճել է 6-ով կամ 27.3%-ով (2022 թվականին՝ 22, 2023 թվականին՝ 28), իսկ մարզերում՝ 13-ով կամ 54.2%-ով (2022 թվականին՝ 24, 2023 թվականին՝ 37):

Սպանության փորձի դեպքերն աճել են 21-ով կամ 52.5%-ով (2022 թվականին՝ 40, 2023 թվականին՝ 61), իսկ սպանության նախապատրաստության դեպքերը նվազել են 2-ով կամ 33.33%-ով (2022 թվականին՝ 6, 2023 թվականին՝ 4):

Սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունները 2023 թվականին աճել են 67-ով կամ 61.5%-ով՝ կազմելով 176՝ նախորդ տարվա 109-ի դիմաց:

Մարդկանց թրաֆիքինգի դեպքերն աճել են 11-ով կամ 137.5%-ով (2022 թվականին՝ 8, 2023 թվականին՝ 19): Այս ցուցանիշը պետք է գնահատել դրական՝ հաշվի առնելով տվյալ հանցագործության լատենտայնության բարձր մակարդակը:

Մարդու դեմ ուղղված հանցագործությունների շարժընթացն առավել մանրամասն վերլուծելու նպատակով՝ ստորև ներկայացվում է առանձնապես ծանր հանցատեսակների թվում մարդու դեմ ուղղված հանցագործությունների հարաբերակցությունն արտահայտող աղյուսակը՝ վերջին 3 տարիների կտրվածքով.

Տարեթիվ	Հանկարծամահության դեպքերի հաշվառմամբ			Առանց հանկարծամահության դեպքերի հաշվառման		
	2021	2022	2023	2021	2022	2023
Առանձնապես ծանր բոլոր հանցագործությունները	350	880	1678	350	776	1678
Սպանություն, այդ թվում՝ փորձ	107	588	1252	107	104	120
Մարդու սաղմի, պտղի, մարդու կամ դիակի բջիջների, հյուսվածքների, օրգանների կամ կենսաբանական նյութերի կամ հեղուկների ապօրինի շրջանառությունը	-	-	1	-	-	1
Թրաֆիքինգ	7	2	5	7	2	5
Սեռական ազատության և անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործություններ	9	22	29	9	22	29
Ընդհանուր թիվը	123	612	1287	123	128	155
Առանձնապես ծանր հանցագործությունների թվում մարդու դեմ ուղղված հանցատեսակների տոկոսային ցուցանիշը	**35%**	**70%**	**77%**	**35%**	**16%**	**9%**

2023 թվականին, առանց հանկարծամահության դեպքերի հաշվառման, մարդու դեմ ուղղված առանձնապես ծանր հանցագործությունները, ինչպես 2022 թվականին, կազմում են առանձնապես ծանր բոլոր հանցագործությունների 16%-ը:

Թեև 2023 թվականին դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելու դեպքերն աճել են 129-ով կամ 13.8%-ով՝ կազմելով 1062՝ նախորդ տարվա 933-ի դիմաց, սակայն դրանց կազմում առողջությանը ծանր վնաս պատճառելու դեպքերը նվազել են 25-ով կամ 9.4%-ով՝ կազմելով 240 դեպք՝ նախորդ տարվա 265-ի դիմաց: Աճել են առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու դեպքերը՝ 76-ով կամ 34.1%-ով (2022 թվականին՝ 223, 2023 թվականին՝ 299), առողջությանը թեթև վնաս պատճառելու դեպքերը՝ 79-ով կամ 17.8%-ով (2022 թվականին՝ 443, 2023 թվականին՝ 522):

2023 թվականին արձանագրվել է ֆիզիկական ներգործության դեպքերի աճ՝ 428-ով կամ 19%-ով (2022 թվականին՝ 2261, 2023 թվականին՝ 2689): Նշենք, որ նախորդ տարի նշված դեպքերն աճել էին 253-ով կամ 11.2%-ով:

Հաշվետու տարում ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելու դեպքերն աճել են 84-ով կամ 28.7%-ով (2022 թվականին՝ 293, 2023 թվականին՝ 377): Նշված ցուցանիշը շարունակաբար վատթարացման միտում ունի. նախորդ տարի նույնպես արձանագրվել էր այդ ցուցանիշի աճ 175-ով կամ 60.3%-ով:

Հաշվետու ժամանակահատվածում ինքնասպանությունների թիվը կազմել է 198՝ նախորդ տարվա 188-ի դիմաց. հաշվետու տարում ինքնասպանությունների թիվն աճել է 10-ով կամ 5.3%-ով: 100.000 բնակչի հաշվով ինքնասպանության գործակիցը

2023 թվականին կազմում է 0.151, որը վերջին 10 տարիների տարեկան միջին ցուցանիշից՝ 0.165-ից, պակաս է 0.014-ով, իսկ նախորդ տարվանից՝ 0.007-ով: Նշված դեպքերի թվի աճի պայմաններում՝ վերոնշյալ ցուցանիշի նվազումը պայմանավորված է ՀՀ-ում մշտական բնակչության թվի ավելացման հանգամանքով

Վերջին 10 տարվա ինքնասպանության դեպքերի թիվը և 100 հազար բնակչի հաշվով գործակիցները ներկայացվում են ստորև՝

Տարեթիվը	Մշտական բնակչության թիվը ՀՀ-ում	Ինքնասպանությունների թիվը	100.000 բնակչի հաշվով ինքնասպանությունների գործակիցը
2014	3013800	168	0.179
2015	3004600	208	0.144
2016	2992300	195	0.153
2017	2979400	157	0.190
2018	2969000	179	0.166
2019	2962500	153	0.194
2020	2961500	183	0.162
2021	2962100	191	0.155
2022	2976800	188	0.158
2023	2990900	198	0.151
Տարեկան միջին	2981290	182	0.165



Ինքնասպանության տարիքային և սոցիալական կազմը՝ 2022-2023 թվականներին.

2023 թվական (տարիքային կազմ)



2022 թվական (տարիքային կազմ)



2023 թվական (սոցիալական կազմ)



2022 թվական (սոցիալական կազմ)



Ինքնասպանությունների տարիքային կազմի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2023 թվականին նախորդ տարվա համեմատ ինքնասպանությունների կազմում 18-ից 29 տարեկանների տոկոսային ցուցանիշը նվազել է 6-ով (2022 թվականին՝ 20%, 2023 թվականին՝ 14%): Ինքնասպանությունների կազմում 65-ից բարձր տարիքի անձանց տոկոսային ցուցանիշը նույնպես նվազել է 6-ով (2022 թվականին՝ 30%, 2023 թվականին՝ 24%): 30-ից 65 տարեկանների տոկոսային ցուցանիշն աճել է 15-ով (2022 թվականին՝ 45%, 2023 թվականին՝ 60%):

2023 թվականին ինքնասպանությունների կազմում 14-ից ցածր տարիքի երեխա չի եղել, 2022 թվականին նշված ցուցանիշը՝ 1: 2023 թվականին ինքնասպանությունների կազմում 14-17 տարեկանների թիվը եղել է 5, 2022 թվականին՝ 9, 2021 թվականին՝ 7, 2020 թվականին՝ 4:

Հաշվի առնելով խնդրի կարևորությունը՝ **2024 թվականի ընթացքում Դատախազությունում նախատեսվում է ուսումնասիրել ինքնասպանությունների դեպքերի առթիվ նախաձեռնված քրեական վարույթներով մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության և մեղադրանքի պաշտպանության վիճակը:**

Մարդու դեմ ուղղված հանցագործությունների թվի աճին զուգահեռ՝ հաշվետու ժամանակահատվածում արձանագրվել է դրանց բացահայտման ցուցանիշի նվազում. մասնավորապես՝ 2023 թվականին նշված ցուցանիշը կազմել է 18.8%՝ ի տարբերություն 2022 թվականի 43.4%-ի:

Արձանագրվել է մարդու դեմ ուղղված գրեթե բոլոր հանցատեսակների բացահայտման նվազում. բացահայտվել է սպանությունների (առանց հանկարծամահության) 63.6%-ը՝ նախորդ տարվա 77.6%-ի, սպանության փորձերի 64.6%-ը՝ նախորդ տարվա 71.7%-ի, առողջությանը ծանր վնաս պատճառելու 46.7-ը՝ նախորդ տարվա 65.3%-ի, սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունների 22.7%-ը՝ նախորդ տարվա 53.2%-ի, մարդու դեմ ուղղված այլ հանցագործությունների 18.1%-ը՝ նախորդ տարվա 43.1%-ի համեմատ:

2023 թվականի ընթացքում, նախորդ տարվա համեմատությամբ, Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է սեփականության դեմ ուղղված հանցագործությունների՝ 2482 դեպքով կամ 17.9%-ով նվազում (2022 թվականին՝ 13.902, 2023 թվականին՝ 11.420), Երևան քաղաքում դեպքերը նվազել են 1931-ով կամ 21.7%-ով (2022 թվականին՝ 8913, 2023 թվականին՝ 6982): Չնայած սեփականության դեմ ուղղված հանցագործությունները, ընդհանուր առմամբ, ունեցել են նվազման միտում, այնուամենայնիվ, արձանագրվել է սեփականության դեմ ուղղված որոշ հանցատեսակների աճ, իսկ առանձին դեպքերում՝ էական աճ: Մասնավորապես՝ **ավազակության դեպքերն աճել են 24-ով կամ 46.2%-ով (2022 թվականին՝ 52, 2023 թվականին՝ 76):**

Ավազակության դեպքերի աճը առավելապես պայմանավորված է օրենսդրական փոփոխություններով: Մասնավորապես, եթե 2003 թվականի օգոստոսի 1-ին ուժի մեջ մտած Քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը պատասխանատվություն էր նախատեսում կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով զուգորդված ուրիշի գույքը բացահայտ հափշտակելու համար, ապա 2022 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած Քրեական օրենսգրքի 252-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կատարված հափշտակության համար: Այլ խոսքով, եթե նախկինում կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով զուգորդված հափշտակությունը որակվում էր որպես կողոպուտ, ապա 2022 թվականի հուլիսի 1-ից հետո նման դեպքերը որակվում են որպես ավազակությամբ կատարված հափշտակություն:

Աճել են նաև խարդախության դեպքերը 493-ով կամ 24.9%-ով (2022 թվականին՝ 1979, 2023 թվականին՝ 2472), համակարգչային հափշտակության դեպքերը՝ 169-ով կամ 36.7%-ով (2022 թվականին՝ 461, 2023 թվականին՝ 630):

Խարդախությամբ անձնական գույքի հափշտակության դեպքերի աճը պայմանավորված է տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմամբ: Կարելի է առանձնացնել խարդախությամբ անձնական գույքի հափշտակության մի քանի տարածված մեխանիզմներ:

- Հանցավորը բազմաթիվ տնտեսվարողներից, հիմնականում վերջիններիս հաշվապահությունն իրականացնելու պատրվակով, ստանում է օգտվողի՝ էլեկտրոնային հասցեով Պետական եկամուտների կոմիտեի տեղեկատվական բազա մուտք գործելու տվյալները, որից հետո ՊԵԿ տեղեկատվական բազա մուտքագրված հայտ-դիմումի հիման վրա՝ ներկայացնում է ճշտված հաշվետվություններ, միասնական հաշվից այդ գումարները հետ վերադարձնելու դիմումներ, որոնց հիման վրա այդ գումարները փոխանցվում են հանցավորի կողմից մատնանշված հաշվին ու այդպիսով նշված գումարները հափշտակում են:
- Հանցավորը տուժողին համոզում է մասնակցել «Gazprom Invest» կամ այլ կազմակերպություններում, որից հետո տրամադրում է իր բանկային հաշվեհամարը, որին տուժողը փոխանցում է գումար և իբր սկսում մասնակցել կազմակերպության կառավարմանը, մինչդեռ փոխանցված գումարը հափշտակվում է:
- Հանցավորը տուժողին համոզում է ներդրում կատարել «Forex», «Binance» առևտրային հարթակներում: Տուժողը փոխանցում է գումար և իբր սկսում մասնակցել բորսայում իրականացվող գործարքներին: Արդյունքում՝ հաշվին արագ կերպով որպես շահույթ ավելանում են գումարներ, իսկ երբ տուժողը ցանկանում է դրանք կանխիկացնել, հանցավորի կողմից առաջարկ է ստանում այդ գումարը կանխիկացնելու համար ևս կատարել ներդրում՝ հաշվին առկա գումարի ինչ-որ տոկոսի չափով: Ներդրում կատարելուց հետո գումարը հափշտակվում է:
- Հանցավորը «Ֆեյսբուք» սոցիալական կայքում զետեղված՝ «Natixis», «NATIXIS GROUP» և «CaixaBank» անվանումներով էջերում տեղադրում է մտացածին «վարկի տրամադրման մատչելի պայմաններ» և համանման այլ վերնագրերով գովազդներ, ինչի հիման վրա նույն սոցիալական կայքի որոշ օգտատերեր վարկ ստանալու նպատակով նշված էջերում զետեղված հեռախոսահամարներով կապ են հաստատում հիշյալ անձանց հետ կամ վարում են նամակագրություն, որի ընթացքում հանցավորը, վարկի տրամադրման հետ կապված նոտարական, ապահովագրական, ինչպես նաև այլ ծախսեր կատարելու պատրվակով՝ տուժողից պահանջում է «Ria» և «MoneyGram» համակարգերի միջոցով իրականացնել դրամական փոխանցումներ: Դրամական միջոցները ստանալուց հետո վարկեր չեն տրամադրվում, իսկ գումարները՝ հափշտակվում:
- Հանցավորը համացանցի «List.am» ապրանքների վաճառքի կայքում ապրանքների վաճառքի, ծառայությունների մատուցման հայտարարություններ տեղադրած անձանց հետ «Whatsapp» հավելվածում գործող հեռախոսահամարների միջոցով կապ հաստատելուց հետո, հանդես է գալիս որպես գնորդ կամ ծառայությունների մատուցման պատվիրատու և առաջարկում նախօրոք վճարել՝ գումարներն առցանց եղանակով փոխանցելու միջոցով, իսկ ապրանքները ստանալ «ՀայՓոստ», «Սուրհանդակ», «Իդրամ» առաքանիների միջոցով: Այդ նպատակով տուժողը հանցավորին է տրամադրում իր բանկային քարտի դիմերեսի և դարձերեսի վավերապայմանները, որոնց օգտագործմամբ հափշտակվում են բանկային քարտերում առկա գումարները:

Համակարգչային հափշտակության դեպքերի աճը պայմանավորված է համակարգչային միջոցների և ծրագրերի զարգացմամբ, ֆինանսական տարատեսակ ծառայություններ մատուցելու ոլորտում համակարգչային նորարարությունների ներդրմամբ, դրան զուգահեռ՝ այդ ծառայությունն ապահովող ծրագրերում թերությունների առկայությամբ: Նշված հանցատեսակների աճը պայմանավորվում է նաև նրանով, որ բանկային գործառնությունների կատարման գործընթացներում ներառվել է տարատեսակ գործարքների գումարներն առցանց եղանակով փոխանցելու հնարավորությունը, սակայն բավարար չափով չեն կատարելագործվել բանկային վերահսկողական մեխանիզմները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ համակարգչային հափշտակություններով լուրջ գույքային վնասներ են պատճառվում ֆիզիկական և իրավաբանական անձանց, առանձին դեպքերում՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին՝ Դատախազության կողմից միջոցներ են ձեռնարկվում նշված հանցագործությունների մեխանիզմների վերաբերյալ պարբերաբար, տարբեր եղանակներով (լրատվամիջոցներ և այլն) հանրությանն իրազեկելու ուղղությամբ: Բացի այդ, Դատախազության կողմից համապատասխան գրություններով իրավասու մարմինները տեղեկացվում են բանկային վերահսկողական մեխանիզմների ու վճարահաշվարկային էլեկտրոնային համակարգերի բարելավման անհրաժեշտության վերաբերյալ:

Հաշվետու ժամանակահատվածում կողոպուտի դեպքերը նվազել են 3-ով կամ 2.0%-ով (2022 թվականին՝ 148, 2023 թվականին՝ 151), գողության դեպքերը՝ 2986-ով կամ 30.3%-ով (2022 թվականին՝ 9854, 2023 թվականին՝ 6868), ընդ որում՝ բնակարանային գողությունների դեպքերը՝ 262-ով կամ 22.8%-ով (2022 թվականին՝ 1151, 2023 թվականին՝ 889), վստահված գույքի հափշտակության դեպքերը՝ 7-ով կամ 1.7%-ով (2022 թվականին՝ 417, 2023 թվականին՝ 410):

Հաշվետու տարում արձանագրվել է նաև սեփականության դեմ ուղղված այլ հանցագործությունների նվազում 140 դեպքով կամ 14.6%-ով (2022 թվականին՝ 956, 2023 թվականին՝ 816):

Նվազումը պայմանավորված է, ի թիվս այլնի, նոր Քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու հանգամանքով, որի արդյունքում սեփականության դեմ ուղղված որոշ հանցատեսակներ (օր.՝ գույքն անզգուշությամբ ոչնչացնելը կամ վնասելը) ապաքրեականացվել են, իսկ որոշ հանցակազմերի դիսպոզիցիաներում կատարվել են փոփոխություններ:

Սեփականության դեմ ուղղված հանցագործությունների թվի նվազմանը զուգահեռ՝ հաշվետու ժամանակահատվածում արձանագրվել է հանցագործությունների բացահայտման ցուցանիշի նվազում. 2023 թվականին նշված ցուցանիշը կազմել է 10.7%, 2022 թվականին՝ 27.6%:

Ընդ որում՝ արձանագրվել է սեփականության դեմ ուղղված գրեթե բոլոր հանցատեսակների բացահայտման նվազում. բացահայտվել է պետական կամ հանրային գույքի հափշտակությունների 14.7%-ը՝ նախորդ տարվա 30.6%-ի, անձնական գույքի հափշտակությունների 11.5%-ը՝ նախորդ տարվա 28.2%-ի, ավազակության դեպքերի 34.2%-ը՝ նախորդ տարվա 84.6%-ի, կողոպուտի դեպքերի 26.4%-ը՝ նախորդ տարվա 46.4%-ի, գողության դեպքերի 11.9%-ը՝ նախորդ տարվա 28.7%-ի, բնակարանային գողության դեպքերի 15.0%-ը՝ նախորդ տարվա 24.3%-ի, խարդախության դեպքերի 8.6%-ը՝ նախորդ տարվա 22.5%-ի, վստահված գույքի հափշտակությունների 15.4%-ը՝ նախորդ տարվա 31.2%-ի, համակարգչային հափշտակությունների 2.1%-ը՝ նախորդ տարվա 5.5%-ի, սեփականության դեմ ուղղված այլ հանցագործությունների դեպքերի 7.3%-ը՝ նախորդ տարվա 27.3%-ի համեմատ:

2022 թվական



2023 թվական



2023 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է հասարակական անվտանգության, կարգի, բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների 15.847 դեպք՝ նախորդ տարվա 11.861-ի դիմաց. դեպքերն աճել են 3986-ով կամ 33.6%-ով:

2023 թվականին արձանագրված խուլիգանության դեպքերն աճել են 148-ով կամ 32.7%-ով (2022 թվականին՝ 452, 2023 թվականին՝ 600): Նշված դեպքերից Երևան քաղաքում արձանագրվել է 315-ը, մարզերում՝ 285-ը. նախորդ տարի Երևան քաղաքում արձանագրվել է 300-ը, մարզերում՝ 152-ը:

Հաշվետու ժամանակահատվածում նշված դեպքերի բացահայտումը կազմել է 29.1% (2022 թվականին՝ 48.2%):

Վերջին 8 տարիներին՝ 2016-2023 թվականներին, զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկայի գործադրմամբ (զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ կամ դրա գործադրման սպառնալիքով) խուլիգանության դեպքերն աճում են: Նշված դեպքերի քանակական ցուցանիշները համապատասխանաբար կազմել են՝ 32-41-53-75-86-95-97-110. աճը հաջորդաբար կազմել է 9-12-22-11-9-2-13 կամ 28,1%-29,3%-41,5%-14.7%-10.5%-2%-13%:

2023 թվականին զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկայի գործադրմամբ խուլիգանության դեպքերն աճել են 13-ով կամ 13.4%-ով. 2022 թվականին դրանք եղել են 97-ը, 2023 թվականին՝ 110-ը: Ընդ որում՝ Երևան քաղաքում նշված դեպքերն աճել են 6-ով (2022 թվականին՝ 55, 2023 թվականին՝ 61), մարզերում՝ 7-ով (2022 թվականին՝ 42, 2023 թվականին՝ 49):

Այդ համատեքստում նշենք, որ Գլխավոր դատախազությունում վերլուծվել է հրազենի գործադրմամբ կատարված դեպքերի, այդ թվում՝ խուլիգանության աճը և դրան զուգահեռ՝ հրազենի, ռազմամթերքի ապօրինի շրջանառության դեպքերի նվազումը, փաստվել է այդ ցուցիչների՝ բացասական առումով կայուն աճի միտումը և հանցավորության վիճակի վրա դրա բացասական ազդեցությունը:

Այս համատեքստում հարկ է ընդգծել վերջին երկու տարիներին գրանցված՝ հրազենի գործադրմամբ կատարված հանցագործությունների դեպքերի բացահայտման ցուցանիշի նվազումը: Եթե 2021 թվականին բացահայտվել էր այդ հանցագործությունների 77.2%-ը, ապա 2022 թվականին՝ 68.7%-ը, իսկ 2023 թվականին՝ 43.6%-ը:

Նշված վերլուծությունների արդյունքներով՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից հանձնարարվել է ձեռնարկել անհետաձգելի միջոցներ՝ իրավիճակն ուսումնասիրելու, պատճառներն ու նպաստող պայմանները վեր հանելու, գնահատելու, բացահայտման ցուցանիշները բարելավելու, հանցավորության վիճակն առավել վերահսկելի դարձնելու նպատակով: ՀՀ ոստիկանության պետի համապատասխան գրություններով հայտնվել է, որ իրականացվում են անհրաժեշտ միջոցառումներ, Ոստիկանության Երևան քաղաքի և մարզային վարչություններին տրվել են կոնկրետ հանձնարարականներ:

2023 թվականին Քրեական օրենսգրքի 298-րդ հոդվածով (կավատությունը՝ շահադիտական նպատակով կամ այլ ստոր դրդումներով այլ անձի պոռնկությամբ զբաղվելուն ներգրավելը կամ հակելը) արձանագրվել է 5 դեպք. 2022 և 2021 թվականներին արձանագրվել է նման 1-ական դեպք: Վերոնշյալ դեպքերի աճը, հաշվի առնելով տվյալ հանցատեսակի լատենտայնության բարձր աստիճանը, պետք է դրական գնահատել:

Հաշվետու տարում Քրեական օրենսգրքի 299-րդ հոդվածով (պոռնկությամբ զբաղվելուն նպաստելը) արձանագրվել է 5 դեպք՝ նախորդ տարվա 7-ի դիմաց: Այս հանցատեսակի նվազում է արձանագրվել նաև 2022 թվականին (նվազումը՝ 5-ով):

Հաշվետու ժամանակահատվածում թմրամիջոցների հետ կապված հանցագործությունների արձանագրված դեպքերի թիվը կազմել է 5070՝ նախորդ տարվա 2266-ի դիմաց: Թմրամիջոցների ապօրինի շրջանառության արձանագրված դեպքերի թիվն աճել է 2804-ով կամ 123.7%-ով:

Ընդ որում, իրացնելու նպատակով թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերն աճել են **1771-ով կամ 171.8%-ով**՝ կազմելով 2802՝ նախորդ տարվա **1031-ի** դիմաց:

2023 թվականի ընթացքում թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերի բացահայտման ցուցանիշը նվազել է և կազմել **17.5%՝** նախորդ տարվա **37,9%-ի** դիմաց:

Նույն ժամանակահատվածում իրացման նպատակով թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերի բացահայտման ցուցանիշը կազմել է **10,5%՝** նախորդ տարվա **17,6%-ի** դիմաց:

Թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության, նշված հանցատեսակի տարածվածության, դեպքերի հայտնաբերելիության, բացահայտման վիճակագրության արձանագրված ցուցանիշները՝ կայուն աճի տեսանկյունից, պայմանավորված են ինչպես քրեադատավարական օրենսդրության փոփոխությամբ կամ իրավակիրառ պրակտիկայում նույնիսկ բուսական ծագման մանր չափի թմրամիջոցի հայտնաբերման դեպքերում դրանք իրացնելու փաստով քրեական վարույթներ նախաձեռնելու ձևավորված պրակտիկայի առկայությամբ, այնպես էլ սոցիալական կայքերի, համացանցային հեռահաղորդակցության համակարգերի օգտագործմամբ թմրամիջոցների ապօրինի շրջանառության բացահայտմանը խոչընդոտող մի շարք գործոններով:

Սակայն հարկ է նշել նաև, որ նույնիսկ արձանագրված դեպքերի, նախաձեռնված վարույթների նման աճի պայմաններում թմրամիջոցների ապօրինի շրջանառության գրանցված դեպքերի քանակը չի արտացոլում իրական պատկերը:

Անդրադառնալով Հայաստանի Հանրապետության տարածքում թմրամիջոցների ապօրինի շրջանառության վերաբերյալ տվյալներին՝ հարկ է նշել, որ թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների 2023 թվականի շարժընթացի վերաբերյալ աղյուսակն ըստ տարածքների՝ հետևյալն[3] է.

3. Հանրապետական տվյալների շարքում առանձին չեն ներկայացվել ՀՀ ոստիկանության ՔՈԳՎ տվյալները, իսկ մայրաքաղաքի տվյալներում՝ Մետրոպոլիտենի և «Հվարթնոց» օդանավակայանի ստորաբաժանումների տվյալներ:

Տարածք	2023 թվականի ապօրինի շրջանառություն դեպքերի թիվը	Աճ/նվազում	2023 թվականի իրացման նպատակով շրջանառություն	Աճ/նվազում
ՀՀ	4564	+2847 (165,8%)	2802	+1771 (171,8%)
Երևան	2821	+1836 (186,4%)	1893	+1185 (167,4%)
Էրեբունի-Նուբարաշեն	457	+302 (194,8%)	312	+192 (160.0%)
Քանաքեռ-Զեյթուն	234	+154 (192,5%)	132	+62 (88,6%)
Արաբկիր	475	+334 (236,9%)	287	+192 (202,1%)
Մալաթիա-Սեբաստիա	353	+200 (130,7%)	315	+202 (178,8%)
Կենտրոն և Նորք-Մարաշ	311	+152 (95,6%)	187	+53 (39,6%)
Ավան և Նոր Նորք	318	+218 (218,0%)	250	+183 (273,1%)
Աջափնյակ և Դավիթաշեն	217	+133 (158,3%)	153	+105 (218,8%)
Շենգավիթ	434	+328 (309,4%)	243	+185 (319,0%)
Ընդ.մարզեր	1743	+1011	909	+586
Շիրակ	329	+205 (165,3%)	263	+188 (250,7%)
Արմավիր	585	+377 (181,3%)	289	+199 (221,1%)
Տավուշ	46	+26 (130,0%)	14	+7 (100%)
Արագածոտն	157	+88 (127,5%)	92	+72 (360,0%)
Լոռի	141	+54 (62,1%)	63	+22 (53,7%)
Վայոց ձոր	26	+12 (85,7%)	9	+5 (125,0%)
Կոտայք	157	+97 (161,7%)	68	+37 (119,4%)
Արարատ	167	+84 (101,2%)	48	+20 (71,4%)
Գեղարքունիք	82	+39 (90,7%)	44	+27 (158,8%)
Սյունիք	53	+29 (120,8%)	19	+9 (90,0%)

Նշված վիճակագրական տվյալներից ակնհայտ է, որ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում արձանագրվել է ինչպես թմրամիջոցների ապօրինի շրջանառության, այնպես էլ դրանց իրացման նպատակով շրջանառության դեպքերի աճ, որն առանձին տարածքներում գերազանցում է 100 կամ նույնիսկ 300 տոկոսը: Մարզերում, ի տարբերություն Երևան քաղաքի, դեպքերը համեմատաբար քիչ են, ինչը պայմանավորված է առավելապես բնակչության թվակազմով և կենտրոնացվածությամբ:

Առանձնահատուկ ուշադրության են արժանի Երևան քաղաքի Արաբկիր, Շենգավիթ, Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանները, որտեղ, նախորդ տարվա համեմատությամբ, էականորեն ավելացել է ինչպես թմրամիջոցների ապօրինի շրջանառության, այնպես էլ դրանց իրացման նպատակով շրջանառության դեպքերի թիվը: Մարզերում դեպքերի դինամիկ աճը պահպանվում է հատկապես Շիրակի և Արմավիրի մարզերում:

Թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերի թվի աճի համատեքստում մտահոգիչ է նշված հանցատեսակի՝ առավելապես իրացման նպատակով ապօրինի շրջանառության դեպքերի բացահայտման ցուցանիշների նվազումը:

Իրացման նպատակով թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերի բացահայտման տոկոսային ցուցանիշների՝ 2022 և 2023 թվականների համեմատական պատկերն՝ ըստ տարածքների հետևյալն է.

Տարածք	Իրացման նպատակով թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերի բացահայտման ցուցանիշ՝ ըստ անձի ինքնության պարզման տվյալների	
	2022	2023
ՀՀ	17,6%	10,5%
Երևան	13,3%	9,8%
Էրեբունի և Նուբարաշեն	22,5%	11,2%
Քանաքեռ-Զեյթուն	11,4%	6,8%
Արաբկիր	7,4%	12,9%
Մալաթիա-Սեբաստիա	10,6%	4,4%
Կենտրոն և Նորք-Մարաշ	13,4%	13,4%
Ավան և Նոր Նորք	10,4%	6,8%
Աջափնյակ և Դավիթաշեն	12,5%	17,0%
Շենգավիթ	12,1%	7,8%
Շիրակ	10,7%	5,7%
Արմավիր	18,9%	12,5%
Տավուշ	100%	50%
Արագածոտն	25%	7,6%
Լոռի	14,6%	12,7%
Վայոց ձոր	75%	22,2%
Կոտայք	45,2%	10,3%
Արարատ	32,1%	22,9%
Գեղարքունիք	88,2%	20,5%
Սյունիք	30%	42,1%

Նշված վիճակագրական տվյալները վկայում են, որ իրացման նպատակով թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերի աճին զուգահեռ այդ հանցատեսակի բացահայտման ցուցանիշի նվազումը դրսևորվել է Հայաստանի Հանրապետության գրեթե ամբողջ տարածքում:

Բացահայտման առումով խիստ մտահոգիչ արդյունքներ են գրանցվել հատկապես Գեղարքունիքի մարզում 2022 թվականին գրանցվել է բացահայտման 88.2%, 2023 թվականին՝ 20.5%, իսկ 2021 թվականին գրանցվել է բացահայտման 100 %-անոց արդյունք): Վայոց ձորի մարզում 2022 թվականին գրանցվել է բացահայտման 75% արդյունք, 2023 թվականին՝ 22,2%, իսկ 2021 թվականին գրանցվել է բացահայտման 100%-անոց արդյունք: Տավուշի մարզում 2022 թվականին գրանցվել է բացահայտման 100%-անոց արդյունք, 2023 թվականին՝ 50%:

2023 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմինների կողմից ձեռնարկված միջոցառումների արդյունքում ապօրինի շրջանառությունից առգրավվել են **202 կիլոգրամ 60,038 գրամ տարբեր տեսակի թմրամիջոցներ՝** նախորդ տարվա 119 կիլոգրամ 832.29 գրամի դիմաց, **376.034 գրամ հոգեմետ նյութեր՝** նախորդ տարվա 402.963 գրամի դիմաց: 2023 թվականի ընթացքում առգրավվել են **0.12544 կիլոգրամ պրեկուրսորներ՝** նախորդ տարվա 0.0637 կիլոգրամի դիմաց:

Ստորև ներկայացվում են 2022 և 2023 թվականների ընթացքում ապօրինի շրջանառությունից հանված թմրամիջոցների վերաբերյալ Ոստիկանության կողմից տրամադրված վիճակագրական համեմատական տվյալները (ներկայացվում են ըստ փորձագիտական հիմնարկներից ստացված եզրակացությունների).

Թմրամիջոցներ տեսակներ	2022 թվական	2023 թվական	+ /-
Մեթամֆետամին	13 կգ 9.931 գր	9 կգ 917.6573	-3 կգ 92.2737 գր
Ամֆետամին	6.103 գր	0.583 գր	-5.52 գր
Ափիոն	12 կգ 707.444 գր	2 կգ 850.748 գր	-9 կգ 856.696 գր
Հերոին	2 կգ 59.578 գր	8 կգ 340.546 գր	+6 կգ 280.968 գր
Կոկաին	102.644 գր	1 կգ 868.949 գր	+1 կգ 766.305 գր
α-PVP	4 կգ 140.015 գր	115.1073 գր	-4 կգ 24.9077 գր
ՄԴՄԱ	1 կգ 239.249 գր	478.671 գր	-760.578 գր
ԼՍԴ	3.410581 գր	3.132 գր	-0.278581 գր
Մեֆեդրոն	909.774 գր	45.6 գր	-864.174 գր
Հաշիշ	633.3803 գր	3 կգ 325.028 գր	+2 կգ 691.6477 գր
Հաշիշի յուղ	342.62005 գր	201.6605 գր	-140.95955 գր
Ացետիլացված ափիոն	451.248 գր	990.7015 գր	+539.4535 գր
Ծխախոտային կրիչ (սպայս)	748.059 գր	268.194 գր	-479.865 գր
Մարիխուանա	31 կգ 206.46398 գր	52 կգ 278.091 գր	+21 կգ 71.62702 գր
Կանեփ	51 կգ 826.3789 գր	119 կգ 629.245 գր	+67 կգ 802.8661 գր
Կանեփի բույս	6604 հատ	15543 հատ	+8939 հատ
Կակաչի բույս	-	159 հատ	+159 հատ
Կակաչի ծղոտ	8.36 գր	564.58 գր	+556.22 գր
Տետրահիդրոկանաբինոլ	1.3765 գր	2.596 գր	+1.2195 գր
ՏՀԿ պարուն. բուս. խառն.	296.75528 գր	1 կգ 58.422 գր	+761.66672 գր
Բուպրենորֆին	1.207138 գր	7.86634 գր	+6.659202 գր
Կոդեին	54.5451 գր	20.821 գր	-33.7241 գր
Մորֆին	2.2412 գր	0.02 գր	-2.2212 գր
Մեթադոն	13.030527 գր	38.96901 գր	+25.938483
Պսիլոցին	25.672 գր	52.327 գր	+26.655 գր
Հիդրոկոդոն	0.96 գր	0.5 գր	-0.46 գր
Ֆենտանիլ	-	0.024 գր	+0.024 գր
Հալյուցինոգեն սունկ	-	45 հատ	+45 հատ
Էթիլմորֆին	0.15 գր	-	- 0.15 գր
Օքսիկոդոն	0.115 գր	-	- 0.115 գր
Հիդրոմորֆոն	11.187 գր	-	- 11.187 գր
2C-B	17.9 գր	-	- 17.9 գր
Տիլիդին	12.5 գր	-	- 12.5 գր
Ընդհանուր	119 կգ 832.29գր	202 կգ 60.038 գր	+82 կգ 227.746 գր

Անդրադառնալով առգրավված թմրամիջոցների քանակի աճին՝ հարկ է նշել, որ նախորդ տարվա համեմատությամբ աճել է ապօրինի շրջանառությունից հանված, առավել բարձր վտանգավորություն ներկայացնող ինչպես սինթետիկ, այնպես էլ բուսական ծագման թմրամիջոցների քանակը: Մասնավորապես՝ հաշվետու ժամանակաշրջանում աճել են ապօրինի շրջանառությունից հանված՝ «Հերոին», «Մեթադոն» «Կոկաին», «Հաշիշ», «Մարիխուանա», «Կանեփ», «Կանեփի բույս», «Տետրահիդրոկաննաբինոլ պարունակող բուսական խառնուրդ» և «Կակաչի ծղոտ» թմրամիջոցի, թմրամիջոցներ կրող զանգվածների ապօրինի շրջանառության դեպքերը, մինչդեռ 2022 թվականին արձանագրվել է «Մեթամֆետամին», «α-PVP», «ՄԴՄԱ», «ԼՍԴ», «Մեֆեդրոն» տեսակի թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերի աճ: 2023 թվականի ընթացքում նվազել են «Մեթամֆետամին» (3 կգ 92.2737 գր), «α-PVP» (4 կգ 24.9077 գր), «ՄԴՄԱ» (760.578 գր), «ԼՍԴ» (0.278581 գր), «Մեֆեդրոն» (864.174 գր) տեսակի թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերը:

Առողջապահության նախարարության «Կախվածությունների բուժման ազգային կենտրոն» ՓԲԸ-ից ստացված տվյալների համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում 2023 թվականի հունվարի 1-ի դրությամբ «թմրամոլ» ախտորոշմամբ հաշվառման մեջ է գտնվել 7612 անձ: 2022 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ նշված անձանց թիվը կազմել է 7570, 2021 թվականին՝ 7392, 2020 թվականին՝ 7209, 2019 թվականին՝ 6951, 2018 թվականին՝ 6572:

Հաշվի առնելով բուժում ստացած անձանց հաշվառումից հանելու հանգամանքը՝ կարելի է արձանագրել, որ նշված տվյալները վկայում են վերջին 6 տարիների ընթացքում թմրամոլությամբ տառապող անձանց թվի կայուն աճի մասին:

2023 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում աճել են ճանապարհային երթևեկության կանոնները խախտելու դեպքերը:

Եթե 2022 թվականին արձանագրվել է 1983 դեպք, ապա 2023 թվականին՝ 2185 դեպք, այսինքն՝ դեպքերն աճել են 202-ով կամ 10.2%-ով: Բացահայտումը կազմել է 36.8%՝ նախորդ տարվա 49.6%-ի դիմաց: Աճել է նաև մահվան ելքով դեպքերի թիվը. եթե 2022 թվականին արձանագրվել է մահվան ելքով 193 դեպք, ապա 2023 թվականին՝ 204 դեպք, այսինքն՝ դեպքերն աճել են 11-ով կամ 5.7%-ով: Բացահայտումը կազմել է 18.6%՝ նախորդ տարվա 32.6%-ի դիմաց:

2023 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրված ճանապարհային երթևեկության կանոնները խախտելու 2185 դեպքից 873-ը կամ շուրջ 40%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ 1312-ը կամ շուրջ 60%-ը՝ մարզերում: Մահվան ելքով արձանագրված 204 դեպքից 43-ը կամ շուրջ 21%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ 161-ը կամ շուրջ 79%-ը՝ մարզերում:

Երևան քաղաքում 2023 թվականի ընթացքում արձանագրված ճանապարհային երթևեկության կանոնները խախտելու դեպքերը նվազել են 117-ով կամ 11.8%-ով (2022 թվականին՝ 990 դեպք): Մահվան ելքով դեպքերի թիվն աճել է 1-ով կամ 2.4%-ով:

Մարզերի մեծամասնության տարածքում 2023 թվականի ընթացքում արձանագրված ճանապարհային երթևեկության կանոնները խախտելու դեպքերն աճել են, բացառություն են կազմում միայն Արագածոտնի և Վայոց ձորի մարզերը:

Մահվան ելքով դեպքերի թվի նվազում է արձանագրվել ինչպես Արագածոտնի, այնպես էլ Արմավիրի և Գեղարքունիքի մարզերում:

ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության կողմից տրամադրված տվյալների համաձայն՝ **2023 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 4614 ճանապարհատրանսպորտային պատահար, որի հետևանքով մահացել է 378 անձ, իսկ տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ են ստացել 6538-ը:**

Պատահարների թիվը 2023 թվականին, նախորդ տարվա համեմատությամբ, աճել է 306-ով կամ 7,1 %-ով, մահացած անձանց թիվը՝ 57-ով կամ 17,75%-ով, իսկ վնասվածքներ ստացած անձանց թիվը՝ 385-ով կամ 6,25%-ով:

Ստորև ներկայացվում են 2013-2023 թվականներին ՀՀ-ում հաշվառված ճանապարհատրանսպորտային պատահարների վերաբերյալ տվյալները՝ աղյուսակով.

Տարեթիվ	Քանակ			Աճ / նվազում		
	ՃՏՊ	Զոհ	Վիրավոր	ՃՏՊ	Զոհ	Վիրավոր
2013	2824	316	3994	+ 222	+ 5	+ 255
2014	3156	297	4479	+ 332	- 19	+ 485
2015	3399	346	4738	+ 243	+ 49	+ 259
2016	3203	267	4451	- 196	- 79	- 287
2017	3535	279	5179	+ 332	+ 12	+ 728
2018	4111	343	5950	+ 576	+ 64	+ 771
2019	4799	341	6801	+ 688	- 2	+ 851
2020	4016	348	5846	- 783	+ 7	- 955
2021	4604	368	6699	+ 588	+ 20	+ 853
2022	4308	321	6153	-296	-47	-546
2023	4614	378	6538	+306	+57	+385

Մահվան, ինչպես նաև մարմնական վնասվածքների ելքով ճանապարհատրանսպորտային պատահարների կանխարգելման նպատակով Դատախազությունում իրականացվում են ուսումնասիրություններ՝ դրանց ծնող պատճառներն ու նպաստող պայմանները վերացնելու նպատակով՝ իրավասու մարմիններին ներկայացվում են միջնորդագրեր և հաղորդումներ:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ **ճանապարհային երթևեկության կանոնները խախտելու և անզգուշությամբ մահ կամ առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելու դեպքերը շարունակում են պայմանավորված լինել երթևեկության մասնակիցների կողմից ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջները կամ ճանապարհային երթևեկության կանոնները չպահպանելու հանգամանքով:**

Շատ են դեպքերը, երբ ճանապարհատրանսպորտային պատահարների պատճառ են հանդիսանում հետիոտների կողմից ոչ սահմանված վայրում ճանապարհը հատելը, ինչի հետևանքով ստեղծված իրավիճակում վարորդները վրաերթը կանխելու հնարավորություն չեն ունենում:

Ճանապարհատրանսպորտային պատահարները երբեմն տեղի են ունենում հետիոտնային անցումների գծանշումների անտեսանելիության, հետիոտնային կարգավորվող անցումների լուսացույցները վարորդների տեսադաշտից դուրս գտնվելու, տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերի բացակայության պատճառով:

Մահվան, ինչպես նաև մարմնական վնասվածքների ելքով ճանապարհատրանսպորտային պատահարների կանխարգելման նպատակով Դատախազությունում իրականացվում են ուսումնասիրություններ՝ դրանց ծնող պատճառներն ու նպաստող պայմանները վերացնելու նպատակով՝ իրավասու մարմիններին ներկայացվում են միջնորդագրեր և հաղորդումներ:

Քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի հատկանիշներով քննված մի շարք քրեական գործերի ուսումնասիրությամբ պարզվել է նաև, որ ինչպես նախորդող, այնպես էլ հաշվետու ժամանակահատվածում **երբեմն ճանապարհատրանսպորտային պատահարները տեղի են ունենում ճանապարհի այն հատվածներում, որտեղ իրականացվում են շինարարական կամ այլ աշխատանքներ, ինչպես նաև շատ են դեպքերը, երբ առերևույթ պատահարի պատճառ են հանդիսանում ճանապարհի տվյալ հատվածում ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման ուղղությամբ բավարար միջոցներ ձեռնարկված չլինելը:**

Հայաստանի Հանրապետությունում յուրաքանչյուր տարի ավելանում է ինչպես շահագործվող տրանսպորտային միջոցների, այնպես էլ՝ տրանսպորտային միջոց վարելու իրավունք ունեցող անձանց թիվը, ինչը չի կարող իր ազդեցությունը չունենալ ճանապարհատրանսպորտային պատահարների թվի վրա:

Հաշվետու ժամանակահատվածում **աճ է արձանագրվել ապօրինի ծառահատումների դեպքերով:**

2023 թվականին արձանագրվել է Քրեական օրենսգրքի 387-րդ հոդվածի (ծառերը, թփերը կամ բուսածածկն ապօրինի հատելը կամ ապօրինի ձեռք բերված կոճղերը, ծառերը կամ թփերը տեղափոխելը) տարբեր մասերով նախատեսված հանցագործությունների 419 դեպք (2022 թվականին՝ 404 դեպք). դեպքերն ավելացել են 15-ով կամ 3.7%-ով: Բացահայտման ցուցանիշը կազմել է 63%:

Ապօրինի ծառահատումների դեմ տարվող պայքարն առավել արդյունավետ դարձնելու նպատակով Դատախազության ստորաբաժանումների կողմից համապատասխան գրություններ են հասցեագրվել Շրջակա միջավայրի նախարարություն, Ոստիկանություն, ինչպես նաև միջնորդագրեր են ներկայացվել «Հայանտառ» ՊՈԱ կազմակերպություն:

Փայտանյութի տեղափոխումը հայտնաբերելու և կանխելու նպատակով՝ Համապատասխան առաջարկություններով գրություններ են ուղարկվել նաև Ոստիկանություն, որոնցով, ի թիվս այլնի, նշվել են ճանապարհահատվածների այն տեղամասերը, որոնցում առկա է Ոստիկանության անշարժ հենակետերի տեղակայման անհրաժեշտություն:

2023 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում դեպքերի նվազում է արձանագրվել համակարգչային տեղեկատվության անվտանգության դեմ ուղղված հանցագործություններով: Եթե 2022 թվականին արձանագրվել է նշված հանցագործությունների 59 դեպք, ապա 2023 թվականին՝ 38 դեպք. դեպքերը նվազել են 21-ով կամ 35,6%-ով: Բացահայտումը կազմել է 0%, նախորդ տարվա՝ 1.7%-ի դիմաց:

Ընթացիկ տարում **աճել են ապօրինի կերպով զենք, ռազմամթերք ձեռք բերելու, պահելու և ապօրինի շրջանառության այլ դեպքերը:** Եթե 2022 թվականին արձանագրվել է նշված հանցագործության 887 դեպք, ապա 2023 թվականի ընթացքում՝ 1179 դեպք. դեպքերն աճել են 292-ով կամ 32,9%-ով: Բացահայտումը կազմել է 29%՝ նախորդ տարվա 62,3%-ի դիմաց:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այս բնույթի հանցագործություններն սկսել են աճել 2020 թվականի 44-օրյա պատերազմից հետո, երբ մի շարք անձանց կողմից ապօրինի կերպով Հայաստանի Հանրապետություն է տեղափոխվել զենք-զինամթերք:

Ապօրինի շրջանառության մեջ գտնվող զենք-զինամթերքի հայտնաբերումն ու առգրավումը պետք է մշտապես գտնվի իրավապահ մարմինների ուշադրության կենտրոնում, քանի որ ապօրինի շրջանառվող զենք-զինամթերքի հայտնաբերումն ու առգրավումը փոխկապակցված է դրանց գործադրմամբ կատարվող հանցագործությունների թվի հետ: Զենքի գործադրմամբ կատարվող հանցագործություններն ունեն հանրային բարձր վտանգավորություն, ուստի և դրանց դեմ պայքարի առաջին ու ամենակարևոր մեթոդն այդ առարկաների ապօրինի շրջանառությունից հանելն է:

2023 թվականի ընթացքում արձանագրվել է քրեական ենթամշակույթին առնչվող հանցատեսակների 19 դեպք, նախորդ տարվա 25 դեպքի դիմաց. հանցագործությունների դեպքերը նվազել են 6-ով կամ 24%-ով:

Հաշվի առնելով այս արարքների հանրային բարձր վտանգավորությունը և վարույթների բարդությունը՝ տարածքային ստորաբաժանումներում քննվող քրեական վարույթները մշտապես գտնվում են վարչության դատախազների ուշադրության կենտրոնում:

2023 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում աճ է արձանագրվել ընդերքի պահպանման կամ օգտագործման կանոնները (պահանջները) խախտելու դեպքերով: Եթե 2022 թվականին արձանագրվել է վերոնշյալ հանցագործության 32 դեպք, ապա 2023 թվականին արձանագրվել է 47 դեպք, այսինքն՝ դեպքերն աճել են 15-ով կամ 46,9%-ով: Աճը պայմանավորված է նշված դեպքերի բացահայտմանն ուղղված միջոցառումների ակտիվացմամբ, քանի որ բազմաթիվ վարույթներով քննության առարկա հանդիսացող հանցագործության դեպքերը կատարվել են ոչ թե 2023 թվականի ընթացքում, այլև՝ նախորդող ժամանակահատվածում, մինչդեռ ենթադրյալ հանցագործության դեպքերը բացահայտվել են հաշվետու ժամանակահատվածում:

2023 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում դեպքերի աճ է արձանագրվել նաև հասարակական անվտանգության դեմ ուղղված այլ հանցագործություններով:

Եթե 2022 թվականին արձանագրվել է 6214 դեպք, ապա 2023 թվականին արձանագրվել է 6775 դեպք. դեպքերն աճել են 561-ով կամ 9%-ով: Բացահայտումը կազմել է 35,3%՝ նախորդ տարվա 53,1%-ի դիմաց:

Հասարակական անվտանգության դեմ ուղղված այլ հանցագործություններով 6775 դեպքից՝ 3347-ը կամ 49,4%-ն արձանագրվել է Երևան քաղաքում:

Հասարակական անվտանգության դեմ ուղղված այլ հանցագործությունների աճը ինչպես նախորդող տարի, այնպես էլ՝ հաշվետու տարում, հիմնականում պայմանավորված է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված կամ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը կասեցված կամ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք չունեցող անձանց կողմից տրանսպորտային միջոց վարելու կամ այդ անձանց կողմից ոչ սթափ վիճակում տրանսպորտային միջոց վարելու կամ սթափության վիճակի զննություն անցնելուց հրաժարվելու կամ խուսափելու դեպքերով:

2023 թվականի ընթացքում, նախորդ տարվա համեմատությամբ, Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է պետական իշխանության, ծառայության և կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործությունների 1347 դեպքով կամ 40.1%-ով աճ (2022 թվականին՝ 3357, 2023 թվականին՝ 4704):

Պետական իշխանության, ծառայության և կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործությունների դեպքերի աճին զուգահեռ՝ նվազել է այդ դեպքերի բացահայտման ցուցանիշը՝ կազմելով 45.4%՝ նախորդ տարվա 48.3%-ի դիմաց:

Պետական իշխանության, ծառայության և կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործությունների դեպքերի **աճն արձանագրվել է հիմնականում կաշառք ստանալու, տալու, կաշառքի միջնորդության, պաշտոնեական լիազորությունները չարաշահելու և անցնելու, ինչպես նաև պետական իշխանության, ծառայության և կառավարման կարգի դեմ ուղղված այլ հանցագործությունների դեպքերի հաշվին:**

Մասնավորապես՝ պաշտոնեական լիազորությունները չարաշահելու և անցնելու դեպքերն աճել են 91-ով կամ 19.6%-ով (2022 թվականին՝ 465, 2023 թվականին՝ 556), կաշառք ստանալու, տալու, կաշառքի միջնորդության դեպքերն աճել են 347-ով կամ 152.9%-ով (2022 թվականին՝ 227, 2023 թվականին՝ 574), իսկ պետական իշխանության,

ծառայության և կառավարման կարգի դեմ ուղղված այլ հանցագործությունների դեպքերը՝ 462-ով կամ 27.2%-ով (2022 թվականին՝ 1699, 2023 թվականին՝ 2161):

2023 թվականի ընթացքում, նախորդ տարվա համեմատությամբ, Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների 375 դեպքով կամ 27.0%-ով նվազում (2022 թվականին՝ 1388, 2023 թվականին՝ 1013):

Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերի նվազմանը զուգահեռ՝ **աճել է այդ դեպքերի բացահայտման ցուցանիշը կազմելով՝ 5.8%՝ նախորդ տարվա 5.5%-ի դիմաց:**

Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերի նվազումը հիմնականում պայմանավորված է հարկերի, տուրքերի վճարումից խուսափելու և տնտեսական գործունեության դեմ ուղղված այլ հանցագործությունների դեպքերի նվազմամբ: Եթե 2022 թվականին արձանագրվել էր հարկերի, տուրքերի վճարումից խուսափելու 564 դեպք, ապա 2023 թվականին՝ 215 դեպք: Այսինքն, դեպքերը նվազել են 349-ով կամ 61.9%-ով: Տնտեսական գործունեության դեմ ուղղված այլ հանցագործությունների դեպքերը նվազել են 192-ով կամ 47.6%-ով (2022 թվականին՝ 403, 2023 թվականին՝ 211):

2023 թվականին 31-ով կամ 106.9%-ով աճել են հանցավոր ճանապարհով ստացված եկամուտի օրինականացման (փողերի լվացման) դեպքերը (2022 թվականին՝ 29, 2023 թվականին՝ 60):

Փողերի լվացման դեպքերի աճը, ի թիվս այլնի, պայմանավորված է գործնականում նշված հանցակազմի մեկնաբանման և կիրառման նոր մոտեցմամբ, ինչին նպաստել են Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները:

Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը, թիվ ԵԴ/0180/06/20 գործով վերահաստատելով Աշոտ Սուքիասյանի գործով նախկինում արտահայտած իր իրավական դիրքորոշումները, արձանագրել է, որ փողերի լվացման առարկա հանդիսացող գույքի հանցավոր ծագումը հաստատելու համար անհրաժեշտ չէ ոչ միայն նախորդող հանցագործության վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի առկայություն, այլև տվյալ գույքի հանցավոր ծագման փաստը կարող է հաստատվել՝ անկախ նախորդող հանցագործության՝ հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշով հաստատված լինելու պայմանից:

Տվյալ դեպքում բավարար է գործի փաստերից բխող որոշակի տվյալների, այդ թվում՝ անուղղակի ապացույցների համադրման արդյունքում գալու ողջամիտ եզրահանգման առ այն, որ խնդրո առարկա գույքն ունի հանցավոր ծագում: Այլ կերպ՝ պահանջվում է միայն այնպիսի փաստական տվյալների ներկայացում, որոնք ողջամտորեն կվկայեն՝ փողերի լվացմանը նախորդող արարքի հանցավոր լինելու մասին: Մասնավորապես՝ քննության օբյեկտ հանդիսացող գույքի վերաբերյալ անուղղակի, սակայն իրենց ամբողջության մեջ դրա՝ հանցավոր ճանապարհով ծագած լինելու մասին ողջամտորեն վկայող հանգամանքներ կարող են հանդիսանալ տվյալ անձի եկամուտների կամ այլ նյութական միջոցների ու ակտիվների հարաբերակցությամբ քննության առարկա հանդիսացող գույքի անհամաչափ բարձր արժեքը, տվյալ գույքը հանցավոր ճանապարհով ստացված լինելու մասին վկայող որոշակի տվյալների առկայությունը, ինչպես նաև գործի լուծման տեսանկյունից էական նշանակություն ունեցող հանգամանքներ:

Ընդ որում, վարույթն իրականացնող մարմինը պարտավոր չէ ճշգրիտ կերպով վկայակոչել և նկարագրել Քրեական օրենսգրքով նախատեսված այն կոնկրետ հանցակազմը, որի արդյունքում ստացվել է ապօրինի գույքը, այլ բավարար է տալ միայն որևէ հանցավոր արարքի ընդհանրական նկարագրությունը (օրինակ՝ գույքը ստացվել է հափշտակությունների, թրաֆիքինգի, թմրամիջոցների կամ զենքի ապօրինի շրջանառության, կազմակերպված հանցավորության այս կամ այն դրսևորման կամ այլ հանցագործության արդյունքում):

2023 թվականի ընթացքում 76-ով կամ 85.4%-ով աճել են ապօրինի կամ կեղծ ձեռնարկատիրության դեպքերը (2022 թվականին՝ 89, 2023 թվականին՝ 165), 9-ով կամ 150%-ով՝ ակցիզային դրոշմանիշների ապօրինի շրջանառության դեպքերը (2022 թվականին՝ 6, 2023 թվականին՝ 15), 50-ով կամ 16.8%-ով կեղծ փող, արժեթղթեր պատրաստելու, պահելու, իրացնելու դեպքերը (2022 թվականին՝ 297, 2023 թվականին՝ 347):



2

ՄԻՆՉԴԱՏԱԿԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի ընթացքում դատախազների կողմից ստուգվել է ենթադրյալ հանցավոր դեպքերի վերաբերյալ 61.987 հաղորդման արձանագրման մասին օրենսդրության պահանջների կատարումը:

Ենթադրյալ հանցավոր դեպքերի վերաբերյալ 61.987 հաղորդումից 50.715-ով նախաձեռնվել է քրեական վարույթ, իսկ 11.272-ով վարույթ չի նախաձեռնվել, որոնցից 10.221-ի օրինականությունը հաստատվել է հսկող դատախազների կողմից, իսկ 1.051-ով հանձնարարվել է նախաձեռնել քրեական վարույթ և սկսել նախաքննություն:

Քրեական վարույթ չնախաձեռնելու դեմ բերվել է 221 բողոք, որոնցից 20-ը վերադաս դատախազների կողմից բավարարվել է, 201-ը՝ մերժվել:

2023 թվականի ընթացքում նախաքննության մարմինների կողմից քննվել է 187.306 քրեական վարույթ (2022 թվականին՝ 69.091), որից 96.693-ը նախկինում կասեցված կամ կարճված վարույթների վերսկսման արդյունք են: **Նախորդ տարվա համեմատությամբ՝ քննված քրեական գործերի թիվն աճել է 118.215-ով կամ 171.1%-ով:**



Քննվող քրեական վարույթների թվի աճը պայմանավորված է Քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթներով: Մասնավորապես՝ 483-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված իրավակարգավորումների համաձայն՝ մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը կասեցված քրեական գործերով վարույթները մինչև 2023 թվականի հուլիսի 1-ը քննիչի կամ դատարանի որոշմամբ վերսկսվել են և քննվում են Քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

2023 թվականի ընթացքում նախաքննության մարմինների քննիչների տարեկան ծանրաբեռնվածությունը կազմել է 284.2 քրեական վարույթ՝ նախորդ տարվա 92.6 քրեական գործի (քրեական վարույթի) դիմաց, իսկ դատավարական ղեկավարում իրականացնող դատախազների տարեկան ծանրաբեռնվածությունը կազմել է 554.1 քրեական վարույթ՝ նախորդ տարվա 170.6 քրեական գործի (քրեական վարույթի) դիմաց:

2023 թվականին քննված 187.306 քրեական վարույթից 28.389-ը փոխանցվել է նախորդ տարվանից (2022 թվականին՝ 10.842), որը 17.547-ով կամ 161.8%-ով ավելի է, քան 2022 թվականին: 158.917-ով նախաքննության կատարումը հանձնարարվել է քննիչին 2023 թվականի ընթացքում (2022 թվականին՝ 58.249), որը 100.668-ով կամ 172.8%-ով ավելի է, քան 2022 թվականին:

158.917 քրեական վարույթից 51.760-ը նախաձեռնվել է հաշվետու ժամանակաշրջանում (2022 թվականին՝ 43.643): Նշված քրեական վարույթներից 1637-ը նախաձեռնվել է դատախազի հանձնարարության հիման վրա:

2023 թվականի ընթացքում դատախազների կողմից քրեական հետապնդում է հարուցվել 10.136 անձի նկատմամբ, 12.331 անձի նկատմամբ կայացվել է քրեական հետապնդում չհարուցելու, 1534 անձի նկատմամբ՝ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում, իսկ 2544 անձի նկատմամբ կայացվել է քրեական հետապնդման ժամկետը կասեցնելու մասին որոշում:



2023 թվականին ավարտվել է 33.396 քրեական վարույթ (2022 թվականին՝ 19.139), այդ թվում՝ 8.393-ը՝ 10.115 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան (2022 թվականին՝ 4472-ը՝ 5413 անձի վերաբերյալ), 55-ը՝ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու միջնորդությամբ ուղարկվել է դատարան (2022 թվականին՝ 23), 24.948-ը կարճվել է (2022 թվականին՝ 14.644), որոնցից 18.309-ը՝ ռեաբիլիտացիոն (2022 թվականին՝ 9.956), 6.639-ը՝ ոչ ռեաբիլիտացիոն հիմքերով (2022 թվականին՝ 4.688):



2023 թվականին ավարտվել է 14.257-ով կամ 74.5%-ով ավել քրեական վարույթ քան 2022 թվականին, այդ թվում՝ դատարան է ուղարկվել 3921-ով կամ 87.7%-ով ավելի քրեական վարույթ, կարճվել է 10.304-ով կամ 70.4%-ով ավել քրեական վարույթ:

2023 թվականին 7.956 քրեական վարույթ միացվել է (2022 թվականին՝ 5.460):

2023 թվականին 34 քրեական վարույթով նախաքննությունն իրականացվել է մեղադրյալի բացակայությամբ (հեռակա վարույթ)՝ համաձայն Քրեական դատավարության օրենսգրքի 57-րդ գլխով սահմանված դրույթների:

2023 թվականի վերջին անավարտ է մնացել 140.523 քրեական վարույթ (2022 թվականի վերջին՝ 28.390), ինչը 112.133-ով կամ 394.9%-ով ավել է, քան 2022 թվականին:

2023 թվականի ընթացքում դատախազների կողմից ստուգվել է (վերստուգվել է) վարույթը կարճելու մասին 36.451 որոշման օրինականություն: 2023 թվականին վերացվել է՝

1. քրեական գործով վարույթը կարճելու մասին 527 որոշում կամ ստուգված որոշումների 1.44%-ը, որոնցից 20-ը կամ 3.8%-ը՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից,

2. քրեական հետապնդում չհարուցելու մասին 131 որոշում,

3. քրեական հետապնդումը դադարեցնելու մասին 26 որոշում, որոնցից 1-ը կամ 3.84% -ը՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից:

Համեմատության համար նշենք, որ 2022 թվականին ստուգվել է (վերստուգվել է) վարույթը կարճելու մասին 23.158 որոշման օրինականությունը: 2022 թվականին վերացվել է՝

- քրեական գործով վարույթը կարճելու մասին 584 որոշում կամ ստուգված որոշումների 2.5%-ը, որոնցից 94-ը կամ 16.1%-ը՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից,
- քրեական հետապնդում չիրականացնելու մասին 98 որոշում, որոնցից 4-ը կամ 4.1%-ը՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից,
- քրեական հետապնդումը դադարեցնելու մասին 43 որոշում, որոնցից 5-ը կամ 11.6% -ը՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից:

Հաշվետու ժամանակահատվածում քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշումների դեմ բերվել է 97 բողոք (2022 թվականին՝ 237), որոնցից բավարարվել է 9-ը (2022 թվականին՝ 10) կամ մոտ 9.2%-ը (2022 թվականին՝ 4.2%):

Նույն ժամանակահատվածում քրեական հետապնդում չհարուցելու մասին որոշումների դեմ բերվել է 54 բողոք (2022 թվականին՝ 42): Նշված բողոքներից բավարարվել է 2-ը (2022 թվականին՝ 1):

Քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումների դեմ 2023 թվականին բերվել է 48 բողոք (2022 թվականին՝ 27), որոնցից 4-ը բավարարվել է (2022 թվականին՝ 5):

Քրեական հետապնդման ժամկետը կասեցնելու որոշումների դեմ հաշվետու ժամանակահատվածում բերվել է 8 բողոք, որոնցից բավարարվել է 1-ը:

Քրեական գործով վարույթը կարճելու, քրեական հետապնդում չհարուցելու, ինչպես նաև քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումների դեմ բերված բողոքների թիվը 2023 թվականին նվազել է 115-ով կամ 37.6%-ով՝ կազմելով 191 բողոք՝ նախորդ տարվա 306-ի դիմաց: Բերված բողոքներից բավարարվել է 14-ը կամ 11.3%-ը (2022 թվականին՝ 16-ը կամ 5.22%-ը):

2023 թվականին ստուգվել է վարույթը կարճելու մասին 13.293-ով ավելի որոշում, քան 2022 թվականին, իսկ վարույթը կարճելու մասին որոշումը վերացնելու վերաբերյալ կայացված որոշումների թիվը նվազել է 57-ով կամ 9.76%-ով:

Հաշվետու ժամանակահատվածում **ոչ ռեաբիլիտացիոն հիմքերով կարճված քրեական վարույթներով վերականգնվել է 8.508.847.300 դրամի գույքային վնաս (2022 թվականին՝ 2.122.041.427 դրամի), որից պետությանը՝ 8.238.797.300 դրամի (2022 թվականին՝ 1.736.337.277 դրամի), համայնքին՝ 34.942.000 դրամի (2022 թվականին՝ 309.992.000 դրամի), իրավաբանական անձանց՝ 142.695.000 դրամի (2022 թվականին՝ 15.596.015 դրամի), ֆիզիկական անձանց՝ 92.413.000 ՀՀ դրամի (2022 թվականին՝ 60.116.135 դրամի) չափով:**

Ոչ ռեաբիլիտացիոն հիմքերով կարճված քրեական վարույթներով վերականգնված գումար



2023 թվականի ընթացքում դատարան ուղարկված քրեական գործերով պետությանը, համայնքներին, միջազգային կազմակերպություններին, իրավաբանական և ֆիզիկական անձանց պատճառվել է 83.867.331.548 դրամի գույքային վնաս (2022 թվականին՝ 25.788.583.430 դրամի), որից պետությանը՝ 66.232.338.153 դրամի (2022 թվականին՝ 21.272.487.306 դրամի), համայնքներին՝ 210.198.000 դրամի (2022 թվականին՝ 2.475.000 դրամի), իրավաբանական անձանց՝ 10.315.255.000 դրամի (2022 թվականին՝ 2.710.030.678 դրամի), միջազգային կազմակերպություններին՝ 24.782.000 դրամի, ֆիզիկական անձանց՝ 7.084.558.395 դրամի (2022 թվականին՝ 1.803.590.446 դրամի):

Հաշվետու ժամանակահատվածում **նախաքննության ընթացքում (ինչպես ընթացիկ, այնպես էլ ավարտված քրեական վարույթներով) վերականգնվել է պետությանը և համայնքին պատճառված 34.325.746.387 դրամի գույքային վնաս, որից պետությանը՝ 34.211.600.528 դրամի, համայնքին՝ 106.808.859 դրամի գույքային վնաս: Այդ թվում՝ համայնքին է նվիրաբերվել 3.970.000 դրամ արժողությամբ հողատարածք, իսկ 3.367.000 դրամի արժողությամբ մշակութային արժեքները տրվել են պատասխանատու պահպանության՝ ՀՀ պատմության թանգարանին:**

Հարկ է նշել, որ **վերոնշյալ գումարից 32 մլրդ 303 մլն 526 հազար դրամը վերականգնվել է ՀՀ գլխավոր դատախազության տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազների հսկողության ներքո քննվող քրեական վարույթներով: 32 մլրդ 303 մլն 526 հազար դրամից 17 մլրդ 175 մլն 71 հազար դրամը վերականգնվել է 2023 թվականի ընթացքում ավարտված քրեական վարույթներով:**

Համեմատության համար նշենք, որ ավարտված քրեական վարույթներով 2022 թվականի ընթացքում վերականգնվել է 2 մլրդ 279 մլն 263 հազար դրամ, 2021 թվականին՝ 5 մլրդ 584 մլն 138 հազար դրամ, 2020 թվականին՝ 1 մլրդ 989 մլն 200 հազար դրամ, 2019 թվականին՝ 4 մլրդ 723 մլն 956 հազար 287 դրամ:

Այսինքն, **միայն 2023 թվականի ընթացքում ավարտված քրեական վարույթներով պետությանը պատճառված վնասի վերականգնման չափը (17 մլրդ 175 մլն 71 հազար դրամ) գերազանցում է նախորդող չորս տարիներին (2019, 2020, 2021 և 2022 թվականներ) ավարտված վարույթներով վերականգնված վնասի չափի հանրագումարը (14 մլրդ 576 մլն 558 հազար դրամ):**

2023 թվականի ընթացքում արգելանք է դրվել 15.486.178.900 դրամ արժողությամբ գույքի և դրամական միջոցների վրա:

2023 թվականի ընթացքում քննված քրեական վարույթներով դատարան է ներկայացվել 10.072 խուզարկության միջնորդություն (2022 թվականին՝ 6642), որոնցից բավարարվել է 9119-ը կամ 90.5%-ը (2022 թվականին՝ 6001-ը կամ 90.3%-ը), մերժվել է 953-ը կամ 9.5%-ը (2022 թվականին՝ 641-ը կամ 9.7%-ը):

2023 թվականի ընթացքում դատախազների կողմից քրեական վարույթներով տրվել է 5147 հանձնարարական՝ նախորդ տարվա 5196-ի դիմաց. հանձնարարականների թիվը նվազել է 49-ով կամ 0.94%-ով:

2023 թվականի ընթացքում դատախազների կողմից Քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի կարգով ներկայացվել է 212 միջնորդագիր՝ նախորդ տարվա 843 միջնորդագրի դիմաց:

Դատախազների կողմից ներկայացված միջնորդագրերի քննարկման արդյունքում՝ հանցանքի կատարմանը նպաստող հանգամանքները վերացնելու ուղղությամբ ձեռնարկվել են համապատասխան միջոցներ:

Օրինակ՝

Հաշվետու ժամանակահատվածում, թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով՝ ՀՀ գլխավոր դատախազությունում ուսումնասիրվել են Քննչական կոմիտեի տարածքային ստորաբաժանումներում քննվող մի շարք քրեական վարույթներ:

Քրեական վարույթներից մեկի ուսումնասիրությամբ պարզվել է, որ անհատ ձեռնարկատեր Մ.Դ.-ն, ունենալով դեղատնային գործունեություն իրականացնելու լիցենզիա, Երևան քաղաքում գործող երկու դեղատներում շահադիտական դրդումներով իրացնելու նպատակով ապօրինի ձեռք է բերել և պահել է զգալի չափերով՝ 1,8 գրամ քաշով Պրեգաբալին տեսակի հոգեմետ նյութի պարունակությամբ 12 դեղահաբ, որոնք ապօրինի վաճառել է Վ.Գ.-ին ու Մ.Շ.-ին: Մեկ այլ քրեական վարույթի ուսումնասիրությամբ պարզվել է, որ անհատ ձեռնարկատեր Ն.Ա.-ն, ունենալով դեղատնային գործունեության իրականացման լիցենզիա, Կոտայքի մարզի Նոր Հաճն բնակավայրում գործող դեղատանը, իրացնելու նպատակով ապօրինի ձեռք է բերել և պահել խոշոր չափերով՝ 6,9 գրամ քաշով «Պրեգաբալին» տեսակի հոգեմետ նյութի պարունակությամբ PGN 300 գրառմամբ 23 դեղահաբ: Վերոնշյալ քրեական վարույթների նախաքննությամբ պարզվել է, որ անհատ ձեռնարկատերեր Ն.Ա.-ի և Մ.Դ.-ի գործունեությունը քողարկվել է դեղատնային գործունեության անվան տակ, իսկ հոգեմետ նյութերի պարունակությամբ դեղահաբերը պահվել են դեղատներում: Դատախազը 2023 թվականի օգոստոսի 25-ին հանրային քրեական հետապնդում է հարուցել Ն.Ա.-ի նկատմամբ՝ Քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, իսկ 2023 թվականի սեպտեմբերի 16-ին՝ Մ.Դ.-ի նկատմամբ՝ Քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով:

Գլխավոր դատախազի տեղակալը 2023 թվականի հոկտեմբերի 12-ին միջնորդագրեր է ներկայացրել Առողջապահության նախարարություն՝ վերոնշյալ դեղատների գործունեության կասեցման հարցը քննարկելու նպատակով: 2023 թվականի նոյեմբերի 15-ին ՀՀ առողջապահության նախարարության լիցենզավորման հանձնաժողովի որոշմամբ՝ կասեցվել են Ն.Ա.-ին և Մ.Դ.-ին տրված լիցենզիաների գործողությունները:

2023 թվականի ընթացքում դատախազների կողմից լրացուցիչ քննության է վերադարձվել 332 քրեական վարույթ՝ նախորդ տարվա 248-ի դիմաց, այսինքն՝ լրացուցիչ քննության վերադարձված քրեական վարույթների թիվն աճել է 84-ով կամ 33.9%-ով:

2023 թվականի ընթացքում հետաքննություն կամ նախաքննություն իրականացնող անձանց կողմից թույլ տրված իրավախախտումների փաստերով ծառայողական քննություն անցկացնելու վերաբերյալ դատախազների կողմից ներկայացվել է 551 միջնորդություն, որոնց քննարկման արդյունքում 41 անձ ենթարկվել է կարգապահական տույժի, 7 անձ՝ քրեական պատասխանատվության:

Համեմատության համար նշենք, որ 2022 թվականի ընթացքում հետաքննություն կամ նախաքննություն իրականացնող անձանց կողմից թույլ տրված իրավախախտումների փաստերով ծառայողական քննություն անցկացնելու վերաբերյալ դատախազների կողմից ներկայացվել է 863 միջնորդություն, որոնց քննարկման արդյունքում կարգապահական տույժի է ենթարկվել 90 անձ, 2 անձ՝ քրեական պատասխանատվության:

2023 թվականի ընթացքում դատախազների կողմից քրեական դատավարությանը մասնակցելուց հեռացվել է հետաքննություն և նախաքննություն իրականացնող 253 անձ՝ նախորդ տարվա 387-ի դիմաց. վարույթից հեռացված անձանց թիվը նվազել է 134-ով կամ 52.9%-ով:

2023 թվականի ընթացքում ձերբակալվել է 8645 անձ՝ նախորդ տարվա 2693-ի դիմաց. ձերբակալված անձանց թիվն ավելացել է 5952-ով կամ 221%-ով: Ձերբակալումից ազատվել է 7160 անձ՝ նախորդ տարվա 1743-ի դիմաց:



2023 թվականին ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններ է ներկայացվել մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին 2040 միջնորդություն, որոնցից բավարարվել է 1559-ը կամ 76.4%-ը, մերժվել՝ 481-ը կամ 23.6%-ը:



Համեմատության համար նշենք, որ 2022 թվականին ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններ է ներկայացվել մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին 1599 միջնորդություն, որոնցից բավարարվել է 1207-ը կամ 75.5%-ը, մերժվել՝ 392-ը կամ 24.5%-ը:

Այսպիսով, 2022 թվականի համեմատ, 2023 թվականին կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդությունների քանակը աճել է 441-ով կամ 27.6%-ով:

Հաշվետու ժամանակահատվածում **ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններ է ներկայացվել** մեղադրյալի նկատմամբ տնային կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին 114 միջնորդություն, որոնցից բավարարվել է 87-ը կամ 76.3%-ը, մերժվել՝ 27-ը կամ 23.7%-ը:

Հաշվետու ժամանակահատվածում, գրավը որպես խափանման միջոց կիրառվել է 224 անձի նկատմամբ, իսկ պաշտոնավարման կասեցումը՝ 67 անձի նկատմամբ, որից 38-ը կոռուպցիոն վարույթներով:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ գլխավոր դատախազի կողմից իրավասու պետական մարմիններ է ներկայացվել քրեական հետապնդման անձեռնմխելիությունից օգտվող 4 անձանց նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու համաձայնություն ստանալու 6 միջնորդագիր (1 անձի նկատմամբ՝ 3 միջնորդագիր):

Միջնորդագրերից 5-ը վերաբերել են ՀՀ Ազգային ժողովի 3 պատգամավորի (միջնորդագիր՝ 1, 2 և 3, 4, 5) և ներկայացվել են ՀՀ Ազգային ժողով, 1-ը վերաբերել է դատավորի և ներկայացվել է Բարձրագույն դատական խորհուրդ:

ՀՀ գլխավոր դատախազի բոլոր միջնորդությունները ՀՀ Ազգային ժողովի և Բարձրագույն դատական խորհրդի կողմից բավարարվել են:

2023 թվականի ընթացքում հետախուզվել է 14.909 մեղադրյալ, որոնցից **հայտնաբերվել է 1877-ը կամ 12.6%-ը (**2022 թվականին հետախուզվել է 14.476 մեղադրյալ**,** հայտնաբերվել՝ 2151-ը կամ 14.9%-ը):

2022 թվականի համեմատությամբ՝ 2023 թվականին հետախուզվողների թիվը ավելացել է 433-ով կամ 2.99%-ով: Միաժամանակ, նվազել են հետախուզվողների հայտնաբերման քանակական և տոկոսային ցուցանիշները. հայտնաբերված հետախուզվող մեղադրյալների թիվը նվազել է 274-ով կամ 12.7%-ով:

Ընդհանուր հանցատեսակների մեջ ՀՀ քրեական օրենսգրքի 461-րդ հոդվածով հետախուզվողների գերակշիռ թիվը հաշվի առնելով՝ ստորև ներկայացվում են նշված հոդվածով հետախուզվող անձանցվերաբերյալ վիճակագրական տվյալները.

- 2023 թվականին Քրեական օրենսգրքի 461-րդ հոդվածով հետախուզվել է 10.328 մեղադրյալ, որոնցից հայտնաբերվել է 398-ը կամ 3.85%-ը:
- 2022 թվականին նշված հոդվածով հետախուզվել է 9860 մեղադրյալ, որոնցից հայտնաբերվել է 422-ը կամ 4.3%-ը:
- 2022 թվականի համեմատությամբ՝ 2023 թվականին ՀՀ քրեական օրենսգրքի 461-րդ հոդվածով հետախուզվողների թիվն ավելացել է 468-ով, հայտնաբերման քանակական ցուցանիշը նվազել է 24-ով, իսկ տոկոսային ցուցանիշը՝ 5.7%-ով:

Տարի	Հետախուզվել են			Հայտնաբերվել են			
	ՀՀ քր. օր. 461-րդ հոդ.	ՀՀ քր. օր. այլ հոդվ.	Ընդ. տարվա ընթացքում	ՀՀ քր. օր. 461-րդ հոդ.	ՀՀ քր. օր. այլ հոդվ.	Ընդ.	Հայտն. %-ը
2019	11711	3639	15350	1245	1109	2354	15.3
2020	11104	3850	14954	642	1127	1769	11.8
2021	11106	4475	15581	1719	1459	3178	20.4
2022	9860	4616	14476	422	1729	2151	14.9
2023	10328	4581	14909	398	1479	1877	12.6

2023 թվականի ընթացքում խոշտանգման հատկանիշներով քննվել է 507 քրեական վարույթ, որոնցից 106-ը կարճվել է, 5 քրեական վարույթ ուղարկվել է դատարան:

Գլխավոր դատախազությունում իրականացված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ խոշտանգման և Քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով (պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը կամ լիազորությունները անցնելը, որը կատարվել է բռնություն գործադրելով կամ բռնություն գործադրելու սպառնալիքով) նախատեսված հանցագործությունների դեպքերով դատարան ուղարկված վարույթների համեմատ՝ կարճված վարույթների քանակական մեծ տարբերությունը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ համակողմանի և անաչառ նախաքննության արդյունքում բավարար փաստական տվյալներով չի հաստատվել պաշտոնատար անձանց կողմից խոշտանգում կատարելու կամ բռնություն գործադրելով իրենց իշխանական կամ ծառայողական լիազորություններն անցնելու հանգամանքը:

Մասնավորապես՝ շատ են դեպքերը, երբ ՆԳՆ ոստիկանության համապատասխան պաշտոնատար անձինք իրավախախտում կատարած անձանց նկատմամբ համապատասխան հիմքերի առկայության դեպքում կիրառել են ֆիզիկական ուժ և հատուկ միջոցներ, որոնք նախատեսված են «Ոստիկանության մասին» օրենքով, իսկ իրավախախտում կատարած անձինք նշված հանգամանքն ինքնին ընկալել են որպես բռնության գործադրում և ներկայացրել հանցագործության մասին հաղորդումներ: Ընդ որում, **քիչ չեն դեպքերը, երբ խոշտանգումների կամ այլ վատ վերաբերմունքի դեպքերով իրականացված վարույթներով հենց տուժողների ցուցմունքներով է հաստատվել պաշտոնատար անձանց կողմից կիրառված ֆիզիկական ուժի համաչափ լինելը**, որը, ինչպես վերը նշվեց, շատ դեպքերում տուժողների կողմից ընկալվում է որպես պաշտոնատար անձանց կողմից բռնության գործադրում: Ավելին՝ ՆԳՆ ոստիկանության համապատասխան պաշտոնատար անձանց կողմից **համաչափ** ֆիզիկական ուժի կիրառումը հաճախ հաստատվել է նաև ՆԳՆ ոստիկանության համապատասխան պաշտոնատար անձանց ամրակցված, ոստիկանության բաժիններում տեղադրված տեսանկարահանող սարքերի տեսագրություններով, դատաբժշկական փորձաքննությունների եզրակացություններով, վարույթի ելքով չշահագրգռված վկաների ցուցմունքներով, ինչպես նաև այլ վարութային գործողություններով: Եզակի չեն դեպքերը, երբ քննությամբ հիմնավորվել է, որ տուժողի մոտ դատաբժշկական փորձաքննությամբ հայտնաբերված մարմնական վնասվածքները, որոնց առաջացումը վերջիններս պայմանավորել են իրենց նկատմամբ կիրառված բռնությամբ, բնորոշ են և առաջացել են համապատասխան պաշտոնատար անձանց կողմից համաչափ ֆիզիկական ուժ կամ հատուկ միջոց կիրառելու արդյունքում, սակայն հաշվի առնելով, որ կատարված բազմաթիվ վարութային գործողություններով չի հաստատվել տուժողի կողմից սուտ մատնություն կատարելու հանգամանքը, վերջիններիս նկատմամբ այդ կապակցությամբ հանրային քրեական հետապնդումներ չեն հարուցվել:

Բացի այդ, քիչ չեն այն դեպքերը, երբ Քրեական օրենսգրքի տարբեր հոդվածներով մեղադրվող անձինք ոստիկանության ծառայողների կողմից իրենց նկատմամբ կիրառված բռնության մասին հաղորդումներ են տվել դեպքից ամիսներ, անգամ տարիներ անց՝ քրեական գործերի դատաքննության ժամանակ կամ էլ ամիսներ տևած նախաքննության ընթացքում, որպիսի պայմաններում խոշտանգման և վատ վերաբերմունքի դեպքերով միջազգային և ներպետական օրենսդրության պահանջներին համապատասխան իրականացվող նախաքննության արդյունավետությունն օբյեկտիվորեն չի կարող գոհացուցիչ համարվել:

Գլխավոր դատախազության կողմից նշված հանցակազմերով հսկողական վարույթներով հանրային քրեական հետապնդում չհարուցելու և քրեական վարույթը կարճելու մասին որևէ որոշում հաշվետու ժամանակահատվածում չի վերացվել այն հիմնավորմամբ,

որ որոշումները դատական վերանայման արդյունքում դատարանների կողմից ճանաչվել են ոչ իրավաչափ (երկու դատական ակտով ներկայացված հատուկ վերանայման բողոքները դեռևս գտնվում են քննության փուլում):

Խոշտանգումների կամ այլ վատ վերաբերմունքի հանցակազմերով նախաձեռնված քրեական վարույթների թվի աճին նպաստել է այն հանգամանքը, որ հիշյալ դեպքերով ստացված հաղորդումները ստուգելու քրեադատավարական գործիքակազմի բացակայության պատճառով ստացված հաղորդումներից գրեթե բոլորով նախաձեռնվել են քրեական վարույթներ, սակայն քիչ չեն դեպքերը, երբ հենց ստացված հաղորդումները ստուգելու արդյունքում հաստատվել է համապատասխան պաշտոնատար անձի կողմից իրեն մեղսագրվող արարքը կատարած չլինելու հանգամանքը:

Թեև 2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած Քրեական օրենսգրքի 83-րդ հոդվածի 9-րդ մասում սահմանվել է, որ անկախ հանցանքի կատարման պահից, նույն օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով (պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը կամ լիազորություններն անցնելը, որը կատարվել է բռնություն գործադրելով կամ բռնություն գործադրելու սպառնալիքով) և 450-րդ հոդվածով (խոշտանգում) նախատեսված հանցանք կատարած անձանց նկատմամբ վաղեմության ժամկետներ չեն կիրառվում, սակայն խնդրահարույց էր համարվում մինչև նոր Քրեական օրենսգրքի ընդունումը կատարված խոշտանգումների կամ բռնությամբ զուգորդված պաշտոնեական լիազորություններն անցնելու դեպքերով անձանց նկատմամբ վաղեմության ժամկետների կիրառության հարցը:

Նշված խնդրի լուծման կապակցությամբ միասնական պրակտիկա ձևավորելու առումով՝ Գրիշա Վիրաբյանի վերաբերյալ գործով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից ներկայացված վճռաբեկ բողոքի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանը 2023 թվականի դեկտեմբերի 23-ին կայացված որոշմամբ արձանագրել է, որ Հայաստանի Հանրապետությունը, 1995 թվականին ընդունված ՀՀ Սահմանադրությամբ Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերը նախատեսելով որպես ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մաս և վավերացնելով խոշտանգումների դեմ պայքարի հիմնական միջազգային փաստաթղթերը՝ հստակ հանձնառություն է ստանձնել օրենսդրորեն և գործնականում արդյունավետ մեխանիզմներ նախատեսել խոշտանգումների և դրանց հավասարեցված արարքների քրեականացման, դրանց վերաբերյալ դեպքերով արդյունավետ քննություն իրականացնելու և մեղավորներին քրեական պատասխանատվության ենթարկելու համար: Այս հանձնառությունը ստանձնելու և այն հետևողականորեն իրականացնելու ապացույցը Հայաստանի Հանրապետության կողմից խոշտանգումների դեմ պայքարի ոլորտի հիմնական միջազգային կոնվենցիաների վավերացումն է, ներպետական օրենսդրության զարգացումներն ու համապատասխան դատական պրակտիկայի ձևավորումը:

Այնքանով, որքանով նախկին Քրեական օրենսգիրքն ուղղակիորեն ամրագրում էր միջազգային պայմանագրերով սահմանված դեպքերում և դրանցով նախատեսված հանցանքներ կատարած անձանց նկատմամբ վաղեմության ժամկետներ կիրառելու արգելք, իսկ Հայաստանի Հանրապետությունը խոշտանգումների դեմ պայքարի հիմնական միջազգային պայմանագրերի վավերացմամբ պարտավորվել է հետևել նաև այդ պայմանագրերի դրույթների մեկնաբանությանն ու կիրառությանն ուղղված՝ կոնվենցիոնալ մարմինների կողմից ընդունված փաստաթղթերում ամրագրված պահանջներին, հետևաբար Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասը կազմող միջազգային իրավունքի նորմերի հիման վրա Վճռաբեկ դատարանը փաստել է, որ առնվազն ՀՀ քրեական օրենսգիրքն ուժի մեջ մտնելու օրվա՝

2003 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ, առկա էր խոշտանգման կամ դրան հավասարեցված վերաբերմունքի դեպքում վաղեմության ժամկետներ կիրառելու օրենսդրական արգելք, որը կարող էր հիշյալ գործով ամբաստանյալների համար կանխատեսելի լինել իրենց մեղսագրվող արարքը կատարելու օրվա՝ 2004 թվականի ապրիլի 23-ի դրությամբ:

Գլխավոր դատախազությունում ամփոփվել են նաև 2023 թվականի ընթացքում ընտանիքում բռնության դեպքերով քրեաիրավական պայքարի արդյունքները.

Տվյալներ՝ 2022-2023 թվականների ընթացքում արձանագրված ընտանիքում բռնության դեպքերի վերաբերյալ

ՀՀ քր.օր. հոդվածը	Դեպքերի թիվը		Որից											
			ԿԵՆԱԿԻՑԸ		ԱՄՈՒՍԻՆԸ /նաև՝ նախկին/ ԿՆՈՋԸ		ԿԻՆԸ ԱՄՈՒՍՆՈՒՆ		ԾՆՈՂԸ ԶԱՎԱԿԻՆ		ԶԱՎԱԿԸ ԾՆՈՂԻՆ		ԱՅԼ	
	2022	2023	2022	2023	2022	2023	2022	2023	2022	2023	2022	2023	2022	2023
155	4	3			4	2		1						1
162		5				2								2
166		8				4						1		3
167	10	10			7	4			1	2		2	2	2
171	22	47			16	29			1	2		8	5	8
172	1				1									
176		1				1								10
192		4				1				2		1		
194	22	46			16	26			1	2	2	8	3	
2003թ. քր. օր 137.1	40	4			30	2	1		1		1		7	2
195	249	372		2	184	233	3	2	12	35	25	23	25	77
196	4	1	1		2	1			1					
198		4				3				1				
255		1										1		
264	4				4									
300		1								1				
508	1	1			1									1
	357	508	1	2	265	308	4	3	17	45	28	44	42	106

2023 թվականին ընտանիքում բռնության արձանագրված դեպքերն աճել են 151-ով կամ 42%-ով. եթե 2022 թվականին արձանագրվել էր նման 357 դեպք, ապա 2023 թվականին՝ 508: 2021 թվականին արձանագրվել էր ընտանիքում բռնության 500 դեպք:

2023 թվականին արձանագրված 508 դեպքից 308-ը կամ 61%-ը, կատարվել են ամուսնու կողմից կնոջ նկատմամբ (նախորդ տարվա համեմատ՝ ցուցանիշը նվազել է 5-ով. 2022 թվականի նույն ցուցանիշը կազմել էր 66%):

Հաշվետու ժամանակահատվածում արձանագրվել է ընտանիքում սպանության դեպքերի նվազում. արձանագրվել է նման 3 դեպք, իսկ նախորդող երկու տարիներին արձանագրվել էր ընտանիքում սպանության 4 դեպք, ընդ որում՝ 2022 թվականին արձանագրված 4 դեպքն էլ կատարվել էր ամուսնու (այդ թվում՝ նախկին) կողմից կնոջ նկատմամբ, 2023 թվականին արձանագրված 3 դեպքից 2-ն է կատարվել ամուսնու կողմից կնոջ նկատմամբ:

Ընտանիքում առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելու դեպքերի թիվը 8-ն է, այն պարագայում, երբ 2022 թվականին նման դեպք չէր արձանագրվել, իսկ դրան նախորդող տարում նման 1 դեպք էր արձանագրվել:

Ընտանիքում բռնության դեպքերի գերակշիռ մասը ֆիզիկական ներգործության (ծեծի կամ բռնի այլ գործողությունների) դեպքեր են: Բացառություն չի կազմել նաև 2023 թվականը. արձանագրվել է նման 372 դեպք նախորդ տարվա 249-ի դիմաց. դեպքերն աճել են 123-ով կամ 49.4%-ով:

Ընտանիքում բռնության դեպքերի կազմը ստորև՝
2023 թվական



2022 թվական



Դատախազությունը հաշվետու ժամանակահատվածում ապահովել է ընտանիքում բռնության դեմ պայքարի կապակցությամբ մասնագիտական քննարկումներում Դատախազության ներկայացվածությունը, մշտապես կապ է ապահովել Ոստիկանության հետ՝ ընտանիքում բռնության դեպքերի վերաբերյալ կոնկրետ քրեական վարույթներով իրավիճակներն ու խնդիրները քննարկելու, ընդհանուր քրեական քաղաքականություն ապահովելու նպատակով, Արդարադատության ակադեմիայում ապահովել է ընտանիքում բռնության դեպքերի քննության թեմայով դասընթացի անցկացումը:

Գլխավոր դատախազությունն ակտիվ ներգրավվածություն է ունեցել «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքի, ինչպես նաև «Ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառման կարգը սահմանելու մասին» կառավարության որոշման նախագծերի քննարկումներին: Ներկայացվել են առաջարկություններ, որոնց գերակշիռ մասը հաշվի են առնվել նախագծերի վերջնական տեքստերում:

Դատախազության կողմից 2023 թվականին հետևողականություն է դրսևորվել ընտանիքում բռնության վերաբերյալ քրեական վարույթներով խնդիրները վեր հանելու ուղղությամբ:

Ի թիվս այլնի՝

- Հաշվետու տարում կատարված ուսումնասիրության արդյունքում պարզվել է ընտանիքում բռնության կրկնվող դեպք, որը քննվում էր որպես ֆիզիկական ու հոգեկան ներգործություն: Քննարկման արդյունքներով պարզվել է, որ կատարվածը անօգնական վիճակում գտնվող երեխայի նկատմամբ խորթ տատի և հոր կողմից կատարված թրաֆիքինգի դեպք է, որի կապակցությամբ հսկող դատախազը որոշում է կայացրել քրեական հետապնդում հարուցելու վերաբերյալ՝ հիշյալ անձանց նկատմամբ նաև թրաֆիքինգի համար քրեական հետապնդում հարուցելով:

Դատախազի կողմից քրեական վարույթների նախաքննության օրինականության նկատմամբ վերահսկողական գործառույթն իրացնելիս՝ հայտնաբերվել է նախկին ամուսնու կողմից կնոջ նկատմամբ գործադրած հոգեբանական բռնությունը սպանության վերաճելու դեպք: Նշված դեպքով հաշվի չէր առնվել ենթադրյալ բռնություն գործադրած անձի սոցիալական պատասխանատվության ցածր աստիճանը, հանցավոր վարքագիծ դրսևորելու բարձր հավանականությունը՝ նախկինում 84 անգամ հանցանք (այդ թվում՝ անձի առողջությանը դիտավորությամբ վնաս պատճառելը, խուլիգանություն) կատարելու, նրա վերաբերյալ 3 քրեական վարույթի առկայությունը, տուժողի հետ միջանձնային լարված հարաբերությունները: Նշված դեպքով ՀՀ գլխավոր դատախազը 2023 թվականի հունվարի 19-ին դիմել է Ներքին գործերի նախարարին՝ Ոստիկանության համապատասխան ստորաբաժանման աշխատակիցների, ինչպես նաև նրանց նկատմամբ անմիջական վերադաս հանդիսացող պաշտոնատար անձանց նկատմամբ ծառայողական քննություն անցկացնելու և վերջիններիս կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելու նպատակով: Ոստիկանությունից ստացված պատասխան գրության համաձայն՝ իրականացված ծառայողական քննության արդյունքում պատասխանատու 3 աշխատակիցների գործողություններում կարգապահական խախտման փաստը հաստատվել է. ոստիկանության երկու կապիտան ենթարկվել է կարգապահական պատասխանատվության, իսկ 1-ը ծառայողական քննությունն իրականացնելիս՝ ազատված է եղել ծառայությունից:

2008 թվականի մարտի 1-ի հետընտրական զարգացումների հետ կապված նախաքննությամբ 2018 թվականին հուլիսի 3-ից քննվող քրեական գործին է միացվել 2008 թվականի փետրվարի 23-ից մարտի 2-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ գործադիր մարմնի ղեկավար անձի կողմից, այլ անձանց հետ նախնական համաձայնությամբ,

ՀՀ սահմանադրական կարգը տապալելու դեպքի առթիվ նախկին Քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասով նույն օրը հարուցված քրեական գործը:

2018 թվականին օգոստոսի 3-ին նույն քրեական գործին է միացվել պաշտոնական դիրքն օգտագործելով, արդարադատության իրականացմանը խոչընդոտելու նպատակով դատարանի գործունեությանը միջամտելու դեպքի առթիվ նախկին Քրեական օրենսգրքի 332-րդ հոդվածի 3-րդ մասով նույն օրը հարուցված քրեական գործը:

2018 թվականի օգոստոսի 31-ին նույն քրեական գործին է միացվել 2008 թվականի մարտի 1-ին և 2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների ժամանակ Ազատության հրապարակում ոստիկանության կողմից կատարված գործողությունների հակաօրինական լինելու վերաբերյալ ՀՀ ազգային ժողովի կողմից 2008 թվականի հունիսի 16-ի Ն-086-4 որոշմամբ ստեղծված ժամանակավոր հանձնաժողովի, նույն թվականի հոկտեմբերի 23-ին ՀՀ նախագահի կարգադրությամբ ստեղծված փորձագետների փաստահավաք խմբի, ինչպես նաև հանրության մոտ ի հայտ եկած կասկածները ցրելու, այդ ապօրինությունները քողարկելու, դրանք իրավաչափ քողի ներքո ներկայացնելու, ինչպես նաև այդ գործողությունների համար հետագայում պատասխանատվությունից ազատվելու խմբային շահերից ելնելով ոստիկանության բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից համապատասխան պաշտոնական փաստաթղթեր կեղծելու և շրջանառության մեջ դնելու դեպքի առթիվ նախկին Քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով, 309-րդ հոդվածի 2-րդ մասով և 314-րդ հոդվածի 1-ին մասով հարուցված քրեական գործը:

2018 թվականի հոկտեմբերի 1-ին նույն քրեական գործին է միացվել ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավարի և այլ բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից առանձնապես խոշոր չափերով կաշառք ստանալու դեպքի առթիվ նախկին Քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով հարուցված քրեական գործը:

2018 թվականի հոկտեմբերի 29-ին քրեական գործին է միացվել հիշյալ քրեական գործի նախաքննության ընթացքում Հատուկ քննչական ծառայության առանձին քննիչների կողմից առանձնապես ծանր հանցագործությունների, այն է՝ 2008 թվականի մարտի 1-ին և 2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների ժամանակ մի խումբ անձանց սպանությունների, ինչպես նաև ՀՀ զինված ուժերի հակասահմանադրական օգտագործման, այդ թվում՝ զինված ուժերի ծառայողների կողմից հրազենի ապօրինի գործադրման իրական հանգամանքները թաքցնելու, վերջիններիս կողմից կատարված գործողությունները հերքելու և տեղի ունեցածն իրավաչափ քողի ներքո ներկայացնելու խմբային շահերից ելնելով, ոստիկանության բարձրաստիճան, ինչպես նաև փորձաքրեագիտական վարչության առանձին պաշտոնատար անձանց օժանդակությամբ, միասնական դիտավորությամբ 2008 թվականի ընթացքում ապացույցները կեղծելու դեպքի առթիվ նախկին Քրեական օրենսգրքի 349-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով 2018 թվականի հոկտեմբերի 27-ին հարուցված քրեական գործը:

2019 թվականի սեպտեմբերի 24-ին քրեական գործին է միացվել պետական ծառայություն իրականացնող պաշտոնատար անձանց կողմից պաշտոնական լիազորությունները չարաշահելու, նախապես չխոստացված պարտակում կազմակերպելու, պաշտոնական կեղծիք կատարելուն և ապացույցները կեղծելուն դրդելու դեպքերի առթիվ նախկին Քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով, 314-րդ հոդվածի 1-ին մասով, 38-314-րդ հոդվածի 1-ին մասով, 38-334-րդ հոդվածի 1-ին մասով և 38-349-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հարուցված քրեական գործը:

2020 թվականի ապրիլի 8-ին քրեական գործին է միացվել նախկին գլխավոր դատախազի՝ ՀՀ գլխավոր դատախազի պաշտոնը զբաղեցնելու ժամանակահատվածում ենթադրաբար կատարված կաշառք ստանալու, քաղաքացու կողմից կաշառք տալու,

կաշառք ստանալու օժանդակության և հայտարարագրերում հայտարարագրման ենթակա՝ փաստացի իրեն պատկանող առանձնապես խոշոր չափերով անշարժ գույքերի տվյալները թաքցնելու դեպքերի առթիվ նախկին Քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով, 312-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 38-311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով և 314.3-րդ հոդվածի 2-րդ մասով նույն օրը հարուցված քրեական գործը:

Հետագա նախաքննության ընթացքում ձեռք բերված փաստական տվյալների հիման վրա պետական ծառայություն իրականացնող պաշտոնատար անձի կողմից հանցավոր ճանապարհով ստացված առանձնապես խոշոր չափերով գույքերն օրինականացնելու և նշված պաշտոնատար անձի հետ փոխկապակցված անձի կողմից հանցավոր ճանապարհով ստացված առանձնապես խոշոր չափերով գույքերն օրինականացնելուն օժանդակելու դեպքի առթիվ՝ 2020 թվականի ապրիլի 28-ին նախկին Քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հարուցվել է քրեական գործ, որը նույն օրը միացվել է 2008 թվականի մարտի 1-ին և 2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ քննվող քրեական գործին:

2018 թվականից ի վեր կատարվել են մի շարք վարութային և ապացուցողական գործողություններ, որպես վկա հարցաքննվել են 1200-ից ավելի անձինք, հետաքննության մարմիններին՝ ՀՀ ոստիկանության, ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության և ԱԱԾ համապատասխան ծառայություններին տրվել են օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ հանձնարարություններ, նշանակվել է 27 փորձաքննություն, փորձաքննության է ներկայացվել 1056 միավոր հրազեն, ինչպես նաև՝ զինամթերք, կատարվել է 50-ից ավելի խուզարկություն, քաղաքացիներից և պետական տարբեր հիմնարկներից կատարվել է շուրջ 103 առգրավում:

Նախաքննության ընթացքում ձեռք բերված բավարար ապացույցների հիման վրա որպես մեղադրյալ են ներգրավվել.

- ՀՀ պաշտոնաթող նախագահը՝ նախկին Քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասով և 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով,
- ՀՀ պաշտպանության նախկին նախարարը՝ նախկին Քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասով,
- ՀՀ պաշտպանության նախարարի նախկին տեղակալը՝ նախկին Քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասով,
- ՀՀ զինված ուժերի նախկին գլխավոր շտաբի պետը՝ նախկին Քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասով,
- ՀՀ նախագահի աշխատակազմի նախկին ղեկավարը՝ նախկին Քրեական օրենսգրքի 38-300.1-րդ հոդվածի 1-ին մասով, 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով,
- «Հ2» հեռուստատեսության տնօրենը՝ նախկին Քրեական օրենսգրքի 38-311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով: Հետագայում նրա-ի վերաբերյալ գործն անջատվել է, քննվում է առանձին վարույթում:
- Հատուկ քննչական ծառայության նախկին ՀԿԳ ավագ քննիչը՝ նախկին Քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով, 38-349-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 309-րդ հոդվածի 2-րդ մասով:
- Հատուկ քննչական ծառայության նախկին ՀԿԳ ավագ քննիչը՝ նախկին Քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով և 38-349-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով: Նրան առաջադրված մեղադրանքը հետագայում փոփոխվել է, և 2023 թվականի հուլիսի 31-ին որոշում է կայացվել նրա նկատմամբ նախկին Քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին:
- ՀՀ ոստիկանության նախկին պետը՝ նախկին Քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով, 314-րդ հոդվածի 2-րդ մասով և 334-րդ հոդվածի 1-ին մասով: Քրեական հետապնդումը դադարեցվել է վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով:

- ՀՀ ոստիկանության պետի նախկին տեղակալը՝ նախկին Քրեական օրենսգրքի 38-309-րդ հոդվածի 2-րդ մասով: Քրեական հետապնդումը դադարեցվել է վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով:
- ՀՀ ոստիկանության ՔՀԳՎ նախկին պետը՝ նախկին Քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով, 314-րդ հոդվածի 2-րդ մասով և 334-րդ հոդվածի 1-ին մասով: Քրեական հետապնդումը դադարեցվել է վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով:
- ՀՀ ոստիկանության ՔՀԳՎ նախկին պետը՝ նախկին Քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով, 314-րդ հոդվածի 2-րդ մասով և 334-րդ հոդվածի 1-ին մասով: Քրեական հետապնդումը դադարեցվել է վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով:
- ՀՀ ոստիկանության զորքերի նախկին շտաբի պետը՝ նախկին Քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով:
- ՀՀ ոստիկանության փորձաքրեագիտական վարչության նախկին բաժնի պետը՝ նախկին Քրեական օրենսգրքի 38-349-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:
- ՀՀ ոստիկանության հատուկ նշանակության ջոկատի նախկին հրաձիգ Ա. Ա.-ն՝ նախկին Քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով,
- ՀՀ ոստիկանության հատուկ նշանակության ջոկատի նախկին հրաձիգ Լ. Հ.-ն՝ նախկին Քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով:
- ՀՀ ոստիկանության հատուկ միջոցների կիրառման վաշտի նախկին ավագ Մ. Ղ.-ն՝ նախկին Քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով:
- ՀՀ ոստիկանության 2-րդ գումարտակի 1-ին վաշտի զորային վերակարգի նախկին պետը՝ նախկին Քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով:
- ՀՀ արդարադատության նախարարի նախկին տեղակալ, ՀՀ նախագահի նախկին օգնական, ՄԻԵԴ-ում ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցիչ, ՀՀ նախկին գլխավոր դատախազը նախկին Քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 38-308-րդ հոդվածի 2-րդ մասով, 314-րդ հոդվածի 1-ին մասով, 38-314-րդ հոդվածի 1-ին մասով, 314.3-րդ հոդվածի 2-րդ մասով, 38-334-րդ հոդվածի 1-ին մասով և 38-349-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:
- նախկին գլխավոր դատախազի կինը՝ նախկին Քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով:

Քրեական գործից 4 մեղադրյալների՝ Ռ.Ք.-ի, Ս.Օ.-ի, Յ.Խ.-ի և Ա.Գ.-ի վերաբերյալ անջատվել է քրեական գործ, որը 2019 թվականի ապրիլի 29-ին հաստատված մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

2021 թվականի ապրիլի 6-ին Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը որոշում է կայացրել Ռ.Ք-ի, Ս.Օ.-ի, Յ.Խ.-ի նկատմամբ նախկին Քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցնելու մասին՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով:

Վերոգրյալ որոշումը բողոքարկվել է Վերաքննիչ քրեական, ապա Վճռաբեկ դատարան: Վճռաբեկ դատարանը դիմել է Սահմանադրական դատարան:

Նկատի ունենալով Սահմանադրական դատարանի 2021 թվականի մարտի 26-ի թիվ ՍԴՈ 1586 որոշումը՝ 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված Քրեական դատավարության օրենսգրքի 204-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված կարգով՝ համապատասխան փոփոխություն է կատարվել Մ.Հ.-ին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման մեջ՝ կայացնելով որպես մեղադրյալ ներգրավելու մասին նոր որոշում՝ Մ.Հ.-ի արարքները որակելով Քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 3-րդ մասով:

Նույն կերպ համապատասխան փոփոխություն է կատարվել նաև Գ.Կ.-ին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման մեջ:

Նախաքննության ընթացքում Մ.Հ.-ի, Գ.Կ.-ի, Վ.Հ.-ի և Ա.Հ.-ի նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

Մեղադրյալներ Մ.Ղ.-ի, Վ.Ս.-ի, Ա.Ա.-ի նկատմամբ հարուցված հանրային քրեական հետապնդումը՝ քրեական վարույթի նկատմամբ դատավարական հսկողություն իրականացնող դատախազի՝ 2023 թվականի սեպտեմբերի 30-ի որոշմամբ դադարեցվել է Քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով (Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի ընդհանուր մասի դրույթների՝ վաղեմության ժամկետներն անցած լինելու ուժով անձը ենթակա է ազատման քրեական պատասխանատվությունից)՝ նկատի ունենալով, որ մեղադրյալները չեն առարկել և խնդրել են իրենց նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցնել՝ վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով:

Նույն օրը մեղադրյալ Լ.Հ.-ի նկատմամբ իրականացվող հանրային քրեական հետապնդումը դադարեցվել է Քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքով, այն է՝ անձը չի կատարել իրեն մեղսագրվող արարքը:

Քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքով քրեական հետապնդումը դադարեցվել է նաև 2008 թվականի մարտի 1-ի դրությամբ Ոստիկանությունում բարձրաստիճան պաշտոն զբաղեցրած անձի նկատմամբ, ում 2019 թվականի հունիսի 5-ին մեղադրանք էր առաջադրվել նախկին Քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով:

Քրեական վարույթից անջատվել և դատախազի կողմից 2023 թվականի օգոստոսի 12-ին հաստատված մեղադրական եզրակացությամբ Հակակոռուպցիոն դատարանին է հանձնվել 2008 թվականի դրությամբ քրեական գործով քննչական խմբի քննիչի կողմից պաշտոնեական լիազորությունները չարաշահելու դեպքի առթիվ քննված քրեական վարույթը:

Նշենք, որ «Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ ՀՀ», ինչպես նաև այդ խմբի այլ գործերով որոշումների հրապարակումից հետո, ՀՀ գլխավոր դատախազության և 2008 թվականի մարտի 1-ի իրադարձություններին առնչություն ունեցած և դատապարտված անձանց կամ նրանց պաշտպանների կողմից բողոքարկվել են 2008 թվականի մարտիմեկյան իրադարձություններին վերաբերող օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատական ակտերը և Վերաքննիչ քրեական կամ Վճռաբեկ դատարանների կողմից կայացվել են արդարացման դատական ակտեր, այդ թվում՝ 2023 թվականի ընթացքում:

Մասնավորապես՝ 2023 թվականի դրությամբ շուրջ 30 քրեական գործերով կայացված մեղադրական դատական ակտեր բեկանվել են, կայացվել են արդարացման դատական ակտեր, մասնակի արդարացվել է 1 անձ: Նշված գործերից 16-ով բողոքը ներկայացված է եղել Գլխավոր դատախազության կողմից:

Դեռևս 2008 թվականին տեղի ունեցած խոշտանգումների և վատ վերաբերմունքի ենթադրյալ փաստերի առթիվ 2018-2020 թվականների ընթացքում հարուցված քրեական վարույթին միացված վարույթներով պատշաճ և համակողմանի քննություն ապահովելու, արդարադատության շահը պահպանելու, ենթադրյալ արարքներից տուժած անձանց իրավունքների դատավարական հայեցակետի խախտման դեպքերը բացառելու նպատակով՝ 2024 թվականի հունվարի 5-ին քրեական վարույթի նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի կողմից վարույթն իրականացնող քննիչին հանձնարարվել է խոշտանգման և բռնությամբ զուգորդված լիազորություններն անցնելու թվով տասը դեպքերի առթիվ անջատել նոր քրեական վարույթներ:

Քրեական վարույթով նախաքննությունը շարունակվում է:

2023 թվականի ընթացքում Գլխավոր դատախազությունում ուսումնասիրվել և ամփոփվել է 2021-2022 թվականների ընթացքում համակարգչային տեխնիկայի, սոցիալական կայքերի և հեռահաղորդակցման հավելվածների օգտագործմամբ իրացման նպատակով թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պատրաստուկների, դրանց համարժեք նյութերի (անալոգի) և ածանցյալների ապօրինի շրջանառության վերաբերյալ քրեական վարույթների նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության և մեղադրանքի պաշտպանության վիճակը:

Թմրամիջոցների ապօրինի շրջանառության վերաբերյալ քրեական վարույթների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ հետզհետե ավելի մեծ տարածում է ստանում իրացվող թմրամիջոցի դիմաց վճարումները թվային արժույթի միջոցով ընդունելու գործելաոճը: Ըստ քրեական վարույթներով ձեռք բերված տվյալների՝ իրացվող թմրամիջոցի դիմաց վճարումները թվային արժույթի միջոցով ընդունելու դեպքերում՝ ինչպես թմրամիջոցի դիմաց վճարելու համար կրիպտոարժույթ ձեռք բերելու, այնպես էլ արգելված նյութերի իրացումից ստացված միջոցների հետագա տնօրինման համար թմրամիջոց իրացնող և այն ձեռք բերող անձինք օգտվում են կրիպտոարժույթի փոխանակմամբ զբաղվող ՀՀ տարածքում գործող անձանց ծառայություններից: Ընդ որում, վերջիններս, առանձին դեպքերում տեղեկացված լինելով իրենց միջոցով շրջանառված միջոցների հանցավոր ծագման մասին, անմիջական մասնակցություն են ունենում հիշյալ գույքի օրինականացմանը:

Նշված դեպքերի բացահայտման առումով մեծ կարևորություն ունի կիբեռհանցագործությունների դեմ պայքարի համար իրականացվող օպերատիվ-հետախուզական և քրեադատավարական միջոցառումների համատեղ կիրառումը, որոնք պետք է միտված լինեն սոցիալական կայքի, հեռահաղորդակցման համացանցային հավելվածի օգտատիրոջ անձնական տվյալների, գրանցման ընթացքում մուտքագրված անհատական տվյալների, շահագործված հեռախոսահամարների, էլեկտրոնային փոստի հասցեների, համացանցի հասանելիության IP հասցեների, թմրամիջոցի դիմաց վճարման եղանակների, էլեկտրոնային դրամապանակների, կրիպտոարժույթի հաշիվների օգտագործման դեպքում՝ դրանց բացման, շահագործման հանգամանքների, կատարված ֆինանսական գործարքների վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն ձեռք բերելուն:

Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ նշված հանգամանքները ոչ բոլոր վարույթներով են պատշաճ քննության առարկա դարձվում, բավարար միջոցներ չեն ձեռնարկվում՝ պարզելու համար իրացման նպատակով թմրամիջոցների ապօրինի շրջանառության համար օգտագործված բոլոր վճարային գործիքները, դրանցում միջոցների մուտքագրման հանգամանքներն ու աղբյուրները, դրանց հետագա շարժն ու տնօրինումը, հանցավոր գործունեությունից ստացված միջոցների չափը, դրանց օրինականացմանն առնչված անձանց շրջանակը, կրիպտոարժույթի փոխանակմամբ զբաղվող անձանց ինքնությունը, նրանց և թմրամիջոցների իրացմամբ զբաղվող անհատական էջը վարող անձանց միջև կապերի բնույթը, թմրամիջոցների դիմաց վճարում ստանալու համար տրամադրված և դրա հետ փոխկապակցված կրիպտոարժույթի հաշվեհամարներին փոխանցված գումարի չափը, դրա հետագա շարժն ու տնօրինման եղանակը (փոխանցվել է այլ հաշվեհամարների, էլեկտրոնային դրամապանակների, բանկային հաշվեհամարների, կանխիկացվել է և այլն): Ամփոփման արդյունքների հիման վրա, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառմամբ թմրամիջոցների և մյուս արգելված նյութերի իրացման վերաբերյալ վարույթներով նախաքննության օրինականության նկատմամբ պատշաճ հսկողություն ապահովելու նպատակով, ի թիվս այլնի, 2023 թվականի հուլիսի 14-ին ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից Դատախազության տարածքային և այլ ստորաբաժանումներին տրվել է հանձնարարական:

Մասնավորապես՝ հանձնարարվել է նշված դեպքերով քննության առարկա դարձնել թմրամիջոցների դիմաց վճարում ստանալու համար տրամադրված և դրա հետ փոխկապակցված կրիպտոարժույթի հաշվեհամարներին փոխանցված գումարի չափը, դրա հետագա շարժն ու տնօրինման եղանակը (փոխանցվել է այլ հաշվեհամարների, էլեկտրոնային դրամապանակների, բանկային հաշվեհամարների, կանխիկացվել է և այլն), կրիպտոարժույթի փոխանակմամբ զբաղվող անձանց միջև կապերի բնույթի պարզումը՝ ստուգելով հանցավոր ճանապարհով ստացված գույքի օրինականացման վարկածը և դրա արդյունքներով լուծելով քրեական վարույթ նախաձեռնելու հարցը:

Կատարված ուսումնասիրությունների և ամփոփումների հիման վրա իրականացված կառուցվածքային և կազմակերպական բնույթի միջոցառումների՝ կադրերի մասնագիտացման, ժամանակակից պահանջներին համապատասխանող, էլեկտրոնային ապացույցների և հանցավոր գործունեության ֆինանսական բաղադրիչի ուսումնասիրության ու վերլուծության վրա հիմնված քննության մեթոդիկայի և արարքների քրեաիրավական որակման չափանիշների ներդրման արդյունքում 2023 թվականին հնարավոր է եղել արձանագրել համացանցի, տեղեկատվական և հեռահաղորդակցական համակարգերի օգտագործմամբ իրացման նպատակով թմրամիջոցների ապօրինի շրջանառության և դրանից ստացված փողերի լվացման դեպքերի բացահայտման, դրանց վերաբերյալ վարույթների քննության արդյունքների էական բարելավում:

2023 թվականի ընթացքում միայն ՀՀ գլխավոր դատախազության բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազների կողմից կայացված որոշումներով համացանցի, տեղեկատվական և հեռահաղորդակցական համակարգերի օգտագործմամբ իրացման նպատակով թմրամիջոցների ապօրինի շրջանառության համար հանրային քրեական հետապնդում է հարուցվել 52 անձի նկատմամբ, նշված եղանակով հանցանք կատարելու համար նախորդ տարի քրեական հետապնդում է հարուցվել 19 անձի նկատմամբ:

Նշված անձանցից **45-ի** նկատմամբ քրեական հետապնդում է հարուցվել առանձնապես խոշոր չափերով հանցավոր ճանապարհով ստացված գույքն օրինականացնելու՝ փողերի լվացման համար: 2022 թվականին նշված հանցանքի համար քրեական հետապնդում է հարուցվել **6 անձի** նկատմամբ:

2023 թվականի ընթացքում մեղադրական եզրակացությամբ դատախազների կողմից դատարան է հանձնվել համացանցի, տեղեկատվական և հեռահաղորդակցական համակարգերի օգտագործմամբ իրացման նպատակով թմրամիջոցների ապօրինի շրջանառության համար մեղադրվող 26 անձի վերաբերյալ 8 վարույթ, նախորդ տարի՝ 14 անձի վերաբերյալ 4 քրեական վարույթ:



Մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված վարույթներով մեղադրյալներից **15-ին**, բացի իրացման նպատակով թմրամիջոցների ապօրինի շրջանառությունից, մեղսագրվել է նաև դրանից ստացված առանձնապես խոշոր չափերով փողերի լվացում, նախորդ տարի դատարան ուղարկված վարույթներով փողերի լվացման համար մեղադրվել է **2 անձ**:

Դատախազության տարածքային ստորաբաժանումներում 2023 թվականի ընթացքում թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառությունից առաջացած գույքի օրինականացման (փողերի լվացում) դեպքերով նախաձեռնվել է **5** քրեական վարույթ, որից **2 անձի** նկատմամբ **2-ը** հաշվետու տարում ուղարկվել է ընդհանուր իրավասության դատարան, իսկ **3-ի** նախաքննությունը շարունակվում է:

2021-2023 թվականներին իրականացված դատավարական և օպերատիվ-հետախուզական համագործակցված միջոցառումների արդյունքում բացահայտվել են տևական բնույթ կրող՝ առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցների ապօրինի շրջանառության և դրա արդյունքում ստացված առանձնապես խոշոր չափերով գույքի օրինականացման դեպքեր: Քրեական հետապնդում է հարուցվել և իրականացվում շուրջ 2 տասնյակ անձանց նկատմամբ, հայտնաբերվել և վերցվել են առանձնապես խոշոր չափերի՝ «Մեթամֆետամին», «ԼՍԴ», «ՄԴՄԱ», «α-PVP», «Մեֆեդրոն», «Մարիխուանա», «Հաշիշի յուղ», «Հաշիշ» և այլ տեսակի թմրամիջոցներ:

Քրեական վարույթներից մեկով պարզվել է, որ Մ.Ա.-ն, Բ.Ա.-ն և Ա.Հ.-ն, Մ.Ա.-ն, Բ.Ա.-ն և Ա.Հ.-ն, ղեկավարելով մաքսանենգությամբ թմրամիջոցների ապօրինի վաճառքով զբաղվելու նպատակով 2020 թվականին ստեղծված հանցավոր կազմակերպությունը, դրա կազմում ընդգրկել են Ն.Մ.-ին, Գ.Ա.-ին, Հ.Հ.-ին, Մ.Ա.-ին, Զ.Հ.-ին, Վ.Մ.-ին, Ս.Դ.-ին, Հ.Գ.-ին և այլ անձանց: Մ.Ա.-ն, Բ.Ա.-ն և Ա.Հ.-ն կապ են ստեղծել Իրանի Իսլամական Հանրապետությունում իրացման նպատակով թմրամիջոցների ապօրինի շրջանառությամբ և մաքսանենգությամբ զբաղվող անձի հետ: Վերջինս ապահովել է մաքսանենգությամբ առանձնապես խոշոր չափերով տարբեր տեսակի տեղափոխումը Հայաստանի Հանրապետության տարածք և թմրամիջոցների հանձնումը հանցավոր կազմակերպության ներկայացուցիչներին, որոնք թմրամիջոցները բաժանել են տարբեր քաշերի, փաթեթավորել, տեղադրել են թաքստոցներում, ապա իրացրել ինչպես առձեռն, այնպես էլ տեղեկատվական և հեռահաղորդակցական համակարգերի կիրառմամբ: Թմրամիջոցների իրացումից ստացված ֆինանսական միջոցների հանցավոր ծագումը թաքցնելու նպատակով՝ օգտագործվել են էլեկտրոնային դրամապանակներ, բանկային հաշիվներ, բուքմեյքերական ընկերությունների օգտահաշիվներ, ինչպես նաև վճարային տերմինալներ՝ անանուն կանխիկ մուտքագրումների համար:

Մուտքագրված ֆինանսական միջոցները տնօրինվել են հանցավոր գործունեությանը ներգրավված անձանց կողմից. 193 էլեկտրոնային դրամապանակներ է մուտքագրվել 2 մլրդ 179 մլն 593 հազար դրամ: Քրեական վարույթի շրջանակներում հայտնաբերվել և առգրավվել են 20 կգ 415 գ քաշով «Մեթամֆետամին», «Հերոին», «Կոկաին» և «Ափիոն» տեսակի թմրամիջոցներ: Հանցավոր կազմակերպության ղեկավարների և մասնակիցների կողմից օգտագործված էլեկտրոնային սարքերով հասանելիություն է ստացվել 193 էլեկտրոնային դրամապանակների: Հիշյալ դրամապանակներին և Բ.Ա.-ի բանկային քարտին մուտքագրվել է առանձնապես խոշոր չափերով՝ ընդհանուր **2.207.175.394 ՀՀ դրամ գումար**: Հանրային քրեական հետապնդումները հարուցվել են Քրեական օրենսգրքի 318-րդ և 319-րդ հոդվածների 1-ին մասերով, 393-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 46-399-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 296-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով:

Ննչական կոմիտեում քննված մեկ այլ քրեական վարույթով պարզվել է, որ Հ.Լ.-ն թմրամիջոցների ապօրինի իրացմամբ զբաղվելու նպատակով 2019-2022թթ. մասնակցել է Դ.Ք.-ի կողմից 2019 թվականին ստեղծված և ղեկավարվող առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցների ապօրինի իրացմամբ և դրա արդյունքում ստացված առանձնապես խոշոր չափերով փողերի լվացմամբ զբաղվող հանցավոր կազմակերպությանը, որում որպես մասնակիցներ ներգրավվել են բազմաթիվ այլ անձինք: Դ.Ք.-ի կողմից ստեղծված և ղեկավարվող հանցավոր կազմակերպության կողմից առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցների ապօրինի իրացման արդյունքում ստացված առանձնապես խոշոր չափերով 2.241.754 ԱՄՆ դոլարին համարժեք 1.083.619.048 դրամ գումարի հանցավոր ծագումը, դրա իրական բնույթը թաքցնելու, հանցավոր ճանապարհով ստացված ֆինանսական միջոցների տեղաշարժն ու տեղաբաշխումը քողարկելու, ստացված դրամական միջոցներին օրինական տեսք հաղորդելու նպատակով հանցավոր կազմակերպության

մասնակիցների կողմից նշված գումարները ստացվել, շրջանառվել և կանխիկացվել են տարատեսակ կրիպտոարժույթային դրամապանակների և վճարային գործիքների միջոցով: Նշված քրեական վարույթով գույքի հնարավոր բռնագրավումն ապահովելու համար արգելանք է կիրառվել Ա.Մ.-ի, Ա.Օ.-ի և Հ.Լ.-ի շարժական և անշարժ գույքերի վրա:

Վերոնշյալ բոլոր քրեական վարույթներն ուղարկվել են դատարան, դատաքննությունն ընթացքի մեջ է:

2023 թվականի ընթացքում քննված քրեական վարույթներով թմրամիջոցների իրացումից ստացված ֆինանսական միջոցների հանցավոր ծագումը, դրանց իրական բնույթը թաքցնելու, հանցավոր ճանապարհով ստացված ֆինանսական միջոցների տեղաշարժն ու տեղաբաշխումը քողարկելու, ստացված դրամական միջոցներին օրինական տեսք հաղորդելու նպատակով տարատեսակ կրիպտոարժույթային դրամապանակների և վճարային գործիքների միջոցով 8 քրեական վարույթով արձանագրվել է 5.592.541.536,35 դրամի շրջանառություն:

2023 թվականի ընթացքում նշված քրեական վարույթներից 15 անձի վերաբերյալ 6-ը, որոնցով դրամաշրջանառությունը կազմել է շուրջ **3.565.919.450 դրամ**, նույն ժամանակահատվածում մեղադրական եզրակացությամբ հանձնվել են դատարան. դատաքննությունն ընթացքի մեջ է:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ դատախազության ուշադրության ներքո են գտնվել, ի թիվս այլնի, ընդերքի պահպանման և օգտագործման կանոնները խախտելու փաստերով նախաձեռնված քրեական վարույթների ընթացքը: Այսպես.

- 2023 թվականի հոկտեմբերի 20-ին հանրային քրեական հետապնդումներ է հարուցվել Արարատի մարզում օգտակար հանածոյի արդյունահանմամբ զբաղվող երեք ընկերությունների տնօրենների նկատմամբ՝ ընդերքի պահպանման և օգտագործման օրենսդրական պահանջները խախտելու, հողը փչացնելու համար, որի արդյունքում պետությանը պատճառվել է խոշոր գույքային և այլ էական վնաս:

Մասնավորապես՝

1. «Արև Սյուզի» ՍՊ ընկերության տնօրեն Կ.Հ.-ն, 2020 թվականի դեկտեմբերի 21-ից մինչև 2022 թվականի օգոստոսի 30-ն ընկած ժամանակահատվածում, չունենալով թույլտվությամբ տրամադրված սահմաններից դուրս օգտակար հանածոյի արդյունահանմամբ զբաղվելու իրավունք, շեղվել է ընկերությանը տրամադրված կոորդինատներից, արդյունահանել պետական սեփականություն հանդիսացող՝ 2748 խմ ծավալով լեռնային զանգված՝ խախտելով Արաքս գետի հունը: Արդյունքում՝ պետությանը պատճառվել է խոշոր չափերի՝ 1 մլն 359 հազար դրամի գույքային վնաս, խախտվել է Արաքս գետի հունը, վատթարացել է հողի որակը, կորսվել է մեծածավալ քանակի օգտակար հանածո: Միևնույն ժամանակ, Կ.Հ.-ն, շրջանցելով օրենքով նախատեսված պահանջները, առանց լիցենզիայի ընդերքն օգտագործելով՝ պետությանը չի վճարել 5 մլն դրամ տուգանքը:

2023 թվականի հոկտեմբերի 20-ին Կ.Հ.-ի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 383-րդ հոդվածի 1-ին մասով և 381-րդ հոդվածի 1-ին մասով:

Դատախազը, նույն թվականի նոյեմբերի 16-ին, հաստատել է Կ.Հ.-ի վերաբերյալ մեղադրական եզրակացությունն ու վարույթի նյութերի հետ հանձնել Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

Դատարանի՝ 2023 թվականի դեկտեմբերի 20-ի դատավճռով՝ Կ.Հ.-ն մեղավոր է ճանաչվել վերոնշյալ արարքում և նրա նկատմամբ որպես պատիժ՝ նշանակվել է տուգանք՝ 2 մլն 720 հազար դրամի չափով:

Արարատի մարզի դատախազության կողմից **միջնորդագիր է ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն՝** «Արև Սյուզի» ՍՊ ընկերությանը տրամադրված՝ օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվությունը դադարեցնելու վերաբերյալ:

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հրամանով՝ դադարեցվել է «Արև Սյուզի» ՍՊ ընկերության ընդերքօգտագործման իրավունքը, ուժը կորցրած է ճանաչվել ՇԱԹՎ-29/306 թույլտվությունը, լեռնահատկացման թիվ ԼՎ-306 ակտը և լուծվել է օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով տրված թիվ ՊՎ-306 ընդերքաօգտագործման պայմանագիրը:

2. «Սարգիս և Պապ» ՍՊ ընկերության տնօրեն Ս.Ղ.-ն, 2020 թվականի դեկտեմբերի 21-ից մինչև 2023 թվականի մարտի 3-ն ընկած ժամանակահատվածում, չունենալով թույլտվությամբ տրամադրված սահմաններից դուրս օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք, շեղվել է ընկերությանը տրամադրված կոորդինատներից և արդյունահանել պետական սեփականություն հանդիսացող՝ 63834 խմ ծավալով լեռնային զանգված: Արդյունքում՝ պետությանը պատճառվել է խոշոր չափերի՝ 5 մլն 126 հազար դրամի գույքային վնաս, իսկ պետության օրինական շահերին՝ էական վնաս. վատթարացել է հողի որակը, կորսվել է մեծածավալ քանակի օգտակար հանածո: Միևնույն ժամանակ, Ս.Ղ.-ն, շրջանցելով օրենքով նախատեսված պահանջները, առանց լիցենզիայի ընդերքն օգտագործելով՝ պետությանը չի վճարել 5 մլն դրամ տուգանքը:

2023 թվականի հոկտեմբերի 20-ին Ս.Ղ.-ի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 383-րդ հոդվածի 1-ին մասով:

3. «Սերտիզ» ՍՊ ընկերության տնօրեն Ս.Ա.-ն, 2020 թվականի դեկտեմբերի 21-ից մինչև 2022 թվականի մարտ ամիսն ընկած ժամանակահատվածում, չունենալով նախատեսված թույլտվությամբ տրամադրված սահմաններից դուրս օգտակար հանածոյի արդյունահանմամբ զբաղվելու իրավունք, շեղվել է ընկերությանը տրամադրված կոորդինատներից և արդյունահանել պետական սեփականություն հանդիսացող՝ 63834 խմ ծավալով լեռնային զանգված: Արդյունքում՝ պետությանը պատճառվել է խոշոր չափերի՝ 4 մլն 892 հազար դրամի գույքային վնաս, իսկ պետության օրինական շահերին՝ էական վնաս. վատթարացել է հողի որակը, կորսվել է մեծածավալ քանակի օգտակար հանածո: Միևնույն ժամանակ, Ս.Ա.-ն, շրջանցելով օրենքով նախատեսված պահանջները, առանց լիցենզիայի ընդերքն օգտագործելով՝ պետությանը չի վճարել 5 մլն դրամ տուգանքը:

2023 թվականի հոկտեմբերի 20-ին Ս.Ա.-ի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 291-րդ հոդվածի 2-րդ մասով (ընդերքի օգտագործման և պահպանության կանոնների խախտմամբ կամ համապատասխան նախագծերի շեղումներով կամ առանց պայմանագրի ընդերքի օգտագործումը, որն էական վնաս է պատճառել մարդու առողջությանը, շրջակա միջավայրին, ընդերքին, դրանում պարփակված օգտակար հանածոներին, շենքերին կամ շինություններին):

4. 2023 թվականի դեկտեմբերի 27-ին հանրային քրեական հետապնդում է հարուցվել «Սաշա և Սպարտակ» ընկերության՝ տարբեր տարեթվերին տնօրենի պաշտոնը զբաղեցրած երկու տնօրենների՝ Ա.Զ.-ի և Հ.Գ.-ի նկատմամբ՝ առանց ընդերքն օգտագործելու թույլտվության, Մասիս համայնքի Ռանչպար բնակավայրում գտնվող հողատարածքում՝ պետական սեփականություն հանդիսացող ավազ արդյունահանելու համար: Քրեական վարույթով պարզվել է, որ «Սաշա և Սպարտակ» ընկերության երկու տնօրենները՝ Ա.Զ.-ն և Հ.Գ.-ն, 2021 թվականի մայիսի 17-ից մինչև 2022 թվականի մայիսի 5-ը, և 2022 թվականի մայիսի 5-ից մինչև 2023 թվականի հոկտեմբերի 13-ն ընկած ժամանակահատվածում, խախտել են ընդերքի պահպանման և օգտագործման՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները:

Մասնավորապես՝ Ա.Զ.-ն և Հ.Գ.-ն, առանց ընդերքօգտագործման իրավունքի, հատուկ տեխնիկայի օգտագործմամբ արդյունահանել են պետական սեփականություն համարվող՝ Հարկային օրենսգրքով վճարման ենթակա օգտակար հանածո՝ ընդհանուր 25 հազար 392.1 խմ ծավալի ավազ: Արդյունքում՝ պետությանը պատճառվել է 43 մլն 583 հազար 300 դրամի վնաս:

2023 թվականի դեկտեմբերի Ընկերության տնօրենների նկատմամբ հանրային քրեական հետապնդումը հարուցվել է 18.04.2003 թվականին ընդունված Քրեական օրենսգրքի 290-րդ հոդվածի 2-րդ մասով (հողը փչացնելը), 291-րդ հոդվածի 2-րդ մասով (ընդերքի պահպանման և օգտագործման կանոնները խախտելը) և Քրեական օրենսգրքի 381-րդ հոդվածի 1-ին մասով (հողը փչացնելը):

2023 թվականի դեկտեմբերի 27-ին «Սաշա և Սպարտակ» ընկերության կողմից ամբողջությամբ վերականգնվել է պետությանը պատճառված՝ առանձնապես խոշոր չափերով՝ 43 մլն 583 հազար 300 դրամը:

5. 2023 թվականի դեկտեմբերի 16-ին հանրային քրեական հետապնդում է հարուցվել «Էլ-Ար Շինե» ընկերության տնօրեն Ա.Ա.-ի նկատմամբ՝ առանց ընդերքն օգտագործելու թույլտվության, Մասիս համայնքի Սիփանիկ բնակավայրի 3-րդ հասցեում գտնվող հողատարածքում՝ պետական սեփականություն հանդիսացող ավազ արդյունահանելու համար:

Արարատի մարզային վարչության Մասիսի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի օպերլիազորի զեկուցագրի հիման վրա նախաձեռնված քրեական վարույթով պարզվել է, որ Ա.Ա.-ն, հանդիսանալով «Էլ-Ար Շինե» ընկերության տնօրեն, 2023 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 14-ն ընկած ժամանակահատվածում, Մասիս համայնքի Սիփանիկ բնակավայրի 3-րդ հասցեում գտնվող հողատարածքում, առանց հատուկ թույլտվության և առանց լիցենզիայի, վերոնշյալ ժամանակահատվածում, հատուկ տեսակի տեխնիկայի օգտագործմամբ, Ս.Մ.-ի, Լ.Պ.-ի և Զ.Ս.-ի օժանդակությամբ, արդյունահանել է պետական սեփականություն հանդիսացող՝ մոտ 350 խմ ծավալով օգտակար հանածո՝ ավազ: Ա.Ա.-ն արդյունահանված ավազի 1 խմ-ն 9000 դրամով, իսկ ընդհանուրը՝ 3 մլն 150 հազար դրամով իրացրել է տարբեր անձանց՝ պետությանը չվճարելով 5 մլն դրամը գերազանցող պետական տուրքերը:

Վերոնշյալ արարքների արդյունքում՝ պետությանը նախնական հաշվարկով պատճառվել է առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս՝ մոտ 5 մլն 500 հազար դրամի չափով:

2023 թվականի դեկտեմբերի 16-ին «Էլ-Ար Շինե» ՍՊ ընկերության կողմից վերականգնվել է պետությանը պատճառված՝ 5 մլն 500 հազար դրամ վնասը:6. 2023 թվականի դեկտեմբերի 6-ին հանրային քրեական հետապնդում է հարուցվել «ՌԵՎԻՎԱԼ» ՍՊ ընկերության հիմնադիր և տնօրեն Գ.Է.-ի նկատմամբ՝ ընդերքն օգտագործելու թույլտվություն չունենալու պայմաններում, Մասիս համայնքի Սայաթ-Նովա բնակավայրի 3-րդ հասցեում գտնվող հողատարածքում ապօրինի ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար:

Քրեական վարույթով պարզվել է, որ Գ.Է.-ն, 2023 թվականի սեպտեմբերի 10-ից մինչև դեկտեմբերի 5-ն ընկած ժամանակահատվածում, խախտելով «Ընդերքի մասին» ՀՀ օրենքի պահանջը, առանց ընդերքօգտագործման իրավունքի, հատուկ տեխնիկայի օգտագործմամբ, արդյունահանել է պետական սեփականություն հանդիսացող՝ մոտ 3000 խմ ծավալով օգտակար հանածո (ավազ):

Գ.Է.-ն, արդյունահանված ավազի 1 խմ-ն 9000 դրամով, իսկ ընդհանուրը՝ 27 մլն դրամով, ընկերության աշխատակից Ա.Մ.-ի միջոցով, իրացրել է տարբեր անձանց՝ չվճարելով 500 հազար դրամ պետական տուրքն ու ընդերքն օգտագործելու նպատակով թույլտվության համար նախատեսված 5 մլն դրամը: Արդյունքում՝ պետությանը պատճառվել է առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս:

Հանրային քրեական հետապնդումը հարուցվել է ՀՀ քրեական օրենսգրքի 281-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով (ապօրինի ձեռնարկատիրական գործունեությունը, որը պատճառել է առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս):

ՈՒՇԱՑԱԾ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Քրեական արդարադատության ոլորտում շարունակում է խնդրահարույց մնալ քրեական վարույթների քննության ժամկետների տևողությունը:

2023 թվականի ընթացքում ավարտված քրեական վարույթների 39.9%-ը (2022 թվականին՝ 55.5%) քննվել է մինչև 2 ամիս, 20.7%-ը (2022 թվականին՝ 20.6%)՝ մինչև 4 ամիս, 15.9%-ը (2022 թվականին՝ 10.8%)՝ մինչև 6 ամիս, 16%-ը (2022 թվականին՝ 8.6%)՝ մինչև 1 տարի, 7.5 %-ը (2022 թվականին՝ 4.5%)՝ 1 տարուց ավելի ժամկետում:

Նշվածից հետևում է, որ 2023 թվականի ընթացքում քննված քրեական վարույթների 23.5%-ի նախաքննությունը տևել է 6 ամսից ավելի, այդ թվում՝ 7.5%-ը՝ մեկ տարուց ավելի:

Քրեական վարույթների ժամկետների ձգձգումների պատճառները վեր հանելու նպատակով 2023 թվականի փետրվարի 6-ին ՀՀ գլխավոր դատախազն անցկացրել է խորհրդակցություն, որին մասնակցել են ՀՀ գլխավոր դատախազի տեղակալները և Գլխավոր դատախազության ստորաբաժանումների ղեկավարները:

Խորհրդակցության ընթացքում ՀՀ գլխավոր դատախազը հանձնարարել է մինչդատական վարույթում ութ ամսից ավելի ժամկետով քննվող բոլոր քրեական գործերի (վարույթների) ընթացքն ու քննության ժամկետների ձգձգման պատճառները քննարկել Գլխավոր դատախազության համապատասխան վարչությունում՝ օպերատիվ խորհրդակցության ձևաչափով:

Գլխավոր դատախազը ոլորտը համակարգող տեղակալներին հանձնարարել է երկամսյա ժամկետում գույքագրել ութ ամսից ավելի քննվող քրեական վարույթները (ինչպես հսկողական, այնպես էլ վերահսկողական), վեր հանել դրանց ձգձգման պատճառները, սահմանել դրանց կատարման ժամկետներ և արդյունքների մասին զեկուցել ՀՀ գլխավոր դատախազին:

Ի կատարումն ՀՀ գլխավոր դատախազի վերոնշյալ հանձնարարության՝ Գլխավոր դատախազության կողմից իրականացվող վերահսկողական գործառույթների շրջանակներում, ուսումնասիրվել են ութ ամսից ավելի քննվող քրեական վարույթները: Արդյունքում՝ մի շարք դեպքերում լուծվել է քրեական վարույթների ընթացքը, այլ դեպքերում՝ Գխավոր դատախազության վարչությունների դատախազների կողմից նշված քրեական վարույթների ուսումնասիրությամբ ի հայտ են եկել նոր հանգամանքներ, որոնց արդյունքում նախաձեռնվել են նոր քրեական վարույթներ:

Օրինակ՝

Գլխավոր դատախազության սեփականության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությունում քննության առարկա է դարձել Կոտայքի մարզային քննչական վարչությունում 8 ամսից ավելի քննվող քրեական վարույթը, որի ուսումնասիրությամբ պարզվել է, որ քաղաքացու դիմումի հիման վրա՝ դեռևս 2019 թվականի հուլիսի 8-ին նախաձեռնվել է քրեական վարույթ՝ նախկին Քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 214-րդ հոդվածի 2-րդ մասով և 325-րդ հոդվածի 2-րդ մասով:

Նախաքննությամբ պարզվել է, որ Արդարադատության նախարարության կողմից սնանկության կառավարչի գործունեության թույլտվություն ունեցող և որպես անհատ ձեռնարկատեր գրանցված Տ.Հ.-ն Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վճռով նշանակվել է քաղաքացի Ա.Ս.-ի սնանկության գործերով կառավարիչ: Տ.Հ.-ն, սնանկ ճանաչված Ա.Ս.-ի և Ս.Բ.-ի՝ համատեղ սեփականություն հանդիսացող 285 մլն 755 դրամ արժողությամբ գույքերը հափշտակելու դիտավորությամբ, համաձայնության է եկել «Անիկոմ» ՍՊԸ աշխատակից, գնահատող Պ.Գ.-ի հետ և պայմանագիր կնքել: Պ.Գ.-ն «Արցախբանկ» ՓԲԸ-ում գրավադրված՝ Ա.Ս.-ի և Ս.Բ.-ի համատեղ սեփականություն հանդիսացող անշարժ գույքերն ուսումնասիրելով՝ կեղծել է գույքերի իրական բնութագիրը, կազմել ակնհայտ կեղծ բովանդակությամբ գնահատման հաշվետվություն:

Մասնավորապես՝ «Անիկոմ» ՍՊԸ-ի գնահատող Պ.Գ.-ն, անշարժ գույքերի բնութագրերում չի ներառել հողատարածքները ոռոգման ցանցով համալրված լինելու և պտղատու այգի հանդիսանալու փաստը, գույքերը բնութագրել է որպես չորացած ծառերով անջրդի հողատարածքներ և գնահատել ակնհայտ ցածր՝ 14 մլն 700 հազար դրամ: Այնուհետև, սնանկության գործով կառավարիչ Տ.Հ.-ն, այդ արժեքով գույքերն աճուրդով օտարելու նպատակով՝ միջնորդություն է ներկայացրել Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարան:

Դատարանը, հիմք ընդունելով անշարժ գույքերի գնահատման հաշվետվությունը, բավարարել է գույքերը 14 մլն 700 հազար դրամով մեկնարկային աճուրդով ներկայացնելու վերաբերյալ Տ.Հ.-ի միջնորդությունը: 2015 թվականի նոյեմբերի 12-ին երկու աճուրդով՝ ակնհայտ ցածր արժեքներով՝ 10 մլն 800 հազար դրամով և 3 մլն 900 հազար դրամով, գույքերը վաճառվել են Մ.Հ.-ին:

Արդյունքում՝ սնանկության կառավարիչ Տ.Հ.-ն, վատնման եղանակով հափշտակել է իրեն վստահված անշարժ գույքերը՝ գույքի սեփականատերեր Ա.Ս.-ին և Ս.Բ.-ին պատճառելով 270 մլն 955 հազար դրամի գույքային վնաս:

2021 թվականի հոկտեմբերի 25-ին Տ.Հ.-ին մեղադրանք է ներկայացվել (հանրային քրեական հետապնդում է հարուցվել)՝ նախկին Քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325-րդ հոդվածի 2-րդ մասով: Նույն թվականի նոյեմբերի 17-ին Պ.Գ.-ին մեղադրանք է ներկայացվել 325-րդ հոդվածի 2-րդ մասով և 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

2023 թվականի օգոստոսի 18-ին հսկող դատախազը հաստատել է քրեական վարույթով կազմված մեղադրական եզրակացությունը և հանձնել Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

Քրեական վարույթով՝ 2023 թվականի հուլիսին կատարված ուսումնասիրությամբ, տվյալներ են ձեռք բերվել, որ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի պաշտոնատար անձը, չարաշահել է պաշտոնեական լիազորությունները և շահադիտական նպատակով, անձնական շահագրգռվածությունից ելնելով, դիտավորությամբ՝ իր պաշտոնեական դիրքն օգտագործել է ծառայության շահերին հակառակ, չի կատարել ծառայողական պարտականությունները և դրսևորել է անգործություն:

Մասնավորապես՝ վերոնշյալ սնանկության գործով, դատարանի պաշտոնատար անձը, ունենալով տեղեկություններ, որ վերոնշյալ սնանկության գործով հողատարածքների շուկայական արժեքը 285 մլն 755 հազար դրամ է, բավարարել է փաստացի այգի հանդիսացող հողատարածքները որպես անջրդի դատարկ հողատարածք ակնհայտ ցածր՝ 14 մլն 700 հազար դրամ մեկնարկային արժեքով աճուրդի ներկայացնելու վերաբերյալ սնանկության գործով կառավարչի միջնորդությունը: Դրանից հետո հողատարածքները ներկայացվել են աճուրդի և կայացված աճուրդում ակնհայտ ցածր արժեքով հաղթող է ճանաչվել պաշտոնատար անձի հետ կապերի մեջ գտնվող Մ.Հ.-ն:

2015 թվականի դեկտեմբերի 12-ին Արմավիրի նոտարական գրասենյակում սնանկության գործերով կառավարիչ Տ.Հ.-ի և աճուրդում հաղթող ճանաչված Մ.Հ.-ի միջև հողատարածքների վերաբերյալ կնքվել են առուվաճառքի պայմանագրեր, իսկ 2016 թվականի հունվարի 18-ին Կադաստրի կոմիտեում կատարվել է պետական գրանցում և որպես սեփականություն հաշվառվել է Մ.Հ.-ի անվամբ: Մ.Հ.-ն 2016 թվականի հունվարի 19-ին 3 մլն դրամով հողատարածքները վաճառել է Հ.Պ.-ին, ստացել պետական գրանցում, որից հետո այգին չի մշակվել, այն վերածվել է ամայի դաշտի: Արդյունքում՝ սեփականատերերին պատճառվել է առանձնապես խոշոր չափերի՝ 270 մլն 955 հազար դրամի գույքային վնաս, ինչպես նաև նրանք զրկվել են այգուց ստացված եկամուտով պարտքերը հետագայում մարելու հնարավորությունից:

Հաշվի առնելով նախաքննությամբ ձեռք բերված տվյալները՝ հսկող դատախազի հանձնարարությամբ, Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի պաշտոնատար անձի կողմից պաշտոնեական լիազորությունները չարաշահելու դրվագի կապակցությամբ 2023 թվականի հուլիսի 31-ին նախաձեռնվել է քրեական վարույթ նախկին Քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով: Նախաքննություն կատարելու համար ուղարկվել է Հակակոռուպցիոն կոմիտե:

Գլխավոր դատախազությունում իրականացված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ քննության ժամկետների ձգձգումները, ի թիվս այլնի, պայմանավորված են քրեական վարույթներով նշանակված փորձաքննությունների կատարման ժամկետների ձգձգումներով:

Փորձաքննությունների կատարման ժամկետների պահպանման նկատմամբ պատշաճ հսկողություն ապահովելու նպատակով ՀՀ գլխավոր դատախազի 2023 թվականի փետրվարի 17-ի հանձնարարականով՝ Դատախազության բոլոր ստորաբաժանումներին հանձնարարվել է՝ փորձագետի կողմից փորձաքննության համար անհրաժեշտ ելակետային տվյալներ տրամադրելու մասին վարույթն իրականացնող մարմին ներկայացված միջնորդության պատճենը հսկող դատախազի կողմից ստանալու կամ քրեական վարույթի ուսումնասիրմամբ նման միջնորդություն հայտնաբերելու դեպքում ապահովել վարույթն իրականացնող մարմնի կողմից այդ միջնորդության անհապաղ և պատշաճ կատարումը:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի՝ 2023 թվականի սեպտեմբերի 15-ի գրությամբ, ի թիվս այլնի, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ից (այսուհետ նաև՝ Բյուրո) պահանջվել է հայտնել, թե 2023 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ կատարվող, ինչպես նաև ավարտված քանի փորձաքննություններով են խախտվել Կառավարության՝ «Յուրաքանչյուր մեկ առանձին օբյեկտի փորձաքննության միջին նորմատիվային ժամածախսը, փորձաքննության մեկ առանձին օբյեկտի գնահատման չափանիշները և դրա փորձաքննության արժեքն ըստ դատական փորձաքննությունների տեսակների և ենթատեսակների սահմանելու մասին» 2021 թվականի նոյեմբերի 11-ի N 1864-Լ որոշման հավելվածով և Բյուրոյի տնօրենի՝ 2022 թվականի հունիսի 30-ի N 40-Լ հրամանի հավելված N 1-ով հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի» «Փորձաքննությունների ազգային բյուրո» պետական ոչ առևտրային կազմակերպությունում նշանակվող դատական փորձաքննությունների կազմակերպման և կատարման» հրահանգի 13-րդ կետով սահմանված ժամկետները և որոնք են խախտման պատճառները:

Ի պատասխան գրության՝ Բյուրոյի տնօրենի՝ 2023 թվականի հոկտեմբերի 6-ի գրությամբ հայտնվել է, որ մի շարք փորձաքննություններ սահմանված ժամկետներում չեն ավարտվել փորձագետների կողմից եզրակացություն տալու համար անհրաժեշտ ելակետային տվյալներ պահանջելու՝ վարույթն իրականացնող մարմնին ներկայացված միջնորդությունների կապակցությամբ տևական ժամանակ միջոցներ չձեռնարկելու հետևանքով:

Բյուրոյի տնօրենի հիշյալ գրությամբ ներկայացված յուրաքանչյուր դեպք դարձել է ստուգման առարկա, ուսումնասիրվել են միջնորդությունների պահանջները տևական ժամանակով չկատարելու պատճառները: Միաժամանակ, ՀՀ գլխավոր դատախազի՝ 2023 թվականի նոյեմբերի 1-ի հանձնարարականով՝ ՀՀ դատախազության ստորաբաժանումներին հանձնարարվել է հնարավոր սեղմ ժամկետում ապահովել վարույթն իրականացնող մարմնի կողմից հիշյալ միջնորդությունների պատասխանների ներկայացումը Բյուրո:

Հաշվի առնելով քրեական վարույթներով նշանակված փորձաքննությունների՝ ժամանակին կատարման առանցքային նշանակությունը քրեական վարույթներով քննության ողջամիտ ժամկետների պահպանման

տեսանկյունից՝ **ՀՀ գլխավոր դատախազի կողմից գրություն է հասցեագրվել ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահին՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի վարույթում գտնվող փորձաքննությունները ՀՀ կառավարության՝ «Յուրաքանչյուր մեկ առանձին օբյեկտի փորձաքննության միջին նորմատիվային ժամածախսը, փորձաքննության մեկ առանձին օբյեկտի գնահատման չափանիշները և դրա փորձաքննության արժեքն ըստ դատական փորձաքննությունների տեսակների և ենթատեսակների սահմանելու մասին» 2021 թվականի նոյեմբերի 11-ի N 1864-L որոշման հավելվածով և Բյուրոյի տնօրենի՝ 2022 թվականի հունիսի 30-ի N 40-L հրամանի հավելված N 1-ով հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի» «Փորձաքննությունների ազգային բյուրո» պետական ոչ առևտրային կազմակերպությունում նշանակվող դատական փորձաքննությունների կազմակերպման և կատարման» հրահանգի 13-րդ կետով սահմանված ժամկետներում կատարելու նպատակով ՀՀ ԳԱԱ իրավասության սահմաններում անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու համար:**

3

ՄԵՂԱԴՐԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄ

2023 թվականին ընդհանուր իրավասության և հակակոռուպցիոն առաջին ատյանի դատարաններ է ուղարկվել 8448 գործ՝ 10.170 անձի վերաբերյալ, որոնցից 8393-ը 10.115 անձի վերաբերյալ՝ մեղադրական եզրակացությամբ, իսկ 55-ը 55 անձի վերաբերյալ՝ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու համար:

Համեմատության համար նշենք, որ **2022 թվականի ընթացքում Ընդհանուր իրավասության և հակակոռուպցիոն առաջին ատյանի դատարաններ է ուղարկվել 4414 գործ՝ 5214 անձի վերաբերյալ:** Նշվածից հետևում է, որ 2023 թվականին դատարան ուղարկված գործերի թիվը գրեթե կրկնակի գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը (ավել է 4034-ով կամ 91.4%-ով):

Ընդհանուր իրավասության և հակակոռուպցիոն առաջին ատյանի դատարաններ ուղարկված գործեր



2023 թվականի ընթացքում դատարաններում քննվել և ավարտվել է 5080 քրեական գործ՝ 5485 անձի վերաբերյալ (2022 թվականին՝ 3208 գործ՝ 3690 անձի վերաբերյալ, 2021 թվականին՝ 2921 քրեական գործ՝ 3375 անձի վերաբերյալ):

Դատարաններում քննված և ավարտված քրեական գործեր



2023 թվականին դատարաններում քննված և ավարտված՝ 5485 անձի վերաբերյալ 5080 քրեական գործից 3321-ը կամ 65.3%-ը եղել է ոչ մեծ ծանրության՝ 3395 անձի վերաբերյալ (61.9%), 1103-ը՝ միջին ծանրության (21.7%)՝ 1297 անձի վերաբերյալ (23.6%), 570-ը՝ ծանր (11.2%)՝ 688 անձի վերաբերյալ (12.5%) և 86-ը՝ առանձնապես ծանր (1.8%)՝ 105 անձի վերաբերյալ (2%):

Նշված քրեական գործերից 4163-ով դատապարտվել է 4419 անձ (2022 թվականին՝ 2387 գործով՝ 2721 անձ, 2021 թվականին՝ 2365 գործով՝ 2701 անձ): Նշված անձանցից 2858-ը կամ 64.7%-ը դատապարտվել են ոչ մեծ ծանրության հանցագործություն կատարելու համար, 877-ը կամ 19.8%-ը՝ միջին ծանրության հանցագործություն կատարելու համար, 600-ը կամ 13.6%-ը՝ ծանր հանցագործություն կատարելու համար, 84-ը կամ 1.9%-ը՝ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու համար: 43 քրեական գործով 44 անձի նկատմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 430-րդ հոդվածի կարգով կիրառվել է բժշկական բնույթի հարկադրանքի միջոց (2022 թվականին՝ 28 քրեական գործով՝ 29 անձի նկատմամբ, 2021 թվականին՝ 37 քրեական գործով՝ 38 անձի նկատմամբ):

2023 թվականին ոչ մեծ ծանրության հանցագործությունների համար դատապարտված անձանց թիվը նախորդ տարվա համեմատ աճել է 8.9%-ով, միջին ծանրության հանցագործությունների համար դատապարտվածների թիվը նվազել է 6.5%-ով, ծանր հանցագործությունների համար դատապարտված անձանց թիվը նվազել է 1.1%-ով, իսկ առանձնապես ծանր հանցագործությունների համար դատապարտված անձանց թիվը նվազել է 1.3%-ով:

Դատապարտված անձանցից 21-ը եղել է անչափահաս (2022 թվականին՝ 36, 2021 թվականին՝ 35), 113-ը՝ կին (2022 թվականին՝ 109, 2021 թվականին՝ 120), 247-ը՝ նախկինում դատված (2022 թվականին՝ 169, 2021 թվականին՝ 255), 84-ը՝ օտարերկրացի (2022 թվականին՝ 44, 2021 թվականին՝ 37): 8 գործով 8 անչափահասի նկատմամբ դատարանների կողմից կիրառվել են դաստիարակչական բնույթի հարկադրական միջոցներ (2022 թվականին՝ 2 գործ՝ 2 անչափահաս, 2021 թվականին՝ 7 գործ՝ 8 անչափահաս):

2023 թվականին դատապարտված անչափահասների թիվը նախորդ տարվա համեմատ նվազել է 41.7%-ով, դատապարտված կանանց թիվը աճել է 3.7%-ով, նախկինում դատված անձանց թիվն աճել է 45%-ով, իսկ դատապարտված օտարերկրացիների թիվն աճել է 90.9%-ով:

2023 թվականի ընթացքում Ընդհանուր իրավասության և հակակոռուպցիոն առաջին ատյանի դատարանների կողմից 90 գործով արդարացվել է 105 անձ (2022 թվականին՝ 102 գործով՝ 132 անձ), իսկ Վերաքննիչ քրեական դատարանի կողմից՝ 1 գործով՝ 1 անձ (2022 թվականին՝ 1 գործով՝ 1 անձ):

2023 թվականին Հայաստանի Հանրապետության դատարանների կողմից մասնակի արդարացվել է 5 անձ (2022 թվականին՝ 3 անձ), իսկ մեկ կամ մի քանի դրվագով՝ 3 անձ (2022 թվականին՝ 4 անձ):

Արդարացման դեպքերն առավելապես վերաբերում են ոչ մեծ և միջին ծանրության հանցագործություններով առաջադրված մեղադրանքներին: Մասնավորապես՝ ոչ մեծ ծանրության հանցագործության մեղադրանքով արդարացվել է 31 անձ (29.5%), միջին ծանրության հանցագործության մեղադրանքով՝ 42 անձ (40.0%), ծանր հանցագործության մեղադրանքով՝ 19 անձ (18.1%), իսկ առանձնապես ծանր հանցագործության մեղադրանքով՝ 13 անձ (12.4%):

Առաջին ատյանի ընդհանուր իրավասության և հակակոռուպցիոն դատարանների կողմից արդարացված անձանց մեղսագրվող հանցագործությունները		
հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործություններ	40 գործ	արդարացվել է 40 անձ
մարդու դեմ ուղղված հանցագործություններ	16 գործ	արդարացվել 23 անձ
սեփականության դեմ ուղղված հանցագործություններ	14 գործ	արդարացվել է 15 անձ
կոռուպցիոն բնույթի հանցագործություններ	8 գործ	արդարացվել է 13 անձ
պետական իշխանության դեմ ուղղված հանցագործություններ	5 գործ	արդարացվել է 6 անձ
բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործություններ	5 գործ	արդարացվել է 6 անձ
տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններ	2 գործ	արդարացվել է 2 անձ

Վերաքննիչ քրեական դատարանի կողմից արդարացվել է սեփականության դեմ ուղղված հանցագործություններով 1 գործով 1 անձ:
2023 թվականի ընթացքում արդարացման դատավճիռների դեմ բերվել է 118 վերաքննիչ և վճռաբեկ բողոք:

2023 թվականին դատարանների կողմից 776 քրեական գործով՝ 909 անձի վերաբերյալ, քրեական հետապնդումը դադարեցվել է, քրեական գործը կարճվել է (2022 թվականին՝ 689 քրեական գործ՝ 806 անձի վերաբերյալ), որոնցից 105 անձի նկատմամբ՝ Քրեական դատավարության նախկին օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 3 անձի նկատմամբ՝ 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով, 1 անձի նկատմամբ՝ 37-րդ հոդվածով, 353 անձի նկատմամբ՝ 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 63 անձի նկատմամբ՝ այլ հիմքով, 11 անձի նկատմամբ՝ 12-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով, 316 անձի նկատմամբ՝ 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով, որոնցից 106 անձի նկատմամբ՝ Քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածով սահմանված հիմքով և 166 անձի նկատմամբ՝ 83-րդ հոդվածով սահմանված հիմքով, 57 անձի նկատմամբ՝ այլ հիմքերով:

2023 թվականին դատարաններում քննված քրեական գործերով հանցագործությամբ պատճառված վնասն ընդհանուր առմամբ կազմել է 663.495.229 դրամ (2022 թվականին՝ 1.373.377.804 դրամ), որից 329.814.847 դրամի վնասը պատճառվել է պետությանը (2022 թվականին՝ 894.580.386 դրամ), 251.680 դրամի վնասը՝ համայնքներին (2022 թվականին՝ 28.241.526 դրամ), իսկ 333.428.702 դրամի վնասը՝ իրավաբանական և ֆիզիկական անձանց (2022 թվականին՝ 450.555.892 դրամ):



Դատական քննությամբ ավարտված գործերով վերականգնվել է 173.385.290 դրամ (2022 թվականին՝ 469.543.950 դրամ), որից 127.461.328 դրամը՝ պետությանը (2022 թվականին՝ 314.383.544 դրամ), 251.680 դրամը՝ համայնքներին (2022 թվականին՝ 18.029.900 դրամ), 45.672.282 դրամը՝ իրավաբանական և ֆիզիկական անձանց (2022 թվականին՝ 137.130.506 դրամ) պատճառված վնասներից:

2023 թվականին դատարաններում քննված քրեական գործերից 1079-ով 1148 անձի նկատմամբ կիրառվել է համաձայնեցման կամ արագացված վարույթ:

Հաշվետու ժամանակահատվածում հեռակա դատաքննության արդյունքում կայացվել է առաջին դատավճիռը, որը չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ:

Մասնավորապես՝ 2023 թվականի սեպտեմբերի 20-ին, Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քրեական դատարանը հեռակա կարգով (մեղադրյալի բացակայությամբ) իրականացվող դատաքննության արդյունքում կայացված դատավճռով, Ա.Ա.-ին մեղավոր է ճանաչել Հայաստանի Հանրապետության պետական սահմանն ապօրինի հատելու համար (82 դրվագ): Ա.Ա.-ի նկատմամբ յուրաքանչյուր դրվագով նշանակվել է տուգանք՝ արարքը կատարելու պահին գործող նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի (200 հազար դրամ) չափով: Նշանակված պատիժները մասնակի գումարելու արդյունքում՝ Ա.Ա.-ի նկատմամբ որպես վերջնական պատիժ է նշանակվել տուգանք՝ 2.630.000 դրամի չափով:

2023 թվականին դատապարտված 4419 անձից 653-ի նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում, որը կազմում է դատապարտվածների 14.8%-ը (2022 թվականին 2721 անձից ազատազրկման է դատապարտվել 493-ը կամ 18.1%-ը):

2023 թվականին, ինչպես 2022 թվականին, որևէ անձ ցմահ ազատազրկման չի դատապարտվել:

Ընդհանուր դատապարտվածների մեջ կարճաժամկետ ազատազրկման է դատապարտվել 34 անձ (2022 թվականին՝ 18 անձ). կարճաժամկետ ազատազրկման դատապարտված անձանց թիվը կազմում է ընդհանուր դատապարտված անձանց 0.77%-ը:

Տուգանքի է դատապարտվել 2683 անձ (2022 թվականին՝ 1471 անձ). տուգանքի դատապարտված անձանց թիվը կազմում է ընդհանուր դատապարտված անձանց 60.7%-ը:

778 անձի նկատմամբ, որը կազմում է ընդհանուր դատապարտված անձանց 17.6%-ը, նշանակված պատիժը Քրեական օրենսգրքի 84-րդ (նախկին Քրեական օրենսգրքի 70-րդ) հոդվածի կարգով պայմանականորեն չի կիրառվել (2022 թվականին՝ 704 անձի կամ 25.9%-ի նկատմամբ):

Դատապարտված անձանցից, որոնց նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, 190-ը մեղադրվել է ոչ մեծ ծանրության, 324-ը՝ միջին ծանրության, 258-ը՝ ծանր, 6-ը՝ առանձնապես ծանր հանցագործության համար:

2023 թվականին դատապարտված 18 անձի նկատմամբ կիրառվել է Քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածը (նախկին Քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածը) և նշանակվել է օրենքով նախատեսվածից մեղմ պատիժ (2022 թվականին՝ 16 անձի, 2021 թվականին՝ 16 անձի նկատմամբ):

2023 թվականին դատարանների կողմից ազատազրկման հետ չկապված պատիժների է դատապարտվել կալանքի տակ գտնվող 32 անձ (2022 թվականին՝ 24): Կալանքի տակ չգտնվող 212 անձ դատապարտվել է ազատազրկման (2022 թվականին՝ 197):

2023 թվականի ընթացքում մեղադրողների կողմից դատարանների կայացրած դատավճիռների դեմ բերվել է 551 վերաքննիչ բողոք, իսկ հաշվետու ժամանակաշրջանի սկզբին դատարանների վարույթում մնացորդ բողոքներն եղել են 132, որոնցից 6-ով ամփոփման ժամանակահատվածում լուծված չէ վարույթ ընդունելու հարցը: Բերված բողոքներից 86-ը կամ 12.6%-ը եղել է արդարացման, 82-ը կամ 12%-ը՝ կարճման, 347-ը կամ 50.8%-ը՝ պատժի մեղմության, 18-ը կամ 2.6%-ը՝ արարքի վերաորակման դեմ, իսկ 150-ը կամ 22%-ը՝ այլ հիմքով:

Մեղադրողների կողմից բերված բողոքներից 63-ը կամ 9.2%-ը բավարարվել է, 20-ը կամ 2.9%-ը բավարարվել է մասնակի, 352-ը կամ 51.5%-ը մերժվել է, 13-ով կամ 1.9%-ով կայացվել է այլ որոշում, 226-ով կամ 33.1%-ով բողոքի քննարկումն ընթացքի մեջ է, 3-ը վարույթ չի ընդունվել, 6-ով ամփոփման ժամանակահատվածում լուծված չէ վարույթ ընդունելու հարցը:

Դատավարության մյուս մասնակիցների կողմից դատավճիռների դեմ բերված և նախորդ տարվանից փոխանցված վերաքննիչ բողոքները 341-ն են, որոնցից 2-ը վարույթ չի ընդունվել, իսկ 2-ով ամփոփման ժամանակահատվածում որոշված չի եղել վարույթ ընդունելու հարցը: Բերված բողոքներից 1-ը կամ 0.3%-ը եղել է արդարացման, 2-ը կամ 0.6%-ը՝ կարճման, 6-ը կամ 1.8%-ը՝ պատժի մեղմության դեմ, 282-ը կամ 82.6%-ը՝ պատժի խստության դեմ, 50-ը կամ 14.7%-ը՝ այլ հիմքով:

Վարույթ ընդունված 337 բողոքներից բավարարվել է 27-ը կամ 8.0%-ը, 25-ը կամ 7.4%-ը բավարարվել է մասնակի, 151-ը կամ 44.8%-ը մերժվել է, 11-ով կամ 3.3%-ով կայացվել է այլ որոշում, 123-ով կամ 36.5%-ով բողոքի քննարկումն ընթացքի մեջ է:

2023 թվականի ընթացքում ՀՀ գլխավոր դատախազի, նրա տեղակալների կողմից գործն ըստ էության լուծող դատական ակտերի դեմ բերված 151 վճռաբեկ բողոքից (2022 թվականին՝ 131) և նախորդ տարվանից փոխանցված 20 (2022 թվականին՝ 23) բողոքից 53-ով (2022 թվականին՝ 39) լուծված չէ վարույթ ընդունելու հարցը, 90-ով որոշում է կայացվել վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին (2022 թվականին՝ 93), իսկ 2-ը վերադարձվել են: Ներկայացված բողոքներից 26-ը (2022 թվականին՝ 22) ընդունվել է վարույթ, որոնցից 9-ը բավարարվել է (2022 թվականին՝ 6), 2-ը մասնակի է բավարարվել (2022 թվականին՝ 3), 15-ի քննությունն ընթացքի մեջ է (2022 թվականին՝ 11):

Հաշվետու ժամանակահատվածում դատական ակտերի բողոքարկման սահմանադրական գործառույթի իրականացման շրջանակներում, Վճռաբեկ դատարանի կողմից բավարարվել է ՀՀ գլխավոր դատախազի և նրա տեղակալների կողմից ներկայացված 15 վճռաբեկ բողոք (2022 թվականին՝ 10, աճը՝ 50%), որոնք վերաբերել են ինչպես գործն ըստ էության լուծող, այնպես էլ չլուծող դատական ակտերին:

Մասնավորապես՝

1. Վճռաբեկ դատարանը թիվ ԵԴ/2640/07/18 որոշմամբ՝ իրավական դիրքորոշումներ է արտահայտել բանկային գաղտնիք պարունակող տեղեկատվության պահպանությունը սահմանափակող քննչական գործողության կարգադրման իրավաչափության պայմանի հստակեցման կապակցությամբ: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ կալանքի կիրառումն արդարացնելու պարագայում, հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկածի գնահատման սահմանների վերաբերյալ իրավակիրառ պրակտիկայում ձևավորված մոտեցումները նույնությամբ չեն կարող կիրառվել բանկային գաղտնիքի պահպանության իրավական ռեժիմի սահմանափակումը հայցող միջնորդության նկատմամբ: Վերջինիս դեպքում կասկածը հիմնավորող որոշակի փաստական հանգամանքները որակական հատկանիշների առումով կարող են նվազ լինել. միջամտությունը հայցող միջնորդությանը կից պահանջվում է փաստական հանգամանքների այնպիսի ծավալի ներկայացում, որքանով դա անհրաժեշտ է ողջամտորեն ենթադրելու, որ առկա են մեղսագրված ենթադրյալ հանցանքին առնչությունը վկայող փաստեր:

2. Վճռաբեկ դատարանն իր ՍԴ/0060/01/19 որոշմամբ անդրադարձել է անձի՝ ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունքի իրացմանը և նշված համատեքստում անձի կողմից իր դատավարական իրավունքների չարաշահման խնդրին (abuse of rights): Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հիշյալ հարցին անդրադառնալիս՝ անհրաժեշտ է գնահատման ենթարկել, թե դատավարության տևողությունը ձգձգող պատճառներն ընդհանուր առմամբ արդյո՞ք ձևավորվել են դատավարության մասնակցի դրսևորած վարքագծի արդյունքում: Այսպես, հարկ է պարզել՝

- Արդյո՞ք դատական նիստերը հետաձգվել են պատշաճ ծանուցված լինելու պայմաններում նշված դատավարության մասնակիցների՝ դատական նիստերին պարբերաբար չներկայանալու պատճառներով.
- Արդյո՞ք դրանք եղել են հարգելի, թե անհարգելի.
- Արդյո՞ք նշված դատավարության մասնակիցներն իրենց դատավարական իրավունքներից օգտվել և իրենց դատավարական պարտականությունները կատարել են բարեխղճորեն, թ՞ե իրենց վարքագծով կանխամտածված խոչընդոտներ են ստեղծել, որոնք հավանաբար կձգձգեին գործի վարույթը:

3. Վճռաբեկ դատարանը թիվ ԵԴ/0816/11/20 որոշմամբ՝ անդրադարձել է հանցագործության մասին հաղորդումներին ներկայացվող որոշակիության չափանիշի անհրաժեշտ պայմաններին: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ընթացակարգային առանձնահատկությամբ պայմանավորված՝ համապատասխան դիմումը՝ որպես հանցագործության մասին հաղորդում չդիտարկելու մասին գրության և քրեադատավարական գործիքակազմի գործադրմամբ հաղորդման մեջ պարունակվող տեղեկությունների նախնական քննարկումն ու ստուգումը եզրափակող որոշման պատճառաբանվածության աստիճանը չի կարող նույնը լինել:

4. Վճռաբեկ դատարանը թիվ Բ-3707/20 որոշմամբ՝ անդրադարձել է «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացման առանձնահատկություններին, մասնավորապես՝ նշված համատեքստում «բնակարան» եզրույթի մեկնաբանմանը: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ որոշակի տարածք մշտապես կամ ժամանակավորապես զբաղեցնելը բնակարանի անձեռնմխելիության երաշխիք տրամադրելու հանգամանքը կանխորոշող հիմնական պայման չէ. յուրաքանչյուր կոնկրետ դեպքում, այս կամ այն տարածքը որպես բնակարան դիտարկելու հարցը քննարկելիս, պետք է հաշվի առնել ոչ թե կոնկրետ անձին այն հատկացված լինելու իրավական հիմքերի առկայությունը, այլ փաստացի այդ տարածքը զբաղեցնելու, դրա հետ որոշակի կապեր ունենալու, այդ տարածքում ծավալվող իրավահարաբերությունների բնույթը բնութագրող հանգամանքները, որոնց ուժով անձը կարող է ունենալ մասնավոր կյանքի անձեռնմխելիության որոշ երաշխիքների լեգիտիմ ակնկալիք:

5. Վճռաբեկ դատարանը թիվ Բ-2186/21 որոշմամբ՝ անդրադարձել է օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացումը թույլատրող առաջին ատյանի դատարանի որոշման վերաքննիչ վերանայման առանձնահատկություններին: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ եթե առաջին ատյանի դատարանը լրիվ ծավալով քննության է առնում միջնորդությունը և կայացված որոշմամբ լուծում ներկայացված պահանջի հիմնավորվածության ու իրավաչափության հարցը, ապա վերաքննիչ դատարանը, որպես կանոն, վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերանայում է առաջին ատյանի դատարանի կողմից միջնորդության առնչությամբ տրված լուծման հիմնավորվածությունն ու իրավաչափությունը՝ կայացնելով դատական ակտն անփոփոխ թողնելու, միջնորդությունը մերժելու կամ բավարարելու մասին որոշում:

6. Վճռաբեկ դատարանը թիվ ՇԴ/0047/01/22 որոշմաբ՝ անդրադարձել է ընտանեկան բռնության (նախկին Քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով և 119-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով) մեջ մեղադրվող անձի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանավորումը գրավով փոխարինելու իրավաչափությանը:

7. Վճռաբեկ դատարանը թիվ ԳԴ4/0075/01/20 որոշմամբ՝ անդրադարձել է նախկին Քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 6-րդ մասով (մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը) նախատեսված արարք կատարելու համար դատապարտված անձի նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելու իրավաչափությանը: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ամբաստանյալ Ա.Ղ.-ի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս՝ պատշաճ ուշադրության չի արժանացրել խախտված հասարակական հարաբերության բնույթն ու կարևորությունը, կատարված հանրորեն վտանգավոր արարքի և դրա հետևանքների նկատմամբ հանցավորի դրսևորած հոգեբանական վերաբերմունքը, օգտագործված գործիքը, հարվածների քանակը, տուժողի առողջությանը պատճառված վնասի բնույթը և մարմնական վնասվածքների տեղակայումը:

8. Վճռաբեկ դատարանը թիվ ԱՎԴ/0020/01/20 որոշմամբ՝ անդրադարձել է նախկին Քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 3-րդ մասով (ճանապարհային երթևեկության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի մարդու մահ) մեղադրվող անձի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու իրավաչափությանը: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, ամբաստանյալ Ս.Մ.-ի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելով, պատշաճ վերլուծության չի ենթարկել կատարված արարքի հանրային վտանգավորության աստիճանի վրա ազդող այնպիսի կարևոր գործոններ, ինչպիսիք են՝ վերջինիս կողմից թույլ տրված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման բնույթը և դրա արդյունքում վրա հասած հանրորեն վտանգավոր հետևանքները:

9. Վճռաբեկ դատարանը թիվ ՍԴ/0129/01/20 որոշմամբ՝ իրավական դիրքորոշումներ է արտահայտել նաև բնակարան ապօրինի մուտք գործելով գույքի գաղտնի հափշտակության և ուրիշի գույքը ոչնչացնելու կամ վնասելու հանցակազմերի հարաբերակցության կապակցությամբ: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ պարզելու համար՝ ուրիշի գույքը ոչնչացնելով կամ վնասելով կատարված գողության դեպքում արարքը պետք է որակվի գործող Քրեական օրենսգրքի 254-րդ և 264-րդ հոդվածների համակցությա՞մբ, թե՞ միայն 254-րդ հոդվածով, անհրաժեշտ է համեմատական վերլուծության ենթարկել վերոնշյալ նորմերի քրեաիրավական սանկցիաները: Մասնավորապես, եթե կատարվածն իր մեջ պարունակում է գործող Քրեական օրենսգրքի 264-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ ուրիշի գույքը ոչնչացնելու կամ վնասելու հանցակազմի հասարակ տեսակը, ապա այն կլանվում է գործող Քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված ծանրացնող հանգամանքի մեջ և ինքնուրույն քրեաիրավական գնահատական չի պահանջում: Մինչդեռ, եթե կատարվածն իր մեջ պարունակում է գործող Քրեական օրենսգրքի 264-րդ հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասով նախատեսված որևէ ծանրացնող հանգամանք, ապա հանցանքները պետք է որակվեն համակցության կանոններով, քանի որ դրանց դեպքում, գործող Քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 2-րդ մասի համեմատ, ավելի խիստ պատիժ է նախատեսված:

Քրեական արդարադատության ոլորտում առանցքային խնդիրներից է շարունակում մնալ դատական քննության ժամկետների ձգձգումները: 2023 թվականի ընթացքում ՀՀ գլխավոր դատախազությունը շարունակել է հետևողականություն ցուցաբերել բոլոր այն դեպքերի վերհանման կապակցությամբ, որոնցով դատական քննության ժամկետների ձգձգումները պայմանավորված են եղել դատախազների կողմից իրենց պաշտոնեական պարտականությունները ոչ պատշաճ իրականացնելու հանգամանքով:

Մասնավորապես՝ բոլոր այն դեպքերով, որոնցով դատական նիստերի հետաձգման պատճառ են հանդիսացել դատավարության դատախազների՝ դատական նիստերին առանց հարգելի պատճառների չներկայանալը, ՀՀ գլխավոր դատախազությունում իրականացվել են ուսումնասիրություններ:

Ուսումնասիրությունների արդյունքում 2 դատախազի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ և նրանք ենթարկվել են կարգապահական պատասխանատվության:

Միաժամանակ, ՀՀ գլխավոր դատախազի կողմից հանձնարարվել է Դատախազության ստորաբաժանումների ղեկավարներին դատարաններում քննվող քրեական վարույթներով անհրաժեշտության դեպքում ստեղծել դատախազական խմբեր՝ դատախազների աշխատանքային ծանրաբեռնվածության պատճառով դատական նիստերից բացակայելու դեպքերը բացառելու նպատակով:

ՀՀ գլխավոր դատախազի կողմից Բարձրագույն դատական խորհրդի ուշադրությունն է հրավիրվել դատական քննությունների ձգձգումների վրա՝ Խորհրդին վերապահված լիազորությունների շրջանակներում առաջարկելով պարզել դրանց պատճառներն ու համապատասխան միջոցներ ձեռնարկել դրանք բացառելու ուղղությամբ: Այդուհանդերձ, խնդիրը շարունակվում է մնալ չլուծված:

Ստորև ներկայացվում է նման գործերի մի քանի օրինակ.

1. 2018 թվականի մայիսի 25-ին քրեական գործն ըստ մեղադրանքի Վ.Ա.-ի՝ նախկին Քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածի 3-րդ մասով, 104-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով, 235-րդ հոդվածի 1-ին մասով, 235-րդ հոդվածի 1-ին մասով, 312-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 312-րդ հոդվածի 2-րդ մասով, Վ.Դ.-ի՝ Քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ, 8-րդ կետերով և 235-րդ հոդվածի 1-ին և 4-րդ կետերով ուղարկվել է Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

2018 թվականի մայիսի 31-ին Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավորի կողմից քրեական գործն ընդունվել է վարույթ:

2020 թվականի օգոստոսի 19-ին դատավորի կողմից որոշում է կայացվել ինքնաբացարկ հայտնելու մասին՝ այն պատճառաբանությամբ, որ ներկայացրել է հանցագործության մասին հաղորդում՝ ամբաստանյալի պաշտպանների կողմից իր հասցեին զրպարտանք հնչեցնելու դեպքի կապակցությամբ, որի արդյունքում իր մոտ առաջացել է կանխակալ վերաբերմունք այդ անձանց նկատմամբ:

2020 թվականի օգոստոսի 21-ին քրեական գործը մակագրվել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի մեկ այլ դատավորի. նույն թվականի օգոստոսի 25-ին գործն ընդունվել է վարույթ:

2020 թվականի սեպտեմբերի 2-ին դատավորի կողմից որոշում է կայացվել ինքնաբացարկ հայտնելու մասին՝ այն պատճառաբանությամբ, որ ամբաստանյալ Վ.Ա.-ի ընտանիքի անդամները բնակվում են իրենց հարևանությամբ, բացի այդ ամբաստանյալի հետ ունեն վատ փոխհարաբերություններ, ինչը կասկածի տակ է առնում իր անաչառությունը:

2020 թվականի սեպտեմբերի 4-ին քրեական գործը մակագրվել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի մեկ այլ դատավորի. 2020 թվականի սեպտեմբերի 9-ին գործն ընդունվել է վարույթ:

ՀՀ նախագահի 31.03.2021 թվականի թիվ ՆՀ-55-Ա հրամանագրով՝ գործը քննող դատավորի լիազորությունները դադարեցվել են:

2021 թվականի ապրիլի 14-ին քրեական գործը վարույթ է ընդունել Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի մեկ այլ դատավոր:

Տվյալ դատավորի վարույթում քրեական գործով տեղի են ունեցել մի շարք դատական նիստեր, սակայն, նկատի ունենալով, որ դատավորը տեղափոխվել է Վերաքննիչ քրեական դատարան, 2023 թվականի ապրիլի 13-ին քրեական գործը վարույթ է ընդունվել Հակակոռուպցիոն դատարանի դատավորի կողմից:

Քրեական գործով ավելի քան 5 տարվա ընթացքում կայացել է ընդամենը 80 դատական նիստ, իսկ 11 դատական նիստ չի կայացել, որից 3-ը դատարանների ծանրաբեռնված լինելու, դատավորի կողմից հարցազրույցի մասնակցելու և ԲԴԽ հրավիրված լինելու պատճառով, 2-ը մեղադրողի աշխատանքային ծանրաբեռնվածության և ամենամյա արձակուրդում գտնվելու պատճառով, 1-ը փաստաբանի աշխատանքային ծանրաբեռնվածության պատճառով, 4-ը ուղեկցող դասակի աշխատանքային ծանրաբեռնվածության պատճառով ամբաստանյալների դատական նիստ բերելու անհնարինության պատճառաբանությամբ, 1-ը՝ ամբաստանյալի՝ այլ քրեակատարողական հիմնարկ տեղափոխվելու պատճառով:

Հարկ է արձանագրել, որ մի շարք դատական նիստեր թեև կայացել են, սակայն այդ դատական նիստերի ընթացքում ոչ թե հետազոտվել են քրեական գործով ապացույցները, այլ Դատարանները քննության են առել պաշտպանության կողմի նույնաբովանդակ միջնորդությունները:

2. 2018 թվականի սեպտեմբերի 6-ին քրեական գործն ըստ մեղադրանքի՝ Թ.Շ.-ի՝ նախկին Քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով և 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով, Ա.Ն.-ի՝ 308-րդ հոդվածի 1-ին մասով և Ա.Հ.-ի՝ 308-րդ հոդվածի 1-ին մասով և 311-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով, մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան:

2018 թվականի սեպտեմբերի 6-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավորի կողմից քրեական գործն ընդունվել է վարույթ:

2023 թվականի հունիսի 9-ին քրեական գործը վարույթ է ընդունվել Հակակոռուպցիոն դատարանի դատավորի կողմից:

Քրեական գործով ավելի քան 5 տարվա ընթացքում նշանակվել է 63 դատական նիստ: Նշանակված նիստերից կայացել են 56-ը: 1 նիստ չի կայացել դատավորի՝ ժամանակավորապես անաշխատունակության մեջ գտնվելու պատճառով, 1 նիստ չի կայացել դատավորի՝ ԲԴԽ հրավիրված լինելու պատճառով, 1 նիստ չի կայացել դատավորի՝ արձակուրդում լինելու պատճառով, 1 նիստ չի կայացել դատավորի՝ դատավորների ընդհանուր ժողովին մասնակցելու պատճառով, 1 նիստ չի կայացել դատավորի՝ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու պատճառով, 1 նիստ չի կայացել դատախազի՝ այլ աշխատանքի տեղափոխվելու պատճառով:

3. Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի քրեական դատարանում քննվող թիվ ԵԴ/0052/01/19 քրեական գործը, ըստ մեղադրանքի՝ Գ.Ղ.-ի և Ա.Դ.-ի՝ նախկին Քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասով, մեղադրական եզրակացությամբ 2019 թվականի փետրվարի 14-ին ուղարկվել է դատարան:

Քրեական գործով ավելիք քան 4 տարվա ընթացքում նշանակվել է 24 դատական նիստ, որոնցից կայացել են 10-ը: 5 նիստ հետաձգվել է պաշտպանի դիմումի հիման վրա, 1 նիստ հետաձգվել է անհապաղ քննության ենթակա միջնորդության կապակցությամբ նշանակված մեկ այլ դատական նիստ տեղի ունենալու պատճառով, 1 նիստ հետաձգվել է դատավորի՝ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու պատճառով, 1 նիստ հետաձգվել է դատավորի կողմից նախապես նշանակված այլ դատական նիստը շարունակելու պատճառով, 2 նիստ հետաձգվել է դատավորի՝ այլ գործերով խորհրդակցական սենյակում լինելու պատճառով, 2 նիստ հետաձգվել է դատախազի՝ այլ դատական նիստերին մասնակցելու պատճառով, 1 նիստ հետաձգվել է դատարանի ծանրաբեռնվածության պատճառով, 1 նիստ հետաձգվել է դատավորի վատառողջ լինելու հիմքով:

4. Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում քննվող թիվ ՍԴ/0052/01/20 քրեական գործը, ըստ մեղադրանքի՝ Ա.Բ.-ի (ամբաստանյալը մահացել է)՝

նախկին Քրեական օրենսգրքի 34-104 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 112-րդ հոդվածի 1-ին մասով և 235-րդ հոդվածի 1-ին մասով, մեղադրական եզրակացությամբ դատարան է ուղարկվել 2020 թվականի մայիսի 29-ին: Քրեական գործով ավելի քան երեք տարվա ընթացքում նշանակվել է 33 դատական նիստ: Նշանակված նիստերից կայացել են 17-ը: 6 դատական նիստ չի կայացել դատարանի պատճառաբանությամբ, 10-ը՝ կողմերի չներկայանալու պատճառով: Քրեական գործով փոխվել է 6 դատավոր:

Դատախազությունը, կարևորելով անկախ և անաչառ դատարան ունենալու հրամայականը, ինչպես նաև նպատակ ունենալով ապահովել քրեական օրենսդրությամբ ամրագրված խնդիրների կենսագործումը՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված հիմքով և կարգով դիմել է իրավասու մարմիններին՝ կոնկրետ գործերով դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ հաղորդումներով:
2023 թվականի ընթացքում դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ Դատախազության կողմից ՀՀ արդարադատության նախարարին է ներկայացվել 10 հաղորդում (2022 թվականին՝ 27), որոնցից 5-ի դեպքում մերժվել է դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելը, 2-ը դեռևս քննարկման փուլում է, իսկ 3 հաղորդման դեպքում ՀՀ արդարադատության նախարարը հարուցել է 3 կարգապահական վարույթ, որոնցից 1-ն ընթացքի մեջ է, իսկ 2-ի դեպքում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին միջնորդությամբ ՀՀ արդարադատության նախարարությունը դիմել է Բարձրագույն դատական խորհուրդ:

Վերոնշյալ երկու միջնորդության քննության արդյունքում Բարձրագույն դատական խորհուրդը կարգապահական պատասխանատվության է ենթարկել մեկ դատավորի՝ նշանակելով «նախազգուշացում» կարգապահական տույժի տեսակը: Երկու դեպքում կարգապահական վարույթը կարճվել է:

Դատախազության կողմից նախորդ տարիներին ներկայացված՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հաղորդումների հիման վրա՝ 2023 թվականի ընթացքում, Բարձրագույն դատական խորհրդի կողմից մեկ դատավորի նկատմամբ կիրառվել է «նախազգուշացում» կարգապահական տույժը:
Կարգապահական վարույթ հարուցելու առիթ է հանդիսացել ՀՀ գլխավոր դատախազի հաղորդումն այն մասին, որ հիմք ընդունելով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի կողմից քրեական վարույթը ստանձնելու հանգամանքը՝ Վերաքննիչ դատարանն իրավասու չէր բեկանել մինչդատական վարույթում որպես խափանման միջոց կալանք կիրառելու վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի որոշումը՝ նկատի ունենալով, որ այդ հարցի լուծումն այլևս քրեական վարույթը ստանձնած իրավասու դատարանի տիրույթում էր:

Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումների, ինչպես նաև միասնական իրավակիրառ պրակտիկայով ձևավորված իրավական դիրքորոշումների հիման վրա՝ Բարձրագույն դատական խորհուրդն արձանագրել է, որ այն պայմաններում, երբ նախաքննության ավարտից և քրեական գործը դատարան հանձնված լինելուց հետո, դատարանում արդեն իսկ քննարկվել և լուծվել է մեղադրյալի նկատմամբ ընտրված խափանման միջոցի հարցը, դատական ակտը չի կարող բեկանվել կամ փոփոխվել, այլ ընդամենը Վերաքննիչ դատարանը կարող է արձանագրել վիճարկվող որոշմամբ թույլ տրված անձի իրավունքների հնարավոր խախտումները՝

միաժամանակ մերժելով նշված որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքը:

Հետևաբար, հիմք ընդունելով տվյալ գործով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի կողմից քրեական վարույթը ստանձնելու հանգամանքը՝

Վերաքննիչ դատարանն իրավասու չէր բեկանել մինչդատական վարույթում որպես խափանման միջոց կալանք կիրառելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի որոշումը՝ նկատի ունենալով, որ այդ հարցի լուծումն այլևս քրեական վարույթը ստանձնած իրավասու դատարանի տիրույթում էր:

Միաժամանակ, որոշելու համար դատավորի մեղքի ձևը՝ Բարձրագույն դատական խորհուրդն արձանագրել է, որ դատավորն իրեն վերագրվող խախտումները կատարել է կոպիտ անփութությամբ, քանի որ չի գիտակցել իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը, թեև տվյալ իրադրությունում ակնհայտորեն կարող էր և պարտավոր էր դա անել, այնքանով, որքանով չի հիմնավորել դատավարական նորմով քրեական գործի վ արույթն առաջին ատյանի դատարանի կողմից վարույթ ստանձնելուց հետո առաջին ատյանի դատարանի կողմից մինչդատական վարույթի շրջանակներում կայացված դատական ակտը բեկանելը՝ որևէ արդարացված նպատակով:

Վերոգրյալի հիման վրա՝ **Խորհուրդն արձանագրել է, որ դատավորի կողմից թույլ տրված խախտումներն իրենց բնույթի և հետևանքների առումով ստվերում են դատարանի անկախությունն և անաչառությունը, առաջացնում են անվստահություն Սահմանադրությամբ և Դատական օրենսգրքով ամրագրված դատական իշխանության անկախության և անաչառության կարևորագույն սկզբունքների նկատմամբ: Արդյունքում՝ դատավորի նկատմամբ կիրառվել է «նախազգուշացում» կարգապահական տույժը:**



4

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և այլ զորքերի զորամասերում արձանագրվել է 2358 դեպք՝ նախորդ տարվա 4570-ի դիմաց: Նվազում է արձանագրվել 2212 դեպքով կամ 48.4%-ով: Արձանագրված դեպքերից 803-ը կամ 34.1%-ը եղել են պատահարներ (2022 թվականին՝ 2874), 1555-ը կամ 65.9%-ը՝ հանցագործություններ (2022 թվականին՝ 1696), այդ թվում՝ 847-ը կամ 53.3%-ը՝ զինվորական (2022 թվականին՝ 1028), 708-ը կամ 45.5%-ն՝ այլ հանցագործություններ (2022 թվականին՝ 668):



Նախորդ տարվա համեմատ՝ **պատահարները նվազել են 2071 դեպքերով կամ 72%-ով, հանցագործությունները նվազել են 141-ով կամ 8.3%-ով: Ընդ որում, զինվորական հանցագործությունների դեպքերը նվազել են 181-ով կամ 18%-ով, իսկ այլ հանցագործություններն աճել են 40-ով կամ 6%-ով:**

Հաշվետու տարում դեպքերի գրեթե կիսով չափ նվազումը բացատրվում է այն հանգամանքով, որ մինչև Քրեական դատավարության նոր օրենսգրքի ուժի մեջ մտնելը՝ 2022 թվականի հուլիսի 1-ը, Պաշտպանության նախարարության ռազմական ոստիկանությունը, ինչպես նաև զորամասերի, զորամիավորումների հրամանատարներն ու զինվորական հիմնարկների պետերը, հանդիսանալով հետաքննության մարմիններ և օժտված լինելով հետաքննություն կատարելու լիազորությամբ, հիմք ընդունելով նաև ՀՀ պաշտպանության նախարարի համապատասխան նորմատիվ հրամանը, պատահարների դեպքերը դիտարկելով որպես հնարավոր հանցագործության դեպքեր՝ դրանց կապակցությամբ կիրառել են նյութեր նախապատրաստելու քրեադատավարական կառուցակարգը: Սա հանգեցրել է գրեթե բոլոր պատահարների՝ որպես հնարավոր հանցագործության դեպքերի հաշվառման:

Նոր քրեական դատավարության օրենսգրքի կարգավորումների պարագայում՝ զորամասերի հրամանատարների ու Ռազմական ոստիկանության կողմից պատահարների ակնհայտ դեպքերի կապակցությամբ հանցագործության մասին հաղորդումներ չեն ներկայացվել, դրանց հանգամանքները բացահայտվել ու ստուգվել են նախաձեռնված կարգապահական վարույթների կամ, ըստ անհրաժեշտության, ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների շրջանակներում:

Եթե 2022 թվականի ընթացքում արձանագրված 1696 հանցագործության դեպքերից 250-ը կամ 17.8% են եղել ծանր և առանձնապես ծանր, որոնցից 161-ը՝ ծանր, իսկ 89-ը՝ առանձնապես ծանր հանցագործություն, ապա 2023 թվականին արձանագրված 1555 հանցագործության դեպքերից ծանր և առանձնապես ծանր հանցագործություններ են եղել 320-ը կամ 21%-ը, որոնցից 242-ը՝ ծանր, 78-ը՝ առանձնապես ծանր: 2022 թվականի համեմատ՝ ծանր հանցագործություններն աճել են 160-ով կամ 99.3%-ով, իսկ առանձնապես ծանր հանցագործությունները նվազել են 11-ով կամ 12.3%-ով:



Անդրադառնալով 78 առանձնապես ծանր հանցագործության դեպքերին՝ պետք է նշել, որ դրանցից 15-ը՝ հակառակորդի կողմից կատարված սպանության, 46-ը՝ հակառակորդի կողմից կատարված սպանության փորձի, 5-ը՝ սպանության, 5-ը՝ սպանության փորձի, 2-ը՝ մարտական հերթապահություն կրելու ընթացքում զինծառայողին ինքնասպանության հասցնելու, 1-ը՝ առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցի ապօրինի իրացման, 2-ը՝ մի խումբ անձանց կողմից կատարված խոշտանգման, 1-ը՝ մարտադաշտն ինքնակամ լքելու և 1-ը՝ ցեղասպանության և քաղաքացիական անձանց սպանության ու բնաջնջման դեպքեր են:

2022 թվականին արձանագրված 89 առանձնապես ծանր հանցագործություններից 7-ը՝ հակառակորդի կողմից կատարված սպանության, 30-ը՝ հակառակորդի կողմից կատարված սպանության փորձի, 7-ը՝ սպանության, 6-ը՝ սպանության, 1-ը՝ սպանության նախապատրաստության, 25-ը՝ ռազմական դրության ժամանակ զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելու, 5-ը՝ ռազմական դրության ժամանակ դասալքության, 3-ը՝ ռազմական դրության ժամանակ պետի կողմից իշխանությունը չարաշահելու, իշխանազանցության, իշխանության անգործության, 1-ը՝ մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելու, 3-ը՝ պատերազմ վարելու արգելված եղանակների կիրառմամբ պատերազմական հանցագործության և ագրեսիայի, 1-ը՝ խոշտանգման դեպքեր են:

2023 թվականի ընթացքում զինծառայողների՝ ծառայության հետ կապված 54 մահվան դեպք է արձանագրվել (2022 թվականին՝ 32): Նշված դեպքերից՝ հակառակորդի կողմից սպանություն՝ 19, սպանություն՝ 3, ավտովթարից՝ 2, վտանգ ներկայացնող ռազմամթերքի և այլ նյութերի հետ վարվելու կանոնների խախտում՝ 17, անզգուշությամբ ինքնասպանության հասցնել՝ 5, ինքնասպանության հասցնել՝ 2, կայծակահարություն՝ 1, հոսանքահարում՝ 1, հիվանդություն՝ 4:



2023 թվականի ընթացքում արձանագրվել է զինծառայողների մահվան դեպքերի 22 դեպքով կամ 69%-ով աճ (2022 թվականին՝ 32): Նշված ցուցանիշը պայմանավորող էական գործոն է հանդիսացել Ազատ գյուղում տեղի ունեցած հրդեհի հետևանքով 15 զինծառայողների մահվան դեպքը, ինչպես նաև աճ է գրանցվել հակառակորդի կողմից կատարված սպանությունների դեպքերի թվում (2022 թվականին՝ 14, 2023 թվականին՝ 19):

Հաշվետու ժամանակաշրջանում ծանրության տարբեր աստիճանի մարմնական վնասվածք է ստացել 645 զինծառայող՝ նախորդ տարվա 959-ի դիմաց. նվազում է արձանագրվել 314-ով, կամ 33%-ով:

67 զինծառայող ստացել է ծանր մարմնական վնասվածք (2022 թվականին՝ 71), 532-ը՝ միջին ծանրության, թեթև և թեթև վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածք (2022 թվականին՝ 679), իսկ 46-ի ծանրության աստիճանը 2024 թվականի հունվարի 1-ի դրությամբ պարզված չի եղել (2022 թվականին՝ 0):

Վերոնշյալ 645-ից343 կամ 53.1% դեպքերով մարմնական վնասվածքը պատճառվել է հանցագործությունների հետևանքով (2022 թվականին՝ 380-ը կամ 39.6%-ը):

Զինված ուժերի և այլ զորքերի զորամասերում հաշվետու ժամանակաշրջանում արձանագրված 1555 հանցագործության դեպքերը, նախորդ տարվա ընթացքում արձանագրված 1696-ի համեմատ, ըստ հանցատեսակների, ունեն հետևյալ պատկերը.

- Զինվորական ենթակայության կարգի և զինծառայողների կանոնագրքային փոխհարաբերությունների դեմ ուղղված հանցագործություններ (Քրեական օրենսգրքի 516-524 հոդվածներ)՝ 350 (2022 թվականին՝ 348, աճ՝ 2-ով կամ 0.6-ով%),
- Զինվորական ծառայություն անցնելու կարգի դեմ ուղղված հանցագործություններ (Քրեական օրենսգրքի 525-531 հոդվածներ)՝ 240 (2022 թվականին՝ 423, նվազում՝ 183-ով կամ 43.2-ով%),

- Ռազմական գույքն օգտագործելու և պահպանելու, զենքի, ռազմամթերքի, ինչպես նաև շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող առարկաների, նյութերի հետ վարվելու կանոնները խախտելու հետ կապված հանցագործություններ (Քրեական օրենսգրքի 532-537 հոդվածներ)՝ 58 (2022 թվականին՝ 55, աճ՝ 3-ով կամ 5.4%-ով),
- Ռազմական տեխնիկայի օգտագործման կարգի դեմ ուղղված հանցագործություններ (Քրեական օրենսգրքի 538-539 հոդվածներ)՝ 35 (2022 թվականին՝ 33, աճ՝ 2-ով կամ 6%-ով),
- Հատուկ ծառայությունների կրման և հատուկ պայմաններում զինվորական պարտքի կատարման կարգի դեմ ուղղված հանցագործություններ (Քրեական օրենսգրքի 540-548 հոդվածներ)՝ 18 (2022 թվականին՝ 26, նվազում՝ 8-ով կամ 31%-ով),
- Զինվորական պաշտոնեական հանցագործություններ (Քրեական օրենսգրքի 549-550 հոդվածներ)՝ 146 (2022 թվականին՝ 143, աճ՝ 3-ով կամ 2.1%-ով):

Ինչպես երևում է թվային տվյալներից՝ **զինվորական հանցագործությունների դեպքերի նվազումը հիմնականում պայմանավորված է զինվորական ծառայություն կրելու կարգի դեմ ուղղված հանցագործությունների դեպքերի նվազմամբ (181 դեպք)**, որը Զինված ուժերում հետպատերազմական վիճակի հաղթահարման և առաջացած հետևանքների վերացման աշխատանքներում գրանցված առաջընթացի արդյունք է:

67 զինծառայող ստացել է ծանր մարմնական վնասվածք (2022 թվականին՝ 71), 532-ը՝ միջին ծանրության, թեթև և թեթև վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածք (2022 թվականին՝ 679), իսկ 46-ի ծանրության աստիճանը 2024 թվականի հունվարի 1-ի դրությամբ պարզված չի եղել (2022 թվականին՝ 0):

Վերոնշյալ 645-ից 343 կամ 53.1% դեպքերով մարմնական վնասվածքը պատճառվել է հանցագործությունների հետևանքով (2022 թվականին՝ 380-ը կամ 39.6%-ը):

Այլ հանցագործությունների վիճակագրությունը, ըստ հանցատեսակների, 2022 թվականի համեմատությամբ, հետևյալն է.

- **Կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործություններ (Քրեական օրենսգրքի 155-187 հոդվածներ)՝96 (2022 թվականին՝ 94, աճ՝ 2-ով կամ 2.1%-ով),**
- **Անձի ազատության, պատվի, արժանապատվության, ֆիզիկական կամ հոգեկան անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործություններ (Քրեական օրենսգրքի 188-197 հոդվածներ)՝ 63 (2022 թվականին՝ 15, աճ՝ 48-ով կամ 320%-ով),**
- **Սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործություններ (Քրեական օրենսգրքի 198-202 հոդվածներ)՝ 7 (2022 թվականին՝ 7),**
- **Սեփականության դեմ ուղղված հանցագործություններ (Քրեական օրենսգրքի 252-266 հոդվածներ)՝ 168 (2022 թվականին՝ 156, աճ՝ 12-ով կամ 7.7%-ով),**
- **Հասարակական կարգի և բարոյականության դեմ ուղղված հանցագործություններ (Քրեական օրենսգրքի 297-307 հոդվածներ)՝ 4 (2022 թվականին՝ 22, նվազում՝ 18-ով՝ 82%-ով),**
- **Հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործություններ (Քրեական օրենսգրքի 308-392 հոդվածներ)՝ 176 (2022 թվականին՝ 185, նվազում՝ 9-ով կամ 5%-ով),**
- **Բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործություններ (Քրեական օրենսգրքի 393-406 հոդվածներ)՝ 127 (2022 թվականին՝ 29, աճ՝ 98-ով՝ 338%-ով),**
- **Այլ հանցակազմեր՝ 69 (2022 թվականին՝ 160, նվազում՝ 91-ով՝ 57%-ով:**

Անդրադառնալով բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների աճին՝ հարկ է նշել, որ բնակչության շրջանում թմրամիջոցների տարածվածությունը և դրանց ապօրինի շրջանառության դեպքերի աճը հանգեցնում է դրանց տարածմանը նաև զինծառայողների շրջանում:

Գործող քրեական օրենսգրքի մոտեցումը, որով որպես պատժի սպառնալիքով արգելված արարք է դիտվել ոչ միայն զինծառայողի կողմից զորամասում կամ ծառայության այլ վայրում թմրամիջոց գործածելը, այլև գործածած վիճակում ծառայության ներկայանալը, հանգեցրել է զորամասում թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերի բացահայտումների աճին:

2023 թվականի ընթացքում արձանագրված 1555 հանցագործություններից 53-ով կամ 3.4%-ով չի պարզվել քրեական պատասխանատվության ենթակա անձը: Այլ խոսքով՝ հանցագործությունների բացահայտումը կազմել է 96.6% (2022 թվականին՝ 98%):

2023 թվականի ընթացքում արձանագրված 1555 հանցագործություններից 1523-ը կատարվել է Զինված ուժերում, իսկ 32-ը՝ Ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերում, Ոստիկանության զորքերի զորամասերում (2022 թվականին՝ 1696-ից՝ 1682-ը՝ ՀՀ ԶՈՒ, իսկ 14-ը՝ ՀՀ ԱԱԾ ՍԶ, ՈԶ):

Չնայած զինվորական ծառայություն անցնելու կարգի դեմ ուղղված հանցագործությունների ակնհայտ նվազմանը՝ անհանգստացնող են զինվորական ենթակայության կարգի և զինծառայողների կանոնագրքային փոխհարաբերությունների դեմ ուղղված հանցագործությունների դեպքերը, որոնք հաշվետու ժամանակահատվածում 350 դեպքով աճել են (2022 թվականին՝ 348):

Բռնությամբ զուգորդված հանցագործությունների պատճառների ու պայմանների թվում շարունակում է էական տեղ զբաղեցնել զինծառայողների վարքագիծն ու փոխհարաբերությունները կանոնակարգող նորմերի նկատմամբ ոչ պատշաճ վերաբերմունքը:

Մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազների պահանջով՝ հաշվետու տարում վեր են հանվել նշված բնույթի հանցագործություններ ծնող պատճառներն ու դրանց կատարմանը նպաստող պայմանները, ձեռնարկվել են դատախազական ներգործության միջոցներ (միջնորդագրերի, հաղորդումների ներկայացում, դրանց քննարկումներին դատախազների մասնակցություն և այլն):

Որպես հանցագործությունների կանխարգելման արդյունավետ միջոց, Զինվորական դատախազության դատախազների կողմից հաճախակի զորամասերում, ինչպես սպայական անձնակազմի, այնպես էլ ժամկետային զինծառայողների շրջանում, անց են կացվում զրույց-զեկուցումներ, դասախոսություններ, տրվում են պարզաբանումներ, կատարվում են օրենքների, այլ նորմատիվ ակտերի, ՀՀ պաշտպանության նախարարի հրամանների, հրահանգների մեկնաբանություններ և վերլուծություններ:

Անդրադառնալով հանցանք կատարած զինծառայողներին՝ հարկ է նշել, որ ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2023 թվականին, առավել շատ հանցագործություններ կատարվել են ժամկետային զինծառայողների կողմից՝ 591, որից Ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերում՝ 6 (2022 թվականին՝ 979, որից ՀՀ ԱԱԾ ՍԶ՝ 0), սպաների կողմից՝ 242 (2022 թվականին՝ 246), պայմանագրային զինծառայողների կողմից՝ 336, որից ԱԱԾ ՍԶ՝ 6, Ոստիկանության զորքերում՝ 1 (2022 թվականին՝ 350, որից ՀՀ ԱԱԾ ՍԶ-8, ՀՀ ՈԶ՝ 0) և ենթասպաների կողմից՝ 22 (2022 թվականին՝ 39): Բացի այդ, հանցագործություններ են կատարվել նաև քաղաքացիական անձանց կողմից՝ 133 (2022 թվականին՝ 98), դեռևս չպարզված անձանց կողմից՝ 26 (2022 թվականին՝ 49): Հանցանքներ են կատարվել նաև վարժական հավաքներով զորակոչված 27 անձանց և 4 պահեստազորայինների կողմից:

2023 թվականին հանցանք կատարած զինծառայողների թվաքանակում սպաների տեսակարար կշիռը կազմել է 20.4% (2022 թվականին՝ 15.2%), ենթասպաներինը՝ 2% (2022 թվականին՝ 2.4%), պայմանագրային զինծառայողներինը՝ 28.3% (2022 թվականին՝ 22%), ժամկետային զինծառայողներինը՝ 50% (2022 թվականին՝ 60.6%):

2023 թվականի ընթացքում Քրեական օրենսգրքի 461-րդ հոդվածի հատկանիշներ պարունակող հանցագործություններ **(պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից կամ զորահավաքային զորակոչից խուսափելը) է** կատարել 1250 անձ (2022 թվականին՝ 927). աճ է արձանագրվել 323-ով կամ 26%-ով:

Կատարված վերլուծություններով պարզվել է նաև, որ 2023 թվականի ընթացքում Քրեական օրենսգրքի 462-րդ հոդվածի հատկանիշներ պարունակող հանցագործություններ (վարժական հավաքներից խուսափելը) է կատարել 257 անձ: **2023 թվականի ընթացքում քննվել է կոռուպցիոն բնույթի 316 քրեական վարույթ (2022 թվականին՝ 334):**70 քրեական վարույթի նախաքննություն ավարտվել է (2022 թվականին՝ 53): Դրանցից 46-ով՝ վարույթները կարճվել են (2022 թվականին՝ 40): Այդ թվում, 37-ով՝ վարույթները կարճվել են արդարացման (2022 թվականին՝ 30), 9-ով՝ ոչ արդարացման հիմքերով (2022 թվականին՝ 10): **24 քրեական վարույթ 58 անձի վերաբերյալ՝ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան (2022 թվականին՝ 13 գործ՝ 30 անձ):**

2023 թվականի ընթացքում ավարտված կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ քրեական վարույթներով հիմնավորվել է 139.988.893 դրամի նյութական վնասի պատճառման հանգամանքը (2022 թվականին՝ 21.680.137 դրամ), որից մինչդատական վարույթում վերականգնվել է 7.882.009 դրամը (2022 թվականին՝ 4.866.000 դրամ):

Հաշվետու տարում 3136 քրեական վարույթի նախաքննությունն ավարտվել է (2022 թվականին՝ 2006): Ավարտված քրեական վարույթներից 975-ը՝ 1275 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան (2022 թվականին՝ 485՝ 571 անձի վերաբերյալ):

2161 քրեական վարույթ կարճվել է (2022 թվականին՝ 1521): Դրանցից 1157-ը՝ Քրեական դատավարության օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով (2022 թվականին՝ 818), 1-ը՝ Քրեական դատավարության օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով (2022 թվականին՝ 0), 1003-ը՝ Քրեական դատավարության օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով (2022 թվականին՝ 703):

2023 թվականի ընթացքում վերացվել է քրեական վարույթը կարճելու մասին 44 որոշում (2022 թվականին՝ 59), որոնցից 26-ը՝ հսկողություն իրականացնող դատախազների, իսկ 18-ը՝ վերադաս դատախազների կողմից (այդ թվում՝ 7-ը՝ ՀՀ զինվորական դատախազի և տեղակալների կողմից): Կարճումը վերացված վարույթներից 4-ն ուղարկվել է դատարան:

2023 թվականի ընթացքում վերացվել է հանրային քրեական հետապնդման ժամկետը կասեցնելու 4 որոշում (այդ թվում՝ 2-ը՝ ՀՀ զինվորական դատախազի տեղակալի կողմից), քրեական հետապնդում չհարուցելու՝ 9 որոշում (2022 թվականին՝ 0) և քրեական հետապնդումը դադարեցնելու՝ 2 որոշում (2022 թվականին՝ 0):

Հաշվետու ժամանակահատվածում հսկող դատախազները ստացել են անձի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին քննիչի 1668 միջնորդություն (2022 թվականին՝ 753), քրեական հետապնդումը դադարեցնելու մասին 1357 միջնորդություն (2022 թվականին՝ 678), քրեական հետապնդում չհարուցելու 1736 միջնորդություն (2022 թվականին՝ 425). ընդհանուր 4761 միջնորդություն (2022 թվականին՝ 1856), որից 4581-ը բավարարվել է (2022 թվականին՝ 1778), իսկ 180-ը՝ մերժվել (2022 թվականին՝ 78):

Ներկայացված 180 միջնորդություններից 18-ը մերժվել է հանրորեն վտանգավոր արարքի կատարման համար քրեական հետապնդում հարուցելու հիմքի բացակայության պատճառաբանությամբ, 35-ը՝ թերի քննություն կատարված լինելու և անձի նկատմամբ քրեական հետապնդում չհարուցելու կամ դադարեցնելու համար ձեռք բերված ապացույցների բավարար չլինելու պատճառաբանությամբ, 126-ը՝ անհիմն և վաղաժամ լինելու հիմքերով, 1-ը՝ արարքներին սխալ քրեաիրավական գնահատական տալու հիմքով:

Հաշվետու ժամանակահատվածում հսկող դատախազների նախաձեռնությամբ 750 անձի նկատմամբ կայացվել է քրեական հետապնդում հարուցելու, 354 անձի նկատմամբ քրեական հետապնդում չհարուցելու և 390 անձի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումներ:

2023 թվականի ընթացքում հսկող դատախազները 320 դեպքում փոխել կամ վերացրել են դատարանների կողմից կիրառված խափանման միջոցները, որից՝

- 207 մեղադրյալի վերաբերյալ որոշում է կայացվել որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը փոփոխելու,
- 113 մեղադրյալի նկատմամբ՝ կալանավորումը վերացնելու մասին:

Քրեական վարույթների մեծամասնությունը եղել են Քրեական օրենսգրքի 461-րդ հոդվածի հատկանիշներով քննվող վարույթներ, որոնցով հետախուզվող մեղադրյալները հայտնաբերվելուց կամ ինքնակամ ներկայանալուց և արգելանքի վերցվելուց հետո իրենց մեղավոր են ճանաչել մեղսագրվող արարքում և պատրաստակամություն են հայտնել առաջնահերթության կարգով զորակոչվելու ՀՀ զինված ուժեր կամ անցած են եղել նրանց քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները՝ բացառությամբ 1 դեպքի, որի պարագայում մեղադրյալին արգելանքի տակ պահելու անհրաժեշտությունը վերացվել է մեղադրյալի հիվանդությամբ պայմանավորված:

Հաշվետու ժամանակաշրջանում կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու 972 միջնորդություն է ներկայացվել դատարան (2022 թվականին՝ 677): Դրանցից 930-ը՝ բավարարվել է (2022 թվականին՝ 605), որից 920-ը՝ լրիվ, 10-ը՝ մասնակի, իսկ 42-ը՝ մերժվել է (2022 թվականին՝ 53): Մերժման որոշումներից 25-ի դեմ դատախազների կողմից բերվել է վերաքննիչ բողոք (2022 թվականին՝ 24), որոնցից 18-ը՝ մերժվել է (2022 թվականին՝ 21), 7-ը բավարարվել, որից 1-ը՝ մասնակի:

2023 թվականի ընթացքում դատախազների (այդ թվում դատավարական ղեկավարում իրականացնողների և վերադասների) կողմից 1270 քրեական վարույթով տրվել է 1320 գրավոր հանձնարարություն (2022 թվականին՝ 1271 քրեական վարույթներով՝ 1288), այդ թվում՝ 45-ը ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության կողմից՝ կայազորների զինվորական դատախազությունների գործության նկատմամբ վերահսկողության գործառույթի շրջանակներում: Տրված հանձնարարություններից 35-ի դեմ ներկայացվել են առարկություններ (2022 թվականին՝ 40), որոնցից մեկը բավարարվել է, մյուսները՝ մերժվել (2022 թվականին՝ 0):

Հաշվետու ժամանակաշրջանում դատախազական հսկողություն իրականացնող դատախազների կողմից 53 քրեական վարույթով (գործով) որոշում է կայացվել մեղադրական եզրակացությունները չհաստատելու մասին և բոլոր քրեական վարույթները վերադարձվել են Քրեական դատավարության օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերի հիմքով:

53 քրեական վարույթներից 20-ի մեղադրական եզրակացությունը հետագայում հաստատվել և ուղարկվել է դատարան, 18-ով վարույթը կարճվել է, իսկ 15-ով նախաքննությունը դեռևս շարունակվում է:

Հաշվետու ժամանակաշրջանում դատախազների կողմից 107 միջնորդագրեր (2022 թվականին՝ 132) և 12 հաղորդումներ (2022 թվականին՝ 14) են ուղարկվել պատկան մարմիններին ու կազմակերպություններին: Միջնորդագրերի և հաղորդումների քննարկման արդյունքներով՝ զորամասերի սպայական ժողովներում որոշվել է արձանագրված թերացումների համար պատասխանատու անձանց ևս մեկ անգամ պարզաբանել զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների բնույթը, հանցանքների կատարման քրեաիրավական հետևանքները և դրանց վտանգավորության աստիճանը:

Քննարկումների արդյունքում որոշվել է արձանագրված թերությունների վերացման նպատակով զորամասերում անցկացնել համապատասխան դասընթացներ, իրենց ծառայողական պարտականությունների կատարման մեջ թերացած անձինք հանձնել են ստուգարքներ:

Հաշվետու ժամանակահատվածում հսկող դատախազները վերացրել են քննիչների կողմից կայացված 16 որոշում:

Նույն ժամանակահատվածում վերադաս դատախազների կողմից վերացվել են հսկող դատախազների 11 որոշում: 2023 թվականի ընթացքում հսկող դատախազների կողմից 184 որոշում է կայացվել օրենքի կոպիտ խախտում թույլ տված քննիչներին վարույթից հեռացնելու վերաբերյալ (2022 թվականին՝ 300):

2023 թվականի ընթացքում քրեական գործերով և նախապատրաստված նյութերով հիմնավորվել է հանցագործությունների հետևանքով պետությանը 320.054.160 դրամի նյութական վնասի պատճառման հանգամանքը (2022 թվականին՝ 195.094.664 դրամ), որից մինչդատական վարույթում ավարտված քրեական վարույթներով վերականգնվել է 44.740.205 դրամը (2022 թվականին՝ 23.106.626 դրամ):

Հաշվետու ժամանակաշրջանում մեղադրական եզրակացությամբ դատարան է ուղարկվել 975 քրեական վարույթ՝ 1275 անձի վերաբերյալ (2022 թվականին՝ 485 գործ՝ 571 անձի վերաբերյալ):

Նախորդ տարվանից փոխանցված քրեական գործերի հետ մեկտեղ, ընդհանուր առմամբ **496 քրեական գործ՝ 578 անձի վերաբերյալ քննվել և ավարտվել է դատարանում (2022 թվականին՝ 320 գործ՝ 407 անձի վերաբերյալ), որոնցից 394 քրեական գործի դատաքննությունն ավարտվել է դատավճռի կայացմամբ, դատապարտվել է 426 անձ (2022 թվականին՝ 247 գործ, դատապարտված անձինք՝ 291):**

Դատարանների որոշումներով 89 քրեական գործ՝ 139 անձի վերաբերյալ կարճվել են (2022 թվականին՝ 69 գործ՝ 112 անձի վերաբերյալ):

13 քրեական գործով՝ 13 անձի վերաբերյալ, 1 քրեական գործով մասնակի՝ 1 անձի վերաբերյալ, կայացվել է արդարացման դատավճիռ (2022 թվականին՝ 4 գործերով՝ 4 անձի վերաբերյալ):

2023 թվականի ընթացքում ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության պետական շահերի պաշտպանության բաժնի և կայազորների զինվորական դատախազությունների կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքում արձանագրվել է 196 խախտում (2022 թվականին՝ 236):

Պետական շահերի պաշտպանության հարցադրումներով իրականացված ուսումնասիրությունների արդյունքներով՝ պետությանը պատճառված վնասը կամովին վերականգնելու վերաբերյալ տրվել է 66 նախազգուշացում (2022 թվականին՝ 60), ներկայացվել է 19 միջնորդագիր (2022 թվականին՝ 47) :

2023 թվականի ընթացքում իրականացված ուսումնասիրությունների արդյունքում արձանագրվել է պետությանը պատճառված 5.062.243.785 դրամի վնաս (2022 թվականին՝ 4.939.220.746 դրամ):

Դատախազական ներգործության միջոցների կիրառմամբ՝ վերականգնվել է պետությանը պատճառված 2.482.453.154 դրամի վնաս (2022 թվականին՝ 1.951.448.493 դրամ):

Նախորդ տարում կատարված ուսումնասիրությունների արդյունքում արձանագրված վնասներից, 2023 թվականի ընթացքում, դատախազական ներգործության միջոցների կիրառմամբ վերականգնվել է 997.323 դրամ (2022 թվականին՝ 560.094.096 դրամ):

Ուսումնասիրությունների արդյունքում չվերականգնված վնասի դեպքերով նախաձեռնվել են քրեական վարույթներ, որոնք նախաքննության փուլում են:

2023 թվականի ընթացքում պետական շահերի պաշտպանության հարցադրումներով իրականացված ուսումնասիրությունների արդյունքներով նախաձեռնվել է 52 քրեական վարույթ (2022 թվականին՝ 72 քրեական վարույթ):

2023 թվականի ընթացքում պետական շահերի պաշտպանության ոլորտում հարուցվել է 12 հայց (2022 թվականին՝ 4), որոնցով բռնագանձման ենթակա ընդհանուր գումարը կազմել է 51.724.853 դրամ (2022 թվականին՝ 68.460.756 դրամ): Հայցերից 3-ը բավարարվել է ամբողջությամբ, 1-ը՝ մասնակի, 7-ի քննությունը դեռևս չի ավարտվել, իսկ 1-ի դեպքում գործի վարույթը կարճվել է վնասի հատուցման հիմքով:

Ամբողջությամբ և մասնակի բավարարված 4 հայցերով բռնագանձման պահանջների ընդհանուր գումարը կազմում է 6.828.187 դրամ:

Հայցադիմումների ներկայացման արդյունքում 6.350.000 դրամ վնաս հատուցվել է կամովին:

Հաշվետու ժամանակահատվածում աշխատանք է իրականացվել Հայաստանի Հանրապետությանը սեփականության իրավունքով պատկանող և ՀՀ պաշտպանության նախարարությանն անհատույց (մշտական) օգտագործմամբ ամրացված հողամասերի և շինությունների օտարման գործընթացների ուսումնասիրության ոլորտում:

2023 թվականի ընթացքում վերոնշյալ բնագավառում իրականացվել է 23 ուսումնասիրություն, արձանագրվել են պետական սեփականություն հանդիսացող՝ հատուկ և այլ նշանակության հողամասերն առանց բավարար հիմքերի առկայության, սահմանված կարգի խախտմամբ, ուղղակի վաճառքի ձևով, շուկայականից էականորեն ցածր գնով օտարելու դեպքեր:

Արձանագրվել է պետությանը պատճառված 622.048.747 դրամի վնաս, որից՝

1. 255.373.143 դրամը՝ Երևան քաղաքի, Նոր Նորքի, Դավիթ Բեկի փողոցի 155/3 հասցեում գտնվող 12.500 քմ մակերեսով հողամասը ՀՀ ՁՈՒ ԳՇ պետի նախկին տեղակալ Ա.Փ.-ին օտարելու դեպքով. Հակակոռուպցիոն կոմիտեում Քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ:

2. 139.504.098 դրամը՝ Երևան քաղաքի, Նորք Մարաշ վարչական շրջանի, Նորք թաղամասի, 2-րդ նրբանցքի, թիվ 20 հասցեում գտնվող 1,1879 հա մակերեսով հողամասը «ԱՅ-ԴԻ-ԷՍ-ԻՔՍ» ՍՊ ընկերությանն օտարելու դեպքով. Հակակոռուպցիոն կոմիտեում Քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցագործության հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ:

3. 78.997.690 դրամը՝ Երևան քաղաքի Աջափնյակ Վ-3 թաղամասի 9/1, 9/2, 9/3, 11/1, 11/2, 13/1 և 15/3 հասցեներում գտնվող հողամասերը տարբեր ֆիզիկական անձանց օտարելու դեպքերով. Հակակոռուպցիոն կոմիտեում Քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցագործության հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ:

4. 77.782.816 դրամը՝ Տավուշի մարզ, Բերդ համայնք, գյուղ Նավուր, 2-րդ փողոց, 1-ին նրբանցք, 1-ին փակուղի N1 հասցեում գտնվող 1198,09 քմ մակերեսով շինությունները և 6.0536 հա մակերեսով «հատուկ նշանակության» հողամասը ՀՀ ՊՆ նախկին զինծառայող Ա.Ս.-ին օտարելու դեպքով. Հակակոռուպցիոն կոմիտեում Քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցագործության հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ:

5. 56.674.000 դրամը՝ Գեղարքունիքի մարզի Բերդկունք համայնք, Մայրուղի 5-րդ նրբանցք 7 հասցեում գտնվող՝ 1.73 հա մակերեսով «հատուկ նշանակության» հողամասն իր շինություններով ՌԴ քաղաքացի հանդիսացող անձին օտարելու դեպքով. Հակակոռուպցիոն կոմիտեում Քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցագործության հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ:

13.717.000 դրամը՝ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Լալայան փ. 137/4 հասցեում գտնվող 0.119995 հա մակերեսով «հատուկ նշանակության» հողամասը և իր շինությունները օտարելու դեպքով. Հակակոռուպցիոն կոմիտեում Քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթը:

Ուսումնասիրությունների ընթացքում հայտնաբերված մի շարք խախտումների վերաբերյալ առկա են նախաձեռնված քրեական վարույթներ՝ Ստեփանավանի Ս.Նշան փ. 38 հասցեի «հատուկ նշանակության» հողամասի, Վանաձոր քաղաքի Մյասնիկյան 20 հասցեի գույքի (բանակային կորպուսի նախկին շենք), ք. Երևան, Մոլդովական 41/5, 41/6, 41/7 հասցեների հողամասեր, ք.Վաղարշապատ, Մաշտոցի 19 հասցեի գույքի (վարչական շենք) օտարումների վերաբերյալ, որոնք գտնվում են նախաքննության փուլում:

5

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐ

Ըստ Ներքին գործերի նախարարության ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնից ստացված տվյալների՝ 2023 թվականի ընթացքում հանրապետությունում արձանագրվել է կոռուպցիոն հանցագործության 1404 դեպք (2022 թվականին՝ 898)[4]: Նախորդ տարվա համեմատությամբ՝ հանցագործության դեպքերն աճել են 506-ով կամ 56.3%-ով:

Կոռուպցիոն հանցագործության դեպքեր



Կոռուպցիոն հանցագործությունների աճը հիմնականում պայմանավորվել է կաշառք ստանալու, տալու, կաշառքի միջնորդության (2022 թվականին՝ 227 դեպք, 2023 թվականին՝ 574) պաշտոնեական կեղծիքի (2022 թվականին՝ 77 դեպք, 2023 թվականին՝ 133), ընտրակաշառք ստանալու (2022 թվականին՝ 8 դեպք, 2023 թվականին՝ 25) և փողերի լվացման (2022 թվականին՝ 29, 2023 թվականին՝ 60) դեպքերի աճով:

2023 թվականի ընթացքում նվազել են իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով վստահված գույքը հափշտակելու (2022 թվականին՝ 109, 2023 թվականին՝ 83), պաշտոնատար անձի նկատմամբ ունեցած իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելու նպատակով ապօրինի վարձատրություն տալու (2022 թվականին՝ 16, 2023 թվականին՝ 7) դեպքերը:

Կոռուպցիոն բնույթի հանցագործությունների դեպքերի աճը միանշանակ չի կարող գնահատվել որպես բացասական ցուցանիշ, հաշվի առնելով այն, որ այդ հանցագործությունները կրում են լատենտային՝ քողարկված բնույթ:

Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտումն իրենից որոշակի բարդություն է ներկայացնում և պահանջում է իրավապահ մարմինների համագործակցված աշխատանք, մասնավորապես քննչական գործողությունների և օպերատիվ-հետախուզական միջոցառումների համակցված իրականացում: Հետևաբար, 2023 թվականի ընթացքում արձանագրված կոռուպցիոն բնույթի հանցագործությունների դեպքերի թվի աճը մեծապես կարող է պայմանավորված լինել մասնագիտացված նախաքննական մարմնի և այդ մարմնի նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազական մասնագիտացված ստորաբաժանման աշխատակիցների արհեստավարժ աշխատանքով, ինչպես նաև Հակակոռուպցիոն կոմիտեում օպերատիվ առանձնացված ստորաբաժանման ձևավորմամբ և գործունեությամբ:

Կոռուպցիոն հանցանքների քանակը նվազեցնելու, այդ բնույթի արարքների դեմ արդյունավետ պայքարելու նպատակով Գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությունը որդեգրել է հաճախ կրկնվող և հանրային հնչեղություն ունեցող կոռուպցիոն դեպքերի բացահայտման դեպքում այդ մասին զանգվածային լրատվության միջոցներով, ինչպես նաև այլ պաշտոնական ուղիներով հանրությանը պատշաճ իրազեկելու, նախազգուշացնելու գործելաոճը:

4. Սույն հատվածում առկա կոռուպցիոն հանցագործությունների՝ 2022 թվականի ցուցանիշների տարբերությունը ՀՀ ԱԺ ներկայացված նախորդ հաղորդման մեջ առկա ցուցանիշներից պայմանավորված է այն հանգամանքով, որ մինչև ՀՀ նոր քրեական օրենսգրքի ուժի մեջ մտնելը՝ 2022 թվականի հուլիսի 1-ը, կոռուպցիոն հանցագործությունների ցանկը սահմանվում էր ՀՀ գլխավոր դատախազի 2017 թվականի հունվարի 3-ի հրամանով, որը ներառում էր կոռուպցիոն հանցագործությունների շատ ավելի լայն ցանկ, քան սահմանված է ՀՀ քրեական օրենսգրքի N 1 հավելվածով:

Բացի այդ, աշխատանքներ են տարվել հանրության կողմից կոռուպցիոն հնարավոր դրսևորումների կապակցությամբ ճիշտ և ժամանակին ազդարարման կարգը պարզաբանելու, կոռուպցիոն հանցանքների կատարմանը նպաստող հանգամանքները վեր հանելու և այդ կապակցությամբ իրավասու մարմիններին առարկայական միջնորդագրեր ներկայացնելու ուղղությամբ:

Հաշվետու ժամանակաշրջանում կատարված կամ նախապատրաստվող ենթադրյալ հանցագործությունների վերաբերյալ հաղորդումները Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների կողմից ընդունելու և հաշվառելու օրենսդրության պահանջների խախտումներ թույլ տալու դեպքեր չեն արձանագրվել:

Նման դեպքեր, սակայն, արձանագրվել են Գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազների հսկողության ներքո գտնվող քրեական վարույթներով:

Մասնավորապես՝

- Հակակոռուպցիոն կոմիտեում քննվող քրեական վարույթի նախաքննության ընթացքում պարզվել և հիմնավորվել է, որ ՆԳՆ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Կապանի բաժնի հերթապահի օգնականն ընդունել է բաժնի հերթապահ մասի հեռախոսահամարին ստացված ահազանգը, որով ահազանգ ներկայացրած անձը խնդրել է ոստիկան ուղարկել բժշկական կենտրոն, ապա ստացված ահազանգի մասին զեկուցել է բաժնի օրվա պատասխանատուին և հերթապահին, սակայն ահազանգը չի գրանցել: Հաստատվել է նաև, որ ծառայողական դյուրակիր վահանակին Կապանի բժշկական կենտրոնի ընդունարանից ահազանգ են ստացել ու դեպքի վայր են մեկնել ՆԳՆ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Կապանի բաժնի և Պետական պահպանության գլխավոր վարչության Կապանի բաժնի երկու ծառայողներ, ապա՝ դեպքի վայր մեկնելու մասին զեկուցել են պահպանության բաժնի ավագ տեսուչին և պահպանության բաժնի դասակի հրամանատարին, սակայն նրանցից որևէ մեկն այդ մասին զեկուցագիր չի ներկայացրել:

Նախաքննությամբ հիմնավորվել է նաև օրվա օպերատիվ խմբի անդամների՝ Կապանի բաժնի համայնքային ոստիկանության բաժանմունքի ավագ տեսուչների և նույն բաժանմունքի տեսուչի՝ դեպքի վայր մեկնելու հանգամանքը, սակայն նրանք նույնպես իրենց գործողությունների վերաբերյալ զեկուցագիր չեն ներկայացրել:

Հսկող դատախազի կողմից ներկայացվել է Ոստիկանության՝ պարտականություններն իրականացնելիս թերացած ծառայողների նկատմամբ ծառայողական քննություն իրականացնելու միջնորդություն, որի արդյունքում Ոստիկանության 11 ծառայող ենթարկվել են կարգապահական պատասխանատվության, իսկ նշված խախտումները հետագայում բացառելու նպատակով՝ ծառայողական քննության արդյունքում կազմված եզրակացությունն ուղարկվել է իրավասու ստորաբաժանումներ:

Բացի այդ, ՆԳՆ ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության Թալինի բաժնի պետի կողմից ներկայացված՝ առերևույթ հանցանքի մասին հաղորդման և կից փաստաթղթերի ուսումնասիրմամբ պարզվել է, որ Ոստիկանության իրավասու ծառայողների կողմից ստուգում իրականացնելիս՝ թույլ են տրվել խախտումներ: Մասնավորապես՝ ավելի քան երեք ամիս ստուգողական գործողություններ են կատարվել, մինչդեռ Կառավարության 2017 թվականի նոյեմբերի 23-ի N 1495-Ն որոշման համաձայն՝ 5-օրյա ժամկետում պետք է դրանց ընթացքը լուծելու վերաբերյալ որոշում կայացվեր:

Այս դեպքում նույնպես հսկող դատախազի կողմից ներկայացվել է Ոստիկանության՝ պարտականություններն իրականացնելիս թերացած ծառայողների նկատմամբ ծառայողական քննություն իրականացնելու միջնորդություն, որի արդյունքում հաստատվել է նշված անձանց կողմից կարգապահական խախտումներ կատարելու հանգամանքը:

Միջնորդության հիման վրա՝ Ոստիկանության տվյալ բաժնի պետը, ծառայության գծով տեղակալը և համայնքային ոստիկանության բաժանմունքի պետը ենթարկվել են կարգապահական պատասխանատվության:

Վերոգրյալի հետ մեկտեղ՝ հաշվետու ժամանակաշրջանում հայտնաբերվել է ենթադրյալ հանցավոր դեպքերի արձանագրման մասին օրենսդրության պահանջների մի շարք խախտումներ:

Այսպես.

Քրեական դատավարության օրենսգրքի 177-րդ հոդվածի համաձայն՝ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի հաղորդումը պետք է ունենա ձևաթղթի վրա շարադրված և պատշաճ վավերացված պաշտոնական նամակի, էլեկտրոնային նամակի կամ հաղորդումների այլ ընդունված ձև և պարունակի այն ներկայացրած մարմնի լրիվ անվանումն ու հասցեն կամ համապատասխան պաշտոնատար անձի անունը, ազգանունը, պաշտոնը, ինչպես նաև բացահայտի համապատասխան մարմնի կամ պաշտոնատար անձի այն լիազորությունը, որի իրականացման ընթացքում նրան հայտնի է դարձել առերևույթ հանցանքի փաստը: Հաղորդմանը կարող են կցվել համապատասխան փաստը հաստատող նյութեր:

Մեջբերված քրեադատավարական կարգավորումից հետևում է, որ օրենսդիրը օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի հաղորդմանը, բացի ձևական պահանջներից (ձևաթղթի վրա շարադրված լինելը), ներկայացնում է նաև բովանդակային պահանջներ: Մասնավորապես՝ այն պետք է պարունակի տվյալներ համապատասխան պաշտոնատար անձի վերաբերյալ (անուն, ազգանուն, պաշտոն), ինչպես նաև բացահայտի պաշտոնատար անձի այն լիազորությունը, որի իրականացման ընթացքում նրան հայտնի է դարձել առերևույթ հանցանքի փաստը:

Մինչդեռ, ուսումնասիրությամբ պարզվել է, որ առանձին դեպքերում ներկայացված հաղորդումներում բացահայտված չի եղել օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի աշխատակցի այն լիազորությունը, որի իրականացման ընթացքում նրան հայտնի է դարձել առերևույթ հանցանքի փաստը կամ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացրել է օպերատիվ աշխատակիցը, սակայն հանցանքի վերաբերյալ հաղորդում ներկայացվել է ստորաբաժանման ղեկավարի կողմից՝ կրկին չնշելով այն լիազորությունը, որի իրականացման ընթացքում նրան հայտնի է դարձել ենթադրյալ հանցանքի փաստը: Ընդ որում, որոշ դեպքերում պարզվել է, որ հաղորդում ներկայացրած օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի աշխատակիցը որևէ լիազորություն չի իրականացրել:

Նշված խախտումները բացառելու և հաղորդումները Քրեական դատավարության օրենսգրքի 177-րդ հոդվածի պահանջներին (ինչպես ձևական, այնպես էլ բովանդակային) համապատասխան կազմելու նպատակով՝ իրավասու հետաքննության մարմիններին ՊՆ ռազմական ոստիկանություն և ՆԳՆ ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչություն հասցեագրվել են համապատասխան գրություններ:

2023 թվականի ընթացքում առերևույթ կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ ստացվել է 1914 հաղորդում, որոնցից 1209-ով նախաձեռնվել է քրեական վարույթ՝ նախորդ տարվա 896-ի դիմաց, իսկ 705-ով վարույթ չի նախաձեռնվել:

2023 թվականի ընթացքում նախաքննության մարմինների կողմից քննվել է կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ 3556 քրեական վարույթ (2022 թվականին՝ 2718), որից 410-ը նախկինում կասեցված կամ կարճված վարույթների վերսկսման արդյունք են: Նախորդ տարվա համեմատությամբ՝ քննված քրեական գործերի թիվն աճել է 838-ով կամ 30.8%-ով:

2023 թվականի ընթացքում նախաքննական մարմինների վարույթում քննված **3556 քրեական վարույթից ավարտվել է 908-ը (2022 թվականին՝ 567), որոնցից 602-ը կարճվել է (2022 թվականին՝ 388), այդ թվում՝ 502-ը՝ արդարացման (2022 թվականին՝ 286), իսկ 100-ը՝ ոչ արդարացման հիմքերով (2022 թվականին՝ 102): 306 քրեական վարույթ՝ 757 անձի վերաբերյալ (2022 թվականին՝ 178 քրեական վարույթ՝ 397 անձի վերաբերյալ) մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: 316 քրեական վարույթ միացվել է այլ քրեական վարույթների, իսկ անավարտ է մնացել 1827 քրեական վարույթ:**

Ըստ կոռուպցիոն **բնույթի առանձին հանցատեսակների՝** հաշվետու տարում քննված քրեական վարույթների շարժը ներկայացվում է ստորև.[5]

<< քրեական օրենսգրքի հոդվածը	Ստացված հաղորդումների թիվը	Նախաձեռնված վարույթների թիվը	Իրականացված վարույթների թիվը	Կարճված վարույթների թիվը	Միացված վարույթների թիվը	Մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված գործերի թիվը (գործ/անձ, որից կալանքի տակ գտնվող)	Ըստ ենթակայության ուղարկված վարույթների թիվը	Անավարտ մնացած վարույթների թիվը (որոնցով կալանքի տակ գտնվող անձանց թիվը)
218-220-րդ հոդվածներ (Ընտրակաշառք ստանալու, տալու, ընտրակաշառքի միջնորդություն)	2	2	7	1		1/2	2	3
221-րդ հոդված (Հանրաքվեի կամ ընտրության ժամանակ բարեգործության արգելքը խախտելը)	2	2	2	2		-	-	-
255-րդ հոդվածի 2-րդ մաս, 2-րդ կետ և 3-րդ մաս (Իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով խարդախությունը)	55	54	79	7	9	11/19 1 անձ գտնվել է կալանքի տակ	14	38, որոնցով 2 անձ գտնվել է կալանքի տակ
256-րդ հոդվածի 2-րդ մաս, 2-րդ կետ և 3-րդ մաս (իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով՝ վստահված գույքը հափշտակելը)	178	178	338	63	35	33/75 2 անձ գտնվել է կալանքի տակ	47	160, որոնցով 6 անձ գտնվել է կալանքի տակ
258-րդ հոդվածի 2-րդ մաս, 9-րդ կետ և 3-րդ մաս (իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով՝ շորթումը)	5	5	9	1	1	1/1	2	4
272-րդ և 273-րդ հոդվածներ (Մասնավոր ոլորտում կաշառք ստանալը, տալը)	10	8	11	-	1	-	4	6
276-րդ հոդված (Ծառայողական կամ մասնագիտական պարտականությունները կատարելու համար ապօրինի վարձատրություն ստանալը կամ պահանջելը)	9	9	13	2	1	-	5	5
277-րդ հոդված (Մասնավոր ոլորտում ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը)	36	35	63	10	3	-	18	32
284-րդ հոդվածի 2-րդ մաս, 2-րդ կետ և 3-րդ մաս (Հակամրցակցային գործունեությունը՝ իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով)	1	1	2	-	1	-	-	1
296-րդ հոդված (Փողերի լվացումը)	38	38	85	1	22	11/33 7 անձ գտնվել է կալանքի տակ	3	48 7 անձ գտնվել է կալանքի տակ
435-րդ հոդված (Կաշառք ստանալը)	189	179	354	32	74	54/152 36 անձ գտնվել է կալանքի տակ	53	141, որոնցով 12 անձ գտնվել է կալանքի տակ
436-րդ հոդված (Կաշառք տալը)	63	63	113	18	7	55/147 4 անձ գտնվել է կալանքի տակ	16	19, որոնցով 3 անձ գտնվել է կալանքի տակ
437-րդ հոդված (Կաշառքի միջնորդությունը)	1	1	1	-	1	-	-	-
438-րդ հոդված (Պաշտոնատար անձի նկատմամբ ունեցած իրական կամ ենթադրյալ ազդեցություն օգտագործելը)	3	3	6	-	-	-	1	5, որոնցով 1 անձ գտնվել է կալանքի տակ
439-րդ հոդված (Պաշտոնատար անձի նկատմամբ ունեցած իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելու նպատակով ապօրինի վարձատրություն տալը)	-	-	3	1	-	-	1	1
440-րդ հոդված (Կաշառք ստանալու, կաշառքի միջնորդության կամ իրական կամ ենթադրյալ ազդեցությունը շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով օգտագործելու պատրվակով գույք, ներառյալ դրամական միջոց, արժեթուղթ, վճարային այլ գործիք, գույքի նկատմամբ իրավունք, ծառայության կամ որևէ այլ առավելություն ստանալը)	1	1	5	-	-	-	1	4
441-րդ հոդված (Պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը կամ լիազորություններն անցնելը)	484	439	907	236	96	26/66 3 անձ գտնվել է կալանքի տակ	180	369, որոնցով 5 անձ գտնվել է կալանքի տակ
442-րդ հոդված (Պաշտոնատար անձի կողմից ձեռնարկատիրական գործունեության ապօրինի մասնակցելը)	4	4	7	1	1	1/1	1	3
443-րդ հոդված (Ապօրինի հարստանալը)	5	5	7	-	-	-	2	5, որոնցով 5 անձ գտնվել է կալանքի տակ
444-րդ հոդված (Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից հայտարարագրում կեղծ տվյալներ ներկայացնելը, հայտարարագրման ենթակա տվյալները թաքցնելը կամ հայտարարագիր չներկայացնելը)	16	16	23	3	4	-	1	15
446-րդ հոդված (Պաշտոնական կեղծիք)	125	121	189	56	27	10/16	41	55, որոնցով 4 անձ գտնվում է կալանքի տակ
477-րդ հոդված (Կաշառքի կամ մասնավոր ոլորտում կաշառքի պրովակացիայի)	2	2	3	-	-	-	2	1
481-րդ հոդված (քրեական պատասխանատվությունից ազատելը)	1	1	2	-	-	-	-	2
486-րդ հոդված 2-րդ մաս 2-րդ կետ և 3-րդ մաս (Արդարադատության իրականացմանը կամ գործի քննությանը միջամտելը, որը կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով)	-	-	7	3	-	1/7 3 անձ գտնվում է կալանքի տակ	1	2
549-րդ հոդված (Իշխանազանցությունը կամ իշխանությունը չարաշահելը)	40	38	106	39	8	7/14 3 անձ գտնվել է կալանքի տակ	17	85, որոնցով 2 անձ գտնվել է կալանքի տակ

5. Նորաստեղծ **ենթակայությամբ ենվերադրված այն կոռուպցիոն հանցագործությունները**, որոնցով հաշվետու ժամանակահատվածում ստացվել էին հաղորդումներ, նախաձեռնվել են քրեական վարույթներ, իրականացվել են քրեական վարույթներ կամ մեղադրական եզրակացությամբ դատարան են ուղարկվել քրեական վարույթներ: << քրեական օրենսգրքի **221.1-ին հոդվածով** (Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ օրենքով սահմանված նախընտրական քարոզչության ծախսերը նախընտրական հիմնադրամից կամ հանդուպ էվի քարոզչության ծախսերը հանդուպ էվի քարոզչության հիմնադրամից կամ հայտարարագման ենթակա տվյալները ներկայացնելը կամ հայտարարագիր չներկայացնելը), **231-րդ հոդվածով** (Հոլանդայության օգուտն խորշ չափերով ապօրինի նվիրատվությունն ներքնալիը), **232-րդ հոդվածով** (Հոլանդայությանը նվիրատվությունն կատարող օրենքով սահմանված չափը գերազանցելու արգելքը կամ օրենքով լեգիտիմացված արդյունքներից նվիրատվությունների արտոնյալ թվարկումը չափերով շրջանցելը), **268-րդ հոդվածի 3-րդ մաս՝ 2-րդ կետով** (Ներքին տեղեկությունների անօրինաբար օգտագործումը՝ իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով), **269-րդ հոդվածի 3-րդ մաս՝ 3-րդ կետով** (Ներքին տեղեկությունների չարաշահումը՝ իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով), **274-րդ հոդվածով** (Հայաստանի Հանրապետության կամ այլ պետությանմարտիկին, մրցավարին, թիմի ղեկավարին, մարզչին, արհեստավարժ մարզամարտիկին կամ դրա կազմակերպչին, հանդիսատեսին առևտրային մրցույթի մասնակցի կամ դրա կազմակերպչի կամմրցանակաբաշխային հանձնաժողովի անդամի կողմից կաշառք ստանալը) **275-րդ հոդվածով** (Հայաստանի Հանրապետության կամ այլ պետությանմարտիկին, մրցավարին, թիմի ղեկավարին, մարզչին, արհեստավարժ մարզամրցման այլ մասնակցի կամ դրա կազմակերպչին, հանդիսատեսին առևտրային մրցույթի մասնակցի կամ դրա կազմակերպչի կամ մրցանակաբաշխային հանձնաժողովի անդամի կողմից կաշառք տալը), **282-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում և 3-րդ մասում** (Ցինիանական բուրգ ստեղծելը, կազմակերպելը կամ ղեկավարելը իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով), **480-րդ հոդվածով** (Ձեռնհասությունն անձին քրեական պատասխանատվությունից ենթադրելը), **482-րդ հոդվածով** (Ահաբեկչությունը, վնասակարությունը կամ այլ անբարենպաստ գործունեությունը՝ ինչպես նաև դրանց կատարելուն հանդուգն սպառնալիքը), **496-րդ հոդվածով** (Դատավարության մասնակիցներին իրենց լիազորությունների հետ կապված կաշառք տալը) և **497-րդ հոդվածով** (Դատավարության մասնակիցներին կողմերից իրենց լիազորությունների հետ կապված կաշառք ստանալը) նախաքննությունն գործարկելու ժամանակահատվածում դեռևս չեն արձանագրվել

2023 թվականին վերացվել է կոռուպցիոն բնույթի՝

1. **քրեական գործով վարույթը կարճելու մասին 26 որոշում, որոնցից 3-ը կամ 11.5%-ը՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից,**
2. **քրեական հետապնդում չհարուցելու մասին 2 որոշում,**
3. **քրեական հետապնդումը դադարեցնելու մասին 4 որոշում:**

Ընդ որում, վերացված որոշումներից մի քանիսը շրջադարձային նշանակություն են ունեցել, քանի որ այդ քրեական վարույթները հետագայում մեղադրական եզրակացությամբ հանձնվել են իրավասու դատարաններին:

Օրինակ՝

- Շրջակա միջավայրի նախարարության «Սևան ազգային պարկ» ՊՈԱ կազմակերպության «Սևան» մասնաճյուղի տնօրենի և նույն մասնաճյուղի տեսուչների կողմից չորս դրվագ կաշառք ստանալու և պաշտոնատար անձանց կաշառք տալու վերաբերյալ քրեական վարույթը, որը կարճվել էր արդարացնող հիմքով, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից եզրափակիչ որոշումները վերացնելու արդյունքում՝ քրեական վարույթը՝ մեղադրական եզրակացությամբ, հանձնվել է իրավասու դատարան:
- Լոռու մարզի Լեռնապատ համայնքի նախկին ղեկավարի կողմից ծանր հետևանքների զուգորդմամբ երկու դրվագ պաշտոնեական լիազորությունները չարաշահելու վերաբերյալ կարճված քրեական վարույթը, եզրափակիչ որոշումները վերացնելու արդյունքում, մեղադրական եզրակացությամբ հանձնվել է իրավասու դատարան:

Համեմատության համար նշենք, որ **2022 թվականին վերացվել է՝**

- **քրեական գործով վարույթը կարճելու մասին 89 որոշում, որոնցից 27-ը կամ 30.3%-ը՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից,**
- **քրեական հետապնդում չհարուցելու մասին 29 որոշում, որից 1-ը կամ 3.4%-ը՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից,**
- **քրեական հետապնդումը դադարեցնելու մասին 4 որոշում, որից 1-ը կամ 25% -ը՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից:**

Հաշվետու ժամանակահատվածում կոռուպցիոն բնույթի քրեական վարույթներով՝

- Վարույթը կարճելու մասին որոշումների դեմ բերվել է 15 բողոք (2022 թվականին՝ 49), որոնցից բավարարվել է 2-ը (2022 թվականին՝ 4) կամ մոտ 13.3%-ը (2022 թվականին՝ 8.2%):
- Քրեական հետապնդում չհարուցելու մասին որոշումների դեմ բերվել է 3 բողոք (2022 թվականին՝ 19): Նշված բողոքները մերժվել են: Քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումների բերվել է 4 բողոք (2022 թվականին՝ 12), որոնցից 2-ը բավարարվել է (2022 թվականին՝ 3): Քրեական հետապնդման ժամկետը կասեցնելու որոշումների դեմ բերվել է 2 բողոք, որից բավարարվել է 1-ը:

Հաշվետու ժամանակահատվածում կոռուպցիոն բնույթի քրեական վարույթներով դատախազների կողմից տրվել է 119 հանձնարարական, Քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի կարգով ներկայացվել է 19 միջնորդագիր:

Լրացուցիչ քննության է վերադարձվել 11 քրեական վարույթ՝ նախորդ տարվա 19-ի դիմաց. լրացուցիչ քննության վերադարձված քրեական վարույթների թիվը նվազել է 8-ով կամ 42.1%-ով:

Հաշվետու ժամանակահատվածում կոռուպցիոն բնույթի քրեական վարույթներով նախաքննություն իրականացնող անձանց կողմից թույլ տրված իրավախախտումների փաստերով ծառայողական քննություն անցկացնելու վերաբերյալ դատախազների կողմից ներկայացվել է 26 միջնորդություն, որոնց քննարկման արդյունքում 2 անձ ենթարկվել է կարգապահական տույժի: Համեմատության համար նշենք, որ 2022 թվականի ընթացքում նախաքննություն իրականացնող անձանց կողմից թույլ տրված իրավախախտումների փաստերով ծառայողական քննություն անցկացնելու վերաբերյալ դատախազների կողմից ներկայացվել է 104 միջնորդություն, որոնց քննարկման արդյունքում կարգապահական տույժի է ենթարկվել 23 անձ:

Հաշվետու ժամանակահատվածում կոռուպցիոն բնույթի քրեական վարույթներով **դատախազների կողմից քրեական դատավարությանը մասնակցելուց հեռացվել է հետաքննություն և նախաքննություն իրականացնող 27 անձ:**

Գլխավոր դատախազությունում նախկինում կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ նախաձեռնված քրեական վարույթների քննարկման արդյունքում հանձնարարվել է քննարկման առարկա դարձնել նաև փողերի լվացման հանցակազմի առկայությունը: Արդյունքում՝ միայն հաշվետու տարում 40 քրեական վարույթներով նախաձեռնվել են նաև առանձնապես խոշոր չափերով փողերի լվացման դեպքերի կապակցությամբ նոր քրեական վարույթներ, որոնք միացվել են ավելի վաղ նախաձեռնված քրեական վարույթներին:

2023 թվականի ընթացքում կոռուպցիոն բնույթի ավարտված քրեական վարույթներով[6] պետությանը, համայնքներին, միջազգային կազմակերպություններին, իրավաբանական և ֆիզիկական անձանց պատճառվել է 32.886.735.053 դրամի գույքային վնաս (2022 թվականին՝ 21.712.002.372 դրամի), որից պետությանը՝ 25.699.223.153 դրամի (2022 թվականին՝ 19.548.473.083 դրամի), համայնքներին՝ 160.643.000 դրամի (2022 թվականին՝ 407.000) դրամի, իրավաբանական անձանց՝ 6.556.465.000 դրամի (2022 թվականին՝ 2.156.929.289 դրամի), միջազգային կազմակերպություններին՝ 23.830.000 դրամի (2022 թվականին՝ 0), ֆիզիկական անձանց՝ 416.573.900 դրամի (2022 թվականին՝ 5.042.042 դրամի):

2023 թվականի ընթացքում կոռուպցիոն բնույթի ավարտված քրեական վարույթներով վերականգնվել է պետությանը, համայնքներին, ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված 1.365.324.431 դրամի գույքային վնաս (2022 թվականին՝ 20.674.463.393), որից պետությանը՝ 1.215.032.431 դրամի (2022 թվականին՝ 18.923.437.733), համայնքներին՝ 43.391.000 դրամի (2022 թվականին՝ 310.118.000), իրավաբանական անձանց՝ 106.901.000 դրամի (2022 թվականին՝ 545.945.434):

2023 թվականի ընթացքում դատարաններում քննվել և ավարտվել են կոռուպցիոն բնույթի 149 քրեական գործ (2022 թվականին՝ 99)՝ 249 անձի վերաբերյալ (2022 թվականին՝ 197):

Նշված քրեական գործերից 97-ով (2022 թվականին՝ 67) 140 անձ դատապարտվել է (2022 թվականին՝ 132), որոնցից 25 անձ (2022 թվականին՝ 30 անձ)՝ ազատազրկման, 39 անձ (2022 թվականին՝ 63 անձ)՝ տուգանքի, 3 անձ (2022 թվականին՝ 0)՝ հիմնական այլ պատժի, 73 անձի (2022 թվականին՝ 39) նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել, 9 անձի (2022 թվականին՝ 8) նկատմամբ կիրառվել են նաև լրացուցիչ պատիժներ:

9 գործով 14 անձ արդարացվել է (2022 թվականին՝ 7 գործով 18 անձ), որոնց վերաբերյալ դատախազների կողմից բերվել են բողոքներ:

Հաշվետու ժամանակահատվածում կոռուպցիոն բնույթի քրեական վարույթներով **մեղադրանքը պաշտպանող դատախազների բողոքների քննության արդյունքում բեկանվել է նախկին տարիներին կայացված՝ դատարանների 2 արդարացման դատավճիռ:**

Դատարանում կարճվել է 43 գործ 95 անձի վերաբերյալ (2022 թվականին՝ 24 գործ 46 անձի վերաբերյալ):

2023 թվականին կարճված 43 գործով անցնող 95 անձից 7-ի (2022 թվականի՝ 2) վերաբերյալ գործը կարճվել է համաներման ակտի կիրառմամբ, 71-ի (2022 թվականին՝ 35) վերաբերյալ՝ վաղեմության ժամկետն անցնելու հիմքով, 2-ի վերաբերյալ՝ տուժողի հետ հաշտվելու հիմքով, իսկ 15-ի (2022 թվականին՝ 5) վերաբերյալ՝ այլ հիմքերով:

Դատարանում քննված և ավարտված քրեական գործերով պատճառված ընդհանուր վնասը կազմել է 6.191.220 դրամ (2022 թվականին՝ 228.294.243 դրամ), որից վերականգնվել է 4.463.095 դրամը (2022 թվականին՝ 217.751.747 դրամ): Վերոնշյալ ընդհանուր վնասից 4.333.095 դրամը եղել է պետությանը պատճառված վնաս, իսկ 130.000 դրամը՝ համայնքներին:

6. Տվյալները ներկայացված են՝ համաձայն քննչական աշխատանքի մասին տարեկան վիճակագրական Ձև 1 Մ հաշվետվության:

Հաշվետու ժամանակահատվածում կոռուպցիոն հանցագործություններ կատարելու համար Հակակոռուպցիոն կոմիտեում քննված քրեական վարույթներով դատի է տրվել 152 պաշտոնատար անձ, (2022 թվականին՝ 63) պաշտոնատար անձ, ովքեր ըստ բնագավառների և զբաղեցրած պաշտոնների հանդիսացել են՝

1. ԱԺ նախկին 1 պատգամավոր,

2. պատգամավորի 1 թեկնածու,

3. ՀՀ բնապահպանության նախկին 1 նախարար,

4. նախկին 1 դեսպան,

5. տեղական ինքնակառավարման մարմնի 33 պաշտոնատար անձ, այդ թվում՝

- Երևանի նախկին 1 քաղաքապետ,
- Երևանի նախկին 1 փոխքաղաքապետ,
- Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարի 1 պաշտոնակատար,
- Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի 8 աշխատակից, այդ թվում՝ ստորաբաժանման 2 ղեկավար,
- Երևան քաղաքի վարչական շրջանների աշխատակազմերի 5 աշխատակից, այդ թվում՝ 2 բաժնի պետ,
- Երևանի քաղաքապետարանի «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» ՀՈԱԿ-ի 2 տնօրեն, տնօրենի 1 տեղակալ,
- Երևան քաղաքի «Բնակչության հատուկ սպասարկում» ՀՈԱԿ-ի գերեզմանատան 2 վարիչ (Մուշական–Ջրաշեն, Նորք-Մարաշ),
- նախկին 1 մարզպետ,
- նախկին մարզպետի 1 տեղակալ,
- մարզպետի նախկին 1 խորհրդական,
- գործող և նախկին համայնքի 4 ղեկավար,
- համայնքի աշխատակազմի 5 աշխատակից, այդ թվում՝ բաժնի 1 պետ,

6. ՀՀ ՊԵԿ 5 պաշտոնատար անձ, որից՝

- ՀՀ ՊԵԿ մաքսային 4 տեսուչ,
- ՀՀ ՊԵԿ ներքին անվտանգության վարչության 1 գլխավոր մաքսային տեսուչ,

7. ՀՀ քննչական կոմիտեի 3 պաշտոնատար անձ, որից՝

- ՀՀ քննչական կոմիտեի Հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության 1 ՀԿԳ ավագ քննիչ,
- ՀՀ քննչական կոմիտեի ԵՔՔՎ Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնի 1 նախկին ավագ քննիչ,
- ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության չորրորդ կայազորային քննչական բաժնի 1 նախկին քննիչ,

8. ՀՀ ոստիկանության 36 աշխատակից, այդ թվում՝

- նախկին 1 ոստիկանապետ,
- ՀՀ ոստիկանության կազմակերպված հանցագործությունների դեմ պայքարի գլխավոր վարչության նախկին 1 պետ,
- ճանապարհային ոստիկանության պետի 1 տեղակալ ,
- ճանապարհային ոստիկանության 8 ծառայող,
- պարեկային ծառայության պետի 1 տեղակալ,
- պարեկային ծառայության 4 ծառայող,
- բաժանմունքի 1 պետ,
- ոստիկանության 9 տեսուչ,
- 3 օպերլիազոր,
- ՊՊԳՎ նախկին 4 պետ,
- ՊՊԳՎ ստորաբաժանման 1 նախկին ղեկավար,
- ՊՊԳՎ նախկին 1 հաշվապահ,
- ՊՊԳՎ 1 ծառայող,

9. ՀՀ ՊՆ և ԶՈՒ 37 պաշտոնատար անձ,

- Երևան քաղաքի թիվ 4 տարածքային ստորաբաժանման բժշկական հանձնաժողովի 1 անդամ,
- զինվորական հոսպիտալի 1 պետ, պետի 1 տեղակալ, բաժնի 2 վարիչ, 1 բժիշկ,
- զորամասի 5 հրամանատար,
- զորամասի հրամանատարի 4 տեղակալ,
- զորամասի ֆինանսական ծառայության 1 պետ,
- զորամասի կոմունալ շահագործման ծառայության 1 պետ,
- զորամասի ստորաբաժանման 8 հրամանատար,

- զորամասի ավտոմոբիլային ծառայության 1 պետ,
- զորամասի կաթսայատան 1 պետ,
- ՊՆ ստորաբաժանումների կամ զորամասերի 7 սպա,
- ռազմական ոստիկանության բաժնի 1 պետ, բաժնի 2 ծառայող:

10. ՔԿՀ 5 ծառայող, այդ թվում՝ հիմնարկի՝ օպերատիվ բաժնի պետի 1 տեղակալ

11. «Հայանտառ»ՊՈԱԿ-ի շանտառտնտեսության մասնաճյուղի 2 անտառապետ և 1 անտառապահ,

12. Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի 1 դեկան, դեկանի 1 տեղակալ և 1 դասախոս,

13. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի տնտեսական վարչության 1 պետ,

14. Եվրոպական համալսարանի Գյումրու մասնաճյուղի 1 փոխտնօրեն, Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի Սյունիքի տարածքային բաժնի 1 փորձագետ և 1 գլխավոր մասնագետ,

15. Ուսումնական հաստատության 5 աշխատակից, որից՝
- քոլեջի 1 տնօրեն,
- դպրոցի 3 տնօրեն,
- դպրոցի 1 հաշվապահ,

16. Կադաստրի կոմիտեի արխիվի բաժնի 1 պետ,

17. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության 4 աշխատակից,

18. ՀՀ բնապահպանության նախարարության 1 աշխատակից,

19. ՀՀ էկոնոմիկայի նախարարության 1 աշխատակից,

20. ՀՀ հաշվեքննիչ պալատի 1 աշխատակից,

21. Բժշկական հաստատությունների 6 աշխատակից:

Ստորև ներկայացվում է վերոնշյալ կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ մի քանի գործերով տվյալներ:

- 2003 թվականի հուլիսի 1-ից մինչև 2009 թվականի մարտի 4-ը Երևանի քաղաքապետի պաշտոնը զբաղեցնող անձը, առանց իրավական հիմքերի, որոշում է կայացրել «Ավանգարդ Մոթորս» ՍՊ ընկերությանն օտարել պետական սեփականություն հանդիսացող՝ «Երիտասարդական պալատ» պետական փակ բաժնետիրական ընկերության՝ Երևան քաղաքի Սարալանջ փողոցի 1-ին հասցեում գտնվող 31.780 քմ հողամասը: Մասնավորապես՝ 2004 թվականի հունվարի 13-ին Երևանի Սարալանջ 1 հասցեում գտնվող՝ 24.345.2 քմ մակերեսով անշարժ գույքը «Երիտասարդական պալատ» ՊՓԲ ընկերության սնանկության կառավարչի կողմից վաճառվել է «Ավանգարդ Մոթորս» ՍՊ ընկերությանը: Պայմանագրի գինը, կողմերի փոխադարձ համաձայնությամբ, որոշվել է 506 մլն դրամ: 506 մլն դրամից 90 մլն դրամը նախատեսվել է տրամադրել վերոնշյալ շենքում բնակվող՝ 24 փախստական ընտանիքներին՝ որպես տարածք տրամադրելու հատուցում:

  Հետագայում՝ 2004 թվականի հուլիսի 13-ին, նշված հատուցման գումարի չափը փոփոխվել է՝ դառնալով 95 մլն դրամ՝ արդեն որպես 30 փախստական ընտանիքներին տարածք տրամադրելու հատուցում: Պայմանագրի 7-րդ կետով սահմանվել է, որ անշարժ գույքի սեփականության իրավունքը կհամարվի փոխանցված գնորդին՝ պայմանագրի՝ պետական գրանցում ստանալու պահից (պայմանագիրը պետական գրանցում է ստացել 2004 թվականի հունվարի 27-ին):

Երևանի նախկին քաղաքապետը, 2004 թվականի հունվարի 16-ին՝ Կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1746-Ն նոր որոշման ուժի մեջ մտնելուց երեք օր առաջ (19.01.2004 թվականին ուժի մեջ մտած որոշման համաձայն՝ վերոնշյալ հողամասի կադաստրային արժեքը նախկինում

գործող 62 մլն 973 հազար 405 դրամից դառնում էր 805 մլն 623 հազար դրամ), պայմանագրի պետական գրանցման բացակայության, անշարժ գույքի սեփականության իրավունքը գնորդին փոխանցված և դրանից բխող այլ իրավունքներ, այդ թվում՝ գույքի գնման նախապատվության իրավունքն առաջացած չլինելու պայմաններում, առանց համապատասխան իրավական հիմքերի՝ կայացրել է ««Ավանգարդ Մոթորս» ՍՊԸ-ին պատկանող շինությունների զբաղեցրած հողատարածքն օտարելու մասին» թիվ 35-Ա որոշումը: Այդ որոշմամբ՝ Երևանի նախկին քաղաքապետը «Ավանգարդ Մոթորս» ՍՊԸ-ին վերապահել է վերոնշյալ հասցեում գտնվող 31.780 քմ մակերեսով հողամասի գնման նախապատվության իրավունք՝ վաճառքի գինը սահմանելով տվյալ ժամանակահատվածում գործող կադաստրային արժեքի չափով:

Այնուհետև, Երևանի քաղաքապետի՝ 2004 թվականի հունվարի 16-ի թիվ 35-Ա որոշման հիման վրա՝ 2004 թվականի հունվարի 17-ին, Երևան քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի և «Ավանգարդ Մոթորս» ՍՊ ընկերության տնօրենի միջև կնքվել է հողամասի ուղղակի վաճառքի մասին պայմանագիր: Պայմանագրի համաձայն՝ Երևան քաղաքի Սարալանջ փողոցի 1-ին հասցեում գտնվող 31.780 քմ մակերեսով հողամասը 62 մլն 973 հազար 405 դրամով օտարվել է «Ավանգարդ Մոթորս» ՍՊ ընկերությանը:

Այսպիսով, Երևանի նախկին քաղաքապետը, անձնական շահագրգռվածությունից ելնելով, խախտելով օրենսդրական մի շարք պահանջները, 805 մլն 623 հազար դրամ կադաստրային արժեքով հողամասը 62 մլն 973 հազար 405 դրամով օտարել է «Ավանգարդ Մոթորս» ՍՊ ընկերությանը՝ Երևան համայնքին պատճառելով առանձնապես խոշոր չափերով գույքային վնաս:

Դատախազի՝ 2023 թվականի օգոստոսի 30-ի որոշմամբ՝ Երևանի նախկին քաղաքապետի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ 18.04.2003 թվականին ընդունված Քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով:

Քրեական վարույթի նյութերը մեղադրական եզրակացությամբ հանձնվել են Հակակոռուպցիոն դատարան:

- Հակակոռուպցիոն կոմիտեում քննվող քրեական վարույթով հսկող դատախազը որոշում է կայացրել քրեական հետապնդում հարուցել **ՀՀ նախկին ոստիկանապետի նկատմամբ՝** նախկին Քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 308-րդ հոդվածի 2-րդ մասով, 256-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով, 44-256-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով և 445-րդ հոդվածի 1-ին մասով: Վարույթով պարզվել է, որ ՀՀ նախկին ոստիկանապետ, ով 1997-2010 թվականներին զբաղեցրել է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ռազմական ոստիկանության պետի պաշտոնը, կատարել է իրեն վստահված առանձնապես խոշոր չափերով գույքի վատնում: Մասնավորապես՝ իր հետ փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող անձի՝ ծառայության չներկայանալու և ծառայողական պարտականությունները չկատարելու պայմաններում, ենթակա աշխատակիցների միջոցով կազմակերպել էպետական միջոցներից աշխատավարձ և դրան հավասարեցված միջոցներ վճարում վերոնշյալ անձին: այդպիսով,. պաշտոնեական դիրքն օգտագործելով, վատնման եղանակով հափշտակել է առանձնապես խոշոր չափերի՝ 17.275.721 դրամ գումար:
- Բացի այդ, նույն անձը, 2011-2018 թվականներին զբաղեցնելով Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի պաշտոնը, անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով, պաշտոնեական դիրքն օգտագործել է ծառայության շահերին հակառակ:

Մասնավորապես՝ «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքով սահմանված կարգի խախտմամբ, իր հետ փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող անձին Ոստիկանությունում նշանակել է պաշտոնի: Լավատեղյակ լինելով վերջինիս կատարած կարգապահական խախտումների՝ անհարգելի պատճառներով ծառայության չներկայանալու և իր ծառայողական պարտականությունները պատշաճ չկատարելու մասին, դիտավորությամբ չի ձեռնարկել օրենքով սահմանված կանխարգելիչ միջոցառումներ: Արդյունքում՝ ՀՀ ոստիկանության պետի հետ փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող անձին վճարվել են աշխատավարձ և աշխատավարձին հավասարեցված միջոցներ. ՀՀ ոստիկանությանը հատկացված միջոցներից որպես աշխատավարձ, պարգևատրումներ, արձակուրդային գումարներ՝ վճարվել է առանձնապես խոշոր չափի՝ 19.422.319 դրամ:

Բացի այդ, նույն անձը 2012-2019 թվականներին, որպես ՀՀ ոստիկանության պետ, ի պաշտոնե զբաղեցնելով Հայաստանի «Դինամո» մարզական հասարակական կազմակերպության նախագահի պաշտոնը, հանդիսանալով այդ կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարը, այլ անձանց հետ խմբով կազմել և օգտագործել է կազմակերպության գույքն օտարելու իրավունք վերապահող պաշտոնական կեղծ փաստաթուղթ, պաշտոնեական դիրքի օգտագործմամբ փորձել է վատնել Կազմակերպության՝ առանձնապես խոշոր չափերի՝ 857.891.044 դրամ արժողությամբ գույքը, սակայն իր կամքից անկախ հանգամանքներով՝ հափշտակությունն ավարտին չի հասցվել:

Բացի այդ, նույն անձը, 1982-2018 թվականների ընթացքում զբաղեցնելով ներքին գործերի նախարարությունում տարբեր, այդ թվում՝ Սևանի, Արմավիրի բաժինների պետի, ՀՀ ներքին գործերի նախարարի տեղակալի, ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության պետի, ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալի, ապա՝ ՀՀ ոստիկանության պետի պաշտոնները, 2008-2018 թվականների ընթացքում տիրապետել, օգտագործել, տնօրինել է այդ տարիների ընթացքում իր կատարած հանցագործությունների արդյունքում ստացված գույքը: Գույքի իրական բնույթը, ծագման աղբյուրը, իրավունքներն ու պատկանելիությունը թաքցնելու և խեղաթյուրելու նպատակով՝ կատարել է հանցավոր ճանապարհով ստացված 1.996.019.354 դրամի փողերի լվացում:

Քրեական վարույթի նյութերը մեղադրական եզրակացությամբ հանձնվել են Հակակոռուպցիոն դատարան:

- Հակակոռուպցիոն կոմիտեում քննվող քրեական վարույթով հսկող դատախազի որոշմամբ Ռ.Վ.-ի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում այն արարքների կատարման համար, որ նա, լինելով պաշտոնատար անձ, ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության չորրորդ կայազորային քննչական բաժնի քննիչ, անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով իր պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ է օգտագործել, որն էական վնաս է պատճառել պետության օրինական շահերին, ինչպես նաև կեղծ տեղեկություն է մտցրել պաշտոնական շրջանառության ենթակա փաստաթղթում:

  Այսպես, Ռ.Վ.-ն, անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով, իր պաշտոնեական դիրքն օգտագործել է ծառայության շահերին հակառակ: Մասնավորապես՝իր վարույթում գտնվող քրեական վարույթով մեղադրյալի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցված, իսկ խափանման միջոցը վերացված չլինելու պայմաններում, կազմել և քննչական բաժնի պետի տեղակալի ստորագրմանն է ներկայացրել պաշտոնական շրջանառության ենթակա փաստաթուղթ՝ 2022 թվականի մայիսի 12-ի թվագրմամբ ՀՀ ՆԳՆ ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության պետին հասցեագրված գրություն՝

դրանում կեղծ տեղեկություններ մտցնելով այն մասին, որ մեղադրյալի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է, իսկ կիրառված խափանման միջոցը՝ վերացվել: Այնուհետև այդ փաստաթուղթը դրել է պաշտոնական շրջանառության մեջ՝ ուղարկելով հասցեատիրոջը: Ի կատարումն նշված գրության պահանջի՝ մեղադրյալի վերաբերյալ համապատասխան տեղեկությունները 2022 թվականի մայիսի 12-ին՝ ժամը 14:56-ին, մուտքագրվել են Սահմանային էլեկտրոնային կատարվարման տեղեկատվական (ՍԷԿՏ) համակարգ, որից հետո՝ նույն օրը՝ 15:08-ին, նա առանց խոչընդոտների հատել է ՀՀ պետական սահմանը: Ռ.Վ.-ի նկատմամբ քրեական հետապնդում է հարուցվել նախկին Քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով և գործող Քրեական օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասով:

Քրեական վարույթը՝ հաստատված մեղադրական եզրակացությամբ, 2023 թվականի օգոստոսի 19-ին հանձնվել է իրավասու դատարան:

- Հակակոռուպցիոն կոմիտեում քննվող քրեական վարույթով Երևանի քաղաքապետի նախկին տեղակալը, անձնական շահագրգռվածությունից և խմբային շահերից ելնելով, չարաշահել է իր պաշտոնեական լիազորությունները, այն է՝ «ՍԱՆԻԹԵՔ (Sanitek s.a.r.l.)» ընկերության, (ՍԱՆԻԹԵՔ Ինթերնեյշնլ) ՍՊ ու «ՍԱՆԻԹԵՔ (Sanitek s.a.r.l.)» կոնսորցիումի կողմից ներկայացված մասնակցության հայտերը հրավերով ներկայացվող որակավորման չափանիշներին չբավարարելու պայմաններում գնահատել է համապատասխան ու բավարար: Արդյունքում, վերանշյալ ընկերություններին հաղթող ճանաչելով, էական վնաս է պատճառվել Երևան համայնքի և նույն համայնքի բնակիչների օրինական շահերին: Մասնավորապես՝ «ՍԱՆԻԹԵՔ (Sanitek s.a.r.l.)» ընկերությունը, (ՍԱՆԻԹԵՔ Ինթերնեյշնլ) ՍՊԸ-ն ու «ՍԱՆԻԹԵՔ (Sanitek s.a.r.l.)» կոնսորցիումը, տեխնիկական, ֆինանսական, մասնագիտական, աշխատանքային համապատասխան ռեսուրսներ չունենալու պատճառով, ի վիճակի չեն եղել պատշաճ մատուցել պայմանագրերով նախատեսված ծառայությունները, սակայն թերի, ոչ պատշաճ, իսկ որոշ դեպքերում նաև չմատուցված ծառայությունների դիմաց Երևանի քաղաքապետարանի կողմից վճարվել է առանձնապես խոշոր չափերի՝ 3.002.486.270 դրամ ավել գումար:

Բացի այդ, Երևանի քաղաքապետի նախկին տեղակալը մասնակից ընկերությունների հայտերը բավարար գնահատելու համար ընկերության իրավասու պաշտոնատար անձանցից այլ առավելության տեսքով ստացել է կաշառք (իր հոր անվամբ գրանցված անշարժ գույքերը երկարաժամկետ և մինչ այդ պահը տրված վարձակալության վարձավճարների չափն անհամեմատ գերազանցող՝ ընդհանուր 436.472.280 դրամ վարձավճարով վարձակալության էհանձնել ընկերությանը):

Երևանի քաղաքապետի նախկին տեղակալի նկատմամբ հանրային քրեական հետապնդում է հարուցվել նախկին Քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով և 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով:

Քրեական վարույթը՝ մեղադրական եզրակացությամբ, հանձնվել է Հակակոռուպցիոն դատարան:

- Հակակոռուպցիոն կոմիտեում քննվող քրեական վարույթով ՀՀ բնապահպանության նախկին նախարարի նկատմամբ քրեական հետապնդում է հարուցվել նախկին Քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով, 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 308-րդ հոդվածի 2-րդ մասով: Վարույթով հիմնավորվել է, որ վերոնշյալ պաշտոնատար անձն իր լիազորությունների շրջանակում կաշառք տվողի օգտին որոշակի գործողություններ կատարելու, պաշտոնեական դիրքն օգտագործելով այդպիսի գործողություններ կատարելուն նպաստելու համար,

մտերիմ հարաբերությունների մեջ գտնվող անձանց օժանդակությամբ ստացել է առանձնապես խոշոր չափերով՝ 14.000.000 ԱՄՆ դոլար կաշառք: Այնուհետև, մեկ այլ անձի օժանդակությամբ, օրինականացրել է հանցավոր ճանապարհով ստացված առանձնապես խոշոր չափերով գույքը (փողերի լվացում), ինչպես նաև չարաշահել է իր պաշտոնեական լիազորությունները:
Քրեական վարույթը մեղադրական եզրակացությամբ հանձնվել է Հակակոռուպցիոն դատարան:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ քննչական կոմիտեում քննված քրեական վարույթներով կոռուպցիոն հանցագործություններ կատարելու համար դատի են տրվել պաշտոնատար անձինք, ովքեր ըստ բնագավառների և զբաղեցրած պաշտոնների հանդիսացել են՝

1. ՀՀ պաշտպանության նախկին 1 նախարար,

2. ՀՀ կրթության և գիտության նախկին 1 նախարար,

3. տեղական ինքնակառավարման մարմնի պաշտոնատար անձինք, այդ թվում՝

- Երևանի նախկին 1 քաղաքապետ,
- Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության նախկին պետ,
- Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի նախկին տեղակալ,
- Մարզպետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության տարածքային գործակալության նախկին պետ,
- համայնքի նախկին 4 ղեկավար,
- համայնքի աշխատակազմի 6 աշխատակից, այդ թվում՝ բաժնի 3 պետ,

4. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի նախկին ռեկտոր,

5. ՀՀ պաշտպանության նախարարության 3 աշխատակից, այդ թվում՝

- Նախկին գլխավոր շտաբի պետի առաջին տեղակալ,
- Սպառազինության գլխավոր վարչության պետ,
- Իրավաբանական վարչության պետ,
- Սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմի Գավառի սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմի Գավառի սոցիալական ապահովության տարածքային բաժնի նախկին պետ,
- «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության նախկին տնօրեն:

Ստորև ներկայացվում է վերոնշյալ կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ մի քանի գործերով տվյալներ:

Մասնավորապես՝

- Քննչական կոմիտեում քննված քրեական վարույթով հանրային քրեական հետապնդում է հարուցվել ՀՀ կրթության և գիտության նախկին նախարարի նկատմամբ, ով հանդիսացել է նաև հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախկին նախագահը և հիմնադրամի ռեկտորի, «Հերացի» արհեստակցական կազմակերպության նախագահի և երկու այլ անձանց հետ հանցակցությամբ կատարել է պաշտոնեական դիրքի չարաշահում, առանձնապես խոշոր չափերով գույքի վատնում, ինչպես նաև փողերի լվացում: Քրեական վարույթը, մեղադրական եզրակացությամբ հանձնվել է իրավասու դատարան: Հաշվի առնելով, որ վերոնշյալ քրեական գործով (վարույթով) հիմնավորվել է, որ մեղադրյալների հանցավոր գործողությունների արդյունքում պետությանը պատճառվել է **905.194.706** դրամի գույքային վնաս, նախնական դատալսումների ընթացքում դատախազի կողմից ներկայացվել է գույքային հայց՝ մեղադրյալներից հօգուտ Հայաստանի Հանրապետության պատճառված նյութական վնասը բռնագանձելու վերաբերյալ:

Մեղադրյալի կողմից պատճառված վնասն ամբողջությամբ վերականգնվել է:

- Քննչական կոմիտեում քննված քրեական վարույթով հանրային քրեական հետապնդում է հարուցվել Կոտայքի մարզի Աբովյան համայնքի նախկին ղեկավարի նկատմամբ, ով այլ անձանց հետ հանցակցությամբ պաշտոնեական լիազորությունները չարաշահել, պաշտոնեական կեղծիք և փողերի լվացում է կատարել (նախկին Քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մաս, 308-րդ հոդվածի 2-րդ մաս (6 դրվագ), գործող Քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետ, 296-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետ (2 դրվագ), 445-րդ հոդվածի 1-ին մաս (2 դրվագ)): Աբովյան համայնքի նախկին ղեկավարի և ևս 12 անձանց վերաբերյալ քրեական վարույթը՝ մեղադրական եզրակացությամբ, հանձնվել է իրավասու դատարան:
- Հաշվի առնելով, որ վերոնշյալ քրեական գործով (վարույթով) հիմնավորվել է, որ մեղադրյալներից 4-ի հանցավոր գործողությունների արդյունքում պետությանն անմիջականորեն պատճառվել է **62.909.986** դրամի գույքային վնաս՝ նախնական դատալսումների ընթացքում դատախազի կողմից ներկայացվել է գույքային հայց՝ մեղադրյալներից հօգուտ Հայաստանի Հանրապետության պատճառված նյութական վնասը բռնագանձելու վերաբերյալ:

Քննչական կոմիտեում քննված քրեական վարույթով հանրային քրեական հետապնդում է հարուցվել Երևանի նախկին քաղաքապետի նկատմամբ՝ պաշտոնեական դիրքի օգտագործմամբ առանձնապես խոշոր չափերի վստահված գույքը վատնելու, պաշտոնեական լիազորություններն անցնելու, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության նախկին պետի նկատմամբ՝ պաշտոնեական լիազորությունները չարաշահելու և պաշտոնեական կեղծիք կատարելու, Երևան քաղաքի Արաբկիր համայնքի նախկին թաղապետի նկատմամբ՝ փողերի լվացում կատարելու, իսկ թաղապետի սանիկի նկատմամբ՝ փողերի լվացմանն օժանդակելու համար: Քրեական վարույթը՝ մեղադրական եզրակացությամբ, հանձնվել է իրավասու դատարան:

- Քննչական կոմիտեում քննված քրեական վարույթով հանրային քրեական հետապնդում է հարուցվել Լոռու մարզի Ստեփանավան համայնքի նախկին ղեկավարի նկատմամբ այն բանի համար, որ նա Ստեփանավան համայնքի նախկին պաշտոնատար անձանց, իր որդիների և մտերիմների հետ հանցակցությամբ չարաշահել է պաշտոնեական լիազորությունները, կատարել է պաշտոնեական կեղծիք, կատարել է փողերի լվացում (նախկին Քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մաս, 308-րդ հոդվածի 1-ին մաս (11 դրվագ), 190-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետ (2 դրվագ), 190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետեր, 314-րդ հոդվածի 1-ին մաս (6 դրվագ)): Քրեական վարույթը՝ մեղադրական եզրակացությամբ, հանձնվել է իրավասու դատարան:

Հաշվետու ժամանակահատվածում Ազգային անվտանգության ծառայության քննչական գլխավոր վարչությունում քննված քրեական վարույթներով ևս կոռուպցիոն հանցագործություններ կատարելու համար դատի են տրվել մի շարք նախկին և ներկա պաշտոնատար անձինք:

Մասնավորապես՝

- Ազգային անվտանգության ծառայության քննչական գլխավոր վարչությունում քննված քրեական վարույթով պարզվել է, որ Գ.Խ.-ն, 2008-2016 թվականներին զբաղեցնելով Մաքսային պետական կոմիտեի նախագահի պաշտոնակատարի, նույն կոմիտեի նախագահի, Պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նախագահի և ֆինանսների նախարարի պաշտոնները, հանձնարարել է Կոմիտեի, այնուհետև՝ Ֆինանսների նախարարության պաշտոնատար անձանց համագործակցել իր որդիներ Ա.Խ.-ի և Գ.Խ.-ի, ազգական Ա.Խ.-ի կողմից հիմնադրված ՍՊ ընկերության հետ, վերացնել գնման ընթացակարգում առաջացող խոչընդոտներն ու կիրառել առավել բարենպաստ գնման ընթացակարգեր:

Օգտվելով Գ.Խ.-ի կողմից ապօրինի կերպով ստեղծված բարենպաստ պայմաններից՝ ՍՊ ընկերությունը 2008-2020 թվականների ընթացքում Կոմիտեի հետ կնքել է 4 մլրդ 426 մլն 435 հազար դրամ արժեքով ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման պայմանագրեր:

Բացի այդ, Գ.Խ.-ն, իրենից ծառայողական կախվածության մեջ գտնվող և այլ անձանց մասնակցությամբ, ապահովել է, որ իր որդիների ու եղբորորդու ընկերության հետ կնքվի 19 ծրագրային մոդուլի ձեռքբերման պայմանագիր՝ իրական արժեքից էապես բարձր՝ 4 մլրդ 283 մլն 580 հազար դրամով (նշված ընկերության հետ պայմանագիր կնքելիս՝ գնում կատարելու վերաբերյալ մրցույթ չի անցկացվել, ընտրվել է առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգը, հրավերն ուղարկվել է միայն իր որդիների ու եղբորորդու ընկերությանը):

Թեև պայմանագրով նախատեսված աշխատանքները կապալառուի և ենթակապալառուի կողմից փաստացի կատարվել են 2 մլրդ 777 մլն 410 դրամով, սակայն այդ աշխատանքների դիմաց պետական միջոցներից ընկերությանը փոխանցվել է 4 մլրդ 283 մլն 580 հազար դրամ, որի արդյունքում յուրացման եղանակով հափշտակվել է 1 մլրդ 506 մլն 169 հազար 583 դրամ:

Վերոնշյալ արարքների արդյունքում ստացված առանձնապես խոշոր չափերով գույքը, դրա օգտագործումից ստացված եկամուտները բանկային փոխանցումների միջոցով ուղղորդվել են Գ.Խ.-ի որդիներ Ա.Խ.-ի, Գ.Խ.-ի և եղբորորդի Ա.Խ.-ի հետ փոխկապակցված կազմակերպությունների բանկային հաշիվներին, միախառնվել են այլ միջոցների հետ և տնօրինվել նրանց կողմից:

Վերոնշյալ եղանակով 2011-2018 թվականների ընթացքում նրանց մասնակցությամբ գործող մեկ այլ ՍՊ ընկերությանը փոխանցվել է 39 մլրդ 723 մլն 323 հազար դրամին համարժեք գումար, որից որպես փոխառություն՝ 32 մլրդ 332 մլն 943 հազար դրամին համարժեք գումար: Ստացված, ինչպես նաև կանխիկ մուտքագրված և հեռահաղորդակցության ոլորտում գործունեություն իրականացնող ՍՊ ընկերության ֆինանսական միջոցների հետ միախառնված գումարի մի մասը՝ 8 մլն 589 հազար 900 ԱՄՆ դոլարը Գ.Խ.-ի որդիների և եղբորորդու պահանջով, փոխառության վերադարձի հիմնավորմամբ, ընկերության տնօրենի անվամբ կանխիկացվել, ապա մուտքագրվել է Բրիտանական Վիրջինյան կղզիներում գրանցված ընկերության հաշվեհամարին:

Բացի այդ, Գ.Խ.-ի որդիները, տեղյակ լինելով «Մուլտի գրուպ կոնցեռն» ՍՊ ընկերության գլխավոր տնօրեն Ս.Ա.-ի կողմից ՀՀ ՊԵԿ նախագահի պաշտոնը զբաղեցրած՝ իրենց հորն առանձնապես խոշոր չափերով՝ 22 մլն 185 հազար ԱՄՆ դոլարի և 206 հազար 500 եվրոյի կաշառք տալու համաձայնության մասին, հանդիպել են Ս.Ա.-ին և վերջինիս հետ քննարկել հանցագործության առարկան փոխանցելու տարբերակները:

«Մուլտի գրուպ կոնցեռն» ՍՊ ընկերության գլխավոր տնօրեն Ս.Ա.-ն 22 մլն 185 հազար ԱՄՆ դոլարը և 206 հազար 500 եվրոն փոխանցել է Գ.Խ.-ի որդիների մատնանշած և նրանց հետ փոխկապակցված «VETO GROUP», «VETO TRUST» և «WEST COAST ESCROW» ոչ ռեզիդենտ կազմակերպությունների հաշվեհամարներին: Գործարքի հանցավոր բնույթը թաքցնելու և քողարկելու համար Ս.Ա.-ի և Գ.Խ.-ի որդիների միջև կնքվել են փոխառության պայմանագրեր՝ 7 մլն, 10 մլն և 13 մլն 400 հազար ԱՄՆ դոլարի վերաբերյալ (Ս.Ա.-ին որևէ գումար տարիներ շարունակ և առ այսօր չի վերադարձվել):

Բացի այդ, Գ.Խ.-ի որդիները 2011-2016 թվականների ընթացքում լվացել են հանցավոր ճանապարհով ստացված 1 մլրդ 555 մլն դրամ, 97 մլն 203 հազար ԱՄՆ դոլար, 2 մլն 65 հազար եվրո:

Մասնավորապես՝ Գ.Խ.-ի որդիներ Ա.Խ.-ն, Գ.Խ.-ն և եղբորորդի Ա.Խ.-ն մասնակցել ու ղեկավարել են Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող շուրջ 48 ընկերություն և, օգտվելով Գ.Խ.-ի զբաղեցրած պաշտոններով պայմանավորված հովանավորչությունից, 2011-2016 թվականների ընթացքում թաքցրել են վերոնշյալ կազմակերպությունների գործունեության իրական ծավալները:

Արդյունքում առաջացել են չհայտարարագրված և հարկային մարմնի հսկողությունից դուրս մնացած եկամուտներ՝ 1 մլրդ 555 մլն դրամ, 97 մլն 203 հազար ԱՄՆ դոլար, 2 մլն 65 հազար եվրո: Հանցավոր ճանապարհով ձեռք բերված գումարները 2011-2016 թվականների ընթացքում տրամադրել են բանկերից մեկում որպես վարորդ աշխատող Ա.Պ.-ին և հանձնարարել վարձատրության դիմաց կանխիկ մուտքագրել իրենց կողմից տրված բանկային հաշվեհամարներին:

Ա.Պ.-ն իրեն փոխանցված կանխիկ գումարները մուտքագրել, ապա բանկային գործարքով փոխանցել է փաստացի Գ.Խ.-ի որդիների և եղբորորդու հետ փոխկապակցված՝ արտերկրում, այդ թվում՝ օֆշորային գոտիներում գրանցված, ՀՀ-ում որևէ տնտեսական գործունեություն չիրականացնող հինգ ընկերությունների հաշվեհամարներին, միախառնել այլ միջոցների հետ: Գումարները փոխանցումների և կանխիկացումների միջոցով տնօրինվել են Գ.Խ.-ի որդիների և նրանց հետ փոխկապակցված անձանց կողմից:

Բացի այդ, Գ.Խ.-ի եղբորորդի Ա.Խ.-ն, հանդիսանալով «Մեգա Ֆուդ» ՍՊ ընկերության միակ հիմնադիրը և տնօրենը, 2011, 2012, 2014, 2015 և 2016 թվականներին հարկային մարմիններ ներկայացրած փաստաթղթերում մտցրել է ակնհայտ կեղծ տվյալներ և չի վճարել 369 մլն 439 հազար դրամի լրացուցիչ հարկային պարտավորություններ:

Բացի այդ, Ա.Խ.-ն, հանդիսանալով Գ.Խ.-ի որդիների կողմից հիմնադրված «Ապեյրոն» ՍՊ ընկերության տնօրենը, 2011-2016 թվականների ընթացքում հարկային մարմիններ ներկայացված փաստաթղթերում մտցրել է ակնհայտ կեղծ տվյալներ և չի վճարել 424 մլն 555 հազար դրամի լրացուցիչ հարկային պարտավորություններ:

Դատախազը հանրային քրեական հետապնդումներ է հարուցել Գ.Խ.-ի որդի Ա.Խ.-ի նկատմամբ՝ նախկին Քրեական օրենսգրքի 38-308-րդ հոդվածի 2-րդ մասով, 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (երեք դրվագ), 38-311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով, Գ.Խ.-ի որդի Գ.Խ.-ի նկատմամբ՝ նախկին Քրեական օրենսգրքի 38-308-րդ հոդվածի 2-րդ մասով, 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (երկու դրվագ), 38-311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով (վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրված կալանքը, հայտարարվել է հետախուզում), Գ.Խ.-ի եղբորորդի Ա.Խ.-ի նկատմամբ՝ նախկին Քրեական օրենսգրքի 38-308-րդ հոդվածի 2-րդ մասով, 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (երկու դրվագ) և 205-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, «Մուլտի գրուպ կոնցեռն»-ի գլխավոր տնօրեն Ս.Ա.-ի նկատմամբ՝ նախկին Քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 38-190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, վարորդ Ա.Պ.-ի նկատմամբ՝ 38-190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

Դատախազը 2023 թվականի դեկտեմբերի 12-ին հաստատել է ՊԵԿ նախկին նախագահ Գ.Խ.-ի որդի Ա.Խ.-ի և եղբորորդու, «Մուլտի գրուպ կոնցեռն»-ի գլխավոր տնօրեն Ս.Ա.-ի և բանկերից մեկի վարորդ Ա.Պ.-ի վերաբերյալ մեղադրական եզրակացությունն ու վարույթի նյութերի հետ հանձնել Հակակոռուպցիոն դատարան:

2023 թվականին շարունակվել է ՀՀ դատախազության արդյունավետ համագործակցությունը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի, Պետական վերահսկողական ծառայության, Հաշվեքննիչ պալատի և այլ պետական մարմինների հետ: Արդյունքում՝ բացահայտվել են մի շարք կոռուպցիոն հանցագործություններ:

Մասնավորապես՝

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից պաշտոնատար անձանց վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազություն է ներկայացվել 18 հաղորդում, որից 10-ը 2023 թվականի ընթացքում:

Վերոնշյալ 18 հաղորդումներից 14-ի հիման վրա հարուցվել (նախաձեռնվել) են քրեական գործեր (վարույթներ), որոնցից 6-ը կարճվել է (1-ը՝ նախկին Քրեական օրենսգրքի 310.1-րդ հոդվածի 1-ին մասով և 314.3-րդ հոդվածի 2-րդ մասով, 1-ը՝ 314.2-րդ հոդվածի 1-ին մասով և 314.3-րդ հոդվածի 1-ին մասով, 1-ը՝ 325-րդ հոդվածի 1-ին մասով, 1-ը՝ 256-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով, 1-ը՝ գործող Քրեական օրենսգրքի 444-րդ հոդվածի 1-ին մասով, 1-ը՝ գործող Քրեական օրենսգրքի 457-րդ հոդվածի 1-ին մասով): 3-ը՝(2-ը՝ նախկին Քրեական օրենսգրքի 314.2-րդ հոդվածի 1-ին մասով, 1-ը՝ 314.3-րդ հոդվածի 2-րդ մասով) մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են դատարան (2-ով կայացվել է մեղադրական դատավճիռ): Մյուս քրեական վարույթներով նախաքննությունը շարունակվում է:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ներկայացված 1 հաղորդման կապակցությամբ որոշում է կայացվել նախկին Քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով քրեական գործ հարուցելը մերժելու մասին: 3 հաղորդում՝ դրանցում տեղ գտած տեղեկությունները «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով սահմանված կարգով ստուգելու նպատակով, ուղարկվել են Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական վարչություն:

2023 թվականի ընթացքում Գլխավոր դատախազությունում ստացվել են Պետական վերահսկողական ծառայության կողմից իրականացված վերահսկողական գործառույթների արդյունքներով կազմված մի շարք հաղորդումներ, որոնցով նախաձեռնվել է շուրջ 50 քրեական վարույթ: Դրանցից 38-ը նախաձեռնվել է Հակակոռուպցիոն կոմիտեում (2022 թվականին՝ 22):

Նախաձեռնված և քննվող վարույթները, ի թիվս այլնի, վերաբերում են Կառավարության որոշմամբ հաստատված ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների և հատապտուղների հիմնման համար պետական աջակցության ծրագրի արդյունավետության, Ոստիկանությունում, Վ.Բրյուսովի անվան պետական համալսարան հիմնադրամում և «Հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ում կատարված ուսումնասիրությունների ընթացքում հայտնաբերված առերևույթ հանցագործությունների հատկանիշներ պարունակող խախտումներին:

Հաշվեքննիչ պալատի կողմից Գլխավոր դատախազություն ուղարկված՝ առերևույթ հանցագործության հատկանիշներ պարունակող հաղորդումներով, ինչպես նաև Գլխավոր դատախազության պահանջով Հաշվեքննիչ պալատի կողմից տրամադրված նյութերով՝ 2023 թվականի ընթացքում նախաձեռնվել են մի շարք քրեական վարույթներ: Դրանք հիմնականում վերաբերել են Տարածքային կառավարման և ենթակառուցվածքներին նախարարության ջրային կոմիտեում կատարված հաշվեքննությանը:

Արձանագրված խախտումների կապակցությամբ՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից 2023 թվականի հոկտեմբերի 4-ին գրություն է ուղարկվել ՀՀ վարչապետի աշխատակազմ:

Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունում ուսումնասիրվել է Հաշվեքննիչ պալատի կողմից «Դպրոցների սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացման վարկային և դրամաշնորհային ծրագրերի» հաշվեքննության արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացությունը:

Ծրագիրն իրականացվել է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից՝ Ասիական զարգացման բանկի աջակցությամբ:

Հաշվեքննության եզրակացությամբ՝ խախտումներ են հայտնաբերվել նախագծերի մշակման և հեղինակային հսկողության ծառայություններ մատուցելու համար 2017-2019 թվականների բոլոր պայմանագրերի կնքման և կատարման գործընթացում:

Հաշվեքննության ուսումնասիրության ընթացքում պարզվել է, որ 300 փորձագետներ պայմանագրերը կնքելու պահին և դրանց կատարման ընթացքում համապատասխան ընկերությունների աշխատողներ չեն եղել և Տարածքային զարգացման հիմնադրամին ներկայացրել են կեղծ տեղեկություններ:

Իսկ Հիմնադրամի պաշտոնատար անձինք, չստուգելով ընկերությունների կողմից ներկայացված տեղեկությունների արժանահավատությունը, այդ աշխատակիցների համար ընկերություններին վճարել են ընդհանուր 125 մլն 872 հազար 104 դրամ:

Հաշվեքննության եզրակացությամբ խախտում է արձանագրվել նաև տեխնիկական հսկողության պայմանագրերի կնքման և կատարման ընթացքում. փաստացի ծառայություններ չմատուցած որոշ փորձագետներ Հիմնադրամի կողմից ստացել են 10 մլն 809 հազար 130 դրամ: Իսկ Հիմնադրամի պաշտոնատար անձինք, պաշտոնեական դիրքն օգտագործելով, միևնույն ծառայությունը մատուցելու նպատակով համապատասխան գործունեությամբ զբաղվելու լիցենզիա չունեցող ֆիզիկական անձանց հետ կնքել են պայմանագրեր և այդ եղանակով վատնելու միջոցով հափշտակել են իրենց վստահված՝ առանձնապես խոշոր չափերի հասնող 37 մլն 284 հազար 300 դրամը:

Ընդհանուր առմամբ, տարբեր դրվագներով պատճառված վնասը կազմել է 173 մլն 965 հազար 534 դրամ:

Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության կողմից ներկայացված հանցանքի մասին հաղորդման հիման վրա՝ Հակակոռուպցիոն կոմիտեում 2023 թվականի հունվարի 27-ին նախաձեռնվել է քրեական վարույթ նախկին Քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 308-րդ հոդվածի 2-րդ մասով (պաշտոնատար անձանց կողմից իրենց պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելը կամ ծառայողական պարտականությունները չկատարելը, որն առաջացրել է ծանր հետևանք 314-րդ հոդվածի 1-ին մասով:

2023 թվականի ընթացքում ՀՀ դատախազության ներկայացուցիչները մասնակցել են կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում կազմակերպված մի շարք համաժողովների, սեմինարների, վերապատրաստման դասընթացների: Մասնավորապես, Հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետ Էդգար Արսենյանը դեկտեմբերի 11-15-ը ԱՄՆ Ջորջիա նահանգի Ատլանտա քաղաքում մասնակցել է ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիայի մասնակից պետությունների համաժողովին: Էդգար Արսենյանն իր ելույթում անդրադարձել է Հայաստանում հակակոռուպցիոն ոլորտում իրականացված ինստիտուցիոնալ բարեփոխումներին, կոռուպցիայի կանխարգելմանն ու կոռուպցիայի դեմ ինստիտուցիոնալ պայքարի ուղղություններին:

6

ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր դատախազությունը, պետական և համայնքային շահերի պաշտպանության հայց հարուցելու բացառիկ լիազորության շրջանակում, 2023 թվականին շարունակել է ոլորտի ուսումնասիրությունը: Հաշվետու ժամանակահատվածում պետական շահերի պաշտպանության հարցադրումներով կատարել **383** ուսումնասիրություն (2022 թվականին՝ 212), հայտնաբերել՝ 447 իրավախախտում (2022 թվականին՝ 428):

Ուսումնասիրություններն ընդգրկել են պետական և համայնքային գույքի պահպանության, մասնավորեցման, սոցիալական ապահովության, բնապահպանության, առողջապահության, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման, քաղաքաշինության, պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության ոլորտները:

Դատախազությունը, պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու և պետությանը պատճառված վնասները վերականգնելու նպատակով՝ հաշվետու տարում ներկայացրել է 21 հաղորդում և միջնորդագիր (2022 թվականին՝ 27):

Հաշվետու և նախորդ տարիներին ներկայացված հայցերով (վճիռները կայացվել են 2023 թվականին)՝ փաստացի **վերականգնվել է, նախնական գնահատմամբ, շուրջ 5 մլրդ 63 մլն 193 հազար դրամին (12 մլն 658 հազար ԱՄՆ դոլարին) համարժեք գույք:**

Մասնավորապես՝

- Վարչական դատարանի՝ 2023 թվականի սեպտեմբերի 12-ի վճռով հաստատվել է Գլխավոր դատախազության և «ԱՕԿՍ» ՍՊ ընկերության բաժնետերերի միջև կնքված հաշտության համաձայնությունը: **Արդյունքում՝ պետությանն է վերադարձվել Երևանի Աբովյան 3 հասցեում գտնվող «ԱՕԿՍ»-ի շենքը՝ 701,4 քմ մակերեսով և հողամասը՝ 453 քմ մակերեսով (շուկայական արժեքը նախնական գնահատմամբ շուրջ 5 մլրդ դրամ):** 2023 թվականի նոյեմբերի 23-ին գույքն ամրացվել է Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին:

  2022 թվականի նոյեմբերի 18-ին հարուցված հայցի հիմքում դրվել է այն հանգամանքը, որ Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության մինիստրների սովետի 1955 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 699 կարգադրությամբ՝ Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի կոմիտեի՝ «ԱՕԿՍ»-ի հաշվեկշռին հանձնվել է գույք, այդ թվում՝ Աբովյան 3 հասցեի շենքը: Հետագայում՝ 1992 թվականի հուլիսի 30-ին, ստեղծվել է «Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապի և համագործակցության հայկական ընկերություն» կազմակերպությունը, որն առանց օրինական հիմքերի՝ հանդես է եկել որպես Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի կոմիտեի իրավահաջորդ և, 2001 թվականին ներկայացնելով իր ստեղծումից շուրջ 37 տարի առաջ ընդունված վերոհիշյալ կարգադրությունը, ստացել է «ԱՕԿՍ»-ի շենքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայական:
- Հակակոռուպցիոն դատարանի՝ 2023 թվականի սեպտեմբերի 12-ի վճռով հաստատվել է Գլխավոր դատախազության՝ 2023 թվականի սեպտեմբերի 11-ին կողմի հետ կնքած հաշտության համաձայնությունը: **Արդյունքում՝ պետությանն է վերադարձվել Արարատի մարզի Արմաշ գյուղում «Երասխ-2» զորամաս հասցեում գտնվող 9000 քմ մակերեսով հատուկ նշանակության հողամասը և 993.7 քմ մակերեսով շինությունները (25 մլն 600 հազար դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով):** 2024 թվականի հունվարի 4-ին գույքն ամրացվել է Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին:
- Հակակոռուպցիոն դատարանի՝ 2023 թվականի ապրիլի 4-ի վճռով բավարարվել է Գլխավոր դատախազության հայցը.

Կոտայքի մարզի տարածքում գտնվող հատուկ պահպանվող կատեգորիայի 24 հազար 993 քմ հողամասը (արժեքը դեռևս որոշված չէ) վերադարձվել է պետությանը: 2024 թվականի փետրվարի 8-ին գույն ամրացվել է Նշված հողամասի նկատմամբ գրանցվել է Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին:

- Հակակոռուպցիոն դատարանի՝ 2023 թվականի ապրիլի 6-ի վճռով բավարարվել է Գլխավոր դատախազության հերթական հայցը. **Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի Արտավազ գյուղի 2-րդ թաղամասի 60 հողամաս հասցեում գտնվող 37 մլն 593 հազար դրամ շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքով 20 հազար 21 քմ մակերեսով հողամասը վերադարձվել է պետությանը:** Նշված հողամասի նկատմամբ գրանցվել է Հայաստանի Հանրապետության սեփականության իրավունքը: 2024 թվականի մարտի 14-ին գույքն ամրացվել է Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին:

Հակակոռուպցիոն դատարանը 2023 թվականի ընթացքում բավարարել է հողամասերը խախտումներով օտարելու հիմքով աճուրդներն անվավեր ճանաչելու վերաբերյալ Դատախազության կողմից ներկայացված 25 հայցերից ևս 5-ը, որոնց օրինական ուժի մեջ մտնելու հետո՝ **Հայաստանի Հանրապետությանը կվերադարձվի շուրջ 75 հազար 500 քմ մակերեսով հողամաս:**

Դատախազության կողմից հաշվետու ժամանակահատվածում դատարան է ներկայացվել 342 հայց: Դրանցից 59-ը՝ քաղաքացիական դատավարության կարգով, 61-ը՝ քրեական դատավարության կարգով (բռնագանձման պահանջը՝ 8 մլրդ 169 մլն դրամ) և 222 հայց՝ վարչական դատավարության կարգով՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերի, գործողությունների դեմ:

2023 թվականի ընթացքում դատարաններում բավարարվել է 318 մլն 759 հազար դրամ հայցապահանջով 22 հայց (2022 թվականին՝ 70 մլն 389 հազար դրամ հայցապահանջով 27 հայց): Շուրջ 41 մլրդ 231 մլն 333 հազար դրամ հայցապահանջով 444 հայցի քննություն, այդ թվում՝ նախորդ տարիներից փոխանցված, ընթացքի մեջ է:

2023 թվականի ընթացքում Դատախազության ստորաբաժանումների կողմից, պետական (համայնքային) շահերի պաշտպանության գործառույթի շրջանակում իրականացված ուսումնասիրությունների արդյունքում, ներկայացվել է հանցանքի մասին 110 հաղորդում, որոնցով նախաձեռնվել են քրեական վարույթներ (2022 թվականին հարուցվել է 14 քրեական գործ (վարույթ), 27 դեպքերով ուսումնասիրությունների արդյունքներն ուղարկվել են՝ 01.07.1998 թվականին ընդունված Քրեական դատավարության օրենսգրքի կարգավորումների համաձայն նյութեր նախապատրաստելու համար, իսկ գործող Քրեական դատավարության օրենսգրքի կարգավորումների համաձայն՝ 2022 թվականի 2-րդ կիսամյակում ներկայացվել է հանցանքի մասին 40 հաղորդում):

2023 թվականին՝ 2022 թվականի համեմատ, շուրջ 4 անգամ ավելացել է դատախազների կողմից ուսումնասիրության արդյունքներով ներկայացված պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայցերի քանակը: Մասնավորապես, եթե 2022 թվականի ընթացքում դատախազների կողմից դատարան է ներկայացվել 91 հայց, ապա 2023 թվականի ընթացքում հայցերի թիվը կազմել է 342:

Դատախազության ստորաբաժանումների կողմից 2023 թվականի ընթացքում վարչական դատավարության կարգով՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերի, գործողությունների կամ անգործության դեմ ներկայացված հայցերը և քաղաքացիական դատավարության կարգով գործարքն անվավեր ճանաչելու

պահանջով հայցերը վերաբերել են Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված՝ օտարման ոչ ենթակա զբոսայգիների, պուրակների, անտառների, արոտավայրերի, պահուստային ֆոնդի, պատմամշակութային և ընդհանուր օգտագործման այլ տարածքների օտարման ոչ իրավաչափ գործընթացների վիճարկմանը, որոնք, քանակական և գումարային արտահայտությամբ ըստ տարածքների ունեն հետևյալ պատկերը՝

- **Երևան քաղաքում 80 միավոր՝ շուրջ 710.678 քմ, խախտումներով օտարված հողամասեր և 16 միավոր՝ շուրջ 13.651 քմ մակերեսով անշարժ գույքեր: Միայն 23 միավոր գույքերի՝ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքը կազմել է շուրջ 7 մլրդ 248 մլն 100 հազար դրամ (մյուս գույքերը կգնահատվեն քրեական վարույթների քննության ընթացքում):**
- **Կոտայքի մարզում՝ 61 միավոր՝ շուրջ 9.016.117 քմ խախտումներով օտարված հողամասեր և 6 միավոր՝ շուրջ 16.578 քմ անշարժ գույքեր: Միայն 21 միավոր գույքերի՝ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքը կազմել է շուրջ 1 մլրդ 773 մլն 564 հազար դրամ (մյուս գույքերը կգնահատվեն քրեական վարույթների քննության ընթացքում):**
- **Արարատի մարզում՝ 28 միավոր՝ շուրջ 1.785.087 քմ խախտումներով օտարված հողամասեր և 2 միավոր՝ շուրջ 785 քմ անշարժ գույքեր: Միայն 14 միավոր գույքերի՝ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքը կազմել է շուրջ 140 մլն 854 հազար դրամ (մյուս գույքերը կգնահատվեն քրեական վարույթների քննության ընթացքում):**
- **Շիրակի մարզում՝ 21 միավոր՝ շուրջ 21.069 քմ խախտումներով օտարված հողամասեր և 2 միավոր՝ շուրջ 2.845 քմ անշարժ գույքեր: Միայն 7 միավոր գույքերի՝ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքը կազմել է շուրջ 603 մլն 526 հազար դրամ (մյուս գույքերը կգնահատվեն քրեական վարույթների քննության ընթացքում):**
- **Լոռու մարզում՝ 21 միավոր՝ շուրջ 22.148 քմ խախտումներով օտարված հողամասեր և 3 միավոր՝ շուրջ 865 քմ անշարժ գույքեր: Միայն 8 միավոր գույքերի՝ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքը կազմել է շուրջ 12 մլն 763 հազար դրամ (մյուս գույքերը կգնահատվեն քրեական վարույթների քննության ընթացքում):**
- **Վայոց ձորի մարզում՝ 16 միավոր՝ շուրջ 1.274.763 քմ խախտումներով օտարված հողամասեր, որոնցից միայն 2 միավոր գույքերի՝ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքը կազմել է շուրջ 10 մլն 328 հազար դրամ (մյուս գույքերը կգնահատվեն քրեական վարույթների քննության ընթացքում):**
- **Գեղարքունիքի մարզում՝ 6 միավոր՝ շուրջ 49.850 քմ խախտումներով օտարված հողամասեր և 1 միավոր՝ շուրջ 135 քմ անշարժ գույքեր: Միայն 4 միավոր գույքերի՝ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքը կազմել է շուրջ 1 մլն դրամ (մյուս գույքերը կգնահատվեն քրեական վարույթների քննության ընթացքում):**
- **Արմավիրի մարզում՝ 9 միավոր՝ շուրջ 9.657 քմ խախտումներով օտարված հողամասեր և 3 միավոր՝ շուրջ 102 քմ անշարժ գույքեր: Միայն 4 միավոր գույքերի՝ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքը կազմել է շուրջ 34 մլն 959 հազար դրամ (մյուս գույքերը կգնահատվեն քրեական վարույթների քննության ընթացքում):**
- **Տավուշի մարզում՝ 7 միավոր՝ շուրջ 83.593 քմ խախտումներով օտարված հողամասեր և 1 միավոր՝ շուրջ 4.362 քմ անշարժ գույքեր: Միայն 4 միավոր գույքերի՝ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքը կազմել է շուրջ 4 մլն 840 հազար դրամ (մյուս գույքերը կգնահատվեն քրեական վարույթների քննության ընթացքում):**

Սյունիքի մարզում՝ 8 միավոր՝ շուրջ 377.622 քմ խախտումներով օտարված հողամասերին և 15 միավոր անշարժ գույքերին, որոնց մի մասի շուկայականին մոտարկված կադաստրային արժեքը կազմել է շուրջ 68 մլն 421 հազար դրամ (մնացած գույքերի արժեքները դեռևս ենթակա են գնահատման քրեական վարույթների քննության ընթացքում):

Ստորև ներկայացվում են պետական շահերի պաշտպանության հարցադրումներով կատարված ուսումնասիրությունների արդյունքների, ներկայացված հաղորդումների և հայցադիմումների վերաբերյալ տեղեկություններ:

Այսպես՝

1. Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունում կատարված ուսումնասիրությամբ պարզվել է, որ **Երևան քաղաքի Սարալանջի 1 հասցեում գտնվող նախկին «Երիտասարդական պալատ»** պետական փակ բաժնետիրական ընկերությանը վարձակալությամբ հանձնված 31780,0 քմ ընդհանուր մակերեսով հողամասը, որի կադաստրային արժեքը կազմել է 805 մլն 623 հազար դրամ, իսկ շուկայականին մոտարկված արժեքը՝ 4 մլրդ 430 մլն 926 հազար 500 դրամ՝ 2004 թվականի հունվարի 16-ին օտարվել է 62 մլն 973 հազար 405 դրամով:

Ուսումնասիրության արդյունքում առերևույթ տվյալներ են ձեռք բերվել 2004 թվականին Երևանի քաղաքապետարանի պաշտոնատար անձանց կողմից պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելու վերաբերյալ:

Մասնավորապես՝ 2004 թվականի հունվարի 16-ին Երևանի քաղաքապետը, խախտելով «Պետական սեփականություն հանդիսացող հողամասերն օտարելու և օգտագործման տրամադրելու կարգը հաստատելու մասին» Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշումը, ինչպես նաև Հողային օրենսգրքի պահանջները, պետական սեփականություն հանդիսացող՝ նախկին «Երիտասարդական պալատ» ՊՓԲ ընկերությանը վարձակալության իրավունքով տրամադրված Սարալանջի 1 հասցեում գտնվող 31780,0 քմ մակերեսով հողամասը, որի կադաստրային արժեքը 805 մլն 623 հազար դրամ է, իսկ շուկայականին մոտարկված արժեքը՝ 4 մլրդ 430 մլն 926 հազար 500 դրամ, ուղղակի վաճառքով, կադաստրային արժեքից էականորեն պակաս գնով՝ 62 մլն 973 հազար 405 դրամով, առանց օրինական հիմքերի օտարել է «Ավանգարդ Մոթորս» ՍՊ ընկերությանը՝ պետությանը պատճառելով առանձնապես խոշոր չափերի վնաս:

Բացի այդ, Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունում իրականացված ուսումնասիրության արդյունքում առերևույթ տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ ընդլայնման նպատակով, ուղղակի վաճառքի միջոցով 2011 թվականին «Ավանգարդ Մոթորս» ՍՊ ընկերությանը կադաստրային արժեքով օտարվել են նաև Սարալանջի 1 հասցեում գտնվող 53.0 քմ և 4854.86 քմ մակերեսներով հողամասերը, մինչդեռ դրանցից 53.0 քմ մակերեսով հողամասը, համաձայն Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ-ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի 2005 թվականի գրության, ընդգրկված է եղել Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում և ենթակա չի եղել օտարման:

Դատախազի կողմից հաղորդում է ներկայացվել Հակակոռուպցիոն կոմիտե. նախաձեռնվել է քրեական վարույթ՝ 18.04.2003 թվականին ընդունված Քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասի, 314-րդ հոդվածի 1-ին մասի և 325-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով:

Բացի այդ, պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորության շրջանակում, Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության կողմից հայց է ներկայացվել Վարչական դատարան:

2. Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունում ուսումնասիրվել են Երևան քաղաքի Արամի փողոցի 32 հասցեում գտնվող շենքի՝ նախկին **«Մանկական աշխարհ» հանրախանութի**՝ 6198 քմ մակերեսով հողամասի մասնավորեցման վերաբերյալ փաստաթղթերը:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ բաց աճուրդի կամ ուղղակի վաճառքի ձևով օտարելու նպատակով, Երևանի Կենտրոն համայնքին նվիրաբերված, պատմամշակութային հուշարձան հանդիսացող «Մանկական աշխարհ» նախկին հանրախանութի շենքը 2001 թվականի սեպտեմբերի 6-ին Կենտրոն թաղային համայնքի և «Սոգլասիե-Արմենիա» ՍՊ ընկերության միջև կնքված ուղղակի վաճառքի պայմանագրով օտարվել է: Նշված ընկերությունն իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցվել է օտարումից մի քանի օր առաջ՝ 2001 թվականի օգոստոսի 31-ին:

2001 թվականի հոկտեմբերի 4-ին Երևանի քաղաքապետի և «Սոգլասիե-Արմենիա» ՍՊ ընկերության միջև օրենքի խախտմամբ կնքվել է նշված տարածքում գտնվող՝ 6198 քմ մակերեսով հողամասի վարձակալության պայմանագիր՝ 99 տարի ժամկետով:

Հետագայում՝ 2002 թվականի մարտի 4-ին, Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն, հիմք ընդունելով Հողային օրենսգրքի 118-րդ հոդվածի 7-րդ կետը (մինչև Հողային օրենսգրքի ընդունումը՝ 2001 թվականի մայիսի 2-ը, հողի նկատմամբ օգտագործման իրավունք ունեցող անձինք ձեռք են բերում հողամասի վարձակալության իրավունք և, հողի կադաստրային արժեքն ամբողջությամբ վճարելու պայմանով, այդ անձինք, իրենց ցանկությամբ, հողամասերի նկատմամբ ձեռք են բերում սեփականության իրավունք), գրանցել է «Սոգլասիե-Արմենիա» ՍՊ ընկերության սեփականության իրավունքը Արամի 32 հասցեի 6198 քմ մակերեսով հողամասի նկատմամբ: Մինչդեռ, վերոնշյալ ընկերությունը Հողային օրենսգրքով սահմանված ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունում որպես իրավաբանական անձ գրանցված չի եղել:

Հետևաբար, մինչև 2001 թվականի մայիսի 2-ը չէր կարող այդ հողամասի նկատմամբ ունենալ օգտագործման իրավունք, այդ հանգամանքի ուժով ձեռք բերել վարձակալության իրավունք, ինչը հնարավորություն կտար հողամասի կադաստրային արժեքն ամբողջությամբ վճարելու պայմանով հողամասի նկատմամբ ձեռք բերել սեփականության իրավունք: Արդյունքում՝ Արամի 32 հասցեի 6198 քմ մակերեսով հողամասի նկատմամբ պետության սեփականության իրավունքն ապօրինի դադարել է:

Դատախազի կողմից հաղորդում է ներկայացվել Հակակոռուպցիոն կոմիտե. նախաձեռնվել է քրեական վարույթ՝ Քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով:

Բացի այդ, Դատախազությունը, պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորության շրջանակում, հայց է ներկայացրել Վարչական դատարան՝ պետական սեփականություն հանդիսացող տարածքը պետությանը վերադարձնելու նպատակով:

3. Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունում ուսումնասիրվել են Աբովյան փողոցում գտնվող **«Հայաստանի նկարիչների միության» ՀԿ-ի և կից տարածքների** վերաբերյալ փաստաթղթերը:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ 1995 թվականի սեպտեմբերի 1-ին «Նկարիչների միություն» հասարակական կազմակերպության և «Աղաբեկյան և Բեկ ինթերնեշնլ» ԱՁ-ի միջև կնքվել է պայմանագիր: Պայմանագրով պետական սեփականություն հանդիսացող՝ Աբովյան փողոցի 16 հասցեի շենքի և «Մոսկվա» կինոթատրոնի միջնամասում գտնվող՝ 3800.5 քմ մակերեսով 4 կիսակառույց շինությունները 300 հազար ԱՄՆ դոլարով վաճառվել են «Աղաբեկյան և Բեկ ինթերնեշնլ» ԱՁ-ին, մինչդեռ «Նկարիչների միություն» հասարակական կազմակերպությունը չուներ այդ իրավունքը (պետությունը դրանք չէր օտարել ՀԿ-ին):

Այնուհետև, 1996 թվականի օգոստոսին 28-ին Աբովյան փողոցի 16 հասցեի շենքի և «Մոսկվա» կինոթատրոնի միջնամասում գտնվող 3800.5 քմ մակերեսով 4 կիսակառույց շինությունները հրապարակային աճուրդով օտարվել են «Մելլաթ» բանկին: 2000 թվականի մայիսի 5-ին «Մելլաթ» բանկի անվամբ սեփականության իրավունքով գրանցվել են 3800.5 քմ մակերեսով կիսակառույց շինությունները, իսկ վարձակալության իրավունքով՝ 3281 քմ մակերեսով հողամասը:

Հատկանշական է, որ 2006 թվականի հունիսի 15-ին Երևանի քաղաքապետարանը «Մելլաթ» բանկին ուղարկված գրությամբ նշել է, որ Աբովյան 16 հասցեում գտնվող կիսակառույց շենքի՝ վարձակալությամբ տրամադրված 3281 քմ մակերեսով հողամասն ընդգրկված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի (օտարման ոչ ենթական հողատարածքներ) սահմանափակումների ցանկում և ենթակա է օտարման:

2006 թվականի հուլիսի 19-ին «Մելլաթ» բանկ ՓԲ ընկերությունը «Դիդաս ինթերնեյշնլ» ՍՊ ընկերությանն է օտարել Աբովյան 16 հասցեում գտնվող անշարժ գույքը՝ 798 մլն 84 հազար դրամով:

2006 թվականի օգոստոսի 22-ին Կադաստրի կոմիտեում գրանցվել է «Դիդաս ինթերնեյշնլ» ՍՊ ընկերության սեփականության իրավունքը 3800.5 քմ մակերեսով կիսակառույց շինությունների և 3281 քմ մակերեսով հողամասի նկատմամբ:

Ուսումնասիրությամբ տվյալներ են ձեռք բերվել, որ «Դիդաս ինթերնեյշնլ» ՍՊ ընկերությունը 2007 թվականի հուլիսի 6-ին կնքված պայմանագրով՝ «Ջուխտակ» ՍՊ ընկերությունից ձեռք է բերել Թումանյան փողոց 3 հասցեի 554.3 քմ մակերեսով հողամասից և 35.2 քմ մակերեսով ավտոտնակից բաղկացած անշարժ գույքը:

2008 թվականի հունվարի 18-ին Թումանյան փողոց 3 հասցեի տարածքը միավորվել է Աբովյան 16 հասցեի հետ՝ վերագրանցվելով որպես Աբովյան 16/1 հասցե՝ 3835.3 քմ մակերեսով հողամասով:

Դատախազությունում իրականացված ուսումնասիրությամբ պարզվել է, որ վերոնշյալ տարածքն ընդգրկված է պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտում:

Այդ մասին է վկայում 2023 թվականի հուլիսի 23-ին Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից Գլխավոր դատախազություն ստացված գրությունը, ըստ որի՝ Ընկերության անվամբ գրանցելու պահին տարածքն ընդգրկված է եղել Հողային օրենսգրքի սահմանափակումների ցանկում և օտարման ենթակա չի եղել:

Դատախազի կողմից հաղորդում է ներկայացվել Հակակոռուպցիոն կոմիտե. նախաձեռնվել է քրեական վարույթ՝ արարքի կատարման պահին գործող՝ 01.07.1961 թվականին ընդունված Քրեական օրենսգրքի 89-րդ հոդվածով, 184-րդ հոդվածով և 18.04.2003 թվականին ընդունված Քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով:

Բացի այդ, Դատախազությունը, պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորության շրջանակում, հայց է ներկայացրել Վարչական դատարան՝ պետական սեփականություն հանդիսացող տարածքը պետությանը վերադարձնելու նպատակով:

4. Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունում ուսումնասիրվել են Երևան քաղաքի **«Հաղթանակ» զբոսայգու տարածքում՝ Բաբայան և Ուլնեցի փողոցների** հատման մասում գտնվող 6900 քմ մակերեսով հողամասի վերաբերյալ փաստաթղթերը:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ Բաբայան և Ուլնեցի փողոցների հատման մասում գտնվող 6900 քմ մակերեսով հողամասի վարձակալության մրցույթում հաղթող է ճանաչվել քաղաքացի Ա.Պ.-ն, ով 2003 թվականի փետրվարի 18-ին Երևանի քաղաքապետին հասցեագրված դիմումով հայտնել է, որ Հայաստանի Հանրապետությունից մեկնելու պատճառով հրաժարվում է վարձակալության մրցույթում իր առաջարկած գնից՝ խնդրելով հաղթող ճանաչել մեկ այլ անձի:

Մրցույթին մասնակցած մյուս երկու մասնակիցները ևս հրաժարվել են վարձակալության պայմանագրից, որից հետո հողամասը վարձակալելու առաջարկ է ներկայացվել մրցույթի չորրորդ մասնակցին՝ Վ.Պ.-ին. վերջինս մրցույթում հաղթող է ճանաչվել:

Երևանի քաղաքապետի և Վ.Պ.-ի միջև 2003 թվականի հոկտեմբերի 14-ին կնքված վարձակալության պայմանագրով՝ Բաբայան և Ուլնեցի փողոցների հատման մասում գտնվող 6900 քմ մակերեսով հողամասը 25 տարի ժամկետով՝ հանգստի և ժամանցի համալիր կազմակերպելու նպատակով, տրամադրվել է Վ.Պ.-ին: Վարձակալին տրամադրվել է նաև գնման նախապատվության իրավունք: Արդյունքում՝ Երևանի քաղաքապետի որոշմամբ, վարձակալությամբ տրամադրված 6900 քմ մակերեսով հողամասը կադաստրային արժեքի չափով՝ 10 մլն 105 հազար 878 դրամով, օտարվել է Վ.Պ.-ին: Երևանի քաղաքապետի 2011 թվականի հուլիսի 18-ի որոշմամբ՝ վերոնշյալ հողամասին տրվել է Բաբայան 1/1 հասցե:

2011 թվականի հուլիսի 18-ին կնքված պայմանագրով՝ Վ.Պ.-ն հողամասն օտարել է մեկ այլ քաղաքացու՝ Ի.Պ.-ին, վերջինս էլ այն օտարել է Ռ.Գ.-ին: Ռ.Գ.-ն 2020 թվականի փետրվարի 27-ին հողամասն ամբողջությամբ ներդրել է սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալում, իսկ 2023 թվականի հունվարի 31-ին՝ վերոնշյալ ընկերությունն իր գույքը՝ ներառյալ հողամասը, 10 մլրդ դրամի դիմաց գրավադրել է բանկում:

2023 թվականի օգոստոսի 23-ին Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունում ուսումնասիրվել է Քաղաքաշինության կոմիտեից ստացված գրությունը, որով պարզվել է, որ «Հաղթանակ» զբոսայգու տարածքը սահմանազատված է Ազատության պողոտայով, Սարալանջի և Բաբայան փողոցներով:

Բացի այդ, Երևանի քաղաքապետի 2004 թվականի դեկտեմբերի 27-ի որոշմամբ՝ Ուլնեցի, Բաբայան փողոցներով և երկաթգծով պարփակված հատվածում սահմանված է եղել կառուցապատման հատուկ ռեժիմ, այն է՝ կառուցապատման սահմանափակ հնարավորություն, որը ենթակա չէր օտարման:

Դատախազի կողմից հաղորդում է ներկայացվել Քննչական կոմիտե. նախաձեռնվել է քրեական վարույթ՝ Քրեական օրենսգրքի 446-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով:

Բացի այդ, Դատախազությունը, պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորության շրջանակում, հայց է ներկայացրել Վարչական դատարան՝ տարածքը պետությանը վերադարձնելու նպատակով:

5. Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունում ուսումնասիրվել են Երևան քաղաքի Ազատության 2/2 հասցեի հողամասերի վերաբերյալ փաստաթղթերը:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ Երևանի քաղաքապետի՝ 2000 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 1520 որոշմամբ՝ **«Գոլդեն Փելիս հյուրանոց Հայաստան Երևան» կազմակերպությանը Ազատության պողոտային հարող՝ «Հաղթանակ» զբոսայգու** անբարեկարգ տարածքից, հյուրանոցային համալիրի շինարարություն իրականացնելու նպատակով, վարձակալության իրավունքով՝ 99 տարի ժամկետով, հատկացվել է 3200 քմ մակերեսով հողամաս և կանաչապատման նպատակով՝ 6800 քմ մակերեսով հողամաս, ինչի հիման վրա՝ 2000 թվականի դեկտեմբերի 21-ին կնքվել է պայմանագիր:

2001 թվականի մարտի 9-ին «Գոլդեն Փելիս հյուրանոց Հայաստան Երևան» կազմակերպությանը տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի համաձայն՝ հատկացված հողամասից կառուցապատման ենթակա է եղել 2750 քմ մակերեսով տարածքը, իսկ մնացած 7250 քմ մակերեսով տարածքը ենթակա է եղել կանաչապատման և բարեկարգման: Նույն փաստաթղթով նախատեսվել է նաև հատկացված հողամասին կից բարեկարգել և կանաչապատել 2 հա տարածք:

Երևանի քաղաքապետի մեկ այլ՝ 2005 թվականի հուլիսի 22-ի թիվ 1651-Ա որոշմամբ՝ նույն կազմակերպությանը, որպես ընդլայնում, առանց մրցույթի հատկացվել է 7077 քմ մակերեսով հողամաս, որի 1-ին կետով՝ առանց կառուցապատման իրավունքի, թույլատրվել է օգտագործել 8077.7 քմ մակերեսով հողամասը, ինչից հետևում է, որ կառուցապատվող 3200 քմ մակերեսով հողամասի մակերեսը շուրջ 3 անգամ մեծացել է:

Կողմերի միջև 2000 թվականի դեկտեմբերի 21-ին կնքված պայմանագիրը լուծվել է և 2005 թվականի հուլիսի 28-ին կնքվել է վարձակալության պայմանագիր, որով կառուցված շենքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու պայման չի նախատեսվել, սակայն Կադաստրի կոմիտեում Երևանի քաղաքապետարանի կողմից 2005 թվականի օգոստոսի 30-ին տրված շինարարության շահագործման փաստագրման թիվ 213 ակտի հիման վրա՝ 2005 թվականի սեպտեմբերի 5-ին 6415 քմ մակերեսով հյուրանոցային համալիրի, 108.4 քմ մակերեսով էլեկտրական ենթակայանի և 66.1 քմ մակերեսով պոմպակայանի նկատմամբ գրանցվել է Ընկերության սեփականության իրավունքը, իսկ 1.70776 քմ հողամասի նկատմամբ՝ վարձակալության իրավունքը:

Երևանի քաղաքապետի՝ 2005 թվականի հուլիսի 22-ի թիվ 1651-Ա որոշման հիման վրա՝ կազմված հողհատկացման հատակագծի ուսումնասիրությամբ պարզվել է, որ շինությունով ծանրաբեռնված է նաև նշված որոշմամբ հատկացված 7077 քմ մակերեսով հողամասը, որը 2001 թվականի ճարտարապետահատակագծային առաջադրանք և շինարարության թույլտվություն տալու պահին կառուցապատողին հատկացված չի եղել, ուստի կառուցապատման օբյեկտ չի հանդիսացել, ինչը նշանակում է, որ փաստագրված շինությունը իրականացվել է քաղաքաշինական փաստաթղթերի խախտմամբ:

Վերոգրյալ փաստերի համադրմամբ հաստատվել է, որ շինարարության շահագործման փաստագրման թիվ 213 ակտում Երևանի քաղաքապետարանի իրավասու անձանց կողմից ակնհայտ կեղծ տեղեկություն է մտցվել շինությունն ըստ համաձայնեցված նախագծի իրականացված լինելու վերաբերյալ:

Պայմանագրի վերլուծությունից հետևում է, որ կողմերի որոշած պայմաններով օտարման առարկա կարող էր լինել բացառապես այն անշարժ գույքը, որը կառուցվել էր վարձատուի համաձայնությամբ, մինչդեռ քննարկվող դեպքում հյուրանոցային համալիրը կառուցվել էր քաղաքաշինական փաստաթղթերի խախտմամբ, այսինքն՝ վարձատուի համաձայնության բացակայությամբ, որպիսի պայմաններում օտարելու հարց քննարկվել չէր կարող, և ամրակայված անշարժ գույքը վարձատուի պահանջով կամ պետք է թողնվեր վերջինիս տնօրինմանը կամ ենթակա էր քանդման:

Դատախազի կողմից հաղորդում է ներկայացվել Հակակոռուպցիոն կոմիտե. նախաձեռնվել է քրեական վարույթ՝ Քրեական օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասի և 446-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով:

Բացի այդ, Դատախազությունը, պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորության շրջանակում, հայց է ներկայացրել Վարչական դատարան՝ տարածքը պետությանը վերադարձնելու նպատակով:

6. Երևան քաղաքի **Տիգրան Պետրոսյան 44/2 հասցեի հողամասերի («Ռիբոկ» մարզահամալիր)** առնչությամբ, Քննչական կոմիտեում քննվող քրեական վարույթի շրջանակում ձեռք բերված տվյալների հիման վրա՝ Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության կողմից կատարված ուսումնասիրությամբ պարզվել է, որ Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից 2003 թվականի մարտի 27-ին տրված իրավունքի պետական գրանցման թիվ 1632045 վկայականի համաձայն՝ 6452.88 քմ մակերեսով հողամասի նկատմամբ գրանցվել է Ա.Գ.-ի սեփականության իրավունքը, որպիսի գրանցման հիմքում, ըստ նույն վկայականում կատարված գրառման, դրվել է Հողային օրենսգրքի 118-րդ հոդվածի 7-րդ կետի պահանջը: Մինչդեռ քաղաքացի Ա.Գ.-ի՝ սեփականության իրավունքի գրանցման պահին նշված հողամասը, ըստ ստացված տեղեկատվության, հանդիսացել է այգի և որպես Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված օտարման ոչ ենթակա հողամաս, ենթակա չի եղել օտարման:

Բացի այդ, Երևանի քաղաքապետի՝ 2006 թվականի ապրիլի 5-ի թիվ 477-Ա որոշմամբ՝ Ա.Գ.-ին որպես ընդլայնում առանց հրապարակային սակարկությունների, ուղղակի վաճառքի ձևով օտարվել է 850 քմ մակերեսով հողամաս:

Դրա հիման վրա կողմերի միջև 2006 թվականի ապրիլի 29-ին կնքվել է վերոնշյալ հասցեի հողամասը ուղղակի վաճառքով՝ 3 մլն 845 հազար 400 դրամով օտարելու վերաբերյալ պայմանագիր: Մինչդեռ 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի համաձայն՝ ընդլայնման ձևով կարող է օտարվել միայն այն հողամասը, որը հնարավոր չէ որպես առանձին գույքային միավոր օտարել (տրամադրել) հրապարակային սակարկությունների միջոցով: Երևանի քաղաքապետի՝ 2019 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ 03/07-85844Հ գրության ուսումնասիրությամբ պարզվել է, որ Երևանի քաղաքապետի 2006 թվականի ապրիլի 5-ի թիվ 477-Ա որոշմամբ լրացուցիչ տրամադրված հողամասը կարող էր դառնալ հրապարակային սակարկությունների առարկա, ինչից հետևում է, որ նշված հողամասը ընդլայնման կարգով հատկացնելու մասին Երևանի քաղաքապետի որոշումը կայացվել է օրենքի խախտմամբ:

Բացի այդ, Երևանի քաղաքապետի մեկ այլ որոշմամբ Ա.Գ.-ին կրկին որպես ընդլայնում տրամադրվել է 610.0 քմ մակերեսով հողամաս: Այնուհետև, Երևանի քաղաքապետի 2014 թվականի թիվ 3887-Ա որոշմամբ նշված որոշման մեջ կատարվել է փոփոխություն և 610.09 քմ մակերեսով հողամասը փոխարինվել է 535.19 քմ մակերես հողամասով: 2014 թվականի նոյեմբերի 5-ին կնքվել է 535.19 քմ մակերեսով հողամասի ուղղակի վաճառքի պայմանագիր:

Կառավարության՝ 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի համաձայն՝ ընդլայնման նպատակով հողամաս կարող է տրամադրվել միայն մեկ անգամ, մինչդեռ տվյալ դեպքում Երևան քաղաքի Տ. Պետրոսյան 44/2 հասցեում գտնվող անշարժ գույքի ընդլայնման նպատակով՝ Երևանի քաղաքապետի 2014 թվականի թիվ 1545-Ա և այն փոփոխելու վերաբերյալ 2014 թվականի թիվ 3887-Ա որոշումներով՝ հողամաս է տրամադրվել երկրորդ անգամ:

Բացի այդ, Երևանի քաղաքապետի 2019 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ 03/07-85844Հ գրության ուսումնասիրությամբ պարզվել է, որ Երևանի քաղաքապետի 2014 թվականի թիվ 1545-Ա որոշմամբ լրացուցիչ տրամադրված հողամասը կարող էր դառնալ հրապարակային սակարկությունների առարկա: Այսինքն՝ Երևանի քաղաքապետի որոշումը կայացվել է օրենքի խախտմամբ:

Դատախազությունն ուսումնասիրության արդյունքներով Վարչական դատարան է ներկայացրել է 3 հայց՝ Երևան քաղաքի Տիգրան Պետրոսյան 44/2 հասցեի հողամասերը պետությանը վերադարձնելու նպատակով:

7. Երևան քաղաքի դատախազությունում, պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորության շրջանակում, ուսումնասիրվել է **Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Մովսես Խորենացի փողոցի և նույն փողոցի 1-ին փակուղու հատման մասում գտնվող հողամասի** կադաստրային գործը:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ Երևանի քաղաքապետարանի պաշտոնատար անձինք, առերևույթ խախտելով Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի պահանջները (պետության և համայնքների սեփականություն հանդիսացող հողամասերի ուղղակի վաճառքը կատարվում է օրենքներով և պայմանագրերով գնման նախապատվության իրավունք ունեցող անձանց), Մ.Խորենացու փողոցի և նույն փողոցի 1-ին փակուղու հատման հասցեում հյուրանոցային համալիր կառուցելու նպատակով «Բյուրակն» ՍՊ ընկերությանը տրամադրել են 2707 քմ մակերեսով հողատարածք:Կնքված վարձակալության պայմանագրով սահմանվել է պարտադիր պայման, ըստ որի՝ պայմանագրային պարտավորությունները կատարելու դեպքում հողատարածքը գնման նախապատվության իրավունքով կվաճառվի վարձակալին: Սակայն, առանց վերոնշյալ պարտավորության կատարման,

այսինքն՝ առանց հյուրանոցային համալիրի կառուցման, վարձակալն անհիմն օժտվել է գնման նախապատվության իրավունքով, և վերոնշյալ հողատարածքը 2006 թվականի հոկտեմբերի 27-ին ուղղակի վաճառքով օտարվել է «Բյուրական» ՍՊ ընկերությանը: Երևանի քաղաքապետարանի պաշտոնատար անձինք շինարարության թույլտվության ժամկետի ավարտից, ինչպես նաև կառուցապատման համար հողամասի տրամադրման օրվանից երեք տարի հետո, կառուցապատողի կողմից հողամասն ամբողջությամբ կամ դրա մասը չօգտագործելու պայմաններում, միջոցներ չեն ձեռնարկել հողամասի նկատմամբ իրավունքները հարկադիր կարգով դադարեցնելու ուղղությամբ, ինչի արդյունքում պետության (համայնքի) օրինական շահերին պատճառվել է էական վնաս:

Դատախազի կողմից հաղորդում է ներկայացվել Հակակոռուպցիոն կոմիտե. նախաձեռնվել է քրեական վարույթ՝ 18.04.2003 թվականին ընդունված Քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով և 315-րդ հոդվածի 1-ին մասով:

Բացի այդ, Դատախազությունը, պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորության շրջանակում, հայց է ներկայացրել Վարչական դատարան՝ տարածքը պետությանը վերադարձնելու նպատակով:

8. Երևան քաղաքի դատախազությունում, պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորության շրջանակում, ուսումնասիրվել են **Կենտրոն վարչական շրջանի «Մանկական այգու» (նախկինում՝ Կիրովի անվան զբոսայգի) տարածքում առկա հողամասերի և շինությունների կադաստրային գործերը:**

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ Երևանի քաղաքապետի 2004 թվականի դեկտեմբերի 14-ի որոշմամբ, Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի (օտարման ոչ ենթակա տարածքներ) սահմանափակումների ցանկում ընդգրկված՝ Կիրովի անվան զբոսայգու տարածքում ինքնակամ կառուցված՝ 23.4 և 20.0 քմ մակերեսներով շինությունները, 13.1 քմ մակերեսով բեմը, 6.0 քմ մակերեսով ստորգետնյա պոմպակայանը, 11.2 քմ և 2.2 քմ մակերեսներով ստորգետնյա շինությունները, 22.0 քմ և 49.0 քմ մակերեսներով ջրավազանը, օրենսդրական պահանջների խախտմամբ, ճանաչվել են Ա.Թ.-ի սեփականությունը: Երևանի քաղաքապետի վերոնշյալ որոշման հիման վրա՝ Կադաստրի կոմիտեում կատարվել է իրավունքի պետական գրանցում, ինչի հետևանքով էական վնաս է պատճառվել պետության (համայնքի) օրինական շահերին:

Դատախազի կողմից հաղորդում է ներկայացվել Հակակոռուպցիոն կոմիտե. նախաձեռնվել է քրեական վարույթ՝ 18.04.2003 թվականին ընդունված Քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով:

Բացի այդ, պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորության շրջանակում հայց է ներկայացվել ՀՀ վարչական դատարան՝ տարածքը պետությանը վերադարձնելու նպատակով:

9. Երևան քաղաքի դատախազությունում, պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու գործառույթի շրջանակում, ուսումնասիրվել է **Երևան քաղաքի Աբովյան պուրակի տարածքում գտնվող հողամասի** կադաստրային գործը:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ Երևանի քաղաքապետի 2002 թվականի փետրվարի 26-ի որոշմամբ՝ Աբովյան պուրակում գտնվող հողամասը վերակառուցման նպատակով, 15 տարի ժամկետով, վարձակալության իրավունքով տրամադրվել է «Սամարտ» ընկերությանը: Երևանի քաղաքապետի նույն թվականի մայիսի 3-ի որոշմամբ՝ վարձակալության ժամկետը 15 տարվա փոխարեն սահմանվել է 50 տարի, տրամադրվել է նաև հողի գնման նախապատվության իրավունք:

Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 15-ի որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծի, ինչպես նաև Երևանի քաղաքապետի 2007 թվականի նոյեմբերի 28-ի որոշմամբ հաստատված «Կենտրոն» թաղային համայնքի տարածքի գոտիավորման նախագծի համաձայն՝ վերոնշյալ հողատարածքը գտնվում է ընդհանուր օգտագործման կանաչապատ գոտում:

Երևանի քաղաքապետարանի պաշտոնատար անձինք, ի թիվս այլնի, խախտելով վերոնշյալ որոշումների, ինչպես նաև Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի պահանջները՝ պաշտոնեական փաստաթղթերում կեղծ տեղեկություններ մտցնելու եղանակով, մասնավորեցման ոչ ենթակա, համայնքային սեփականություն հանդիսացող Աբովյան պուրակի տարածքի ընդհանուր օգտագործման հողամասից 349.28 քմ մակերեսով հողատարածքը, սեփականության իրավունքով փոխանցել են «Սամարտ» ՍՊԸ-ին՝ էական վնաս պատճառելով պետության օրինական շահերին:

Դատախազի կողմից հանցանքի մասին հաղորդում է ներկայացվել Հակակոռուպցիոն կոմիտե. նախաձեռնվել է քրեական վարույթ՝ Քրեական օրենսգրքի 441-րդ հոդված 1-ին մասով և 445-րդ հոդվածի 1-ին մասով:

10. Երևան քաղաքի դատախազությունում, պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու գործառույթի շրջանակում նախաձեռնված ուսումնասիրությամբ, պարզվել է, որ **Կենտրոն վարչական շրջանի Նար-Դոսի փողոց հ.2 հասցեի կամ հասցեի հարևանությամբ գտնվող հողամասերը** հանդիսանում են պետական և համայնքային սեփականություն, որոնք զավթվել են դեռևս չպարզված անձանց կողմից, իսկ երկաթգծի վրա կառուցված շինությունը հանդիսանում է ինքնակամ կառույց:

Ուսումնասիրության համար հիմք է հանդիսացել 2022 թվականի մայիսի 24-ին Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից գրությամբ ստացված «Հարավկովկասյան երկաթուղու» օտարման շերտի տեղամասերում ինքնակամ զբաղեցված հողամասերի վերաբերյալ տեղեկատվությունը:

Վերոնշյալ տեղեկության հիման վրա՝ Դատախազությունը 2022 թվականի հուլիսի 12-ին ներկայացված հարցում է ուղարկել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ՝ խնդրելով տրամադրել նշված հասցեներում առերևույթ հողազավթումների վերաբերյալ Քաղաքապետարանում առկա տեղեկատվությունը:

Քաղաքապետարանից ստացված գրության համաձայն՝ Քաղաքապետարանի հասարակական կարգի պահպանության, ինչպես նաև Քաղաքաշինություն ՓԲ ընկերության համապատասխան աշխատակիցները հնարավորություն չեն ունեցել մուտք գործել Կենտրոն վարչական շրջանի Նար-Դոսի փողոց հ.2 հասցեի կամ հասցեի հարևանությամբ գտնվող շինության տարածք՝ նշված տարածքը փաստացի օգտագործող Երևանի Ալրաղաց ԲԲ ընկերության ներկայացուցիչների կողմից ստեղծված խոչընդոտների պատճառով: Մուտքը խոչընդոտելու պատճառով վերոնշյալ աշխատակիցների կողմից հնարավոր չի եղել իրականացնել գեոդեզիական չափագրումներ՝ շինություններով ծանրաբեռնված հողամասերի իրավական կարգավիճակը պարզելու նպատակով: Ոստիկանության աշխատակիցների ներգրավման արդյունքում ևս չի հաջողվել իրականացնել գեոդեզիական չափագրումներ՝ նույն պատճառով:

Դատախազությունը, ուսումնասիրելով Երևանի գլխավոր հատակագիծը, Կենտրոն վարչական շրջանի թաղապետարանում առկա իրադրության հատակագիծը և Google Map-ում առկա տեղանքի պատկերը՝ 2023 թվականի փետրվարի 9-ին դիմել է Կադաստրի կոմիտե՝ խնդրելով տրամադրել տեղեկություններ վերոնշյալ տարածք(ներ)ի, ինչպես նաև երկաթգծի վրա կառուցված շինության իրավական կարգավիճակի վերաբերյալ: Կադաստրի կոմիտեից ստացված գրության համաձայն՝ տարածք(ներ)ը հանդիսանում են պետական և համայնքային սեփականություն, որի վրա առկա է 2 շինություն՝ առանց իրավունքի պետական գրանցման, իսկ երկաթգծի վրա գտնվող շինության կարգավիճակի վերաբերյալ Կադաստրի կոմիտեի էլեկտրոնային արխիվում և քարտեզում տեղեկություններ չեն հայտնաբերվել:

Դատախազի կողմից հաղորդում է ներկայացվել Քննչական կոմիտե. նախաձեռնվել է քրեական վարույթ՝ Քրեական օրենսգրքի 447-րդ հոդվածի 1-ին մասով:

11. Երևան քաղաքի դատախազությունում ուսումնասիրվել են **Դավթաշեն թաղամասի Եղվարդի խճուղի 22 և Անաստաս Միկոյան փողոցի 64 հասցեներում գտնվող երկու հողամասերի** կադաստրային գործերը:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ դրանք եղել են մեկ միասնական միավոր: 2003 թվականի հունվարի 17-ին Դավթաշեն 4-րդ թաղամասի դիմաց գտնվող 6.06 հա մակերեսով այգին վարձակալության տրամադրելու նպատակով հանվել է աճուրդի, որում հաղթող է ճանաչվել Ե.Գ.-ն: Այնուհետև, Երևանի քաղաքապետի 2003 թվականի փետրվարի 3-ի որոշմամբ, նույն հողամասը՝ 25 տարի ժամկետով, տրամադրվել է վարձակալության՝ տարեկան 2 մլն 90 հազար դրամ վարձավճարով՝ ժամանցի և հանգստի գոտու կազմակերպման նպատակով: Միաժամանակ, հողամասի վարձակալության գնման նախապատվության իրավունքի համար աճուրդի մեկնարկային գինը սահմանվել է 60 հազար 600 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ, որը հայտատուն վճարել է քաղաքապետարանի հաշվեհամարին: Մրցույթի արդյունքում հաղթողի համար սահմանվել են պարտականություններ, այդ թվում՝ տվյալ տարածքում 300 միլիոն դրամի ներդրում կատարելը, շինարարությունը մինչ 2006 թվականն ավարտելը, երեք ամիսների համար միանվագ վարձավճար մուծելը: Գործարքի կնքումից մեկ ամիս անց, սակայն, առանց վերոնշյալ պարտականությունների և կնքված վարձակալության պայմանագրի պայմանների պարտադիր կատարման, այգու տարածքը 2003 թվականի մարտի 28-ին օտարվել է Ե.Գ.-ին: Ապրիլի 4-ին քաղաքապետարանի և Ե.Գ.-ի միջև կնքվել է այգու ուղղակի վաճառքի մասին պայմանագիր, որով 6.06 հա մակերեսով հողամասը 20 մլն 883 հազար 972 դրամով օտարվել է Ե.Գ.-ին. օգտագործման նպատակը սահմանվել է որպես ժամանցի և հանգստյան գոտու կազմակերպման շինարարություն:

2004 թվականի մարտի 2-ին Ե.Գ.-ի լիազորված անձի և «Սանի Լենդ համատեղ ձեռնարկություն» ՍՊ ընկերության (35 տոկոս բաժնեմասը պատկանել է նույն Ե.Գ.-ին) միջև կնքվել է հողամասի վարձակալության պայմանագիր, որով տվյալ ընկերությանն է տրամադրվել տարածքը՝ զվարճանքի և հանգստյան գոտի ստեղծելու նպատակով, իսկ 2006 թվականի մայիսի 2-ին կողմերի միջև կնքվել է վարձակալության պայմանագիրը լուծելու մասին համաձայնություն: Այնուհետև, Ե.Գ.-ի դիմումի հիման վրա կատարվել է գույքի բաժանում՝ 3.5023 հա և 2.5577 հա չափերով հողատարածքների, որից հետո՝ 2006 թվականի մայիսի 15-ին, Ե.Գ.-ն 3.0523 հա հողամասն անհատույց՝ 20 տարի ժամկետով, օգտագործման է տրամադրել «Սանի Լենդ համատեղ ձեռնարկություն» ՍՊ ընկերությանը (կնքվել է անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագիր):

2007 թվականի դեկտեմբերի 4-ին Ե.Գ.-ի և «Մոսկովյան ինվեստիցիոն շինարարական ընկերություն ք.Երևան» ՍՊ ընկերության միջև կնքվել է անշարժ գույքի տարաժամկետ վճարումով առուվաճառքի պայմանագիր, որի համաձայն՝ Ե.Գ.-ն իրեն պատկանող հողատարածքից 2.5577 հա հողամասն իր կողմից գնված արժեքից անհամեմատ բարձր գնով՝ 697 մլն 727 հազար 272 դրամով, վաճառել է նշված ընկերությանը, իսկ 2007 թվականի դեկտեմբերի 6-ին պայմանագրում կատարվել է համապատասխան կետի փոփոխություն և սահմանվել է, որ անշարժ գույքի վաճառքի գինը կողմերի համաձայնությամբ կազմել է 767 մլն 500 հազար դրամ:

2019 թվականի մարտի 20-ին Ե.Գ.-ի (որպես վաճառող) և «Ն և Ս Քոնսթրաքշն» ՍՊ ընկերության (որպես գնորդ) միջև կնքվել է անշարժ գույքի առուվաճառքի և գրավի պայմանագիր, որի համաձայն՝ գնորդին է հանձնվել Եղվարդի խճուղի 22 հասցեում գտնվող հողամասը՝ 1.5023 հա մակերեսով և Դավթաշենի Երևան-Եղվարդ խճուղի 22 հողամասը՝ 2 հա մակերեսով: Դրանցից առաջինի գինը կազմել է 887 մլն 722 հազար դրամ, իսկ երկրորդինը՝ 1 մլրդ 295 մլն 424 հազար դրամ:

Երևան քաղաքի դատախազությունում իրականացված ստուգումների ընթացքում ուսումնասիրվել է օտարման պահին գործած քաղաքաշինական համապատասխան փաստաթուղթը: Պարզվել է, որ վերոնշյալ հողատարածքները հանդիսացել են հասարակական նշանակության կանաչ գոտիներ և ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի համաձայն՝ ենթակա չեն եղել օտարման:

Նշված արարքների արդյունքում, նախնական հաշվարկով, պետությանը պատճառվել է 2 մլրդ 929 մլն 762 հազար 28 դրամ գումարի գույքային վնաս:

Դատախազի կողմից հաղորդում է ներկայացվել Հակակոռուպցիոն կոմիտե. նախաձեռնվել է քրեական վարույթ՝ Քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

Բացի այդ, Դատախազությունը, պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորության շրջանակում, հայց է ներկայացվել Վարչական դատարան՝ տարածքը պետությանը վերադարձնելու նպատակով:

12. Երևան քաղաքի դատախազությունում քրեական վարույթի շրջանակներում իրականացված ուսումնասիրությամբ պարզվել է, որ 1995 թվականի դեկտեմբերի 9-ին Կառավարության թիվ 106 որոշմամբ որոշվել է սեփականաշնորհել **«Սևան» հյուրանոցը**՝ մրցութային կարգով: 1996 թվականի փետրվարի 14-ին կնքվել է սեփականաշնորհման թիվ 108 պայմանագիրը, որով ՀՀ պետական ունեցվածքի հաշվառման և ապապետականացման վարչությունը, հիմք ընդունելով Կառավարության 1995 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 106 որոշումը, «Կարուսել Իսթաբլիշմենթ» ընկերությանն է վաճառել «Սևան» հյուրանոցը, որը գտնվում է Երևանի Շահումյան 8 հասցեում:

Երևանի քաղաքապետարանի և «Կարուսել Իսթաբլիշմենթ» ընկերության միջև 1998 թվականի հոկտեմբերի 10-ին կնքվել է հողի վարձակալության պայմանագիր՝ Երևանի քաղաքապետի 1996 թվականի օգոստոսի 2-ի թիվ 8/17 որոշման հիման վրա, որով 1925 քմ մակերեսով տարածքը հանձնվել է «Կարուսել Իսթաբլիշմենթ» ընկերությանը:

Երևանի քաղաքապետարանի և «Կարուսել Իսթաբլիշմենթ» ընկերության միջև 1999 թվականի հունիսի 11-ին կնքվել է հողօգտագործման պայմանագիր, որի համաձայն՝ Երևանի քաղաքապետի՝ 1999 թվականի հունիսի 4-ի թիվ 706 որոշման հիման վրա՝ Երևանի քաղաքապետարանը «Կարուսել Իսթաբլիշմենթ» ընկերությանն է հանձնել 1768 քմ մակերեսով՝ Շահումյան փողոց 8 հասցեում գտնվող հողամասը՝ որպես «Սևան» հյուրանոցի զբաղեցրած տարածք:

Կառավարության թիվ 981-Ն որոշմամբ 2004 թվականի հուլիսի 8-ին «Սևան» հյուրանոցի շենքը հանվել է «Պետական պահպանության տակ վերցված պատմության և կուլտուրայի հուշարձանների և նրանց պահպանման գոտիների ցուցակների հաստատման մասին» թիվ 377 որոշմամբ սահմանված ցանկից՝ նկատի ունենալով «Սևան» հյուրանոցի վերականգնման անհնարինությունը:

Երևանի Կենտրոն համայնքի կողմից «Կարուսել Իսթաբլիշմենթ» ընկերությանը 2004 թվականի օգոստոսի 20-ին տրվել է Շահումյան փողոց 8 հասցեում գտնվող «Սևան» հյուրանոցի քարե շինության քանդման թույլտվություն՝ վերակառուցելու նպատակով:

Երևանի քաղաքապետի՝ 2009 թվականի նոյեմբերի 2-ի թիվ 8773-Ա որոշման 1-ին կետով որոշվել է «Կարուսել Իսթաբլիշմենթ» ընկերությանը տրամադրված 3934.3 քմ մակերեսով հողամասի վարձակալության և հողօգտագործման պայմանագրերում ամրագրել կետ՝ հողամասի գնման նախապատվության իրավունք տալու վերաբերյալ: Որոշվել է համաձայնագրի պետական գրանցումից հետո Վ. Սարգսյան փողոց 1 (նախկին Շահումյան փողոց 8) հասցեում գտնվող՝ ընկերության կողմից զբաղեցրած 3934.3 քմ մակերեսով հողամասն ուղղակի վաճառքով օտարել «Կարուսել Իսթաբլիշմենթ» ընկերությանը՝ տարածագնահատման 1-ին գոտու կադաստրային արժեքով:

Վերոնշյալի հիման վրա՝ 2010 թվականի փետրվարի 12-ին կնքվել է պայմանագրերում լրացումներ կատարելու մասին համաձայնագիր, որով «Կարուսել Իսթաբլիշմենթ» ընկերության հետ պայմանագրում ամրագրվել են հողամասի գնման նախապատվության իրավունք տալու վերաբերյալ կետեր:

Երևանի քաղաքապետի՝ 2009 թվականի թիվ 8773-Ա որոշման հիման վրա՝ Երևանի քաղաքապետարանի և «Կարուսել Իսթաբլիշմենթ» ընկերության միջև 2010 թվականի փետրվարի 23-ին կնքվել է հողամասի ուղղակի վաճառքի մասին պայմանագիր, որով Վ. Սարգսյան փողոց 1 (նախկին Շահումյան փողոց 8) հասցեում գտնվող՝ ընկերության կողմից զբաղեցրած 3934.3 քմ մակերեսով հողամասն ուղղակի վաճառքով օտարվել է «Կարուսել Իսթաբլիշմենթ» ընկերությանը՝ 236 մլն 58 հազար դրամով:

Քանդման թույլտվություն տրամադրելուց հետո վերոնշյալ հողամասն այլևս չէր կարող օգտագործվել որպես «Սևան» հյուրանոցի զբաղեցրած տարածք, հետևաբար՝ բացակայում էր հողամասն իր նպատակային նշանակությամբ օգտագործելու հնարավորությունը, որպիսի հանգամանքը վարձակալության պայմանագիրը լուծելու հիմք էր հանդիսանում: Սակայն Երևանի քաղաքապետարանի կողմից վարձակալության պայմանագրերը լուծելու փոխարեն, ընկերությանը տրամադրվել է գնման նախապատվության իրավունք, որի արդյունքում հողամասն ուղղակի վաճառքով օտարվել է:

Երևան քաղաքի դատախազության կողմից հայց է հարուցվել Վարչական դատարան՝ գնման նախապատվություն տրամադրելու և ուղղակի վաճառքի միջոցով օտարելու վերաբերյալ Երևանի քաղաքապետի որոշումներն անվավեր ճանաչելու պահանջով:

13. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների դատախազությունում, պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորության շրջանակում, ուսումնասիրվել է **Աբովյան փողոցի 8 հասցեում գտնվող շենքի** օտարման գործընթացը: Ուսումնասիրությամբ պարզվել է, որ Կառավարության 2005 թվականի հունիսի 16-ի որոշմամբ՝ Երևան քաղաքի Աբովյան 8 հասցեում գտնվող՝ 178 մլն 464 հազար դրամ կադաստրային արժեքով՝ օտարման ոչ ենթակա 638.2 քմ մակերեսով տարածքը կադաստրային արժեքից շուրջ 5 անգամ ցածր գնով՝ 32 մլն 170 հազար 500 դրամով, ուղղակի վաճառքով օտարվել է «Պրոգրես Արմենիա» ՍՊ ընկերությանը (Ընկերության բաժնետերերն են գործարար Ս.Մ.-ն և նրա կինը՝ Գ.Ք.-ն):

Գույքը ձեռք բերելուց մեկ տարի անց՝ 2006 թվականի մարտի 31-ին, Երևանի քաղաքապետարանի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետ Ս.Դ.-ի կողմից «Պրոգրես Արմենիա» ՍՊ ընկերության տնօրեն Ս.Մ.-ին տրամադրվել է կեղծ տեղեկություններ պարունակող պաշտոնական փաստաթուղթ, ըստ որի՝ Ընկերության կողմից ձեռք բերված՝ Գեղագիտության կենտրոնի շենքի զբաղեցրած հողամասն ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում և կարող է օտարվել: Մինչդեռ, Կառավարության 2004 թվականի հոկտեմբերի 7-ի որոշման համաձայն՝ նույն հասցեում գտնվող շենքն ընդգրկված է եղել Երևան քաղաքի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում:

Բացի այդ, ըստ պայմանագրի, գույքը ձեռք բերած ընկերությունը պարտավորվել է մինչև 2006 թվականի ավարտը կատարել առնվազն 90 մլն դրամի ներդրում, որը չի կատարել, իսկ իրավասու պաշտոնատար անձանց կողմից տևական ժամանակ որևէ միջոց չի ձեռնարկվել գնորդին սեփականության իրավունքով պատկանող գույքի վրա բռնագանձում կիրառելու ուղղությամբ:

Դատախազի կողմից հաղորդում է ներկայացվել Հակակոռուպցիոն կոմիտե. նախաձեռնվել է քրեական վարույթ՝ 18.04.2003 թվականին ընդունված Քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով և 315-րդ հոդվածի 2-րդ մասով:

Բացի այդ, Դատախազությունը, պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորության շրջանակում, հայց է ներկայացվել Վարչական դատարան՝ տարածքը պետությանը վերադարձնելու նպատակով:

14. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների դատախազությունում, պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորության շրջանակում, ուսումնասիրվել է **Աբովյան փողոցի 10 հասցեում գտնվող շենքի** օտարման գործընթացը:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ Կառավարության 2007 թվականի ապրիլի 5-ի որոշմամբ՝ Երևան քաղաքի Աբովյան փողոցի 10 հասցեում գտնվող 1250 քմ մակերեսով շենքը և 56 քմ մակերեսով ավտոտնակը հետ է վերցվել Գիտությունների ազգային ակադեմիայի «Երկրաբանական գիտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ-ից և ուղղակի վաճառքի ձևով օտարվել «Լոկալ Դիվելոփըրզ» ՍՊ ընկերությանը: Նախնական գին է սահմանվել 166 մլն 318 հազար դրամը:

2007 թվականի մայիսի 23-ին Պետական գույքի կառավարման վարչության պետ Կ. Կ.-ի և «Լոկալ Դիվելոփըրզ» ՍՊ ընկերության տնօրեն Ս.Մ.-ի միջև կնքվել է պետական գույքի օտարման և գրավի պայմանագիր, որով գնորդի համար սահմանվել է պարտականություն՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 2 տարվա ընթացքում, գույքի հիմնական վերանորոգման և վերականգնման նպատակով ներդնել 150 մլն դրամ:

Նույն պայմանագրով սահմանվել է, որ վերոնշյալ պարտականությունը նշված ժամկետում չկատարելու դեպքում, Պետական գույքի կառավարման վարչությունն օրենքով սահմանված կարգով պետք է դիմի դատարան՝ գնորդին սեփականության իրավունքով պատկանող գույքի վրա բռնագանձում կիրառելու կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ պահանջով:

2008 և 2009 թվականներին Պետական գույքի կառավարման վարչության պետի կողմից գրություն է ուղարկվել «Լոկալ Դիվելոփըրզ» ՍՊ ընկերության տնօրենին՝ 150 մլն դրամի ներդրումային պարտավորության կատարումը հավաստող փաստաթղթեր ներկայացնելու պահանջով, սակայն պատասխան չի ստացվել:

2010 թվականի հուլիսի 7-ին Պետական գույքի կառավարման վարչության պետ Կ.Կ.-ն գրություն է ուղարկել Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահին՝ հայտնելով Աբովյան փողոցի 10 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ գրավի իրավունքի վերացման անհրաժեշտության մասին՝ նշելով, որ «Լոկալ Դիվելոփըրզ» ՍՊ ընկերության կողմից պայմանագրով նախատեսված պարտականությունները չեն կատարվել և որ Աբովյան 10 հասցեում գտնվող տարածքը բացառիկ գերակա հանրային շահ է ճանաչվել Կառավարության 2008 թվականի օգոստոսի 28-ի որոշմամբ:

2010 թվականի հուլիսի 16-ին Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի կողմից պետական գույքի կառավարման վարչության պետ Կ.Կ.-ին ուղարկվել է պատասխան գրություն այն մասին, որ գույքի նկատմամբ բացառիկ գերակա հանրային շահ ճանաչելու փաստը հիմք չէ այդ գույքի նկատմամբ գրանցած գրավի իրավունքը չեղյալ հայտարարելու համար, ուստի վերոնշյալ գրության հիման վրա՝ Աբովյան փողոցի 10 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ հիփոթեքի պետական գրանցումը դադարեցնել հնարավոր չէ:

2010 թվականի օգոստոսի 18-ին «Լոկալ Դիվելոփըրզ» ՍՊ ընկերության տնօրենը գույքի գրավը հանելու խնդրանքով գրություն է ուղարկել Կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետին՝ նշելով, որ Ընկերությունը սահմանված ժամկետում իրականացրել է Աբովյան փողոցի 10 հասցեում գտնվող շենքի վերանորոգման և վերականգնման հետ կապված ներդրումային ծրագիրը՝ ներկայացնելով հաշվետվություն:

Դատախազության ուսումնասիրությամբ, ի թիվս այլնի, պարզվել է, որ Ընկերության կողմից առերևույթ բիզնես գործունեության շրջանակներում չպարզված ժամանակահատվածում ձեռքբերված ապրանքների համար (ականջակալ, ֆեն, գդալ, ավել, մոխրաման և այլն) ծախսված գումարը գնահատվել է որպես Աբովյան փողոցի 10 հասցեում գտնվող շենքի հիմնական վերանորոգման և վերականգնման նպատակով կատարված ծախս:

Կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է նաև, որ բացառիկ հանրային գերակա շահ ճանաչված շենքին, միայն ութ տարի անց՝ 2016 թվականի օգոստոսի 9-ին է տրամադրվել առաջին շինթույլտվությունը: Միաժամանակ, բացակայում է ավարտական ակտը:

Դատախազի կողմից հաղորդում է ներկայացվել Հակակոռուպցիոն կոմիտե. նախաձեռնվել է քրեական վարույթ՝ 18.04.2003 թվականին ընդունված Քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով և 315-րդ հոդվածի 2-րդ մասով:

Բացի այդ, Դատախազությունը, պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորության շրջանակում, հայց է ներկայացվել Վարչական դատարան՝ տարածքը պետությանը վերադարձնելու նպատակով:

15. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների դատախազությունում, պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու գործառույթի շրջանակում, ուսումնասիրվել է **Պուշկինի 2 հասցեում գտնվող շենքի** օտարման գործընթացը:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ Կառավարության 2006 թվականի հոկտեմբերի 19-ի որոշմամբ՝ Պուշկին փողոցի 2 հասցեում գտնվող շինությունն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվել է Արտակարգ իրավիճակների նախարարության «Հայաստանի փրկարար ծառայության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին: 2008 թվականի օգոստոսի 28-ին, Կառավարության որոշմամբ, տարածքը ճանաչվել է բացառիկ հանրային գերակա շահ՝ այն հիմնավորմամբ, որ տարածքի բարեկարգմամբ Երևանում կվերանա վթարային բնակելի ֆոնդը, կստեղծվեն կանաչապատ տարածքներ, խաղահրապարակներ, կնորացվեն ինժեներատեխնիկական ենթակառուցվածքները: Բացի այդ, կառուցապատման աշխատանքները թույլ կտան մասնավոր ներդրումների հաշվին՝ վերակառուցել և վերականգնել շենքերն ու շինությունները՝ հին Երևանի ճարտարապետական ոճը համադրելով ներկայում կառուցվող շենքերի և շինությունների հետ:

Կառավարության նույն որոշմամբ՝ տարածքի ձեռքբերող է հանդիսացել «Լոկալ Դիվելոփըրզ» ՍՊԸ-ն, որի 50 տոկոսի բաժնետերը գործարար Ս.Մ.-ն է, իսկ մյուս 50 տոկոսը պատկանում է նրա կնոջը՝ ԵՊԲՀ-ի նախկին ռեկտոր Գ.Ք.-ին:

Ըստ օտարման պայմանագրի՝ «Լոկալ Դիվելոփըրզ» ՍՊԸ-ն, իր միջոցների հաշվին, պետք է ֆինանսավորեր Երևանի Մյասնիկյան պողոտայում գտնվող Փրկարար ծառայության նոր տիպային շենքի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման, շինարարության տեխնիկական հսկողության աշխատանքներն ու ծառայությունները:

Դատախազության կողմից իրականացված ուսումնասիրությամբ պարզվել է, որ համայնքապատկան տարածքի օտարումը չի իրականացվել օրենքով սահմանված կարգով, օտարվող սեփականության դիմաց չի տրվել համարժեք փոխհատուցում՝ 15 տոկոս ավելի գումար: Արդյունքում՝ Կենտրոն թաղային համայնքին առերևույթ պատճառվել է առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս:

Ուսումնասիրությամբ տվյալներ են ձեռք բերվել նաև այն մասին, որ անշարժ գույքը ձեռքբերող «Լոկալ Դիվելոփըրզ» ՍՊ ընկերությունը երկու տարվա ընթացքում չի սկսել օտարման հիմք հանդիսացող գործունեությունը, իսկ շահագրգիռ պատասխանատու պաշտոնատար անձինք որևէ միջոց չեն ձեռնարկել գերակա հանրային շահ ճանաչելու մասին որոշումն անվավեր ճանաչելու ուղղությամբ՝ Երևանին զրկելով առանձնապես խոշոր չափերի արժողությամբ անշարժ գույքը սեփական գույքային ֆոնդ վերադարձնելու հնարավորությունից:

Հանրային գերակա շահ ճանաչված լինելու հիմքով օտարված համայնքապատկան գույքն առ այսօր գտնվում է անփոփոխ վիճակում. խախտվել է օտարման գործընթացը (օտարման նպատակի իրագործումը պետք է սկսվեր գերակա հանրային շահ ճանաչելու մասին Կառավարության համապատասխան որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ յոթ տարվա ընթացքում):

Դատախազի կողմից հաղորդում է ներկայացվել Հակակոռուպցիոն կոմիտե. նախաձեռնվել է քրեական վարույթ՝ 18.04.2003 թվականին ընդունված Քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ և 315-րդ հոդվածի 2-րդ մասերով:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների դատախազությունը, պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորության շրջանակներում հայց է ներկայացրել Վարչական դատարան:

16. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների դատախազությունում, պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորության շրջանակում, ուսումնասիրվել է **Եզնիկ Կողբացի 50ա հասցեում գտնվող տարածքի օտարման** գործընթացը:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ Կառավարության 2007 թվականի մարտի 1-ի որոշմամբ՝ Երևան քաղաքի Եզնիկ Կողբացի 50ա հասցեում գտնվող վարչական շենքը ճանաչվել է բացառիկ հանրային գերակա շահ՝ այն հիմնավորմամբ, որ տարածքի բարեկարգմամբ Երևանում կվերանա վթարային բնակելի ֆոնդը, կստեղծվեն կանաչապատ տարածքներ, կնորացվեն ինժեներատեխնիկական ենթակառուցվածքները և այլն:

Կառավարության 2008 թվականի օգոստոսի 28-ի որոշմամբ՝ պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի օտարման գործընթացում հանդես է եկել Երևանի քաղաքապետը:

2009 թվականի փետրվարի 19-ի որոշմամբ՝ Եզնիկ Կողբացի 50ա հասցեում գտնվող անշարժ գույքի ձեռքբերող է հանդիսացել «Լոկալ Դիվելոփըրզ» ՍՊ ընկերությունը, որի 50 տոկոսի բաժնետերը գործարար Ս.Մ.-ն է, իսկ մյուս 50 տոկոսը պատկանում է նրա կնոջը՝ Երևանի պետական բժշկական համալսարանի նախկին ռեկտոր Գ.Ք.-ին:

Կառավարության 2013 թվականի օգոստոսի 29-ի որոշմամբ՝ վերոնշյալ տարածքը կրկին ճանաչվել է բացառիկ հանրային գերակա շահ՝ 2007 թվականի մարտի 1-ի որոշմամբ սահմանված նույնաբովանդակ հիմնավորմամբ: Տարածքի ձեռքբերողը կրկին հանդիսացել է «Լոկալ Դիվելոփըրզ» ընկերությունը:

Հանրային գերակա շահ ճանաչված լինելու հիմքով օտարված համայնքապատկան գույքն առ այսօր գտնվում է անփոփոխ վիճակում. խախտվել է օտարման գործընթացը (օտարման նպատակի իրագործումը պետք է սկսվեր գերակա հանրային շահ ճանաչելու մասին Կառավարության համապատասխան որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ յոթ տարվա ընթացքում):

Դատախազի կողմից հաղորդում է ներկայացվել Հակակոռուպցիոն կոմիտե. նախաձեռնվել է քրեական վարույթ՝ 18.04.2023 թվականին ընդունված Քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով:

Բացի այդ, Դատախազությունը, պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորության շրջանակում, հայց է ներկայացրել Վարչական դատարան:

17. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների դատախազությունում, պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորության շրջանակում իրականացված ուսումնասիրությամբ պարզվել է, որ 2001 թվականի փետրվարի 12-ին «Կանաչապատում» ՊՓԲԸ-ի և «Ֆոտոմաստեր» ՍՊ ընկերության միջև կնքվել է **Մարշալ Բաղրամյան, Մեսրոպ Մաշտոց պողոտաների և Մոսկովյան փողոցի միջև ընկած պուրակում** գտնվող տարածքի վարձակալության պայմանագիր: Պայմանագրի համաձայն՝ պուրակը (4668 քմ) 25 տարի ժամկետով վարձակալությամբ հանձնվել է «Ֆոտոմաստեր» ընկերությանը: 2014 թվականի հուլիսի 8-ին Ընկերության բաժնեմասերի նկատմամբ գրանցվել է Արտյոմ և Գուրգեն Խաչատրյանների սեփականության իրավունքը: Նույն թվականի օգոստոսի 4-ին Ընկերությանը տրվել է շինարարության թույլտվություն՝ պուրակում սրճարանների տաղավարների, ստորգետնյա շինության կառուցման աշխատանքների կատարման համար:

Երևանի քաղաքապետի՝ 2017 թվականի մարտի 25-ի որոշմամբ՝ 2001 թվականին կնքված վարձակալության պայմանագիրը լուծվել է: Նույն օրը, առանց մրցույթի, Ընկերության հետ կնքվել է վերոնշյալ հողամասի վարձակալության պայմանագիր՝ վարձակալության ժամկետ սահմանելով մինչև 2026 թվականի փետրվարի 12-ը:

2017 թվականի ապրիլի 12-ին Երևան քաղաքի Մոսկովյան փողոցի 29/4 հասցեում գտնվող 3923,54 քմ մակերեսով հողամասի նկատմամբ (հողամասի սահմանները վերաճշտվել են Երևանի քաղաքապետի 2017 թվականի փետրվարի 16-ի որոշմամբ) գրանցվել է «Ֆոտոմաստեր» ՍՊ ընկերության վարձակալության իրավունքն ու նույն օրը վերոնշյալ հողամասում գտնվող ընդհանուր 1737,06 քմ մակերեսով ստորգետնյա շինությունների նկատմամբ գրանցվել է Ընկերության սեփականության իրավունքը: Մինչդեռ, Երևանի քաղաքապետի 2017 թվականի փետրվարի 16-ի 415-Ա որոշման համաձայն՝ Մոսկովյան 29/4 հասցեում գտվող 3923,54 քմ մակերեսով հողամասն ընդգրկված է Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում (օտարման ոչ ենթակա տարածքներ):

Դատախազի կողմից հաղորդում է ներկայացվել Հակակոռուպցիոն կոմիտե. նախաձեռնվել է քրեական վարույթ՝ 18.04.2003 թվականին ընդունված Քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով:

Բացի այդ, Դատախազությունը, պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորության շրջանակում հայց է ներկայացրել Վարչական դատարան:

18. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների դատախազությունում, պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու գործառույթի շրջանակում, ուսումնասիրվել է **Ազատամարտիկների փողոցի 78/3 հասցեում գտնվող շենքի** օտարման գործընթացը: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Երևանի քաղաքապետի 2003 թվականի հուլիսի 1-ի որոշմամբ՝ 2003 թվականի հունիսի 27-ին կայացած աճուրդային վաճառքի և վարձակալության մրցույթի արդյունքների հիման վրա, Ազատամարտիների փողոցի 78/3 հասցեում գտնվող հողատարածքը 2003 թվականի դեկտեմբերի 26-ին վարձակալությամբ տրամադրվել է քաղաքացի Մ.Պ.-ին՝ մանկական խաղահրապարակ և բացօթյա սրճարան կառուցելու նպատակով: Հողամասը գտնվում է Էրեբունու մանկական զբոսայգու տարածքի սահմաններում, իսկ Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 15-ի որոշմամբ՝ ներառվել է Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների՝ օտարման ոչ ենթակա հողատարածքների ցանկում:

2008 թվականի հունվարի 17-ին Երևանի քաղաքապետի տեղակալ Կ.Դ.-ն տրամադրել է ակնհայտ կեղծ մասնագիտական եզրակացություն, համաձայն որի՝ Ազատամարտիների փողոցի 78/3 հասցեում գտնվող հողամասն ընդգրկված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում: Եզրակացության հիման վրա՝ Կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանման իրավասու պաշտոնատար անձինք Մ.Պ.-ին հատկացրել են անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական: Հետագայում Ազատամարտիների փողոցի 78/3 հասցեում գտնվող հողատարածքը նվիրատվությամբ գրանցվել է Էրեբունի վարչական շրջանի նախկին ղեկավար, ԱԺ նախկին պատգամավոր Մ.Ս.-ի կնոջ՝ Շ.Ա.-ի անունով: Շ.Ա.-ն, օտարման ոչ ենթակա վերոնշյալ հողատարածքը 150 հազար ԱՄՆ դոլարով օտարել է իրավաբանական անձի:

Քրեական վարույթով հիմնավորվել է վերոնշյալ գործընթացում Երևանի քաղաքապետի տեղակալ Կ.Դ.-ի կողմից պաշտոնեական լիազորությունները չարաշահելու հանգամանքը: Կ.Դ.-ի վերաբերյալ 2021 թվականի դեկտեմբերի 27-ին որոշում է կայացվել քրեական հետապնդում չիրականացնելու մասին՝ վաղեմության ժամկետներն անցած լինելու հիմքով:

Դատախազությունը, պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորության շրջանակում, հայց է ներկայացրել Վարչական դատարան:

19. Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների դատախազությունում, պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու գործառույթի շրջանակում, ուսումնասիրվել է **Նոր Նորք վարչական շրջանի «Տիգրան Մեծի անվան զբոսայգու» տարածքի Մոլդովական 27ա հասցեում գտնվող գույքի և տարածքի** օտարման գործը:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ 2004 թվականի մայիսի 17-ին «Կրեդիտ-Երևան բանկ» ՍՊԸ-ին տրվել է Մոլդովական 27ա հասցեում գտնվող 441,01 քմ մակերեսով շինության սեփականության և 525 քմ մակերեսով հողամասի վարձակալության վերաբերյալ իրավունքի վկայականը (հողամասը, Երևանի քաղաքապետի 2004 ապրիլի 27-ի թիվ 697-Ա որոշմամբ, ընդգրկված է եղել օտարման ոչ ենթակա հողերի ցանկում):

2004 թվականի հունիսի 1-ին «Կրեդիտ Երևան բանկ» ՍՊԸ լուծարվող բանկի և Պաշտպանության նախարարության միջև՝ ի դեմս նախարար Ս.Ս.-ի կողմից լիազորված անձ Վ.Ա.-ի, կնքվել է պայմանագիր, ըստ որի՝ Բանկը Պաշտպանության նախարարության հանդեպ իր ունեցած 500 հազար ԱՄՆ դոլար պարտավորությունների դիմաց՝ ՊՆ-ին է հանձնել Մոլդովական 27ա հասցեում գտնվող 441,01 քմ մակերեսով շինությունն ու 525 քմ մակերեսով հողամասը:

Պայմանագրով Նախարարությունը պարտավորվել է գույքի վաճառքից գոյացած գումարը՝ 500 հազար ԱՄՆ դոլարը գերազանցելու դեպքում, ավել գումարը վերադարձնել «Կրեդիտ Երևան բանկ» ՍՊ ընկերությանը:

Մինչդեռ, ընդամենը մեկ ամիս 12 օր անց՝ 2004 թվականի հուլիսի 13-ին, Նախարարությունը՝ ի դեմս նախարար Ս.Ս.-ի, նույն գույքը 90 հազար ԱՄՆ դոլարով՝ 410 հազար ԱՄՆ դոլարով պակաս, վաճառել է «Անելիք բանկ» ՍՊԸ-ին

Բացի այդ, Կառավարության՝ 2005 թվականի դեկտեմբերի 12-ի որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծի ուսումնասիրությամբ պարզվել է, որ նշված տարածքը, դեռևս չպարզված հանգամանքներում, առանձնացվել է այգու սահմաններից՝ դասակարգվելով որպես հասարակական կառուցապատման հողամաս: Մասնավորապես՝ 2006 թվականին Երևանի գլխավոր ճարտարապետն «Անելիք բանկ» ՍՊԸ-ին հայտնել է, որ հողամասը ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդված սահմանափակումների ցանկում չէ և կարող է օտարվել, ինչի հիման վրա հողամասն ուղղակի վաճառքով՝ 2 մլն 375 հազար 100 դրամով օտարվել է վերը նշված Բանկին: 2007 թվականին Երևանի քաղաքապետի որոշմամբ՝ Բանկին վաճառվել է նաև հողամասին հարակից 274, 85 քմ մակերեսով հողամասը, ինչպես նաև տրամադրվել է 239 քմ մակերեսով հողամաս՝ առանց քաղաքաշինական գործունեություն իրականացնելու թույլտվության:

2018 թվականին «Անելիք բանկ» ՍՊԸ-ն անշարժ գույքը 135 մլն 556 հազար 400 դրամով վաճառել է քաղաքացիներ Ա.Վ.-ին և Ար.Վ.-ին:

Դատախազի կողմից հաղորդում է ներկայացվել Հակակոռուպցիոն կոմիտե. նախաձեռնվել է քրեական վարույթ՝ 18.04.2003 թվականին ընդունված Քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով:

Ստորև ներկայացվում են համայնքային շահերի պաշտպանության հարցադրումներով կատարված ուսումնասիրությունների արդյունքների, ներկայացված հաղորդումների և հայցադիմումների վերաբերյալ տեղեկությունները: Այսպես՝

1. Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունում ուսումնասիրվել են Երևան քաղաքի **«Վարդավառ» զբոսայգու և լճի** հարակից տարածքների օտարման գործընթացի վերաբերյալ փաստաթղթերը: Պարզվել է, որ Կառավարության՝ 1997 թվականի մարտի 13-ի թիվ 42 որոշմամբ՝ «Վարդավառ» զբոսայգին և լիճը սեփականության իրավունքով փոխանցվել է Էրեբունու թաղապետարանին: Էրեբունու թաղապետարանը 2000 թվականի օգոստոսի 2-ին, այնուհետև՝ 2009 թվականի ապրիլի 2-ին դիմել է Երևանի քաղաքապետին՝ «Վարդավառ» զբոսայգու և լճի տարածքի սահմանների ճշգրտման խնդրանքով:

Արդյունքում՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունը տարածքի տեղագրական հանույթի ճշգրտմամբ՝ 2009 թվականի մայիսի 5-ի թիվ 18-06/2-9134 եզրակացությամբ նշել է, որ «Վարդավառ» զբոսայգու և լճի փաստացի զբաղեցրած հողամասի մակերեսը 179610.0 քմ է՝ սեփականության իրավունքի վկայականում ամրագրված 201200.0 քմ-ի փոխարեն

Հիմք ընդունելով նշված եզրակացությունը՝ Երևանի քաղաքապետի՝ 2009 թվականի մայիսի 27-ի թիվ 5360-Ա որոշմամբ՝ չեղյալ է ճանաչվել Երևանի քաղաքապետի 2001 թվականի փետրվարի 22-ի թիվ 138 որոշման հիման վրա թողարկված գլխավոր հատակագիծը, սահմանվել է նոր գլխավոր հատակագիծ, որով «Վարդավառ» զբոսայգու և լճի զբաղեցրած տարածքը 21590 քմ-ով նվազեցվել է և 201200.0 քմ-ի փոխարեն նշվել՝ 179610.0 քմ:

Ուսումնասիրությամբ պարզվել է նաև, որ Էրեբունի համայնքի ավագանու՝ դեռևս 2004 թվականի օգոստոսի 12-ի թիվ 70Ա, 71Ա, 72Ա և 73Ա որոշումներով՝ «Վարդավառ» զբոսայգու տարածքում՝ Սասունցի Դավիթ 87 հասցեում, գտնվող գույքերն օտարվել են այլ անձանց, ինչը հաստատում է այն փաստը, որ «Վարդավառ» զբոսայգու և լճի մակերեսը նվազեցնելու նպատակը՝ օտարված գույքերի զբաղեցրած տարածքները Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումներից դուրս բերելն է եղել:

Ուսումնասիրության արդյունքներով՝ դատախազը հանցանքի մասին հաղորդում է ներկայացրել Հակակոռուպցիոն կոմիտե. նախաձեռնվել է քրեական վարույթ՝ Քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 446-րդ հոդվածի 1-ին մասով:

Բացի այդ, հայցեր են ներկայացվել Վարչական դատարան՝ «Վարդավառ» զբոսայգու և լճի նվազեցված տարածքը համայնքին վերադարձնելու նպատակով:

2. Երևան քաղաքի դատախազությունում ուսումնասիրվել է Երևան քաղաքի **Տերյան 76 հասցեում տեղակայված անշարժ գույքի («Յանս» երաժշտական ակումբ և ռեստորան)** կադաստրային գործը:

Պարզվել է, որ Երևանի քաղաքապետի՝ 2003 թվականի հունվարի 14-ի որոշմամբ՝ ուսանողական այգու՝ Տերյան 76 հասցեին հարող տարածքում, «Արմեն» ՍՊ ընկերությանը հատկացվել է 1248.0 քմ մակերեսով հողատարածք. 2003 թվականի մարտի 10-ին կնքվել է զբոսայգիներում և պուրակներում հողատարածքի վարձակալության պայմանագիր, իսկ Երևանի քաղաքապետի 2015 թվականի սեպտեմբերի 3-ի որոշմամբ՝ նշված հողատարածքից 626.22 քմ մակերեսով հողամասն ուղղակի վաճառքով օտարվել է ընկերությանը: Ուսումնասիրությամբ պարզվել է, որ Երևանի քաղաքապետի՝ 2007 թվականի նոյեմբերի 28-ի որոշմամբ հաստատված՝ «Կենտրոն» թաղային համայնքի տարածքի գոտիավորման նախագծի համաձայն՝ տարածքը գտնվում է ընդհանուր օգտագործման կանաչապատ գոտում, որով հաստատվում է այդ տարածքի՝ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի համաձայն՝ օտարման ոչ ենթակա լինելու կարգավիճակը:

Ուսումնասիրության արդյունքներով՝ դատախազի կողմից հանցագործության մասին հաղորդում է ներկայացվել Հակակոռուպցիոն կոմիտե. նախաձեռնվել է քրեական վարույթ՝ 18.04.2003 թվականին ընդունված Քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի և 314-րդ հոդվածի 1-ին մասերով: Բացի այդ, հայց է ներկայացվել Վարչական դատարան՝ ապօրինի օտարված հողամասը համայնքին վերադարձնելու նպատակով:

3. Երևան քաղաքի դատախազությունում ուսումնասիրվել է 2022 թվականի մայիսի 24-ին Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից ստացված՝ «Հարավկովկասյան երկաթուղու» օտարման շերտի տեղամասերում ինքնակամ զբաղեցված հողամասերի վերաբերյալ տեղեկատվությունը: Ուսումնասիրությամբ պարզվել է, որ **Նորագավիթ 1-ին փողոցով անցնող երկաթգծին հարակից տարածքները հանդիսացել են հասարակական նշանակության օտարման ոչ ենթակա կանաչ գոտիներ**,

իսկ Շենգավիթ վարչական շրջանի թաղապետարանում տեղանքի իրադրության հատակագծի ուսումնասիրությամբ տվյալներ են ձեռք բերվել նույն գոտու տարածքում առկա հողամասերը սեփականության իրավունքով մի շարք անձանց օտարելու վերաբերյալ:

Դատախազը 2023 թվականի մարտի 20-ին հանցանքի մասին հաղորդում է ներկայացրել Հակոռուպցիոն կոմիտե. նախաձեռնվել է քրեական վարույթ՝ Քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 1-ին մասով և 445-րդ հոդվածի 1-ին մասով:

4. Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների դատախազությունում ուսումնասիրվել է **Նանսեն 26 հասցեում գտնվող սրճարանի օտարման գործընթացը (Նանսենի անվան զբոսայգի):**

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ Երևանի քաղաքապետի՝ 2006 թվականի օգոստոսի 30-ի որոշմամբ՝ Նանսեն փողոցի 26 հասցեում գտնվող թիվ 741 սրճարանի ժամանակավոր կառույցի զբաղեցրած 533,4 քմ մակերեսով հողամասն անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով տրվել է «Երևանի Նոր Նորք թաղային համայնքի ղեկավարի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկին: Քաղաքապետարանի և համայնքի ղեկավարի միջև կնքվել է պայմանագիր, տրվել է սեփականության իրավունքի վկայական, որում հողամասի նպատակային նշանակությունը նշվել է «բնակավայրեր», օգտագործման նպատակը՝ սրճարանի կառուցում և սպասարկում: Նոր Նորք համայնքի ղեկավարի՝ 2006 թվականի նոյեմբերի 6-ի թիվ 310 որոշմամբ՝ 76,8 քմ մակերեսով շինությունները 1 մլն 485 հազար դրամով՝ ուղղակի վաճառքով, օտարվել են իր կնոջը:

2007 թվականի հունվարի 19-ին համայնքի ղեկավարի և վերջինիս կնոջ անվամբ տրվել է սեփականության իրավունքի վկայական: Հողամասի իրավունքի տեսակը նշվել է «Վարձակալություն», իսկ «Լրացուցիչ նշումներ» բաժնում արձանագրվել է, որ հողամասն ընդգրկված է Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի 6-րդ կետի սահմանափակումների ցանկում:

Համայնքի նշված ղեկավարի մահվամբ պայմանավորված՝ 2010 թվականի սեպտեմբերի 2-ին նրա կնոջը, դստերը և որդուն ժառանգության իրավունքով, ի թիվս այլ գույքերի, անցել է նաև նշված գույքը, նրանց տրվել է սեփականության իրավունքի վկայական, որում կրկին արձանագրվել է, որ հողամասն ընդգրկված է Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի 6-րդ կետի սահմանափակումների ցանկում:

2012 թվականի նոյեմբերի 16-ին համայնքի ղեկավարի կինը գրություն է ուղարկել Երևանի քաղաքապետարան՝ նշելով, որ այգու սահմանները ճշտվել են, իրենց զբաղեցրած հողամասն այգու սահմաններում չէ և խնդրել է ուղղակի վաճառքով 533,4 քմ հողամասը ևս օտարել իրեն:

Քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետը և Ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետը եզրակացություն են տվել, համաձայն որի՝ հողամասն ընդգրկված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում, այն դեպքում, երբ դիմումատուն դիմումին կից ներկայացրել է վերոնշյալ սեփականության իրավունքի վկայականի պատճենը՝ հողամասը Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի 6-րդ կետի սահմանափակումների ցանկում ընդգրկված լինելու մասին նշումով: Արդյունքում՝ Քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության կողմից կազմվել է Երևանի քաղաքապետի որոշման նախագիծ, որը ստորագրվել է քաղաքապետարանի իրավասու պաշտոնատար անձանց և Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի կողմից:

Այնուհետև, Երևանի քաղաքապետի՝ 2013 թվականի փետրվարի 25-ի թիվ 723-Ա որոշմամբ՝ հողամասն ուղղակի վաճառքով՝ 3 մլն 712 հազար 464 դրամով, օտարվել է համայնքի ղեկավարի կնոջը, վերջինիս որդուն և դստերը, որոնք 2018 թվականի ապրիլի 10-ին 76,8 քմ սրճարանն ու 533,4 քմ հողամասը 45 մլն 790 հազար դրամով վաճառել են մեկ այլ քաղաքացու:

Դատախազը հաղորդում է ներկայացրել Հակակոռուպցիոն կոմիտե. նախաձեռնվել է քրեական վարույթ՝ 18.04.2003 թվականին ընդունված Քրեական օրենսգրքի 308-րդ և 314-րդ հոդվածներով:
Բացի այդ, պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորության շրջանակում հայց է ներկայացվել Վարչական դատարան:

5. Երևանի Շենգավիթ վարչական շրջանի դատախազությունում ուսումնասիրվել է Երևան քաղաքի **Կոմիտասի անվան զբոսայգու** տարածքում գտնվող հողամասի կադաստրային գործը: Ուսումնասիրությամբ պարզվել է, որ Երևանի քաղաքապետի՝ 2004 թվականի ապրիլի 15-ի որոշմամբ Արշակունյաց 28/11 հասցեում գտնվող 192 քմ մակերեսով հողամասն ընդգրկված է եղել Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված՝ օտարման ոչ ենթակա տարածքների ցանկում, սակայն Երևանի քաղաքապետի 2012 թվականի հոկտեմբերի 29-ի որոշմամբ՝ հողամասն ուղղակի վաճառքով օտարվել է քաղաքացի Ռ.Ա.-ին:
Դատախազը հաղորդում է ներկայացրել Հակակոռուպցիոն կոմիտե. նախաձեռնվել է քրեական վարույթ՝ 18.04.2003 թվականին ընդունված Քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով:
Բացի այդ, հայցադիմում է ներկայացվել Վարչական դատարան՝ զբոսայգու՝ ապօրինի օտարված տարածքը համայնքին վերադարձնելու նպատակով:

6. Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության կողմից կատարված ուսումնասիրությամբ պարզվել է, որ Երևանի Ռաֆֆու փողոցի 22 հասցեում գտնվող **Վահան Զատիկյանի անվան այգու** տարածքից 290.0 քմ մակերեսով հողամասում կառուցված 571.8 քմ մակերեսով ինքնակամ կառույցը Երևանի քաղաքապետի՝ 2011 թվականի նոյեմբերի 16-ի որոշմամբ ճանաչվել է Երևան համայնքի սեփականություն և հաջորդ տարի շինությունն իր զբաղեցրած հողամասով օտարվել է Մ.Շ.-ին:

Դատախազությունը, օրենսդրության պահանջների խախտմամբ կայացված որոշումն անվավեր ճանաչելու պահանջով, հայցադիմում է ներկայացրել Վարչական դատարան:
7. Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության կողմից կատարված ուսումնասիրությամբ պարզվել է, որ Երևանի քաղաքապետի՝ 2010 թվականի հուլիսի 22-ի 3388-Ա որոշմամբ օտարվել են Անդրանիկի 121/8, 2013 թվականի մայիսի 17-ի 2480-Ա որոշմամբ՝ **Անդրանիկի 123/5 և 121/8 հասցեներում** գտնվող Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում ընդգրկված «Իտալական» այգու հողամասերը:
Դատախազությունը, Երևանի քաղաքապետի որոշումներն անվավեր ճանաչելու պահանջով, 3 հայցադիմում է ներկայացրել Վարչական դատարան:

8. Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության կողմից կատարված ուսումնասիրության արդյունքներով Հակակոռուպցիոն դատարան է ներկայացվել 2 հայցադիմում՝ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում ընդգրկված՝ **Անդրանիկի 43 հասցեում** և դրան հարակից տարածքներում ինքնակամ կառույցները քանդելու պահանջով:

9. Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության կողմից կատարված ուսումնասիրությամբ պարզվել է, որ Երևանի քաղաքապետի՝ 2004 թվականի մայիսի 11-ի 799-Ա որոշմամբ՝ Մալաթիա-Սեբաստիա թաղային համայնքին օգտագործման իրավունքով տրամադրված՝ Բաբաջանյան 304 հասցեում գտնվող 8760 քմ մակերեսով **«Շողեր» մսուր-մանկապարտեզը**՝ իր հողամասով, համայնքի ավագանու 2004 թվականի սեպտեմբերի 17-ի որոշմամբ օտարվել է «Ա.Խալաթյան վարժարան» ՍՊԸ-ին:

Դատախազի կողմից հաղորդում է ներկայացվել Քննչական կոմիտե. նախաձեռնվել է քրեական վարույթ՝ 18.04.2003 թվականին ընդունված Քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով:

Հայցադիմումներ են ներկայացվել Վարչական և Հակակոռուպցիոն դատարաններ:

10. Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության կողմից կատարված ուսումնասիրությամբ պարզվել է, որ 2008 թվականի ապրիլի 16-ի 113-Ա որոշմամբ՝ Մալաթիա-Սեբաստիա համայնքի ավագանին Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված արգելքի պայմաններում՝ Երևան քաղաքի **Ձամբուլի 29 և 29/3 հասցեներում** գտնվող 0.515193 հա հողատարածքը տրամադրել է Ա.Հ.-ին: Նախաձեռնված քրեական վարույթի նախաքննության ընթացքում նշանակված փորձաքննության եզրակացությամբ հաստատվել է, որ վերոնշյալ հողատարածքը նախատեսված է եղել էլեկտրահաղորդիչ գծերի համար:

Դատախազի կողմից հաղորդում է ներկայացվել Քննչական կոմիտե. նախաձեռնվել է քրեական վարույթ՝ 18.04.2003 թվականին ընդունված Քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով:

Բացի այդ, Դատախազությունը, Մալաթիա-Սեբաստիա համայնքի ավագանու 2008 թվականի ապրիլի 16-ի որոշումն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջներով, հայցադիմում է ներկայացրել Վարչական դատարան:

11. Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության կողմից կատարված ուսումնասիրությամբ պարզվել է, որ Շահումյանի շրջանի Հաղթանակի գյուղխորհրդի կողմից 1990 թվականի հունիսի 13-ին և 1997 թվականի հոկտեմբերի 24-ին **Հաղթանակ թաղամասում** որոշ հողօգտագործողների տրամադրվել են հողի սեփականության իրավունքի պետական ակտեր՝ վավերացված «ՀԱՅԱՍՏԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ ԹԱՂ. ՀԱՄԱՅՆՔԻ Փ.Բ.Ը.» կնիքով:

Մալաթիա-Սեբաստիա թաղային համայնքը «փակ բաժնետիրական ընկերության» կազմակերպաիրավական ձև երբևէ չի ունեցել, և կնիքը չէր կարող պարունակել «ՓԲԸ» գրառումը: 2022 թվականին հողօգտագործողները սեփականության իրավունքի պետական ակտերը ներկայացրել են Երևանի քաղաքապետարան:

Դատախազի կողմից հաղորդում է ներկայացվել Քննչական կոմիտե. նախաձեռնվել է քրեական վարույթ՝ Քրեական օրենսգրքի 446-րդ հոդվածի 1-ին մասով:

Բացի այդ, Դատախազությունը հայցադիմում է ներկայացրել Վարչական դատարան:

12. Շիրակի մարզի դատախազությունում քրեական վարույթի ուսումնասիրությամբ պարզվել է, որ 1999-2012 թվականներին Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետի պաշտոնը զբաղեցրած անձը, չարաշահելով իր պաշտոնական լիազորությունները, կեղծ տեղեկություններ մտցնելով պաշտոնական փաստաթղթերում, իրենից ծառայողական կախվածության մեջ գտնվող պաշտոնատար անձանց օժանդակությամբ իր պաշտոնավարման տարիներին **Գյումրի քաղաքի սեփականությունը հանդիսացող, քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով չփոխանցվող, Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում ընդգրկված՝ զբոսայգի, ընդհանուր օգտագործման ճանապարհներ ու կանաչ գոտի հանդիսացող 24 միավոր հողատարածքներն ապօրինի օտարել է մի շարք, այդ թվում՝ իր հետ փոխկապակցված կամ իր հետ մտերիմ հարաբերությունների մեջ գտնվող ֆիզիկական և իրավաբանական անձանց:**

Բացի այդ, 2006 թվականին պատմության և մշակույթի անշարժ հուշարձան-շենք հանդիսացող **Գյումրի քաղաքի Աբովյան 262 հասցեում գտնվող շինությունը (կառուցվել է 19-րդ դարի վերջում, հանդիսացել է նախկին Ժողդատարանի շենքը)** ուղղակի վաճառքով օտարել է իր հետ մտերիմ հարաբերությունների մեջ գտնվող «Ալեքսանդրապոլ» հյուրանոցի տնօրեն Ա.Մ.-ին:

Քրեական վարույթը՝ 5 անձանց վերաբերյալ, մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Հակակոռուպցիոն դատարան: Միաժամանակ, դատախազը հայցադիմումներ է ներկայացրել Վարչական դատարան՝ հողամասերը համայնքին վերադարձնելու նպատակով:

13. Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող հողամասերի վրա տեղադրված **վճարահաշվարկային տերմինալների** վերաբերյալ հրապարակված հոդվածի հիման վրա՝ Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունում նախաձեռնված ուսումնասիրությամբ պարզվել է, որ Երևանի քաղաքապետարանի և «Լոկատոր» ու «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲ ընկերությունների կոնսորցիումի միջև 2013 թվականի ապրիլի 4-ին կնքվել է Երևան քաղաքում ավտոկայանատեղերի կազմակերպման ծառայությունների մատուցման գնման պայմանագիր: Պայմանագրի շրջանակում 2014 թվականի հուլիսի 10-ին կնքված համաձայնագրով սահմանվել է ավտոկայանատեղերին անմիջապես հարակից տարածքներում տեղադրել վճարումների ընդունման տերմինալներ: Տերմինալների տեղադրման նպատակով Երևանի քաղաքապետի որոշումների հիման վրա՝ տարբեր վարչական շրջաններում առանձնացվել է 235 հողատարածք, սակայն չեն կանոնակարգվել առանձնացված հողամասերն օգտագործման տրամադրելու կարգն ու պայմանները, չեն կանոնակարգվել նաև դրանց համար վճարումները:

Պարզվել է, որ Երևան համայնքի մայթերին, այսինքն՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի վրա, առանց որևէ հիմքի, տեղադրված է ընդհանուր 1296 տերմինալ, իսկ մեկ տերմինալի վարձավճարը կազմել է 19 հազար 860 դրամ, ինչը նշանակում է, որ համայնքը տարիներ շարունակ փաստացի զրկվել է յուրաքանչյուր տեղադրված տերմինալի համար ամսական շուրջ 19 հազար 860 դրամ ստանալու հնարավորությունից, որը յուրաքանչյուր ամսվա կտրվածքով 1296 տերմինալների համար կազմում է 25 մլն 738 հազար 560 դրամ, իսկ 3 տարվա հաշվարկով՝ շուրջ 926 մլն 588 հազար 160 դրամ:

Ուսումնասիրության ընթացքում ձեռք են բերվել առերևույթ տվյալներ այն մասին, որ Երևանի քաղաքապետարանի պաշտոնատար անձանց կողմից 2014-2023 թվականների ընթացքում իրենց ծառայողական պարտականությունների կատարման նկատմամբ անբարեխիղճ կամ անփույթ վերաբերմունքի, համայնքային սեփականության հողերի տրամադրումը ոչ պատշաճ կազմակերպելու, համայնքի գույքի շահագործման արդյունավետ օգտագործման նկատմամբ պատշաճ հսկողություն չիրականացնելու հետևանքով համայնքին նախնական տվյալներով պատճառվել է առանձնապես խոշոր չափերի՝ շուրջ 926 մլն 588 հազար 160 դրամ վնաս:

Դատախազի կողմից հաղորդում է ներկայացվել Քննչական կոմիտե. նախաձեռնվել է քրեական վարույթ՝ 18.04.2003 թվականին ընդունված Քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 2-րդ մասով (պաշտոնեական անփութություն):

Հաշվետու ժամանակաշրջանում պետական շահերի պաշտպանության ոլորտում շարունակվել են Երևան քաղաքի տարբեր վարչական շրջաններում նախադպրոցական հաստատությունների՝ մանկապարտեզների ապօրինի օտարումների հանգամանքները պարզելու ուղղությամբ միջոցառումները:

Այսպես՝

Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի չորս մանկապարտեզների՝ թիվ 132, 147, 159 և 199, ինչպես նաև Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի թիվ 304 մսուր մանկապարտեզի օտարման կապակցությամբ, պետական շահերի պաշտպանության հայց է ներկայացրել դատարան: Պետական շահերի պաշտպանության հայցերից բացի, նշված մանկարտեզների օտարման կապակցությամբ նախաձեռնված են քրեական վարույթներ:

Երևան քաղաքի 14 մանկապարտեզների օտարումների կապակցությամբ ևս նախաձեռնված են քրեական վարույթներ: Դրանք են՝ Նոր Նորք վարչական շրջանում գտնվող հինգ մանկապարտեզները, Կենտրոն վարչական շրջանում գտնվող 7 մանկապարտեզները, Դավթաշեն վարչական շրջանում գտնվող 1 մանկապարտեզը և Շենգավիթ վարչական շրջանում գտնվող 1 մանկապարտեզը:

Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունում մանկապարտեզների օտարման դեպքերի ուսումնասիրությունների արդյունքում արձանագրված խախտումները և դրանց հիման վրա նախաձեռնված քրեական վարույթները վերաբերում են մանկապարտեզները շուկայական կամ կադաստրային արժեքից ցածր գնով օտարելուն: Ձեռնարկված միջոցառումները նպատակ ունեն պարզելու օտարման հանգամանքները, օտարման վերաբերյալ օրենսդրական սահմանափակումների առկայությունը, իրավասու պաշտոնատար անձանց շրջանակը, վերջնական վնասի չափը և վերականգնելու համայնքին պատճառված վնասը:

Երևան քաղաքից բացի, ուսումնասիրություններ են իրականացվում նաև մարզերում:

Հաշվետու ժամանակաշրջանում քաղաքաշինության ոլորտում համայնքային շահերի պաշտպանությունն ապահովելու նպատակով ուսումնասիրություններ են իրականացվել նաև Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի այն շինհրապարակներում, որոնք տևական ժամանակ ցանկապատված են և ընդգրկում են համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքներ, այդ թվում՝ մայթեր, փողոցներ:

Իրականացված ուսումնասիրություններով պարզվել է, որ **Երևան քաղաքի հատկապես Կենտրոն վարչական շրջանում առկա են բազմաթիվ տարածքներ, որտեղ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը (մայթ, փողոց) կառուցապատողների կողմից ինքնակամ ներառվել են շինարարական հրապարակներում:**

Այդ տարածքների վերաբերյալ Երևանի քաղաքապետի և կառուցապատողների միջև վարձակալության պայմանագրեր չեն կնքվել, մի շարք դեպքերում շինհրապարակների տարածքներում տևական ժամանակ աշխատանքներ չեն իրականացվում, իսկ մայթերի և փողոցների՝ շինհրապարակներում ներառումը լուրջ խոչընդոտներ է ստեղծում քաղաքացիների շարժի և տրանսպորտային միջոցների երթևեկության համար:

Մասնավորապես՝

- **Արամի փողոցում՝ նախկին «Մանկական աշխարհ» հանրախանութի հետնամասում առկա շինհրապարակում ներառվել են համայնքային սեփականություն հանդիսացող՝ 273.8 քմ մակերեսով հողամաս (մայթ) և 49.9 քմ մակերեսով հատված Արամի փողոցից, իսկ գույքի հանդիպակաց ուղղությամբ՝ 84.9 քմ մակերեսով համայնքային նշանակության հողատարածքը գտնվում է փորված վիճակում:**
- **Աբովյան և Արամի փողոցների հատման խաչմերուկի հարակից շինարարական հրապարակում ներառվել են համայնքային սեփականություն հանդիսացող հողամասեր՝ ընդհանուր 139,8 քմ մակերեսներով:**
- **Արամի և Տերյան փողոցների հատման խաչմերուկին հարակից շինարարական հրապարակի տարածքում ներառվել է ընդհանուր օգտագործման փողոց՝ 23,3 քմ մակերեսով:**
- **«Մոսկվա» կինոթատրոնի հանդիպակաց հատվածում առկա շինհրապարակի ցանկապատը տեղադրված է համայնքային սեփականության հողամասում՝ 212 քմ մակերեսով, ընդհանուր օգտագործման փողոցի տարածքում՝ 45,9 քմ մակերեսով, իսկ շինհրապարակի անցումը տեղադրված է ընդհանուր օգտագործման փողոցի տարածքում՝ 98,8 քմ մակերեսով: «Մոսկվա» կինոթատրոնի հարակից շինարարական հրապարակի ցանկապատը տեղադրված է համայնքային սեփականության հողամասում՝ 502,4 քմ մակերեսով:**

Ուսումնասիրության շրջանակներում կատարված հարցումներով՝ վերոնշյալ տարածքների՝ ճարտարապետաշինարարական նախագծով առանձնացնելու և կառուցապատողների հետ վարձակալության պայմանագրեր կնքելու, համայնքային հողերի զավթման փաստերով կառուցապատողներին վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ տվյալներ ձեռք չեն բերվել:

Դատախազների կողմից վերոնշյալ դեպքերով հաղորդումներ են ներկայացվել Քննչական կոմիտե. նախաձեռնվել են քրեական վարույթներ:

Բացի այդ, Երևան քաղաքում շրջակա միջավայրի վրա շինարարական աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու, քաղաքացիների և տրանսպորտային միջոցների տեղաշարժման ոչ իրավաչափ սահմանափակումը վերացնելու, ինչպես նաև կառուցապատվող օբյեկտներում շինարարական հրապարակների տարանջատման ու սանիտարական պատշաճ վիճակն ապահովելու, ապօրինի հողազավթումները կանխելու ուղղությամբ իրականացվող աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու, ինչպես նաև՝ կառուցապատողների հետ շինհրապարակների մեջ ընդգրկված համայքային հողերի վերաբերյալ վարձակալության պայմանագրեր կնքելու նպատակով միջնորդագիր է ներկայացվել Երևանի քաղաքապետին:

Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունը ուսումնասիրություններ է իրականացրել նաև Հողային օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի կիրառմամբ՝ Երևան քաղաքում կառուցապատման նպատակով տրամադրված հողմասերի նկատմամբ սեփականության իրավունքները հարկադիր կարգով դադարեցնելու դեպքերը պարզելու և այդ պահանջով դատարան հայց ներկայացնելու ուղղությամբ:

1. Ուսումնասիրությամբ պարզվել է, որ Երևանի քաղաքապետի՝ 2005 թվականի փետրվարի 8-ի թիվ 182-Ա որոշմամբ «Սոգլասիե- Արմենիա» ՍՊ ընկերությանը, հասարակական և բնակելի շենքերի շինարարություն իրականացնելու նպատակով, Հյուսիսային պողոտայի կառուցապատման օտարման գոտում վարձակալությամբ, հողամասի գնման իրավունքով 99 տարի ժամկետով տրամադրվել է 10000.0 քմ մակերեսով հողամաս՝ հետագայում կնքելով հողամասի վարձակալության պայմանագիր: Երևանի քաղաքապետի՝ 2007 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 3886-Ա որոշման հիման վրա՝ Հյուսիսային պողոտայի օտարման գոտում գտնվող 10000.0 քմ (Լոտ-8) մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարվել է «Սոգլասիե-Արմենիա» ՍՊ ընկերությանը: Երևանի քաղաքապետի՝ 2008 թվականի մայիսի 15-ի թիվ 2249-Ա որոշման համաձայն՝ Հյուսիսային պողոտա հ.16/1 հասցեում գտնվող «Սոգլասիե-Արմենիա» ՍՊ ընկերությանը պատկանող շինության զբաղեցրած՝ 10000.0 քմ մակերեսով հողամասին կից կառուցապատման ծրագիրը լիովին իրականացնելու համար, ընդլայնման նպատակով, առանց հրապարակային սակարկությունների, ուղղակի վաճառքի միջոցով ընկերությանն է օտարվել լրացուցիչ 780.46 քմ մակերեսով հողամաս, որից ընկերության սեփականության իրավունքը պահպանվել է 447.86 քմ մակերեսով հողամասի նկատմամբ: Պայմանագրերից ծագող իրավունքները պետական գրանցում են ստացել Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում՝ հողամասի օգտագործման նպատակը սահմանելով «կառուցապատման համար»:

Վերոնշյալ որոշումների համաձայն՝ կառուցապատման համար հատկացված հողամասի մի հատվածը կառուցապատվել է, իսկ մի մասը չի օգտագործվել, ընդ որում՝ պայմանագրով նախատեսված չեն շինարարության ավարտի ավելի երկար ժամկետներ:

Երևանի քաղաքապետի՝ 2007 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 3886-Ա (Լոտ-8) և 2008 թվականի մայիսի 15-ի թիվ 2249-Ա որոշումների համաձայն՝ «Սոգլասիե-Արմենիա» ՍՊ ընկերությանը կառուցապատման համար օտարված 10000.0 քմ և 447.86 քմ հողամասերից մինչ օրս չօգտագործված (չկառուցապատված) հողամասի մակերեսը պարզելու նպատակով՝ 2023 թվականի սեպտեմբերի 28-ին հարցում է ուղարկվել Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին: Գեոդեզիական և քարտեզագրական չափագրումների արդյունքում պարզվել է, որ քննարկվող հողամասի չկառուցապատված մակերեսը կազմում է 2859.4 քմ:

Նշված դեպքով՝ Կենտրոն վարչական շրջանի տարածքում կառուցապատման համար տրամադրված 2859.4 քմ մակերեսով հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը Հողային օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի կարգավորումների համաձայն՝ հարկադիր կարգով դադարեցնելու պահանջով հայց է ներկայացվել Հակակոռուպցիոն քաղաքացիական դատարան:

2. Երևանի քաղաքապետի 2002 թվականի հունվարի 8-ի թիվ 11 որոշմամբ՝ հյուրանոցային համալիրի շինարարություն իրականացնելու նպատակով «Բյուրակն» ՍՊ ընկերությանը վարձակալության իրավունքով, 99 տարի ժամկետով, տրամադրվել է Մ.Խորենացու փողոցի և նույն փողոցի 1-ին փակուղու հատման մասում գտնվող սրճարանի, արտադրամասի, լուսանկարչատան, ծաղկի կրպակի զբաղեցրած 890.0քմ մակերեսով հողամասը և որպես հասարակական նշանակության օբյեկտի հողամասի ընդլայնում, լրացուցիչ տրամադրվել է 1080.0քմ հողամաս:

Երևանի քաղաքապետի՝ 2002 թվականի փետրվարի 26-ի թիվ 289 որոշմամբ՝ փոփոխություն է կատարվել նախորդ որոշման մեջ՝ «1080.0քմ հողամաս» բառերը փոխարինվել են «1817.0քմ հողամաս» բառերով:

Երևանի քաղաքապետի՝ 2002 թվականի հունվարի 8-ի թիվ 11 և 2002 թվականի փետրվարի 26-ի թիվ 289 որոշումների հիման վրա՝ Երևանի քաղաքապետի և «Բյուրակն» ՍՊ ընկերության միջև 2002 թվականի մարտի 25-ին կնքվել է հողի վարձակալության թիվ 360/ԳԱ պայմանագիրը, համաձայն որի՝ վարձատուն վարձակալի տիրապետմանն ու օգտագործմանն է տրամադրել Մ.Խորենացու փողոցի և 1-ին փակուղու մոտ 2707 քմ մակերեսով հողամասը՝ հյուրանոցային համալիրի շինարարության իրականացման համար:

Պայմանագրի 29-րդ կետով սահմանվել է, որ պայմանագրային պարտավորության կատարման դեպքում, վարձակալին նախապատվության իրավունք է տրվում վարձակալած հողը ուղղակի վաճառքով գնելու՝ համաձայն Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի:

Գործարքից ավելի քան 4 տարի անց, առանց պայմանագրային պարտավորությունների կատարման, Երևանի քաղաքապետի կողմից 2006 թվականի հոկտեմբերի 27-ին թիվ 1738-Ա որոշմամբ՝ հիշյալ հողատարածքից 2437.0 քմ օտարվել է «Բյուրակն» ՍՊ ընկերությանը:

Նույն օրը կնքվել է հողամասի ուղղակի վաճառքի պայմանագիր, իսկ պայմանագրից ծագող իրավունքները պետական գրանցում են ստացել Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում. հողամասի օգտագործման նպատակը սահմանվել է «հյուրանոցային համալիրի կառուցման համար»:

«Բյուրակն» ՍՊ ընկերությանը կառուցապատման համար տրամադրված հողամասը երեք տարվա ընթացքում չի օգտագործվել և պայմանագրով նախատեսված չեն շինարարության ավարտի ավելի երկարատև ժամկետներ, ինչը տվյալ հողամասի նկատմամբ իրավունքները հարկադիր կարգով դադարեցնելու օրենսդրական իմպերատիվ հիմք է:

Նշված դեպքով՝ Կենտրոն վարչական շրջանի տարածքում կառուցապատման համար տրամադրված 2437.0 քմ մակերեսով հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը Հողային օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի կարգավորումների համաձայն՝ հարկադիր կարգով դադարեցնելու պահանջով հայց է ներկայացվել Հակակոռուպցիոն քաղաքացիական դատարան:

1

ԱՊՈՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՌՆԱԳԱՆՁՈՒՄ

Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը 2023 թվականի ընթացքում Գլխավոր դատախազության այլ ստորաբաժանումներից, Ներքին գործերի նախարարության ոստիկանությունից և Ազգային անվտանգության ծառայությունից ստացել է 46 քրեական գործով նյութ (2022 թվականին՝ 50 նյութ) և օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքներով հայտնաբերված տվյալների վերաբերյալ 27 նյութ (2022 թվականին՝ 25 նյութ՝ 84 անձի վերաբերյալ)՝ 107 անձի՝ հնարավոր ապօրինի ծագում ունեցող գույքի պատկանելության վերաբերյալ:

2023 թվականի ընթացքում կայացվել է ուսումնասիրություն սկսելու մասին 82 որոշում (2022 թվականին՝ 77 որոշում) և ուսումնասիրություն չնախաձեռնելու մասին 26 որոշում (2022 թվականին՝ 18 որոշում): Ուսումնասիրություն չնախաձեռնելու մասին որոշումներից՝

- 16-ը կայացվել են «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 24-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ 50.000.000 դրամը գերազանցող՝ ապօրինի ծագում ունեցող գույքի առկայության մասին տվյալների բացակայության պատճառով.
- 3 դեպքում ուսումնասիրություն չի նախաձեռնվել անձին Օրենքով նախատեսված հանցագործությունների ցանկում չներառված՝ Քրեական օրենսգրքի հոդվածով մեղադրանք առաջադրված լինելու պատճառով.
- 3 դեպքում՝ անձին Օրենքով նախատեսված հանցագործությունների ցանկում ներառված Քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կամ 3-րդ կետերով նախատեսված արարքը՝ առանց իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կատարված լինելու պատճառով.
- 2 դեպքում՝ Օրենքի իմաստով պաշտոնատար անձ չհանդիսանալու պատճառով.
- 2 դեպքում՝ ուսումնասիրություն սկսելու հիմքերի վերաբերյալ ամբողջական տվյալներ չունենալու պատճառով:

2023 թվականի ընթացքում կազմվել է շուրջ 1400 հարցում՝ ուղղված՝ Արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալությանը, իրավաբանական անձանց ռեգիստրի գործակալությանը, ՆԳՆ ոստիկանությանը, Կադաստրի կոմիտեին, Պետական եկամուտների կոմիտեին, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին և այլն:

Ուսումնասիրությամբ բացահայտված ենթադրյալ ապօրինի ծագում ունեցող գույքի շուկայական արժեքը պարզելու նպատակով նշանակվել և Գիտությունների Ազգային Ակադեմիայի «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ է ուղարկվել դատաապրանքագիտական փորձաքննություն նշանակելու մասին 82 վարույթի վերաբերյալ 116 որոշում, ստացվել է դատաապրանքագիտական փորձաքննության վերաբերյալ 124 եզրակացություն:

2023 թվականի ընթացքում 72 ուսումնասիրության շրջանակում Հակակոռուպցիոն դատարան է ներկայացվել հայցի նախնական ապահովման միջոց կիրառելու մասին 81 դիմում:

Հաշվետու ժամանակահատվածում Հակակոռուպցիոն դատարանը կայացրել է հայցի նախնական ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ 84 որոշում: Ներկայացված դիմումներից 3-ով Հակակառուպցիոն դատարանը կայացրել է հայցի նախնական ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ դիմումը մերժելու մասին որոշում (2-ը կայացվել է նույն վարույթով):

Վերոնշյալ որոշումներից 1-ը Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության կողմից բողոքարկվել է վերադաս դատարան. բողոքը բավարարվել է: Հակակոռուպցիոն դատարանի կողմից հայցի նախնական ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ մասնակի բավարարված դիմումներից 2-ով ներկայացվել է վերաքննիչ բողոք:

Բողոքներից մեկը բավարարվել է, մյուսով Հակակոռուպցիոն դատարանը կայացրել է բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշում, որը բողոքարկվել է վճռաբեկության կարգով. բողոքը բավարարվել է: Դատարանի կողմից բավարարված որոշումներն ուղարկվել են հարկադիր կատարման, համապատասխան անձանց գույքի (գույքերի) վրա դրվել է արգելանք:

2023 թվականի ընթացքում հարուցված կատարողական վարույթների թիվը կազմում է 540:

Հաշվետու ժամանակահատվածում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ Հակակոռուպցիոն դատարան է ներկայացվել 73 հայցադիմում. Ներկայացված բոլոր հայցադիմումներն ընդունվել են վարույթ:

Հայցադիմումներից մեկով կնքվել է հաշտության համաձայնություն, իսկ մեկ հայցից Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը հրաժարվել է (հրաժարումը պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ պատասխանողը հայցադիմումին կից ներկայացված և Իրավասու մարմնին ոչ հայտնի եկամուտների վերաբերյալ տեղեկատվություն է ներկայացրել, որի հաշվառմամբ՝ Իրավասու մարմնի կողմից իրականացված վերահաշվարկը հիմք է հանդիսացել հայցադիմումից հրաժարվելու համար):

2023 թվականի ընթացքում Հակակոռուպցիոն դատարան է ներկայացվել 71 հայցադիմում, որոնցով բռնագանձման ենթակա գումարի չափը կազմել է 384.055.372.049 դրամ:

Բռնագանձման են ենթակա նաև 832 անշարժ և 161 շարժական գույք, ինչպես նաև 283 իրավաբանական անձանցում մասնակցություն:

Հաշվետու ժամանակահատվածում ներկայացված հայցադիմումների ընդհանուր հայցագինը կազմում է 417.591.062.222 դրամ (ընդհանուր հայցագնի մեջ ներառված չեն իրավաբանական անձանցում մասնակցության, ինչպես նաև մի շարք գույքերի շուկայական արժեքները):

Ի թիվս այլ հայցերի՝

2023 թվականի հոկտեմբերի 9-ին Հակակոռուպցիոն դատարան են ներկայացվել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ հայցադիմումներ, որոնցով Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը պահանջ է ներկայացրել ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանից և նրան փոխկապակցված յոթ անձանցից (ընտանիքի անդամներ՝ կին, զավակներ, նրանց ամուսիններ) հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել՝

- 25 միավոր անշարժ գույք՝ առավելապես Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանում.
- 5 տրանսպորտային միջոց.
- մասնակցություն՝ հայաստանյան և արտասահմանյան 16 իրավաբանական անձերում.
- ավելի քան 4 միլիոն ԱՄՆ դոլարի ավանդներ և արժեթղթեր.
- շուրջ 10 միլիարդ դրամին համարժեք փոխառությունների պահանջի իրավունք.
- ավելի քան 35 միլիարդ դրամ, որն իրենից ներկայացնում է ապօրինի ծագում ունեցող դրամական միջոցների մնացորդի, բարեխիղճ երրորդ անձանց փոխանցված միջոցների և այլ ծախսված միջոցների հանրագումար, որը չի նույնականացվել:

2023 թվականի հոկտեմբերի 9-ին Հակակոռուպցիոն դատարան են ներկայացվել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ հայցադիմումներ, որոնցով Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը պահանջ է ներկայացրել Պետական եկամուտների կոմիտեի նախկին նախագահ, ֆինանսների նախկին նախարար Գագիկ Խաչատրյանից և նրան փոխկապակցված անձանցից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել՝

- շուրջ 200 միավոր անշարժ գույք, որից 56-ը Երևան քաղաքում՝ առավելապես Կենտրոն վարչական շրջանում.
- 13 տրանսպորտային միջոց.
- մասնակցություն՝ հայաստանյան և արտասահմանյան 29 իրավաբանական անձերում.
- ավելի քան 1.4 միլիոն ԱՄՆ դոլարի ավանդներ և արժեթղթեր.
- ավելի քան 23 միլիոն ԱՄՆ դոլարին համարժեք փոխառությունների պահանջի իրավունք.
- ավելի քան 23 միլիարդ դրամ, որն իրենից ներկայացնում է ապօրինի ծագում ունեցող դրամական միջոցների մնացորդի, բարեխիղճ երրորդ անձանց փոխանցված միջոցների և այլ ծախսված միջոցների հանրագումար, որը չի նույնականացվել:

2023 թվականի հոկտեմբերի 9-ին Հակակոռուպցիոն դատարան է ներկայացվել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ հայցադիմում, որով Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը պահանջ է ներկայացրել Ազգային ժողովի նախկին պատգամավոր Գագիկ Ծառուկյանից և նրան փոխկապակցված անձանցից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել՝

- 79 անշարժ գույք.
- 42 տրանսպորտային միջոց.
- չնույնականացված 8 տրանսպորտային միջոցների ձեռքբերման արժեք՝ 348 միլիոն 194 հազար դրամ.
- զիջված պահանջի իրավունքի գումար՝ շուրջ 33,5 միլիոն դրամ.
- 10 անշարժ գույքի (օրենքի իմաստով պատկանում են Գագիկ Ծառուկյանին) շուկայական արժեք.
- 39 իրավաբանական անձանցում բաժնեմասեր և բաժնետոմսեր.
- ավելի քան 63,3 միլիարդ դրամին համարժեք փոխառությունների պահանջի իրավունք.
- 12 ֆիզիկական և իրավաբանական անձանց (ում հնարավոր չի եղել նույնականացնել) տրամադրված փոխառությունների գումարի չափ դրամական միջոց՝ ավելի քան 16.8 միլիարդ դրամին համարժեք գումար.
- ավելի քան 86 միլիարդ 480 միլիոն դրամի բռնագանձման պահանջ, որը հանդիսանում է ապօրինի ծագում ունեցող գույքի օգտագործումից ստացված եկամուտների և օրինական եկամուտներով չհիմնավորվող վճարումների, փոխանցումների և այլ ելքերի հանրագումար:

2023 թվականի օգոստոսի 18-ին Հակակոռուպցիոն դատարան է ներկայացվել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ հայցադիմում, որով Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը պահանջ է ներկայացրել Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախկին նախագահ Ռոբերտ Նազարյանից և նրան փոխկապակցված անձանցից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել՝

- 8 անշարժ գույք Երևան քաղաքում.
- 3 տրանսպորտային միջոց.
- ավելի քան 1.7 միլիոն ԱՄՆ դոլարին համարժեք ավանդներ և պարտատոմսեր.
- ավելի քան 1.7 միլիարդ դրամ, որն իրենից ներկայացնում է ապօրինի ծագում ունեցող դրամական միջոցների մնացորդի, բարեխիղճ երրորդ անձանց փոխանցված միջոցների և այլ ծախսված միջոցների հանրագումար, որը չի նույնականացվել:

Վերոնշյալից բացի, Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը 2023 թվականի ընթացքում հայցեր է ներկայացրել Հակակոռուպցիոն դատարան՝ պահանջելով՝

Ազգային ժողովի նախկին պատգամավոր, Երեբունի վարչական շրջանի նախկին ղեկավար Միեր Սեդրակյանից և նրան փոխկապակցված 3 անձանցից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել՝

- շուրջ 11 միլիարդ դրամ արժեքով ապօրինի ծագում ունեցող գույք.
- 20 անշարժ գույք՝ Երևան քաղաքում, մեկ անշարժ գույքի միջին շուկայական արժեք՝ 93 միլիոն 255 հազար դրամ, Կոտայքի մարզում՝ մեկ անշարժ գույք, իսկ անհնարինության դեպքում՝ դրանց միջին շուկայական արժեքը, որն ընդհանուր կազմում է ավելի քան 2.5 միլիարդ դրամ.
- ութ իրավաբանական անձանցում մասնակցություն և մեկ փոխառության պահանջի իրավունք.
- բռնագանձման է ենթակա նաև ավելի քան 9 միլիարդ դրամ՝ որպես ապօրինի եկամտի մնացորդի և բարեխիղճ երրորդ անձանց փոխանցված՝ օրինական եկամուտներով չիմնավորվող դրամի հանրագումար:

Տարածքային կառավարման նախկին նախարար, Աժ նախկին նախագահ, նախկին ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանից, նրա կնոջից, որդուց, դստերից, իրեն փոխկապակցված այլ անձանցից (աշխատակիցներ, ազգականներ և նրանց ամուսիններ) հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել՝

- 59 անշարժ գույք, որից 15-ը՝ Երևան քաղաքում, մեծամասամբ Կենտրոն վարչական շրջանում, 12-ը Արարատի մարզի Մխչյան համայնքում, 10-ը՝ Նարեկ համայնքում, 2-ը՝ Կոտայքի մարզի Արզական համայնքում, 6-ը՝ Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքում, 1-ը՝ Վայոց Ձորի մարզի Ջերմուկ համայնքում, 1-ը՝ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքում, 6-ը՝ Տավուշի մարզի Դիլիջան համայնքում, 3-ը՝ Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնքում, 1-ը՝ Արարատի մարզի Մարմարաշեն համայնքում, 1-ը՝ Արարատի մարզի Այնթապ համայնքում, 1-ը՝ Արարատի մարզի Արևաբույր համայնքում.
- 4 ավտոմեքենա.
- 20 ընկերությունների մասնակցություններ և բաժնետոմսեր.
- շուկայականից էականորեն ցածր արժեքով օտարված 9 գույքերի շուկայական արժեքներ՝ ընդհանուր 1 միլիարդ 621 միլիոն 627 հազար դրամ.
- ընկերություններին տրված փոխառություններից ծագող պահանջի իրավունք՝ 11 միլիոն 292 հազար 570 ԱՄՆ դոլարի, 687 միլիոն 500 դրամի և 3 միլիոն 117 հազար 680 եվրոյի չափով.
- 18 միլիարդ 750 միլիոն 67 հազար 797 դրամ՝ որպես ապօրինի եկամտի մնացորդի և օրինական եկամուտներով չիմնավորվող, բարեխիղճ երրորդ անձանց փոխանցված կամ չնույնականացված դրամի հանրագումար:

Հայաստանի Հանրապետության դատախազությունը 2023 թվականի ընթացքում, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործառույթի շրջանակում, կնքել է հաշտության 4 համաձայնություն, որոնցով ՀՀ սեփականությանն է փոխանցվել 6 անշարժ և 1 շարժական գույք՝ ընդհանուր շուրջ 2 միլիարդ 100 միլիոն դրամ արժեքով, ինչպես նաև շուրջ 79 միլիոն դրամ:

Նշված գույքերից 6-ը (5 անշարժ և 1 շարժական գույք), Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 14-ի և 2024 թվականի հունվարի 4-ի որոշումներով՝ ամրացվել են Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին:

Վերոնշյալ գույքերի ցանկում են՝

1. ՀՀ երրորդ նախագահի անվտանգության նախկին պետ Վաչագան Ղազարյանի կողմից ՀՀ սեփականությանը փոխանցված՝ «Եռաբլուր» զինվորական պանթեոնի հարակից տարածքում գտնվող 4 հողատարածքները, մասնավորապես՝

- քաղաք Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Ծովակալ Իսակովի պողոտա 25/2 հասցեում գտնվող 34.76 քմ մակերեսով հասարակական տարածքը և բնակավայրերի նշանակության 2.14989 հա մակերեսով հողամասը.
- քաղաք Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Ծովակալ Իսակովի պողոտա 25/4 հասցեում գտնվող 237.9 քմ մակերեսով հասարակական տարածքը և 0.16879 հա մակերեսով բնակավայրերի նշանակության հողամասը.
- քաղաք Երևան, Մալաթիա-Սեբաստիա Ծ.Իսակովի պողոտա 25/3 հասցեում գտնվող 25.6 քմ մակերեսով տարածքը և բնակավայրերի նշանակության 1.42609 հա մակերեսով հողամասը.
- քաղաք Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Ծովակալ Իսակովի պողոտա 23 հասցեում գտնվող 0,05 հա մակերեսով հողամասը:

2. Էրեբունի վարչական շրջանի նախկին ղեկավար Արմեն Հարությունյանի կողմից ՀՀ սեփականությանը փոխանցված մեկ անշարժ (քաղաք Երևան, Արաբկիր վարչական շրջան, Վաղարշյան փողոց 1-ին շենք, ավտոտնակ 3) և մեկ շարժական (Range Rover Sport Supercharged 5.0 մակնիշի տրանսպորտային միջոց) գույքերը:

2023 թվականին Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող գույքի և (կամ) անձանց առնչությամբ օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններից ստացվել են միջազգային հարցումներ, որոնցում ներկայացված խնդրանքների կատարման ուղղությամբ Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության կողմից իրականացվել են անհրաժեշտ գործողությունները:

Հաշվետու ժամանակահատվածում Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչության դատախազների կողմից ուղարկվել է իրավական փոխօգնության 7 հարցում. հարցումներից 4-ն ուղարկվել է ԱՄԷ, մեկական հարցում՝ ԱՄՆ, Չեխիայի Հանրապետություն և Վրաստան:

ԱՄԷ ուղարկված 1 հարցմանն ի պատասխան՝ իրավասու մարմինները Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությանն են փոխանցել տեղեկատվություն՝ ուսումնասիրվող անձին պատկանող՝ ԱՄԷ-ում գտնվող բանկային հաշիվների քաղվածքների վերաբերյալ: Ի պատասխան Վրաստան ուղարկված հարցման՝ իրավասու մարմինների կողմից ստացվել է պատասխան առ այն, որ Վրաստանի պաշտոնական բազաներում առկա չէ ուսումնասիրվող անձի վերաբերյալ որևէ տեղեկություն: Ուղարկված հարցումներից երկուսով (ԱՄԷ և Չեխիայի Հանրապետություն) Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը ստացել է մերժում՝ իրավական հիմքերի բացակայության պատճառաբանությամբ: Վարչության կողմից ուղարկված մյուս երեք հարցումներով դեռևս պատասխան չի ստացվել:

Միջազգային ոչ պաշտոնական ցանցի՝ CARIN.NETWORK (Camden Asset Recovery Inter-Agency Network) միջոցով օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններից ստացվել է 4 հարցում (2 հարցում՝ Ֆրանսիայից, 1 հարցում՝ Գերմանիայի Դաշնությունից, 1 հարցում՝ Իսպանիայի Թագավորությունից): Նշված հարցումներով Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության կողմից իրականացվել են անհրաժեշտ գործողությունները: Ոչ պաշտոնական նույն ցանցի միջոցով՝ Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության կողմից մի շարք պետությունների (ԱՄՆ, Ավստրիա, Հունաստան, Գերմանիա, Ֆրանսիա, Բուլղարիա, Վրաստան, Էստոնիա, Միացյալ Թագավորություն և այլն) իրավասու մարմիններին ուղարկվել է 17 հարցում: Հարցումներից 16-ով ստացվել են պատասխաններ, 1-ով՝ պահանջվել է հավելյալ տեղեկություն:

8

ՊԱՏԻԺՆԵՐԻ ԵՎ ՀԱՐԿԱԴՐԱՆՔԻ ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի ընթացքում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության բնագավառում կատարված ստուգումների և ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել է 151 խախտում (2022 թվականին՝ 147): Պատկան մարմիններին ուղարկվել է 34 հաղորդում (2022 թվականին՝ 10): Ներկայացվել է 37 միջնորդագիր (2022 թվականին՝ 54), որոնց հիման վրա վերանայվել է 23 ակտ (2022 թվականին՝ 35): Դատախազների կողմից կասեցվել է 10 ակտ (2022 թվականին՝ 27), իրականացվել է 13 ծառայողական քննություն (2022 թվականին՝ 4):

2023 թվականի ընթացքում քրեակատարողական հիմնարկներից ազատվել է 1632 անձ (2022 թվականին՝ 1311), որոնցից 287-ը՝ պատժի լրիվ կրումով (2022 թվականին՝ 214), 110-ը՝ պայմանական վաղաժամկետ (2022 թվականին՝ 145), 3-ը՝ ներման կարգով (2022 թվականին՝ 2), 5-ը՝ համաներումով (2022 թվականին՝ 5), 904-ը՝ խափանման միջոց կալանքը փոփոխելով (2022 թվականին՝ 478), 62-ը՝ դատարանի դահլիճից (2022 թվականին՝ 56 անձ), 7-ը՝ հիվանդության պատճառով (2022 թվականին՝ 8), 249-ը՝ կալանքի տակ գտնվելու ժամկետը լրանալու կապակցությամբ (2022 թվականին՝ 377), 5-ը՝ այլ հիմքերով (2022 թվականին՝ 26):

Հաշվետու ժամանակաշրջանում տարբեր պատճառներով մահացել է 16 պահվող անձ (2022 թվականին՝ 18), որից 8-ը՝ քաղաքացիական բժշկական հաստատությունում՝ առողջական վիճակի վատթարացման հետևանքով («Արմենիա» ԲԿ-ում՝ 2, «Էրեբունի» ԲԿ-ում՝ 2, «Վաղարշապատ», «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» «Բեստ Լայֆ» և «Վ.Ա.Ֆանարջյանի անվան ուռուցքաբանական ազգային կենտրոն» ԲԿ-ներում՝ 1-ական դեպք), 7-ը՝ քրեակատարողական հիմնարկում (Արդարադատության նախարարության (այսուհետ՝ ԱՆ) «Արմավիր» ՔԿՀ-ում 2 անձ գործել է ինքնասպանություն, իսկ 2 անձ հանկարծամահ է եղել, ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ում, ԱՆ «Արթիկ» և «Նուբարաշեն» ՔԿՀ-ներում արձանագրվել է 1-ական անձի կենսաբանական մահ), 1 անձ մահացել է ԱՆ «Վանաձոր» ՔԿՀ-ից «Վանաձոր» ԲԿ տեղափոխվելու ճանապարհին՝ շտապօգնության մեքենայում:

Վերջին 10 տարվա ընթացքում ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց մահվան դինամիկան	
2014	38 պահվող անձ
2015	28 պահվող անձ
2016	29 պահվող անձ
2017	17 պահվող անձ
2018	18 պահվող անձ
2019	21 պահվող անձ
2020	5 պահվող անձ
2021	13 պահվող անձ
2022	18 պահվող անձ
2023	16 պահվող անձ

2024 թվականի հունվարի 1-ի դրությամբ կալանավորված անձանց և դատապարտյալների ընդհանուր թիվը կազմել է 2469 (2023 թվականին՝ 2357), որոնցից 1317-ը՝ կալանավորված անձ, 1152-ը՝ դատապարտյալ: Կալանավորված անձանցից 48-ը՝ կին, 2 անչափահաս և 2 չափահաս՝ մինչև 21 տարեկան (2023 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ 1256 կալանավորված անձ՝ 38 կին, 1 անչափահաս և 3 չափահաս՝ մինչև 21 տարեկան): Դատապարտյալներիցից 22-ը կին է (2023 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ 1101 դատապարտյալ, որոնցից 23-ը՝ կին):

ԱՆ քրեակատարողական հիմնարկներում 2024 թվականի հունվարի 1-ի դրությամբ պահվում է 199 օտարերկրյա քաղաքացի:

2024 թվականի հունվարի 1-ի դրությամբ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պատիժ է կրում ցմահ ազատազրկման դատապարտված 87 անձ (2023 թվականին՝ 88):

Վերջին 10 տարվա ընթացքում ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց վիճակագրությունը՝ հունվարի 1-ի դրությամբ		
2014	3923 մարդ	որից 1035-ը՝ կալանավորված անձ
2015	3880 մարդ	որից 1113-ը՝ կալանավորված անձ
2016	3873 մարդ	որից 1114-ը՝ կալանավորված անձ
2017	3833 մարդ	որից 1200-ը՝ կալանավորված անձ
2018	3536 մարդ	որից 1297-ը՝ կալանավորված անձ
2019	2266 մարդ	որից 929-ը՝ կալանավորված անձ
2020	2221 մարդ	որից 1017-ը՝ կալանավորված անձ
2021	1967 մարդ	որից 914-ը՝ կալանավորված անձ
2022	2128 մարդ	որից 1217-ը՝ կալանավորված անձ
2023	2357 մարդ	որից 1256-ը՝ կալանավորված անձ
2024	2469 մարդ	որից 1317-ը՝ կալանավորված անձ

ԱՆ քրեակատարողական հիմնարկներում 2023 թվականի ընթացքում ստացվել է 288 անձի կողմից հացադուլ հայտարարելու վերաբերյալ 447 դիմում: Հացադուլ հայտարարելու վերաբերյալ բոլոր դեպքերով հացադուլ հայտարարած անձը հարցման է ենթարկվել, ընդ որում՝ մի շարք դեպքերում դատախազի կողմից տրամադրված խորհրդատվության արդյունքում, կալանավորված անձը կամ դատապարտյալը դադարեցրել է հացադուլը:

ԱՆ քրեակատարողական հիմնարկներում 2023 թվականի ընթացքում արձանագրվել է 155 անձի կողմից ինքնավնասման 472 դեպք (2022 թվականին՝ 180 անձի կողմից ինքնավնասման 518 դեպք), որոնց պատճառները հիմնականում կապված են եղել քրեական վարույթների ընթացքի, կիրառված խափանման միջոցի, արարքի իրավաբանական որակման, Քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում գործող տեղաբաշխման հանձնաժողովի որոշումների, անձնական, առողջական խնդիրների հետ, մի շարք դեպքերում ինքնավնասումը կատարվել է հոգեկան անհավասարակշիռ վիճակում:

ՔԿՀ-ում պահվող անձանց կողմից հացադուլ հայտարարելու, ինքնավնասում կատարելու պատճառները պարզելու և այլ նպատակով՝ դատախազների կողմից հարցման է ենթարկվել 424 դատապարտյալ կամ կալանավորված անձ (այսուհետ՝ պահվող անձ):

Քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց կողմից ինքնասպանության (ինքնասպանության փորձի) և ինքնավնասման ռիսկերը գնահատելու, այդ կապակցությամբ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու և ինքնավնասման ու ինքնասպանության (ինքնասպանության փորձի) հնարավոր դեպքերը չեզոքացնելու ուղղությամբ՝ Քրեակատարողական օրենսգրքով և այլ իրավական ակտերով նախատեսված անհրաժեշտ միջոցառումներ իրականացնելու նպատակով՝ իրավասու ստորաբաժանումներին համապատասխան հանձնարարություններ տալու համար հաղորդում է ուղարկվել ԱՆ քրեակատարողական ծառայության պետին:

2023 թվականի ընթացքում Դատախազության կողմից ԱՆ քրեակատարողական ծառայության մարմինների և դրանց կազմում գործող ստորաբաժանումների կայացրած որոշումների օրինականության և հիմնավորվածության ստուգման արդյունքում արձանագրվել է 24 խախտում, որոնց վերաբերյալ համապատասխան հաղորդումներ են ուղարկվել քրեակատարողական հիմնարկների պետերին:

Հաշվետու ժամանակահատվածում Դատախազության կողմից ստուգվել է քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց նկատմամբ տույժի միջոց կիրառելու մասին 2117 որոշում: Գործող օրենսդրությանը հակասելու պատճառաբանությամբ՝ պահվող անձանց նկատմամբ տույժի միջոց կիրառելու մասին 8 որոշում վերանայելու միջնորդագիր է ներկայացվել համապատասխան ՔԿՀ-ների պետերին, որոնցից վերանայման արդյունքում 3-ը թողնվել է անփոփոխ, 5-ը բավարարվել է: Վերոնշյալ որոշումներից 1-ը վերաբերել է պահվող անձի նկատմամբ տույժի միջոցի խիստ տեսակի կիրառմանը, 5-ը՝ տույժի միջոցի մեղմ տեսակի կիրառմանը, 1-ը՝ տույժի միջոցի անհիմն կիրառմանը, 1-ը՝ դատապարտյալին պատժի կրման սահմանված կարգի չարամիտ խախտող ճանաչելուն:

Արձանագրվել է նաև նախկինում նշանակված տույժի միջոցներից՝ առանց բավարար իրավական և փաստական հիմքերի ազատելու մեկ դեպք:Նշված դեպքի կապակցությամբ ՀՀ գլխավոր դատախազը միջնորդել է ՀՀ արդարադատության նախարարին՝ ԱՆ «Վանաձոր» ՔԿՀ-ի պետի կողմից ծառայողական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու պատճառները բացահայտելու, ինչպես նաև նրա կարգապահական պատասխանատվության հարցը լուծելու նպատակով անցկացնել ծառայողական քննություն: Անցկացված ծառայողական քննության արդյունքներով՝ ՀՀ արդարադատության նախարարի հրամանով ԱՆ «Վանաձոր» ՔԿՀ-ի պետի նկատմամբ կիրառվել է «նկատողություն» տեսակի կարգապահական տույժը:

2023 թվականի ընթացքում Դատախազության կողմից ստուգվել է քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց նկատմամբ խրախուսանքի միջոց կիրառելու մասին 11 որոշում, որի արդյունքում՝ գործող օրենսդրությանը հակասելու պատճառաբանությամբ, պահվող անձանց նկատմամբ խրախուսանքի միջոց կիրառելու մասին 2 որոշում վերանայելու միջնորդագիր է ներկայացվել համապատասխան ՔԿՀ-ի պետին. վերանայման արդյունքում որոշումներն անվավեր են ճանաչվել:

2023 թվականի ընթացքում Դատախազության կողմից ստուգվել է նաև ԱՆ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում գործող Տեղաբաշխման հանձնաժողովի՝ դատապարտյալներին պատիժը կրելու համար քրեակատարողական հիմնարկի համապատասխան անվտանգային գոտում տեղաբաշխելու մասին 867 որոշում: Գործող օրենսդրությանը հակասելու պատճառաբանությամբ՝ դատախազի կողմից 4 որոշում վերանայելու միջնորդագիր է ներկայացվել, որոնցից 1-ը վերանայման արդյունքում փոփոխվել է:

Արձանագրվել է նաև ցմահ ազատազրկման ձևով միջին անվտանգային գոտում պատիժ կրող դատապարտյալին, առանց բավարար իրավական և փաստական հիմքերի, ցածր անվտանգային գոտի տեղափոխելու դեպք, որի կապակցությամբ ՀՀ գլխավոր դատախազը միջնորդություն է ներկայացրել ՀՀ արդարադատության նախարարին՝ ցմահ ազատազրկման ձևով պատիժ կրող դատապարտյալի վերաբերյալ ԱՆ քրեակատարողական ծառայության պետի և Տեղաբաշխման հանձնաժողովի համապատասխան որոշումները վերացնելու մասին. ՀՀ գլխավոր դատախազի միջնորդությունը ՀՀ արդարադատության նախարարի որոշմամբ բավարարվել է:

Դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության սահմանադրական լիազորության իրականացման շրջանակներում արձանագրվել է նաև հանցածին դիրքորոշման հակում ունեցող դատապարտյալի նկատմամբ, առանց բավարար իրավական և փաստական հիմքերի, ԱՆ քրեակատարողական հիմնարկի պետի կողմից համապատասխան որոշում կայացնելու դեպք:

Մասնավորապես՝ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի պետի կողմից նույն քրեակատարողական հիմնարկի դատապարտյալին միջին անվտանգային գոտու խիստ պայմաններից միջին անվտանգային գոտու մեղմ պայմաններում պատիժ կրելու վերաբերյալ որոշում կայացնելու գործընթացում արձանագրվել է ծառայողական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու դեպք: Համապատասխան որոշման մեջ ներառվել են այնպիսի փաստական տվյալներ, որոնք իրականում գոյություն չեն ունեցել, և չի ներառվել այնպիսի փաստական տվյալ, որը վկայել է որոշման կայացման օրվա դրությամբ դատապարտյալի կողմից բացասական վարքագիծ դրսևորելու մասին:

Նշված դեպքի կապակցությամբ, ՀՀ գլխավոր դատախազը միջնորդել է ՀՀ արդարադատության նախարարին՝ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի պետի որոշումը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության պետի որոշումը վերացնել և վերջնական լուծում տալ դատապարտյալին միջին անվտանգային գոտու մեղմ պայմաններ տեղափոխելու հարցին. ՀՀ գլխավոր դատախազի միջնորդությունը ՀՀ արդարադատության նախարարի որոշմամբ՝ բավարարվել է (վերացվել և անվավեր են ճանաչվել ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի պետի և ԱՆ քրեակատարողական ծառայության պետի համապատասխան որոշումները):

Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության լիազորության շրջանակում ստուգվել է ԱՆ «Արմավիր», «Վանաձոր», «Վարդաշեն», «Նուբարաշեն» և «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց պահման պայմանների վերաբերյալ իրավական ակտերի համապատասխանությունը գործող օրենսդրությանը:

Կատարված ստուգումներով արձանագրվել են Քրեակատարողական օրենսդրության, «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքի, ինչպես նաև Կառավարության 2023 թվականի ապրիլի 13-ի թիվ 543-Ն որոշմամբ հաստատված ԱՆ քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգի մի շարք նորմերի պահանջների խախտումներ:

Կատարված ստուգման արդյունքում, ի թիվս այլնի, արձանագրվել է, որ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի թերապևտիկ բաժանմունքի երկու հիվանդասենյակներում պահվել է 1-ական անձ, որոնցից՝ մեկի հիվանդասենյակի բնակելի մակերեսը կազմել է 19.56 քմ, իսկ մյուսինը՝ 14.79 քմ:

19.56 քմ մակերեսով 1-ին հիվանդասենյակում միայնակ պահվել է քրեական միջավայրում կոնկրետ մականունով հայտնի և հանցածին դիրքորոշում ունեցող կալանավորված անձ, իսկ նույն բաժանմունքի այլ հիվանդասենյակներում պահվել են 2-ական անձ:

Ընդ որում, նշված երկու հիվանդասենյակներն իրենց բարեկարգությամբ տարբերվել են բաժանմունքի մյուս հիվանդասենյակներից, հատկապես 1-ին հիվանդասենյակն ունեցել է առանձին սանհանգույց՝ իր լոգասենյակով, առանձնացել է իր ճոխությամբ, ժամանակակից վերանորոգմամբ և քրեակատարողական հիմնարկի համար չնախատեսված կահույքով և կենցաղային տեխնիկայով՝ սառնարանով, հեռուստացույցով, որոնց չափսերն ակնհայտորեն չեն համապատասխանել Քրեակատարողական օրենսդրությամբ՝ հիշյալ գույքերի համար նախատեսված չափսերից: Թերապևտիկ բաժանմունքի 14.79 քմ մակերեսով հիվանդասենյակում պահվել է մեկ անձ, հիվանդասենյակում առկա է եղել նաև երկրորդ մահճակալը, սակայն նույն բաժանմունքի մեկ այլ հիվանդասենյակում պահվող դատապարտյալն անգամ ապահովված չի եղել անհատական քնելատեղով, մասնավորապես՝ մահճակալի փոխարեն վերջինս քնել է կոտրված, հնամաշ բազմոցի վրա, որի երկարությունը ակնհայտորեն կարճ է եղել դատապարտյալի հասակից,

ինչի պատճառով բազմոցի կողքին առկա են եղել փոքրիկ աթոռակներ և այլ իրեր՝ մահճակալի պատրանք ստեղծելու համար:

Այս կապակցությամբ «Դատախազության մասին» օրենքի 28-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված ընթացակարգով բացատրություններ են ստացվել ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի իրավասու պաշտոնատար անձանցից, ովքեր նշվածի վերաբերյալ որևէ փաստարկված պատճառաբանություն չեն ներկայացրել:

Կատարված ստուգմամբ պարզվել է նաև, որ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի նշված երկու հիվանդասենյակներում մշտապես պահվել են հանցածին դիրքորոշում ունեցող դատապարտյալներ կամ կալանավորված անձինք:

Կատարված ստուգումներով արձանագրված խախտումների բովանդակությունից տեսանելի է, որ դրանք կրել են համակարգային բնույթ, ինչը բացառելու և իրավական ակտերի միատեսակ կիրառությունը ապահովելու նպատակով՝ հաղորդումներ են ներկայացվել ԱՆ քրեակատարողական ծառայություն, սակայն Ծառայության կողմից դրանք վերացնելու ուղղությամբ գործուն միջոցներ չեն ձեռնարկվել և ներկայացվել են անհիմն պատճառաբանություններ:

Նկատի ունենալով վերոշարադրյալ և արձանագրված մի շարք այլ խախտումները վերացնելուն ուղղված միջոցառումները բավարար չեն եղել, դրանք շարունակել են կրել համատարած բնույթ՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից միջնորդություն է ուղարկվել ՀՀ վարչապետի աշխատակազմ՝ առաջարկելով Քրեակատարողական օրենսգրքով և այլ իրավական ակտերով նախատեսված պահանջների խախտումները բացառելու ուղղությամբ Արդարադատության նախարարությանը տալ համապատասխան հանձնարարություն:

Դատախազության կողմից ուսումնասիրվել է նաև պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու գործընթացում զեկույցների կազմման օրինականության և դրանց օրենսդրության պահանջներին համապատասխանության վիճակը:

Ուսումնասիրության արդյունքներով արձանագրվել է, որ պատժի կրման ընթացքում դատապարտյալի պատշաճ վարքագիծ դրսևորելու և նոր հանցանք կատարելու հավանականությունը գնահատելու համատեքստում առկա է Քրեակատարողական օրենսդրությամբ նախատեսված՝ ԱՆ քրեակատարողական և պրոբացիայի ծառայությունների կողմից համապատասխան զեկույցների կազմման կառուցակարգը վերանայելու անհրաժեշտություն:

Կատարված ուսումնասիրության ընթացքում ուշադրություն է դարձվել նաև պատժի կրման ընթացքում կրթական ծրագրերին, մարզական կամ մշակութային միջոցառումներին կամ դատապարտյալների ինքնագործ միավորումներին պատիժը կրող անձանց մասնակցությանը, վեր են հանվել ոլորտին վերաբերվող խնդիրներն այն շեշտադրմամբ, որպեսզի մի կողմից բարձրացվի դասընթացների արդյունավետությունը, իսկ մյուս կողմից՝ չեզոքացվեն առանձին դեպքերում դրանց մասնակցության իմիտացիոն ռիսկերը: Ուսումնասիրության արդյունքներով կոնկրետ առաջարկություններ են ներկայացվել պատժի կրման ընթացքում դատապարտյալներին աշխատանքով ապահովելու, նրանց զբաղվածությունը խթանելու, ՀՀ արդարադատության նախարարի՝ 2018 թվականի հուլիսի 12-ի N 336-Լ հրամանով սահմանված դատապարտյալի վարքագծի բովանդակային գնահատման համար ներդրված բալային համակարգը բարելավվելու վերաբերյալ:

Դատախազության կողմից իրականացված ուսումնասիրության արդյունքները, արձանագրված խնդիրները և դրանց լուծման ուղղությամբ կոնկրետ առաջարկները ներկայացվել են ՀՀ արդարադատության նախարարություն: Այս համատեքստում 2023 թվականի դեկտեմբերի 14-ին ՀՀ արդարադատության նախարարի հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ, որի կազմում ներառվել են նաև Դատախազության ներկայացուցիչները:

Նախատեսվում է, որ աշխատանքային խումբն եռամսյա ժամկետում կմշակի և ՀՀ արդարադատության նախարարին կներկայացնի պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի փոփոխությունների վերաբերյալ նախագծեր:

Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության սահմանադրական լիազորության իրականացման շրջանակներում իրականացված 10 ուսումնասիրությունների և ստուգումների արդյունքում ՀՀ դատախազության կողմից հայտնաբերվել են.

- **Առանձնապես ծանր հանցագործություններ կատարելու համար ազատազրկման դատապարտված դատապարտյալի կողմից պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդության հիմքով պատժի հետագա կրումից ազատելու գործընթացում ՀՀ առողջապահության նախարարության միջգերատեսչական բժշկական հանձնաժողովի կողմից առերևույթ կեղծ եզրակացություն կազմելու և շրջանառության մեջ դնելու դեպքեր, որոնք էական նշանակություն է ունեցել գործի լուծման համար:**
- **Օրինական ուժի մեջ մտած դատական ակտը և այն ի կատար ածելու կարգադրությունն անկատար մնալու դեպք, որի արդյունքում դատավճռով դատապարտյալի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը փաստացի ի կատար չի ածվել:**
- **Դատապարտյալի նկատմամբ նշանակված պատիժը, առանց բավարար իրավական հիմքերի, գործող օրենքին չհամապատասխանեցնելու դեպք, ինչի արդյունքում դատապարտյալն առերևույթ անհիմն շարունակել է մնալ անազատության մեջ:**
- **Օրինական ուժի մեջ մտած դատական ակտը և այն ի կատար ածելու կարգադրությունը սահմանված ժամկետից ուշ կատարման ուղարկելու դեպք, որի արդյունքում դատավճռով դատապարտյալի նկատմամբ նշանակված պատժի լրիվ ծավալով կատարումը փաստացի դարձել է անհնար:**
- **Դատական ակտի կատարման փուլում դատավորի կողմից առերևույթ դատավարական իրավունքի նորմի այնպիսի խախտման փաստ, որն իր բնույթով եղել է դիտավորության կամ կոպիտ անփութության արդյունք:**
- **ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալների բավարար սնունդ ստանալու իրավունքի խախտման դեպքեր:**
- **Քրեակատարողական հիմնարկներում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալների պատշաճ բժշկական օգնություն ստանալու իրավունքի խախտման դեպք, որը պայմանավորված է եղել իրավասու պաշտոնատար անձի կողմից աշխատավայր չներկայանալու կամ աշխատանքային ժամերին աշխատավայրից բացակայելու հանգամանքով:**

Մասնավորապես՝ Գլխավոր դատախազության կողմից կատարված ստուգմամբ պարզվել է, որ «Քրեակատարողական բժշկության կենտրոն» Նուբարաշեն ստորաբաժանման ղեկավարի պարտականությունները կատարողը 2023 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի օգոստոսի 9-ն ընկած ժամանակահատվածում՝ շուրջ 160 աշխատանքային օրից, քրեակատարողական հիմնարկ է այցելել ընդամենը 64 օր, ընդ որում, քրեակատարողական հիմնարկ գերակշիռ դեպքերում մուտք է գործել աշխատանքային օրվա երկրորդ կեսին՝ ժամը 14:00-ից հետո:

Վերոշարադրյալ փաստական հանգամանքների վերաբերյալ զեկուցագիր է ներկայացվել ՀՀ գլխավոր դատախազին, որն ուղարկվել է Հակակոռուպցիոն կոմիտե՝ ստուգողական գործողություններ կատարելու նպատակով:

Դատախազության դատախազները հաշվետու ժամանակաշրջանում պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պայմանական վաղաժամկետ ազատումը վերացնելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու, ծանր հիվանդության կամ արտակարգ

հանգամանքների հետևանքով պատժից ազատելու վերաբերյալ միջնորդությունների և դատարանի կողմից դատական որոշումներն ի կատար ածելու հետ կապված այլ հարցերի վերաբերյալ գործերով մասնակցել են 2391 դատական քննության (2022 թվականին՝ 2860):

Վերը նշվածներից 803-ը վերաբերում են դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելուն (2022 թվականին՝ 805), 53-ը՝ ՔԿՀ-ներում կատարված հանցագործություններով քրեական գործերով մեղադրանքի պաշտպանությանը (2022 թվականին՝ 48), 28-ը՝ պատիժը կրելուց ծանր հիվանդության պատճառով ազատելուն (2022 թվականին՝ 21), 32-ը՝ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելուն (2022 թվականին՝ 89), 29-ը՝ հանրային աշխատանքներն ազատազրկմամբ փոխարինելուն (2022 թվականին՝ 87), 97-ը՝ տուգանքը կամ տուգանքի չվճարած մասը հանրային աշխատանքներով փոխարինելուն (2022թ՝ 463), 5-ը՝ պատժի կատարման հետ միացված բժշկական բնույթի հարկադրանքի այլ միջոցների կիրառումը փոփոխելուն կամ դադարեցնելուն (2022 թվականին՝ 15), 55-ը՝ հարկադիր բուժումը փոփոխելուն կամ այն դադարեցնելուն (2022 թվականին՝ 119), իսկ 1289-ը՝ դատարանի կողմից դատական որոշումներն ի կատար ածելու հետ կապված այլ հարցերին (2022 թվականին՝ 1213):

Գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչության կողմից 2023 թվականի ընթացքում ներկայացվել է 97 վերաքննիչ բողոք (2022 թվականին՝ 50), որոնցից բավարարվել է 30-ը (2022 թվականին՝ 15):

Վերաքննիչ բողոքներից 63-ը եղել են պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ, որոնցից բավարարվել է 18-ը:

2023 թվականին բերվել է 110 վճռաբեկ բողոք (2022 թվականին՝ 27), որոնցից բավարարվել է 9-ը (2022 թվականին՝ 1):

9

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Հայաստանի Հանրապետության դատախազության առաջնահերթություններից է միջազգային-իրավական կապերի, միջազգային կառույցների հետ հարաբերությունների ամրապնդումը, ինչպես նաև հանցավորության դեմ պայքարում այլ պետությունների իրավասու մարմինների հետ մինչդատական վարույթում գտնվող քրեական վարույթներով համագործակցության խորացումը:

Միջազգային-իրավական համագործակցության ոլորտում Հայաստանի Հանրապետության դատախազությունն իրականացրել է 1998 թվականի ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 54-րդ և 54.1-րդ գլուխներով ու միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած պարտավորությունների՝ իրեն վերապահված գործառույթների իրականացումը՝ ըստ հետևյալ հիմնական ուղղությունների.

Քրեական գործերով փոխադարձ իրավական օգնության մասին հարցումներ.

2023 թվականի ընթացքում ԱՊՀ մասնակից-պետությունների դատախազություններ է ուղարկվել քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու մասին 135 միջնորդություն (2022 թվականին՝ 153), իսկ այլ օտարերկրյա պետություններ՝ 176 միջնորդություն (2022 թվականին՝ 274). ընդամենն ուղարկվել է 311 միջնորդություն (2022 թվականին՝ 427):

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ քննչական մարմիններին փոխանցվել են տարբեր օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններին ուղարկվող քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու մասին միջնորդություններ կազմելու վերաբերյալ թարմացված ուղեցույցներ, և կազմվող միջնորդությունների նախագծերը նախքան ուղարկելն աշխատանքային կարգով ուսումնասիրվել ու լրամշակվել են Միջազգային-իրավական համագործակցության վարչության կողմից՝ դրանք համապատասխանեցնելով տարբեր միջազգային պայմանագրերի և ուղեցույցների պահանջներին՝ զգալիորեն բարելավվել է դրանց որակը, ինչի արդյունքում նաև կրճատվել են օտարերկրյա պետությունների իրավասու մարմինների կողմից դրանց կատարման ժամկետները:

Ուղարկված միջնորդությունների թվի նվազումը կարող է պայմանավորված լինել նախքան միջնորդություններ ուղարկելը Միջազգային-իրավական համագործակցության վարչության կողմից առաջարկված գործողությունների (pre-MLAR consultations) իրականացմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում Միջազգային-իրավական համագործակցության վարչությունում քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու մասին ԱՊՀ պետությունների իրավասու մարմիններից ստացվել է 145 միջնորդություն (2022թվականին՝ 146), իսկ այլ օտարերկրյա պետություններից՝ 45 միջնորդություն (2022թվականին՝ 23), ընդհանուր առմամբ ստացվել է 190 միջնորդություն (2022թվականին՝ 169):

Քրեական հետապնդման նպատակով անձանց հանձնման մասին միջնորդություններ.

Հաշվետու ժամանակաշրջանում Միջազգային-իրավական համագործակցության վարչությունն իրականացրել է ՀՀ իրավասու մարմինների կողմից հետախուզվող և օտարերկրյա պետություններում հայտնաբերված անձանց հանձնելու մասին 28 միջնորդությունների նախապատրաստման և ուղարկման կազմակերպումը (2022թվականին՝ 44), որից 15-ն ուղարկվել են ԱՊՀ մասնակից-պետությունների, իսկ 13-ը՝ այլ օտարերկրյա պետությունների իրավասու մարմինների քննարկմանը:

ՀՀ իրավապահ մարմինների կողմից հետախուզվողների հայտնաբերման մասին ստացված գրությունների հիման վրա պահանջված փաստաթղթերի փաթեթներն ուսումնասիրվել են Միջազգային-իրավական համագործակցության վարչությունում, պահանջվել են դրանց լրամշակված տարբերակները,

իսկ անհրաժեշտության դեպքում օտարերկրյա պետություններում դրանց քննարկման ընթացքում միջազգային պայմանագրերի համաձայն՝ հայցվել և տրամադրվել են լրացուցիչ տեղեկություններ:

Այս գործընթացի ճիշտ և ժամանակին կազմակերպման արդյունքում բացառվել են հանձնման միջնորդությունների անհիմն մերժումները:

Հաշվետու ժամանակահատվածում ներկայացված 28 հանձնման միջնորդություններից 8-ը բավարարվել են, 4-ը՝ մերժվել, 16-ը գտնվում են քննարկման փուլում, բավարարվել են նաև նախկինում ներկայացված միջնորդություններից 9-ը, մերժվել՝ 2-ը:

Զգալիորեն աճել է քրեական հետապնդման նպատակով անձանց հանձնման մասին ստացվող միջնորդությունների թիվը:

Օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններից ստացված 54 միջնորդություններից (2022թվականին՝ 38) բավարարվել է 18-ը, մերժվել՝ 5-ը, թողնվել է առանց քննարկման 3-ը, ուղարկվել է ՀՀ արդարադատության նախարարություն՝ 3-ը, իսկ 25-ը գտնվում են քննարկման փուլում:

Բավարարվել է նաև նախորդ հաշվետու ժամանակաշրջանից փոխանցված 4 միջնորդություն, մերժվել՝ 1-ը, ուղարկվել ՀՀ արդարադատության նախարարություն՝ 2-ը:

Զգալիորեն աճել է նաև ՀՀ-ում հայտնաբերված այլ երկրների կողմից հետախուզվողների թիվը:

ՀՀ գլխավոր դատախազությունում հաղորդում է ստացվել ՀՀ-ում հայտնաբերված այլ երկրների կողմից հետախուզվող 241 անձի վերաբերյալ (2022թվականին՝ 213):

2023 թվականին շարունակվել է 2020 թվականին ներդրված՝ ՀՀ տարածքից դուրս հանցանք կատարած և ՀՀ տարածքում հայտնաբերված ՀՀ քաղաքացիների ձերբակալման և կալանավորելու մասին միջնորդություն դատարան ներկայացնելու պրակտիկան, որի արդյունքում բացառվել են անձանց անհարկի արգելանքի տակ պահելու, նրանց կալանավորելու մասին վիճահարույց միջնորդություններ դատարան ներկայացնելու դեպքերը:

Քրեական հետապնդում իրականացնելու մասին միջնորդությունների մասով կատարված աշխատանքներ.

ՀՀ գլխավոր դատախազության միջոցով այլ պետությունների իրավասու մարմիններ է ուղարկվել 1 քրեական գործ (2022թվականին՝ 1):

Այլ պետության տարածքում կատարված հանցագործության համար քրեական հետապնդում իրականացնելու միջնորդությամբ օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններից վարչությունում ստացվել է 26 քրեական գործ (2022թվականին՝ 22):

Համագործակցություն այլ պետությունների դատախազությունների, միջազգային կազմակերպությունների և դիվանագիտական ներկայացուցչությունների հետ, միջազգային և տարածաշրջանային միջոցառումների ու երկկողմ հանդիպումների կազմակերպում և մասնակցություն.

1. Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի՝ «Գործընկերություն հանուն լավ կառավարման» 2023-2027 թվականների ծրագրային ձևաչափի շրջանակում՝ Եվրոպայի խորհրդի աջակցությամբ՝ ՀՀ գլխավոր դատախազության հետ համատեղ ՀՀ դատախազության 105-ամյակի և Դատախազության աշխատակցի օրվա կապակցությամբ 2023 թվականի հունիսի 30-ից հուլիսի 2-ը կազմակերպվել է «Դատախազության անկախությունը՝ որպես իրավունքի գերակայության երաշխավոր» թեմայով բարձրաստիճան խորհրդաժողով: Խորհրդաժողովին ներկա են եղել Հայաստանի Հանրապետության նախագահը, վարչապետը, սահմանադրական դատարանի նախագահը, փոխվարչապետերը, գլխավոր դատախազը, մարդու իրավունքների պաշտպանը, բարձրագույն դատական խորհրդի նախագահը, ՀՀ պետական և իրավապահ մարմինների ղեկավար կազմը,

Եվրոպայի խորհրդի և անդամ պետությունների բարձրաստիճան պաշտոնյաներ ու փորձագետներ, ինչպես նաև ՀՀ-ում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների ղեկավարներ ու համաժողովին մասնակցելու նպատակով Հայաստան ժամանած եվրոպական երկրների գլխավոր դատախազությունների բարձրաստիճան պաշտոնյաներ (100-ից ավելի մասնակից):

2023 հունիսի 30-ին ՀՀ գլխավոր դատախազը փոխըմբռնման մասին հուշագրեր է ստորագրել միջոցառման շրջանակներում ՀՀ ժամանած Լիտվայի Հանրապետության գլխավոր դատախազի ու Իտալիայի Հանրապետության գերագույն վճռաբեկ դատարանին կից գլխավոր դատախազի հետ:

Միջոցառման շրջանակներում ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը խորհրդաժողովի մասնակիցներին է ներկայացրել «Օրինականություն» գիտագործնական պարբերականի նոր համարը՝ նշելով, որ ամիսներ առաջ ՀՀ գլխավոր դատախազի նախկին տեղակալ, ներկայում Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանի ջանքերով, մեկնարկել են 1997 թվականից հրատարակվող «Օրինականություն» գիտագործնական պարբերականի բարեփոխման աշխատանքները, որի շրջանակում ընդլայնվել է խմբագրական խորհրդի կազմի աշխարհագրությունը (պարբերականի միջազգայնացման գործընթացի շրջանակներում Խորհրդի կազմում ընդգրկվել են համաշխարհային հեղինակավոր շտեմարաններում հրապարակումներ ունեցող մասնագետներ):

2. 2023 թվականի հուլիսի 21-ին ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավոր Արմեն Հարությունյանի նախագահությամբ ՀՀ գլխավոր դատախազությունում կազմակերպվել է հանդիպում-քննարկում «Ատելության խոսք և խոսքի ազատություն» թեմայով, որին մասնակցել են Դատախազության և Քննչական կոմիտեի 25 ներկայացուցիչներ:

Քննարկման արդյունքում կազմվել է ուղեցույց, որն ուղարկվել է Դատախազության կառուցվածքային ստորաբաժանումներ:

3. 2023 թվականի հոկտեմբերի 25-ին ՀՀ դատախազության հիմնադրման 105-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում Դատախազության կողմից կազմակերպվել է «Դատավարական էթիկա» թեմայով մասնագիտական երկխոսություն՝ ԱՄՆ Լոս Անջելես նահանգի Գերագույն դատարանի դատավոր Արմենուհի Էմի Աշվանյանի մասնակցությամբ, որին մասնակցել են ՀՀ բարձրաստիճան պաշտոնյաներ, դատախազներ և դատավորներ (80-ից ավելի մասնակից):

4. 2023 թվականի դեկտեմբերի 9-ին ՀՀ-ում ԵՄ և ԵԽ գրասենյակների հետ համատեղ կազմակերպվել է «Մեղադրյալի բացակայությամբ իրականացվող (հեռակա) վարույթ» թեմայով դասընթաց, որին մասնակցել են դատախազության 30 աշխատակիցներ:

5. Դատախազության կողմից կազմակերպվել են Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության և Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազության միջև համագործակցության մասին 2023-2024 թվականների Ծրագրով արդիական թեմաներով նախատեսված 4 միջոցառումներ, այդ թվում՝ փորձագետների 1 այց, 1 սեմինար և դատախազների համար 2 դասախոսություն: Միջոցառումների շրջանակում ՌԴ-ից ՀՀ են ժամանել են 7 ներկայացուցիչ, իսկ ՀՀ-ից ՌԴ գործուղվել՝ 5 ներկայացուցիչ:

6. Դատախազների միջազգային ասոցիացիայի (ԴՄԱ) հետ համագործակցության ակտիվացման արդյունքում՝ ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ընդգրկվել է Ասոցիացիայի ամսագրի խմբագրական խորհրդի կազմում: «ՀՀ-ում կիբեռհանցավորության դեմ պայքարի առանձնահատկությունների վերաբերյալ» Դատախազների միջազգային ասոցիացիայի 28-րդ ամենամյա կոնֆերանսին ներկայացված՝ ՀՀ գլխավոր դատախազի ելույթը հրապարակվել է ԴՄԱ ամսագրի 2023 թվականի 91-րդ համարում:

7. Դատախազության ներկայացուցիչներն ակտիվորեն ներգրավվել են Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև «Եվրոպական միության քրեական արդարադատության գործակալության (Եվրաջասթ) և Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների միջև քրեական գործերով դատական համագործակցության մասին» համաձայնագրի նախագծի շուրջ բանակցային խմբի քննարկումներին: Համաձայնագիրը մի քանի անգամ լրամշակվել է. Համաձայնագրի ստորագրումը նախատեսվում է 2024 թվականին:

Գլխավոր դատախազությունը շարունակել է զարգացնել համագործակցությունը Եվրոպայի Խորհրդի, ՄԱԿ-ի, ԵՄ-ի, ԵԱՀԿ-ի համապատասխան ներկայացուցիչների, ԱՊՀ մասնակից-պետությունների գլխավոր դատախազների կոորդինացիոն խորհրդի քարտուղարության, Կոռուպցիայի հակազդման միջպետական խորհրդի քարտուղարության, Դատախազների միջազգային ասոցիացիայի, Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհրդի ու ՀՀ-ում դիվանագիտական ներկայացուցչությունների հետ:

ԱՊՀ մասնակից-պետությունների գլխավոր դատախազների կոորդինացիոն Խորհրդի հետ համագործակցության ընթացքում խորհրդի քարտուղարությունից Միջազգային-իրավական համագործակցության վարչությունում ստացվել է 282 փաստաթուղթ (2021 թվականին՝ 97, 2022 թվականին՝ 129): Տարբեր միջազգային պայմանագրերի և այլ փաստաթղթերի նախագծեր են ստացվել ՀՀ վարչապետի աշխատակազմից, այլ պետական մարմիններից, որոնք ուսումնասիրվել են, դրանց վերաբերյալ ներկայացվել են կարծիքներ:

2023 թվականի ընթացքում ապահովվել է ՀՀ դատախազության ներգրավվածությունը երկկողմ և միջազգային տարբեր հարթակներում անցկացվող հանդիպումներին, քննարկումներին, սեմինարներին և նիստերին:

Մասնավորապես՝

- 2023 թվականի մայիսի 10-14-ը ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը Եվրոպայի խորհրդի հրավերով՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով ստանձնած միջազգային պարտավորությունների իրականացման աշխատանքները համակարգելու, ոլորտային շարունակական բարեփոխումներ իրականացնելու, խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների ճանապարհային քարտեզ մշակելու նպատակով՝ ՀՀ վարչապետի 2021 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 1443-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի կազմում մեկնել է Ստրասբուրգ քաղաք (Ֆրանսիա): Այցի շրջանակում Հանձնաժողովի անդամները մայիսի 11-ին հանդիպել են Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների և իրավունքի գերակայության հարցերով գլխավոր տնօրեն Քրիստոս Ջիակումոպուլոսին, Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղար Մարիյա Բուրիչին և Եվրոպական դատարանի նախագահ Շիոֆրա Օ'Լիրին: Գլխավոր դատախազը Հանձնաժողովի անդամների հետ մասնակցել է նաև «Վճիռների կատարման ինստիտուցիոնալ մակարդակի ամրապնդում» խորագրով կլոր սեղան-քննարկմանը:

- 2023 թվականի մայիսի 29-31-ը Վրաստանի գլխավոր դատախազի հրավերով՝ ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանի գլխավորած պատվիրակությունը մեկնել է Վրաստան, քաղաք Բաթումի: Հայաստանի և Վրաստանի գլխավոր դատախազների հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել քրեական գործերով միջազգային-իրավական համագործակցությանը,անդրադարձել 2022 թվականին երկու երկրների դատախազությունների միջև կնքված համագործակցության մասին փոխըմբռնման հուշագրին և քննարկվել դրա շրջանակում աշխատանքային ծրագիր մշակելու և ստորագրելու հնարավորությունը:

- 2023 թվականի հունիսի 13-18-ը Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազի հրավերով՝ ՀՀ գլխավոր դատախազը մասնակցել է Սանկտ Պետերբուրգի՝ XXVI Պետերբուրգյան միջազգային տնտեսական համաժողովին: Համաժողովի շրջանակներում կազմակերպված «Բիզնեսի պաշտպանություն» թեմայով քննարկման ընթացքում Աննա Վարդապետյանը ներկայացրել է Հայաստանում օտարերկրյա ներդրումների պաշտպանության օրենսդրական երաշխիքները, բիզնեսի և ներդրումների ոլորտներում ընթացակարգային պահանջները պարզեցնելուն և բարեփոխումներ իրականացնելուն ուղղված աշխատանքները:

Համաժողովի շրջանակներում Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը հանդիպել է Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազ Իգոր Կրասնովին և քննարկել երկուստեք հետաքրքրություն ներկայացնող հարցերի շրջանակ:

Այցի շրջանակներում տեղի է ունեցել հերթական եռակողմ հանդիպումը՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի, Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազի և Ադրբեջանի Հանրապետության գլխավոր դատախազի մասնակցությամբ: Հանդիպման ընթացքում ՀՀ գլխավոր դատախազն ընդգծել է հայկական կողմի առաջնահերթությունը՝ ուղղված մարդասիրական պահանջների կատարմանը և շեշտել, որ այդ պահանջներն Ադրբեջանի կողմից ամբողջությամբ կատարված չեն:

- 2023 թվականի հուլիսի 3-6-ը Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազի հրավերով՝ ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը Ռուսաստանի Դաշնության Եկատերինբուրգ քաղաքում մասնակցել է Կոռուպցիայի հակազդման միջպետական խորհրդի նիստին, որի շրջանակ հանդես է եկել երկու ելույթով:

Այցի շրջանակներում ՀՀ գլխավոր դատախազը հանդիպել է Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազ Իգոր Կրասնովին և քննարկել փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի շրջանակ:

- 2023 թվականի սեպտեմբերի 24-27-ը Լոնդոն քաղաքում (Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Թագավորություն) ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Եղիազար Ավագյանը մասնակցել է Դատախազների միջազգային ասոցիացիայի 28-րդ ամենամյա կոնֆերանսին և գլխավոր համաժողովին:

- 2023 թվականի հոկտեմբերի 19-ից-20-ը Ստրասբուրգ քաղաքում (Ֆրանսիա) ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Եղիազար Ավագյանը մասնակցել է Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհրդի (CCPE) 18-րդ լիագումար նիստին, որի ընթացքում ընդունվել է «Դատախազական խորհուրդները՝ որպես դատախազական ինքնակառավարման առանցքային մարմիններ» վերնագրով թիվ 18 (2023) կարծիքը:

Ստանձնած միջազգային պարտավորությունների՝ ՀՀ գլխավոր դատախազության մասով կատարման ընթացքը ներկայացնելու, ինչպես նաև երկկողմ հետաքրքրություն ներկայացնող հարցեր քննարկելու նպատակով՝ ՀՀ գլխավոր դատախազը և գլխավոր դատախազի տեղակալները հանդիպումներ են ունեցել նաև միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների՝ մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող իրավասու կառույցների ներկայացուցիչների, դեսպանների, ինչպես նաև ՀՀ ժամանած այլ պաշտոնատար անձանց հետ:

Մասնավորապես՝

1. 2023 թվականի հունիսի 30-ին ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ընդունել է Իտալիայի Հանրապետության գերագույն վճռաբեկ դատարանին կից գլխավոր դատախազ Լուիջի Սալվատոյի ղեկավարած պատվիրակությանը:

Հանդիպման ընթացքում ՀՀ գլխավոր դատախազը և Իտալիայի Հանրապետության գերագույն վճռաբեկ դատարանի գլխավոր դատախազ Լուիջի Սալվատոն ստորագրել են փոխըմբռնման հուշագիր, որի նպատակն է ընդլայնել քրեական արդարադատության ոլորտում երկու երկրների դատախազությունների միջև համագործակցությունը՝ միտված մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության ապահովմանն ու օրենքի գերակայության ամրապնդմանը:

2. 2023 թվականի հունիսի 30-ին ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ընդունել է Լիտվայի Հանրապետության գլխավոր դատախազ Նիդա Գրունսկենեի ղեկավարած պատվիրակությանը:

Հանդիպման ընթացքում ՀՀ գլխավոր դատախազը և Լիտվայի Հանրապետության գլխավոր դատախազ Նիդա Գրունսկիենեն ստորագրել են փոխըմբռնման հուշագիր, որի նպատակն է ընդլայնել քրեական արդարադատության ոլորտում Հայաստանի և Լիտվայի դատախազությունների միջև համագործակցությունը՝ միտված մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության ապահովմանը և օրենքի գերակայության ամրապնդմանը:

3. 2023 թվականի հունիսի 30-ին ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ընդունել է Էստոնիայի Հանրապետության գլխավոր դատախազ Անդրեաս Պարմասի ղեկավարած պատվիրակությանը:

Հիմք ընդունելով Անդրես Պարմասի մասնագիտական գործունեության հարուստ փորձը և որպես Էստոնիայի դատական իշխանության պարբերականի գլխավոր խմբագրի փորձառությունը՝ ՀՀ գլխավոր դատախազն առաջարկել է Էստոնացի գործընկերոջն ընդգրկվել ՀՀ դատախազության «Օրինականություն» գիտագործնական պարբերականի խմբագրական խորհրդի կազմում:

4. 2023 թվականի հունիսի 30-ին ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ընդունել է Խորվաթիայի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ Էմիլիո Կալաբրիչի ղեկավարած պատվիրակությանը:
Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել դատախազությունների միջև համագործակցության բարձր մակարդակին, այդ թվում՝ հանցավորության դեմ պայքարում ջանքերը համատեղելու կարևորությանը, որը հիմք է հանդիսանում հետագա գործընկերության զարգացման համար:

5. 2023 թվականի հունվարի 26-ին ՀՀ գլխավոր դատախազն ընդունել է ՀՀ-ում Նիդերլանդների դեսպան Նիկոլաս Յակոբ Սխերմերսին:
Հանդիպման ընթացքում անդրադարձել է կատարվել Դատախազության բարեփոխումների առաջնահերթություններին, այդ թվում՝ դատախազների ծանրաբեռնվածության հաշվառման և վիճակագրության վարման էլեկտրոնային համակարգի ստեղծմանը, դատախազների իրավական կրթության կատարելագործմանը, դատախազների արտաքին հաղորդակցությանն առնչվող վերապատրաստումների կազմակերպման ուղղությամբ աշխատանքներին, քննարկվել են նշված ոլորտներում համագործակցության հնարավորություններն ու հեռանկարները:

Հանդիպման արդյունքում Հայաստանում Նիդերլանդների Թագավորության դեսպանության ֆինանսական աջակցությամբ նախաձեռնվել են դատախազների հաղորդակցության կարողությունների և հմտությունների զարգացմանն ուղղված դասընթացներ: Երկօրյա դասընթացները նախատեսվել են բոլոր դատախազների համար (2023 թվականի նոյեմբերից 2024 թվականի ապրիլն ընկած ժամանակահատվածում):

6. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը 2023 թվականի փետրվարի 21-ին ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության արտակարգ և լիազոր դեսպան Սերգեյ Կոպիրկինին:
Վերահաստատելով նախորդ տարեվերջին ՌԴ գլխավոր դատախազ Իգոր Կրասնովի հետ հանդիպման ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունները՝ քննարկվել են իրավական փոխօգնությանը վերաբերող մի շարք հարցեր:

7. 2023 թվականի մարտի 16-ին ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ընդունել է ՀՀ-ում Վրաստանի նորանշանակ դեսպան Գիորգի Շարվաշիձեին:

Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել 2022 թվականի ապրիլին Հայաստանի Հանրապետության դատախազության և Վրաստանի դատախազության միջև ստորագրված համագործակցության փոխըմբռնման հուշագրին՝ ուղղված երկու երկրների դատախազությունների միջև գործընկերության արդյունավետության բարձրացմանը:

8. 2023 թվականի մարտի 21-ին ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ընդունել է ՀՀ-ում ԱՄՆ նորանշանակ դեսպան Քրիստինա Քվինին:

Հանդիպման ընթացքում ներկայացվել է Դատախազության բարեփոխումների օրակարգը՝ ուղղված համակարգի բարելավմանն ու ժամանակակից պահանջներին համապատասխանեցնելուն: Անդրադարձ է կատարվել ապօրինի հարստացման, փողերի լվացման, կոռուպցիայի և կիբեռհանցագործությունների դեմ պայքարի, ինչպես նաև ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ինստիտուտի կատարելագործման բնագավառում փոխգործակցությանը:

9. 2023 թվականի մայիսի 16-ին ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ընդունել է Երևանում ԱՄՆ դեսպանության ներկայացուցիչ Ալեքսիս Հավթանիին ու ԱՄՆ Պետքարտուղարության Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության գրասենյակի գործադիր քարտուղարի տեղակալի պաշտոնակատար Ջեյմս Էփլգեյթին:

Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել դատախազության կարիքների շուրջ շարունակական երկխոսությանը և գործընկերության ընդլայնման հեռանկարներին, կարևորվել է դատախազների շարունակական վերապատրաստման ծրագրերի իրականացումը՝ փողերի լվացման, թմրամիջոցների ապօրինի շրջանառության, կիբեռ և կոռուպցիոն հանցագործությունների դեմ պայքարի, ինչպես նաև ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ինստիտուտի կատարելագործման ուղղություններով:

10. 2023 թվականի հունիսի 7-ին ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ընդունել է Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ԿԽՄԿ) պատվիրակության ղեկավար Թիերի Ռիբոյին և պատվիրակության ներկայացուցիչներին:

Հանդիպման ընթացքում, ի թիվս այլ հարցերի, ՀՀ գլխավոր դատախազն անդրադարձ է կատարել Ադրբեջանում պահվող հայ ռազմագերիների հիմնահարցին՝ ընդգծելով ԿԽՄԿ դերը նրանց իրավունքների ապահովման և վերադարձի հարցում:

11. 2023 թվականի հունիսի 22-ին ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ընդունել է ՀՀ-ում Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Աբբաս Բադախշան Զոհուրիին:

Հանդիպման ընթացքում քննարկվել է փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի շրջանակ:

12. 2023 թվականի հունիսի 27-ին ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ընդունել է Եվրոպոլի գործադիր տնօրեն Քեթրին Դը Բոլի ղեկավարած պատվիրակությանը:

Հանդիպման ընթացքում ՀՀ գլխավոր դատախազը ներկայացրել է դատախազության դերը միջազգային-իրավական համագործակցության ոլորտում, ողջունել համագործակցության ամրապնդման ուղղված համատեղ ջանքերը՝ հույս հայտնելով, որ դրանք կնպաստեն հանցավորության դեմ արդյունավետ պայքարին հատկապես փողերի լվացման, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման և պատերազմական հանցագործությունների բացահայտման համատեքստում:

13. 2023 թվականի հունիսի 27-ին ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ընդունել է ՀՀ-ում Ֆրանսիայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Անն Լույոյի ղեկավարած պատվիրակությանը:

Հանդիպման ընթացքում քննարկվել է Հայաստանի և Ֆրանսիայի դատախազությունների միջև համագործակցությունը խթանելու հեռանկարը՝ ուղղված կոռուպցիոն հանցագործությունների, փողերի լվացման, ապօրինի հարստացման, թմրամիջոցների ապօրինի շրջանառության և կիբեռհանցավորության դեմ պայքարին, ինչպես նաև այս ոլորտներում երկու երկրների դատախազների համար վերապատրաստման ծրագրերի իրականացմանը:

14. 2023 թվականի հունիսի 30-ին ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ընդունել է Եվրոպական միության քրեական արդարադատության գործակալության (Եվրաջասթ) փոխնախագահ Բոշտիան Սկրելեցին:

Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել կազմակերպությանն անդամակցելու ուղղությամբ ձեռնարկված քայլերին և հետագա անելիքներին:

15. 2023 թվականի հունիսի 30-ին ՀՀ գլխավոր դատախազն ընդունել է Դատախազների միջազգային ասոցիացիայի փոխնախագահ Գիորգի Գոգաձեին:

Հանդիպման ընթացքում ընդգծվել է հանցավորության դեմ պայքարի համընդհանուր նպատակի իրականացման ուղղությամբ ջանքերի միավորման անհրաժեշտությունը:

16. 2023 թվականի հուլիսի 12-ին ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն առցանց ձևաչափով հանդիպել է Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների և իրավունքի գերակայության գլխավոր տնօրինության գլխավոր տնօրեն Քրիստոս Ջիակումոպուլոսին, որի ընթացքում ընդգծվել է 01.07.2023թ. անցկացված Խորհրդաժողովի կարևորությունը և քննարկվել նման ձևաչափով երկրորդ խորհրդաժողովն անցկացնելու հնարավորությունը՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման թեմայով:

17. 2023 թվականի օգոստոսի 4-ին ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ընդունել է ՀՀ-ում Իրանի Իսլամական Հանրապետության նորանշանակ դեսպան Մեհդի Սոբհանիի ղեկավարած պատվիրակությանը:

Հանդիպման ընթացքում քննարկվել է 2018 թվականի նոյեմբերի 14-ին Թեհրանում ստորագրված համագործակցության ծրագրով նախատեսված հերթական միջոցառումը Երևանում անցկացնելու հարցը:

18. 2023 թվականի օգոստոսի 11-ին ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ընդունել է ՀՀ-ում առաքելությունն ավարտող ԵՄ դեսպան Անդրեա Վիկտորինին:

Հանդիպման ընթացքում անդրադարձել է կատարվել «Եվրոպական միության քրեական արդարադատության գործակալության (Եվրաջասթ) և Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների միջև քրեական գործերով դատական համագործակցության մասին» համաձայնագրի նախագծի մշակման և վերջնական համաձայնեցման ուղղությամբ ընթացող բանակցություններին:

19. 2023 թվականի օգոստոսի 25-ին ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ընդունել է Հայաստանում Քուվեյթի արտակարգ և լիազոր դեսպան Նաուաֆ Ալենեզիին, որի ընթացքում քննարկվել է Հայաստանի ու Քուվեյթի դատախազությունների միջև համագործակցությունը երկկողմ փաստաթղթերով ամրագրելու հնարավորությունը:

20. 2023 թվականի սեպտեմբերի 20-ին ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ընդունել է Իրանի Իսլամական Հանրապետության արդարադատության փոխնախարարների ղեկավարած պատվիրակությանը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են երկու երկրների իրավապահ մարմինների միջև համագործակցության ընդլայնմանն առնչվող հարցեր:

21. 2023 թվականի հոկտեմբերի 10-ին ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ընդունել է ՀՀ-ում ԵՄ նորանշանակ դեսպան Վասիլիս Մարագոսի ղեկավարած պատվիրակությանը:

Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել «Եվրոպական միության քրեական արդարադատության գործակալության (Եվրաջասթ) և Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների միջև քրեական գործերով դատական համագործակցության մասին» համաձայնագրի նախագծի մշակման աշխատանքներին, ՀՀ-ում Եվրոպական միության գրասենյակի հետ համագործակցության ձևաչափին, ինչպես նաև ԵՄ անդամ պետությունների հետ ոլորտային համատեղ ծրագրերի իրականացման հնարավորություններին:

22. 2023 թվականի նոյեմբերի 20-ին ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ընդունել է Ճշմարտության, արդարության, հատուցման և չկրկնվելու երաշխիքների խթանման հարցերով ՄԱԿ հատուկ զեկուցող Ֆաբիան Սալվիոլիին:

Հանդիպման ընթացքում ՀՀ գլխավոր դատախազը ՄԱԿ հատուկ զեկուցողին է ներկայացրել ՀՀ դատախազության լիազորությունների էվոլյուցիան, Դատախազության գործիքակազմը՝ ուղղված կոռուպցիայի դեմ պայքարին, պետական (համայնքային) շահերի պաշտպանությանը, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանը, խոշտանգումների կանխարգելմանն ու դրանց դեմ քրեաիրավական պայքարին, քննարկվել են Քրեական և Քրեական դատավարության օրենսգրքերում կատարված հայեցակարգային փոփոխությունները:

23. 2023 թվականի նոյեմբերի 21-ին ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ընդունել է ՀՀ-ում ԵԽ գրասենյակի ղեկավար Մարտինա Շմիդտին:

Հանդիպման ընթացքում կարևորվել է Եվրոպայի խորհրդի հետ Դատախազության փոխգործակցության շարունակականությունը և երկրորդ միջազգային բարձրաստիճան խորհրդաժողովի անցկացումը:

24. 2023 թվականի նոյեմբերի 24-ին ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ընդունել է ՀՀ-ում Չինաստանի արտակարգ և լիազոր դեսպան Ֆան Յունին:

Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են իրավական փոխօգնության շրջանակում երկու երկրների դատախազությունների համագործակցությունը զարգացնելու հեռանկարները:

25. 2023 թվականի ապրիլի 20-ին ՀՀ գլխավոր դատախազի տեղակալներն ընդունել են «Զինված ուժերում մարդու իրավունքների խթանումը Հայաստանում» Եվրոպայի խորհրդի ծրագրի համար պատասխանատու պատվիրակությանը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են Եվրոպայի խորհրդի կողմից կազմակերպված՝ «Զինված ուժերում մարդու իրավունքների խթանումը Հայաստանում» ծրագրի մեկնարկն ու դրա մանրամասները, կարևորվել է զինված ուժերում մարդու իրավունքների խախտումների կանխարգելումը, հնարավոր խախտումների դեպքերի արդյունավետ քննությունը, դրանց բացահայտմանը միտված կարողությունների զարգացումը:

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել է ակտիվ համագործակցությունը տարբեր միջազգային կազմակերպությունների հետ:

Ի թիվս այլնի՝ կազմակերպվել են ՀՀ դատախազության աշխատակիցների գործուղումներ՝ միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության և մասնագիտական կարողությունների կատարելագործման նպատակներով:

Այսպես՝ հաշվետու ժամանակահատվածում ՀՀ դատախազության ներկայացուցիչները, ի թիվս այլնի, մասնակցել են՝

- Եվրամիության իրավապահ մարմինների աշխատակիցների վերապատրաստման գործակալության (CEPOL) «TOPCOP» ծրագրի շրջանակում՝ Իտալիայի Հռոմ քաղաքում կայացած «Կեղծ ապրանքներ, դեղամիջոցների և գյուղատնտեսական արտադրանքի կեղծում և ապօրինի առևտուր» թեմայով դասընթացին.
- Նույն ծրագրի շրջանակում կազմակերպված՝ «Թմրանյութերի ապօրինի շրջանառություն» (Drug trafficking) թեմայով դասընթացին.
- Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի Գործընկերություն հանուն լավ կառավարման ծրագրի շրջանակում կազմակերպված՝ Ապօրինի ծագում ունեցող ակտիվների վերադարձ և բռնագանձված ակտիվների կառավարում թեմայով տարածաշրջանային աշխատաժողովին.
- Վարշավայում կայացած՝ «Հրազենի և պայթուցիկ նյութերի ապօրինի շրջանառություն» թեմայով դասընթացին.
- Վիեննայում կայացած՝ «Կազմակերպված հանցավորության ֆինանսական ասպեկտները» (Financial dimension of organized crime) թեմայով դասընթացին.
- «Դարք վեբ, էլեկտրոնային ապացույց, կրիպտոարժույթներ» (Dark Web investigations, electronic evidence and cryptocurrencies) թեմայով դասընթացին.
- «Փաստաթղթերի կեղծում - կեղծ փաստաթղթեր, որոնք նախատեսված են ապօրինի միգրացիայի համար» (Document fraud – forged documents targeting migrant smuggling) թեմայով դասընթացին.
- ԵՄ-ԵԽ կողմից համատեղ իրականացվող՝ CyberEast ծրագրի շրջանակներում Ռումինիայի Յասի քաղաքում կայացած՝ «Կիբեռհանցագործության ոլորտում համագործակցության տարածաշրջանային դասընթացին».
- Ստրասբուրգում Եվրոպայի խորհրդի կողմից կազմակերպված՝ ապօրինի միգրացիայի հարցերով Եվրոպայի խորհրդի դատախազների ցանցի 2-րդ գումարման նիստին.
- Աստանայում կայացած՝ ՏՀԶԿ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի իրավապահ ցանցի 13-րդ հանդիպմանը.
- ՄԱԿ Թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի հանձնաժողովի կողմից Բիշքեկում անցկացվելած՝ Մերձավոր Արևելքում թմրամիջոցների ապօրինի շրջանառության և հարակից հարցերի ենթահանձնաժողովի 56-րդ նստաշրջանին.
- Աբու Դաբի քաղաքում կայացած՝ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման գործերով կենտրոնական մարմինների դերը» խորագրով կոնֆերանսին.
- ՄԱԿ թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի կողմից կազմակերպված Կենտրոնական Ասիայի և Հարավային Կովկասի դատական համագործակցության ցանցի (Judicial Cooperation Network of Central Asia and Southern Caucasus-CASC Network) Բիշքեկում կայացած լիագումար նիստին:

2023 թվականի ընթացքում հանցավորության շարժընթացի, իրավակիրառ պրակտիկայի և հանցագործությունների քննության վիճակագրական տվյալների վերլուծությունների հիման վրա, հաշվի առնելով ՀՀ դատախազության ընդլայնված կոլեգիայի 2023 թվականի մարտի 10-ի նիստում հնչած կարծիքները, Կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության կողմից մշակվել են քրեական դատավարության ոլորտին վերաբերող և ՀՀ դատախազության գործունեությանն առնչվող նորմատիվ-իրավական ակտերի նախագծեր:

Նախագծերը միտված են ամրապնդելու առանձին հանցատեսակների դեմ քրեաիրավական պայքարի գործիքակազմը, լրացնելու տարբեր հանցագործությունների քննության ժամանակ հայտնաբերված օրենսդրական բացերը, ինչպես նաև ապահովելու ՀՀ դատախազության բնականոն գործունեությունը և դատախազների սոցիալական պաշտպանվածության երաշխիքները:

Հաշվետու ժամանակաշրջանում նախապատրաստվել և ՀՀ գլխավոր դատախազի համապատասխան ուղեկցական գրություններով իրավասու պետական մարմիններ է ուղարկվել 10 օրենսդրական նախաձեռնություն (2022 թվականին՝ 14): Ընդ որում, օրենսդրական նախաձեռնություններից մեկը ներառել է ՀՀ քրեական, քրեական դատավարության և քրեակատարողական օրենսգրքերում փոփոխություններ և լրացումներ կատարելու **39** առաջարկություն:

1. Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության կառավարության հավանությանն է արժանացել և ՀՀ Ազգային ժողովի հաստատմանն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որն անհրաժեշտ իրավական հիմք է ապահովելու քրեական վարույթներով պետությանը, համայնքին, ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի վերականգնման և հաշվառման, որպես գրավ պահատվության հանձնված, ինչպես նաև արգելադրված դրամական միջոցների հաշվառման կարգը ՀՀ կառավարության որոշմամբ սահմանելու համար:

Մասնավորապես՝ պետությանը և համայնքներին պատճառված վնասի վերականգնման միասնական մոտեցումներ սահմանելու նպատակով նախատեսվում է, ի թիվս այլնի, սահմանել, որ քրեական վարույթի բոլոր փուլերում պետությանը և համայնքներին, ինչպես նաև պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին պատճառված վնասը վերականգնվելու է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից վարվող մեկ միասնական գանձապետական հաշվեհամարին:

2. Հաշվետու ժամանակահատվածում՝ 2023 թվականի մարտի 1-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել և նույն թվականի ապրիլի 6-ին ուժի մեջ են մտել «Դատախազության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերը: Նախագծերով առաջարկվող հիմնական կարգավորումները սահմանել են անհրաժեշտ իրավական կառուցակարգեր՝ պետական շահերի պաշտպանության սահմանադրական գործառույթի շրջանակներում համայնքային շահի պաշտպանության հայց հարուցելու նպատակով:

Նախագծով հստակեցվել են նաև դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկվելուն հավակնող անձին ներկայացվող պահանջները, կարգավորվել են դատախազների խմբի ստեղծման, դատախազների խմբի ղեկավարի դատավարական լիազորությունների հստակեցման հետ կապված իրավահարաբերությունները, ինչպես նաև ամրագրվել է Դատախազության պաշտոնների նոր դասակարգումը:

3. 2023 թվականի մարտի 22-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել և նույն թվականի ապրիլի 1-ին ուժի մեջ է մտել ««Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը, որի հիման վրա՝ 2023 թվականի մայիսի 1-ից սկսած դատախազներին՝ որպես առանձնակի ռիսկային պաշտոն զբաղեցնող պաշտոնյաների, վճարվում է ամսական հավելում՝ պաշտոնային դրույքաչափի 92%-ի չափով:

4. Հաշվետու ժամանակահատվածում մշակվել և Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 21-ի որոշմամբ ընդունվել է **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հուլիսի 9-ի N 1158-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» կառավարության որոշման նախագիծը: Հիշյալ նախագծով լրացում է կատարվել «Դատախազների համազգեստի, տարբերանշանների նկարագիրը, դատախազության խորհրդանիշի նկարագիրը և համազգեստի տրամադրման ժամկետները սահմանելու և**

Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 441-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1158-Ն որոշման մեջ՝ իգական սեռի դատախազներին տրամադրվող համազգեստի բաղկացուցիչ մաս սահմանելով նաև տաբատը:

5. Հաշվետու ժամանակահատվածում ապահովվել է ՀՀ դատախազության ներգրավվածությունը 2023 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած՝ քննչական գործողությունների պարտադիր տեսաձայնագրման գործընթացի պատշաճ կիրարկումն ապահովելու աշխատանքներում: Շարունակվել են աշխատանքները քրեական գործերով մինչդատական վարույթի էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման բնագավառում:

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել են տարբեր գերատեսչություններից ստացված՝ **95 օրենսդրական նախաձեռնությունների (**ներառել են տարբեր օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու **416 օրենքների նախագծեր**) **փաթեթների (2022 թվականին՝ 74), Կառավարության որոշումների՝ 97 (2022 թվականին՝ 62), ՀՀ վարչապետի և հանրապետական գործադիր մարմինների ղեկավարների որոշումների և այլ իրավական ակտերի՝ 28 (2022 թվականին՝ 20) նախագծեր**, որոնց վերաբերյալ ՀՀ դատախազության դիրքորոշումները սահմանված կարգով ուղարկվել են համապատասխան պետական մարմիններին:

Դատախազության աշխատակիցները մասնակցել են ՀՀ արդարադատության նախարարությունում կազմակերպված՝ «Քրեական վարույթներով իրավական օգնության մասին» օրենքի նախագծի քննարկման նպատակով աշխատանքային խմբի նիստերին. արդյունքում ներկայացվել է վերոնշյալ օրենքի լրամշակված նախագիծ: Համակարգվել են «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և դրանից բխող 2023-2025 թվականների Գործողությունների ծրագիրը հաստատելու մասին», «Փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում 2022-2024 թվականների ազգային ռազմավարության», «Ոստիկանության զարգացման 2020-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու մասին», «Հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2023-2026 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին», «Դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին» կառավարության որոշումներից բխող՝ Դատախազության մասնակցությունը ներառող գործողությունների կատարման ուղղությամբ ՀՀ դատախազության աշխատանքները:

Այս համատեքստում իրավասու պետական մարմիններ են ներկայացվել հիշյալ ռազմավարությունների և գործողությունների ծրագրի կիսամյակային և տարեկան հաշվետվությունները:

Հաշվետու ժամանակահատվածում տարբեր պետական մարմիններին (Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ, Արդարադատության նախարարություն, Արտաքին գործերի նախարարություն, Էկոնոմիկայի նախարարություն, Կենտրոնական բանկ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության լիազոր ներկայացուցչի գրասենյակ և այլն) և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների կողմից ներկայացված զեկույցների, հարցաշարերի, տեղեկատվական բնույթի այլ փաստաթղթերի վերաբերյալ տրամադրվել է **73** վերլուծական տեղեկություն (տեղեկանք):

Ի թիվս այլնի, տեղեկություն է ներկայացվել՝

- Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի հինգերորդ պիլոտային զեկույցի նախագծի

նախապատրաստման նպատակով ներկայացված հարցադրումների վերաբերյալ.

- ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի (UNODC) կողմից Կոռուպցիայի դեմ պայքարի (UNCAC) կոնվենցիայի վերանայման մեխանիզմի արդյունավետության վերաբերյալ.
- ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի (UNODC)-ի կողմից ներկայացված ֆինանսական և աուդիտորական վերահսկողության, պետական գնումների գործընթացի առնչությամբ կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող հարցադրումների վերաբերյալ.
- ԳՐԵԿՈ-ի հինգերորդ փուլի գնահատման շրջանակներում՝ «Կոռուպցիայի կանխարգելումը և բարեվարքության խթանումը իշխանության կենտրոնական մարմիններում (բարձրագույն գործադիր մարմիններում) և իրավապահ մարմիններում» խորագրով հարցաշարի վերաբերյալ.
- «Ահաբեկչության և ծայրահեղականության այլ բռնի դրսևորումների դեմ պայքարում ԱՊՀ մասնակից պետությունների 2022 թվականի իրավիճակի մասին հարցաշարի վերաբերյալ.
- Գենդերով պայմանավորված սպանությունների հետաքննությանը, փաստահավաքմանը և կանխարգելմանը վերաբերող՝ արտադատական, ամփոփ կամ կամայական մահապատժի հարցերով Հատուկ զեկուցողի գրասենյակից ստացված հարցաշարի վերաբերյալ.
- Ասիայի և Խաղաղօվկիանոսյան երկրների Թմրամիջոցների դեմ պայքարի ազգային իրավապահ մարմինների ղեկավարների (HONLAP) 45-րդ հանդիպման հարցաշարի վերաբերյալ.
- Եվրոպայի խորհրդի Ահաբեկչության դեմ պայքարի հարցերով համակարգող կոմիտեի (CDCT) 10-րդ նիստի ընթացքում ընդունված՝ ահաբեկչական հանցագործությունների հետ կապված հակամարտության գոտիներում հավաքագրված տեղեկության՝ որպես ապացույց քրեական դատավարությունում օգտագործման մասին հարցաշարի վերաբերյալ.
- ԵՄ և ԵԽ կողմից համատեղ իրականացվող CyberEast ծրագրի ղեկավար կոմիտեից ստացված հարցաշարի վերաբերյալ.
- Եվրոպայի խորհրդի Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովի (CEPEJ) կողմից ՀՀ-ին առաջադրված՝ արդարադատության համակարգի գնահատմանը վերաբերող հարցադրումներին ներկայացված պատասխանների հիման վրա հանձնաժողովի կողմից ուղարկված լրացուցիչ հարցադրումների վերաբերյալ.
- ՄԻՊ տարեկան հաղորդման կազմման համար ՀՀ դատախազության գործունեությանը վերաբերող հարցադրումների վերաբերյալ.
- ԱՄՆ պետդեպարտամենտի մարդու իրավունքների և կրոնական ազատությունների մասին ամենամյա զեկույցի (2022 թվական) պատրաստման համար. Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2023-2025 թվականների գործողությունների ծրագրի մշակման շրջանակում ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) հայաստանյան գրասենյակի հետ համագործակցության արդյունքում՝ ՄԱԶԾ փորձագետների կողմից կազմված՝ Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2023-2025 թվականների գործողությունների ծրագրի մշակման շրջանակներում ելակետային տվյալների վերաբերյալ.
- ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ՝ ատելության հողի վրա կատարված հանցագործությունների վերաբերյալ հարցաշարի կապակցությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ վարչապետի աշխատակազմի Միջազգային-իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակ է ներկայացվել դիրքորոշում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարան ներկայացված 32 գանգատներով (2022 թվականին՝ 27):

Հաշվետու ժամանակահատվածում ակտիվ համագործակցություն է իրականացվել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի հետ: Մասնավորապես՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովից ստացված՝ անձանց քրեական հետապնդման ենթարկված լինելու (ներառյալ՝ վկա-կասկածյալի կարգավիճակով հարցաքննվելու), վերջիններիս ներկայացրած հայտարարագրերը քրեական գործերով ապացույց հանդիսանալու կամ ՀՀ դատախազությունում կարգապահական պատասխանատվության ենթարկված լինելու հարցումներին ի պատասխան՝ տեղեկատվություն է տրամադրվել շուրջ **815** անձի վերաբերյալ (2022 թվականին՝ 450):

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 83 ուսումնասիրություն՝ 129 դատախազի նկատմամբ (2022 թվականին՝ 71 ուսումնասիրություն՝ 79 դատախազի նկատմամբ):

Վերոհիշյալ ուսումնասիրություններն իրականացնելու համար առիթ են հանդիսացել քաղաքացիների, փաստաբանների դիմում-բողոքները, դատավորների գրությունները, ՁԼՄ հրապարակումները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին ներկայացված զեկուցագրերը:22 ուսումնասիրության արդյունքներով՝

- 36 դատախազի կողմից թույլ տրված թերացումները քննարկվել են Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալների մոտ տեղի ունեցած օպերատիվ խորհրդակցություններում,
- 31 ուսումնասիրության արդյունքերով՝ 39 դատախազի կողմից ծառայողական պարտականությունների կատարման, օրենքի պահանջների կամ վարքագծի կանոնների խախտումներ չեն հայտնաբերվել,
- 29 ուսումնասիրության արդյունքերով 41 դատախազի նկատմամբ հարուցվել են կարգապահական վարույթներ:
- 1 ուսումնասիրության արդյունքով 13 դատախազի նկատմամբ ՀՀ գլխավոր դատախազը որոշում է կայացրել արտահերթ ատեստավորում նշանակելու մասին:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 29 կարգապահական վարույթ՝ 41 դատախազի նկատմամբ (1 կարգապահական վարույթ իրականացվել է 8 դատախազի նկատմամբ, 5 կարգապահական վարույթ, յուրաքանչյուրը՝ 2 դատախազի նկատմամբ, 23 կարգապահական վարույթ՝ յուրաքանչյուրը՝ 1 դատախազի նկատմամբ (2022 վականին՝ 22 կարգապահական վարույթ՝ 30 դատախազի նկատմամբ):

Կարգապահական վարույթ հարուցելու համար հիմք են հանդիսացել քրեական վարույթներով նախաքննության նկատմամբ դատավարական ղեկավարման և դատախազական հսկողության ընթացքում առկա թերությունները, ինչպես նաև նյութական ու դատավարական նորմերի, դատախազի վարքագծի կանոնների պահանջների, աշխատանքային ներքին կարգապահական կանոնների խախտումներ թույլ տալը և այլն:

- **9 դատախազի** նկատմամբ իրականացված **2 կարգապահական վարույթի** արդյունքներով ՀՀ գլխավոր դատախազի կողմից որոշում է կայացվել արտահերթ ատեստավորում նշանակելու մասին.
- **8 դատախազի** նկատմամբ իրականացված **6 կարգապահական վարույթի** արդյունքերով դատախազների կողմից թույլ տրված թերացումները քննարկվել են օպերատիվ խորհրդակցություններում.
- **10 դատախազի** նկատմամբ իրականացված **9 կարգապահական վարույթի** արդյունքներով նշանակվել է «նկատողություն» տեսակի կարգապահական տույժ.
- **5 դատախազի** նկատմամբ իրականացված **4 կարգապահական վարույթի** արդյունքներով նշանակվել է «խիստ նկատողություն» տեսակի կարգապահական տույժ.
- **1 դատախազի** նկատմամբ իրականացված **կարգապահական վարույթի** արդյունքներով նշանակվել է «դասային աստիճանի իջեցում մեկ աստիճանով» կարգապահական տույժ.

- **2 դատախազի** նկատմամբ իրականացված **1 կարգապահական վարույթի** արդյունքներով նշանակվել է «պաշտոնից ազատում» կարգապահական տույժ.

- **5 դատախազի** նկատմամբ իրականացված **5 կարգապահական վարույթների** ընթացքում վերջիններս ազատվել են զբաղեցրած պաշտոնից՝ սեփական դիմումի համաձայն.
- **1 դատախազի** նկատմամբ իրականացված **կարգապահական վարույթի** արդյունքում՝ ՀՀ գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողովը հաստատված չի համարել կարգապահական խախտման փաստի առկայությունը:

Իրականացված կարգապահական վարույթների արդյունքում կազմակերպվել է ՀՀ գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողովի **17 նիստ,** որոնց ընթացքում քննարկվել է **20 դատախազի** կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը: Նշված նիստերի արդյունքներով՝ **19 դատախազի վերաբերյալ** կայացվել է որոշում կարգապահական խախտման փաստը և դրանում դատախազի մեղավորությունը հաստատելու մասին (1 դատախազ դրանից հետո սեփական դիմումի համաձայն ազատվել է աշխատանքից և վերջինիս նկատմամբ կարգապահական տույժ չի նշանակվել), **1 դատախազի դեպքում՝** ՀՀ գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողովը հաստատված չի համարել կարգապահական խախտման փաստի առկայությունը:

10

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ, ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԸՆԹԱՑՔ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐ

Հայաստանի Հանրապետության դատախազությունում 2023 թվականին քաղաքացիներից ստացվել է 13705 դիմում-բողոք (ներառված չէ Զինվորական դատախազությանն ուղղված դիմումների թիվը)՝ նախորդ տարվա 11305-ի համեմատ: Ստացված դիմումների թիվն ավելացել է 2400-ով կամ 21,2%-ով:

Դիմումներից 2671-ը եղել է կրկնակի: Դիմումներից 1767-ը բավարարվել է (2022 թվականին՝ 1117), 3597-ին տրվել է պարզաբանում (2022 թվականին՝ 3187), 1635-ը մերժվել է (2022 թվականին՝ 1682), 168-ը թողնվել է անհետևանք (2022 թվականին՝ 101), 2-ը վերադարձվել է դիմումատուին (2022 թվականին՝ 4), 24 դիմումատուի հետ թղթակցությունը դադարեցվել է (2022 թվականին՝ 20), 59 դիմումի քննարկում մնացել է անավարտ (2022 թվականին՝ 71), 6307 դիմում ուղարկվել է այլ մարմին ընթացքը լուծելու համար (2022 թվականին՝ 4827), 146 դիմումի քննարկման արդյունքում նախաձեռնվել է քրեական վարույթ (2022 թվականին՝ 296):



2023 թվականին ստացված դիմում-բողոքներից 3374-ը վերաբերել է սեփականության դեմ ուղղված հանցագործություններին, 2884-ը՝ մարդու դեմ ուղղված հանցագործություններին (այդ թվում՝ 31-ը ընտրական իրավունքի դեմ ուղղված հանցագործություններին), 1934-ը՝ ընդհանուր բնույթի հանցագործություններին, 1578-ը՝ կոռուպցիոն բնույթի հանցագործություններին և այլն:

2023 թվականին Դատախազությունում կազմակերպվել է 1656 ընդունելություն՝ նախորդ տարվա 2551-ի համեմատ: Հաշվետու ժամանակահատվածում Դատախազության ստորաբաժանումների կողմից քաղաքացիների ընդունելության դեպքերը, 2022 թվականի համեմատ, պակասել են 895-ով կամ 35,1 %-ով: ՀՀ գլխավոր դատախազի տեղակալների մոտ կազմակերպվել է՝ 13, ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազների և դատախազների մոտ՝ 4, ՀՀ գլխավոր դատախազի խորհրդականների մոտ՝ 1,

ՀՀ զինվորական դատախազությունում՝ 124, Գլխավոր դատախազության վարչություններում՝ 527, Երևանի ու վարչական շրջանների դատախազություններում՝ 332, մարզերի դատախազություններում՝ 647, ՀՀ գլխավոր դատախազության աշխատակազմի քաղաքացիների ընդունելության և դիմումների քննարկման բաժնում՝ 7 ընդունելություն:

Դատախազության հանրային կապերի բաժինը 2023 թվականի ընթացքում, իր գործառույթների շրջանակում, ապահովել է Դատախազության միջոցառումների լուսաբանումը՝ տեսանկարահանման և լուսանկարահանման ձևաչափով, իրականացրել է Դատախազության պաշտոնական կայքի սպասարկման աշխատանքները:

Բաժինը հաշվետու տարում մշտադիտարկել է հանրապետությունում գործող **165** էլեկտրոնային մամուլի և **14** հեռուստառադիոընկերությունների հրապարակումները, ինչպես նաև պարզաբանումներ է ներկայացրել զանգվածային լրատվության միջոցներին՝ Դատախազության լիազորություններին առնչվող հարցերի վերաբերյալ:

2023 թվականին շարունակվել են Դատախազության սոցիալական հարթակների՝ Facebook-ի, Telegram-ի, Youtube-ի սպասարկման աշխատանքները՝ ներկայացնելով ՀՀ գլխավոր դատախազի, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալների, դատախազների մասնակցությամբ հանդիպումները, հարցազրույցները, Դատախազության գործունեությանն առնչվող հաղորդագրությունները:

Հանրային կապերի բաժինը, Դատախազությունում մեկնարկած բարեփոխումների շրջանակում, 2023 թվականի հուլիսի 1-ին գործարկել է արդիականացված և նորացված պաշտոնական կայքէջը: Կայքը լավարկված է ցանկացած չափի համակարգչային մոնիտորների համար, ունի մոբայլ տարբերակ՝ նախատեսված սմարթֆոն, պլանշետ և այլ գաջեթներ գործածողների համար: Կայքի բոլոր էջերից հասանելիություն է ապահովված նաև սոցիալական հարթակներին՝ Facebook, Telegram, Youtube:

Հանրային կապերի բաժինը շարունակել է իրականացնել Դատախազության պաշտոնական էլեկտրոնային փոստի սպասարկման աշխատանքները: 2023 թվականին info@prosecutor.am էլեկտրոնային փոստին ստացվել է 3609 հարցում-դիմում-գրություն:

«Տեղեկատվության ազատության մասին» օրենքով սահմանված ժամկետներում՝ զանգվածային լրատվամիջոցներից ստացված՝ **413** հարցմանը տրվել է պատասխան:

Մշտադիտարկման արդյունքներով՝ 2023 թվականին Դատախազությունում ընթացք է տրվել մամուլի 128 հրապարակման, Դատախազության պաշտոնական կայքէջով հանրությանը հասանելի է դարձել 401 հաղորդագրություն:

Հանրային կապերի բաժնի ջանքերով՝ **դատախազների մասնակցությամբ պատրաստվել է 167 տեսանյութ,** որոնք, ի թիվս այլնի, վերաբերել են Դատախազության կողմից պետական շահերի պաշտպանության, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման, կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտներում իրականացված աշխատանքներին:

2023

ՀԱՂՈՐԴՈՒՄ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՍԱԽԱՋՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ